ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ
ԳԻՐՔ 2

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ

ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

ԲԱՅԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ

ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

«Ինչպես և սպասվում էր, *«Բացահայտել փառավոր Ավետարանը»* ուսումնական ձեռնարկում Փոլ Վոշերը հավատարմորեն առաջնորդում է դեպի Ավետարանի գլխավոր վարդապետությունները: Այստեղ դուք կգտնեք ճշգրիտ մեկնողական և աստվածաբանական բացատրություններ, ինչպես նաև օգտակար, խելամիտ հարցեր և սուրբգրային հատվածներ ընթերցման համար: Այս ձեռնարկը շատ օգտակար է անհատական և խմբային ուսուցման համար, քանի որ օգնում է ավելի խորը թափանցել փառավոր ճշմարտությունների մեջ այն մասին, թե ով է Աստված, և թե ինչպես Նա փրկեց մեզ Իր ողորմածությամբ»:

— Ռեյ Վան Նեսթի, պրոֆեսոր «Յունիոն» համալսարանում և *«Անգլերեն Ստանդարտ Ուսումնական Աստվածաշնչի»* (ESV Study Bible) նյութերի համահեղինակ

«Փոլ Վոշերի «Բացահայտել փառավոր Ավետարանը» գիրքը նման է թարմ օդի: Առաջինը՝ սա ուսումնական ձեռնարկ է, որը կոչ է անում մեզ խորասուզվել Աստվածաշնչի մեջ և անձամբ ուսումնասիրել Ավետարանի ճշմարտությունները, որոնք սնուցում են մեր անձը: Փոլ Վոշերն օգտագործում է բազմաթիվ աստվածաշնչյան հասկացություններ, որպեսզի ի հայտ բերի Քրիստոսի անձի և աշխատանքի ուրվագծերը, մինչև որ Ավետարանն ուշագրավ պատկերվի՝ ակնածանք ներշնչող Էվերեստ սարի պես: Երկրորդը՝ այս գիրքը վերադարձնում է մեզ դեպի հիմնարար պատճառն այն մասին, թե ինչո՞ւ է Աստված փրկում այնպես, ինչպես դա ներկայացված է Ավետարանում: Նա այդպես է վարվում՝ Իրեն փառավորելու համար: Այս գիրքը սկսվում է աստվածային երկընտրանքով, և այն բանից հետո, երբ ամեն ինչ ասված և արված է, այն թողնում է մեզ ծնկների վրա՝ մեծարելու շնորհքի և արդարադատության Բարձրյալ Աստծուն: Եթե ուզում եք իմանալ, թե ինչու է Ավետարանը բոլոր ժամանակների մեծագույն ճշմարտությունը, գնե՛ք այս գիրքը և ուսումնասիրեք այն՝ բաց Աստվածաշնչով»:

— Կոնրադ Մբեվե, «Կաբուատա» Մկրտական եկեղեցու հովիվ, *«Հիմքեր՝ Աստծո հոտի համար»* գրքի հեղինակ

«Հիսուս Քրիստոսի Ավետարանը՝ ուշագրավ բարի լուր է այն մասին, որ Աստված ուղարկեց Իր Որդուն այս աշխարհ, որ «աշխարհը Նրանով փրկվի»: *«Բացահայտել փառավոր Ավետարանը»* գրքում Փոլ Վոշերը ջանասիրաբար դիտարկում է բազմաթիվ հրաշալի ավետարանական ճշմարտություններ, որոնք հաճախ անտեսվում են: Փոլը վարպետորեն առաջնորդում է մեզ Սուրբ գրքով՝ բացահայտելով այս զարմանալի իրողությունները»:

— Էնտոնի Ռ. Մաթենիա, «Քրիստոսի եկեղեցի» եկեղեցու հովիվ Ռեդֆորդում և *«Նայի՛ր Քո Աստծուն»* ձեռնարկի նյութերի համահեղինակ

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Հեղինակային իրավունքները՝ 2017թ., Փոլ Դեյվիդ Վոշեր

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը որևէ կերպով չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել՝ առանց գրավոր թույլտվության, բացառությամբ՝ կարճ մեջբերումների քննադատական հոդվածների և ակնարկների մեջ: Ուղղե՛ք ձեր խնդրանքները հրատարակչին հետևյալ հասցեով.

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, 2017թ.
Երկրորդ հրատարակություն

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են (1869թ.), կամ, հատուկ նշումների դեպքում, «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչից» (NASB®), հեղինակային իրավունքները՝ 1960, 1962, 1963, 1968, 1972, 1973, 1977, 1995թթ., «Lockman Foundation»-ի կողմից: Օգտագործված է՝ ըստ թույլտվության:

ISBN 978-0-9886681-5-7

Խմբագիրներ՝ Ֆորեսթ Հայթ և Մեգան Նեշ
Էջադրումը և ձևավորումը՝ Ջոն Գրին, Մեթյու Ռոբինսոն և Ֆորեսթ Հայթ

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Բովանդակություն

	Ներածություն	7
	Ուսումնական ծրագիր՝ ըստ ցանկության	9
1.	Աստվածային երկընտրանքը և Ավետարանը	10
2.	Աստծո դրդապատճառը՝ մարդուն փրկելու համար	16
3.	Որդու դրդապատճառը՝ մեզ փրկելու համար	21
4.	Աստծո Որդին՝ փառքի մեջ	28
5.	Որդին մարդ դարձավ (Մաս մեկ)	33
6.	Որդին մարդ դարձավ (Մաս երկու)	39
7.	Որդին ապրեց կատարյալ կյանքով	44
8.	Որդին կրեց մեր մեղքը	49
9.	Որդին անեծք դարձավ	54
10.	Որդին վերցրեց Իր վրա Աստծո զայրույթը	59
11.	Որդին մահացավ	66
12.	Քրիստոսը՝ մեր քավությունը	71
13.	Քրիստոսը՝ մեր փրկությունը	76
14.	Քրիստոսը՝ մեր ազատությունը	81
15.	Քրիստոսը՝ մեր հաշտությունը (Մաս մեկ)	86
16.	Քրիստոսը՝ մեր հաշտությունը (Մաս երկու)	93
17.	Քրիստոսը՝ մեր Զոհը	96
18.	Քրիստոսը՝ մեր Գառը	102
19.	Քրիստոսը՝ մեր Քավության այծը	107
20.	Քրիստոսը թաղվեց	112
21.	Քրիստոսը հարություն առավ	116
22.	Հարություն. մեր հավատքի հիմքը	121

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

23.	Քրիստոսի հարության ապացույցը	124
24.	Քրիստոսի հարության բնույթը	133
25.	Քրիստոսի հարության նշանակալիությունը	138
26.	Քրիստոսի հարության կարևորությունը	143
27.	Որդին՝ համբարձված	149
28.	Մեր Բարձրյալ Փրկիչը	156
29.	Մեր Բարձրյալ Միջնորդը	161
30.	Մեր Բարձրյալ Բարեխոսը	166
31.	Քրիստոսը՝ Թագավոր	171
32.	Քրիստոսը՝ Տեր	177
33.	Քրիստոսը՝ Դատավոր	182
34.	Վերահաս դատաստանը	188

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Ներածություն

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿԻՑ

Այս դասընթացի մեծագույն նպատակն է, որ ուսանողը *հանդիպում ունենա Աստծո հետ Նրա խոսքի միջոցով:* Այս ուսումնական ձեռնարկը հիմնված է այն համոզմունքի վրա, որ Աստվածաշունչը Աստծո ոգեշնչված և անսխալական խոսքն է, և այնպես է կազմված, որ ուսանողը բառացիորեն *անկարող է* ընթերցել այն՝ *առանց բաց Աստվածաշնչի:* Նպատակն է՝ օգնել ընթերցողին հնազանդվել Պողոս առաքյալի հորդորին Բ Տիմոթեոս 2.15-ում.

> *«Ջանք արա, որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստծո առջև՝ իբրև մի մշակ՝ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես»:*

Ամեն գլուխ Հիսուս Քրիստոսի Ավետարանի որոշակի կողմի մասին է: Այն ավարտելու համար ուսանողը պետք է պատասխանի հարցերի և կատարի առաջադրանքներ, որոնք տրված են՝ համաձայն օգտագործված աստվածաշնչյան հատվածների: Ուսանողին առաջարկվում է մտորել ամեն մի աստվածաշնչյան հատվածի շուրջ և գրի առնել իր մտքերը: Այս դասընթացի օգտավետությունն ուղիղ համեմատական է ուսանողի ջանքերին: Եթե ուսանողը պատասխանի հարցերին՝ առանց մտածելու, գրեթե արտագրելով համապատասխան աստվածաշնչյան հատվածը և չձգտելով հասկանալ դրա իմաստը, այս գիրքը քիչ օգտավետ կլինի:

«Բացահայտել փառավոր Ավետարանը» գիրքը գլխավորապես աստվածաշնչյան ուսումնական ձեռնարկ է և չի պարունակում գունազարդ պատկերներ, հետաքրքրաշարժ պատմություններ և նույնիսկ աստվածաբանական մեկնություններ: Հեղինակը ցանկացել է ստեղծել այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնացույց է անում Աստվածաշունչը և թույլ է տալիս, որ Աստծո Խոսքը խոսի իր փոխարեն:

Այս ուսումնական ձեռնարկը կարող է օգտագործվել անհատական ուսումնասիրության համար, փոքր խմբերում, կիրակնօրյա դպրոցների դասարաններում կամ ցանկացած միջավայրում: Շատ կարևոր է, որ ուսանողն ինքնուրույն ավարտի ամեն գլուխը մինչև փոքր խմբի կամ կիրակնօրյա դպրոցի դասարանի հավաքույթը, որտեղ նրանք քննարկելու են այդ գլուխը և պատասխանելու են դրանում գտնվող հարցերին խմբի կամ աշակերտական թիմի առաջնորդի հետ:

ՀՈՐԴՈՐ ՈՒՍԱՆՈՂԻՆ

Մենք հորդորում ենք ամեն ուսանողի զբաղվել աստվածաշնչյան վարդապետության ուսումնասիրությամբ և բացահայտել դրա վեհ դիրքը քրիստոնեական կյանքում: Ճշմարիտ քրիստոնյայի համար շատ դժվար կլինի գործել և նույնիսկ՝ գոյատևել, եթե նրա զգացմունքները հակասեն նրա մտքին, կամ, այլ կերպ ասած, եթե նրա պատկերացումն Աստծուն ընծայվելու մասին՝ հակասի Աստծո մասին նրա վարդապետական գիտելիքին: Համաձայն Աստվածաշնչի՝ ո՛չ մեր զգացմունքները, ո՛չ էլ փորձառությունը բավարար հիմք չեն քրիստոնեական կյանքի համար: Միայն Աստվածաշնչի ճշմարտությունները, որոնք փոխանցվում են վարդապետության ուսուցման միջոցով և հասկացվում են մտքով, կարող են լինել այդ հաստատ հիմքը, որի վրա պետք է կառուցենք մեր համոզմունքները և վարքը, և որոշենք մեր զգացմունքների և փորձառությունների վավերական լինելը: Միտքը սրտի թշնամին չէ, իսկ վարդապետությունը չի խոչընդոտում նվիրմանը: Երկուսն էլ անփոխարինելի են և պետք է անբաժան լինեն: Սուրբ գիրքը պատվիրում է սիրել մեր Տեր Աստծուն մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ անձով և մեր ամբողջ մտքով (Մատթեոս 22.37), և երկրպագել Աստծուն և՛ հոգով, և՛ ճշմարտությամբ (Հովհաննես 4.24):

Վարդապետական ուսուցումը և՛ զարգացնում է մեր միտքը, և՛ ամրացնում է մեր նվիրումը: Այն ջերմեռանդ որոնում է, ձգտում առ Աստված, որը պետք է առաջնորդի ուսանողին ավելի մեծ անձնական վերափոխման, հնազանդության և սրտանց երկրպագության: Գոյություն ունի մի մեծ սխալմունք, որից ուսանողը պետք է զգուշանա. նա չպետք է փնտրի անանձնական գիտելիք՝ Աստծո Անձը որոնելու փոխարեն: Թե՛ չգիտակցված նվիրումը, թե՛ սոսկ տեսական գիտելիք ստանալու ձգտումը անօգուտ են, որովհետև երկու դեպքում էլ մարդը կորցնում է Աստծուն:

ՆՈՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Այս գրքի անգլերեն հրատարակության մեջ օգտագործվել է Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը (NASB): Աստվածաշնչի այս թարգմանությունն ընտրվել է հետևյալ պատճառներով. (1) թարգմանիչների անվարան համոզվածությունը, որ Աստվածաշունչը՝ Աստծո անսխալական Խոսքն է, և (2) ճշգրիտ թարգմանությունը՝ բնագրային լեզուներից:

Ներկա հայերեն հրատարակության մեջ Աստվածաշնչի այս թարգմանությունը (NASB) օգտագործվում է, երբ առկա է մեջբերված հատվածների իմաստային երկվություն հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանության (1869թ.) հետ: Այն ավելանում է գրքի տեքստին և աստվածաշնչյան մեջբերումներին փակագծերի մեջ՝ որպես այլընտրական տարբերակ:

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

Հիսուս Քրիստոսի մահը և հարությունը մարդկության պատմության կենտրոնական իրադարձությունն է, երբևէ պատմված մեծագույն պատմությունը և հրեշտակների մտորումների առարկան (Ա Պետրոս 1.12): Երբ այն հռչակվում է համաձայն Աստվածաշնչի, այն Աստծո զորությունն է՝ փրկելու համար ամեն հավատացողին (Հռոմեացիների 1.16), և ճշմարիտ աստվածապաշտության մեծ աղբյուրը և շարժառիթը (Ա Տիմոթեոս 3.16): Երբ այս ուղերձն աղավաղվում է, այն բերում է մահ՝ լսողներին և ծանրագույն անեծքներ՝ այն ազդարարողի վրա (Գաղատացիների 1.6-9): Այս և բազմաթիվ այլ պատճառներով, քրիստոնյան պետք է համարի Ավետարանի ուսումնասիրությունը իր առաջնային և մշտական առաջադրանքը: Այս ուսումնական ձեռնարկը կազմվել և գրվել է՝ հաշվի առնելով այս ճշմարտությունները:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել իմ կին Չարոյին՝ նրա մշտական աջակցության համար, և իմ չորս զավակներին՝ Յանին, Էվանին, Ռոուենին և Բրաունվինին, ովքեր շարունակում են մեծ բերկրանք պատճառել ինձ: Ես նույնպես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել «Հարթ Քրայ» ծառայության աշխատակից Ֆորեսթ Հայթին, ով ջանասիրաբար և մանրակրկիտորեն խմբագրել է ինձնից ստացած մի քանի ձեռագրեր: Նրա ներդրումն այս աշխատության համակարգման և ընդհանուր ընթեռնելիության մեջ շատ կարևոր է, և ես բարձր եմ գնահատում այն: Նույնպես շնորհակալ եմ «Հարթ Քրայ»-ի բոլոր աշխատակիցներին, ովքեր մշտապես խրախուսում էին ինձ այս գրքի հրատարակման ընթացքում:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ՝ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Ի՞նչ է Ավետարանը», Գրեգ Գիլբերտ
«Հիսուն պատճառ, թե ինչու Հիսուսը եկավ մահանալու», Ջոն Փայփեր
«Փրկված շնորհքով», Էնտոնի Հոուկեմա
«Փրկությունը՝ կատարված և կիրառված», Ջոն Մյուրի
«Քրիստոսի խաչը», Ջոն Ռ. Վ. Սթոթ
«Ավետարանի զորությունը և ուղերձը», Փոլ Դեյվիդ Վոշեր
«Ավետարանը և ճշմարիտ դարձը», Փոլ Դեյվիդ Վոշեր
«Ավետարանի հավաստիացումը և զգուշացումները», Փոլ Դեյվիդ Վոշեր
«Մահվան մահը՝ Քրիստոսի մահվան մեջ», Ջոն Օուեն (առաջադեմ ուսանողների համար)

Ուսումնական ծրագիր՝ ըստ ցանկության

Շաբաթ Մեկ	**Ավետարանի աստվածային երկընտրանքը և Աստծո դրդապատճառը՝ ըստ Ավետարանի**
Օր Մեկ	Գլուխ 1
Օր Երկու	Գլուխ 2, Բաժին 1
Օր Երեք	Գլուխ 2, Բաժին 2
Օր Չորս	Գլուխ 3, Բաժիններ 1,2
Օր Հինգ	Գլուխ 3, Բաժին 3
Շաբաթ Երկու	**Որդու մարմնավորումը և կյանքը**
Օր Մեկ	Գլուխ 4
Օր Երկու	Գլուխ 5
Օր Երեք	Գլուխ 6
Օր Չորս	Գլուխ 7, Գլխավոր կետեր 1-5
Օր Հինգ	Գլուխ 7, Գլխավոր կետեր 6,7
Շաբաթ Երեք	**Որդու չարչարանքները և մահը**
Օր Մեկ	Գլուխ 8
Օր Երկու	Գլուխ 9
Օր Երեք	Գլուխ 10, Բաժին 1
Օր Չորս	Գլուխ 10, Բաժին 2
Օր Հինգ	Գլուխ 11
Շաբաթ Չորս	**Քրիստոսի կյանքի և մահվան կարևորությունը**
Օր Մեկ	Գլուխ 12
Օր Երկու	Գլուխ 13
Օր Երեք	Գլուխ 14
Օր Չորս	Գլուխ 15
Օր Հինգ	Գլուխ 16
Շաբաթ Հինգ	**Քրիստոսի զոհի կարևորությունը**
Օր Մեկ	Գլուխ 17, Գլխավոր կետեր 1,2
Օր Երկու	Գլուխ 17, Գլխավոր կետեր 3,4
Օր Երեք	Գլուխ 18, Բաժին 1
Օր Չորս	Գլուխ 18, Բաժին 2
	Գլուխ 19, Բաժին 1
Օր Հինգ	Գլուխ 19, Բաժիններ 2,3
Շաբաթ Վեց	**Որդու թաղվելը և հարությունը**
Օր Մեկ	Գլուխ 20
Օր Երկու	Գլուխ 21
Օր Երեք	Գլուխ 22,
	Գլուխ 23, Բաժին 1
Օր Չորս	Գլուխ 23, Բաժիններ 2,3
Օր Հինգ	Գլուխ 23, Բաժիններ 4-7

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Շաբաթ Յոթ	**Քրիստոսի հարության կարևորությունը**
Օր Մեկ	Գլուխ 24, Բաժին 1
	Գլուխ 24, Բաժին 2, Գլխավոր կետեր 1,2
Օր Երկու	Գլուխ 24, Բաժին 2, Գլխավոր կետեր 3,4
	Գլուխ 25, Բաժիններ 1,2
Օր Երեք	Գլուխ 25, Բաժին 3
Օր Չորս	Գլուխ 26, Գլխավոր կետեր 1-3
Օր Հինգ	Գլուխ 26, Գլխավոր կետ 4
Շաբաթ Ութ	**Որդու համբարձումը և մեծարումը**
Օր Մեկ	Գլուխ 27, Բաժին 1
	Գլուխ 27, Բաժին 2, Գլխավոր կետ 1
Օր Երկու	Գլուխ 27, Բաժին 2, Գլխավոր կետեր 2-4
Օր Երեք	Գլուխ 28
Օր Չորս	Գլուխ 29
Օր Հինգ	Գլուխ 30
Շաբաթ Ինը	**Որդին՝ Իշխան և Թագավոր**
Օր Մեկ	Գլուխ 31
Օր Երկու	Գլուխ 32, Գլխավոր կետեր 1-4
Օր Երեք	Գլուխ 32, Գլխավոր կետեր 5,6
	Գլուխ 33, Բաժին 1
Օր Չորս	Գլուխ 33, Բաժիններ 2,3
Օր Հինգ	Գլուխ 34

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Գլուխ 1. Աստվածային երկընտրանքը և Ավետարանը

Աստվածաշնչում մենք տեսնում ենք, որ Աստված սուրբ է, արդար է և արժանի է ամբողջ սիրուն, երկյուղածությանը և հնազանդությանը: Մենք նույնպես իմանում ենք, որ մարդը, ով բարի էր ստեղծվել, ապականեց ինքն իրեն, զանց արեց Աստծո օրենքը և դարձավ ենթակա Աստծո դատաստանին: Այս ուսումնասիրության ընթացքում կբացահայտենք Աստծո զարմանալի աշխատանքը, որով Նա անկում ապրած մարդուն հաշտեցրեց Իր հետ:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԸ

«Վեբսթերի» բառարանով «Երկընտրանք» բառը սահմանվում է որպես «իրավիճակ, որում պետք է ընտրություն կատարել երկու հավասարապես ոչ գոհացուցիչ տարբերակների միջև», կամ «խնդիր, որը, թվում է՝ չի կարող գոհացուցիչ լուծում ստանալ»: Սուրբ գրքում մեզ ներկայացվում է մեծագույն երկընտրանքը: Աստված արդար է. նշանակում է՝ Նա պետք է վարվի ըստ արդարության խստագույն կանոնների՝ արդարացնելով անմեղներին և դատապարտելով մեղավորներին: Եթե Նա ների մեղավորին և չպատժի Իր օրենքի յուրաքանչյուր խախտում և անհնազանդություն, Նա անարդար կլինի: Այնուամենայնիվ, եթե Նա իսկապես արդարությամբ վարվի ամեն մարդու հետ, այսինքն՝ յուրաքանչյուրին տա այն, ինչին արժանի է, բոլոր մարդիկ կդատապարտվեն: Ինչպե՞ս է հնարավոր, որ Աստված արդար լինի և միաժամանակ ողորմություն ցուցաբերի նրանց հանդեպ, ովքեր պետք է դատապարտվեն: Կամ, եթե հարցի վերածենք Պողոս առաքյալի խոսքը Հռոմեացիների 3.26-ում.

> «Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և արդարացնել մեղավորներին»:

ԻՆՉՈ՞Ւ ԱՍՏՎԱԾ ՉԻ ԿԱՐՈՂ ՊԱՐԶԱՊԵՍ ՆԵՐԵԼ

Միգուցե ինչ-որ մեկը հարցնի. «Ինչո՞ւ Աստված չի կարող պարզապես ներել մարդու մեղքը և չեղյալ դարձնել այն: Աստվածաշունչը պատվիրում է ներել մեկս մյուսին. մի՞թե սխալ կլինի, եթե Աստված անի նույնը»: Այս հարցի պատասխանը բաղկացած է երեք մասից:

Առաջինը՝ Աստված մեզ նման չէ. Նրա արժեքն անսահմանորեն ավելին է, քան Իր ստեղծագործության արժեքն ամբողջությամբ: Այդ իսկ պատճառով, ոչ միայն արդար է, այլև անհրաժեշտ է, որ Նա փնտրի Իր փառքը և պաշտպանի այն: Հաշվի առնելով Նրա ինքնությունը՝ նույնիսկ աննշան ապստամբությունը ահռելի անարգանք է Նրա Անձի հանդեպ և մեծագույն դավաճանություն է, որն արժանի է խստագույն պարսավանքի: Եթե Աստված թույլ տա, որ ցանկացած զանցանք Իր Անձի դեմ անպատիժ մնա, դա երկակի անարդարություն կլինի. 1) Նա անարդար կվարվի Իր Անձի հանդեպ՝ ուրանալով այն փառքը, որն իրավամբ պատկանում է Իրեն՝ որպես Աստծո, և 2) Նա անարդար կվարվի Իր արարչագործության հետ՝ թույլ տալով, որ այն ուրանա իր գոյության սկզբնապատճառը (այսինքն՝ Աստծո փառքը), և սլանա դեպի ունայնությունը: Եթե ժամանակակից մարդու համար դժվար է սա հասկանալը, պատճառն այն է, որ նա թյուր պատկերացում ունի Աստծո մասին:

Երկրորդը՝ Աստված չի կարող պարզապես ներել մարդու մեղքը և չեղյալ դարձնել այն, քանի որ Նրա բնավորության մեջ հակասություններ չկան: Աստծո Խոսքը սովորեցնում է, որ Աստված կատարյալ (ոչ հա-

կասական) է Իր բոլոր հատկանիշներում և գործերում: Ուստի, Նրա գործերը միշտ կատարելապես կհամապատասխանեն Նրա ինքնությանը: Նա չի բարձրացնի Իր հատկանիշներից մեկը՝ մյուսի հաշվին, ո՛չ էլ կուրանա Իր բնավորության կողմերից մեկը՝ մյուսն ի ցույց հանելու համար: Նա սիրող, գթասիրտ և երկայնամիտ է. այնուամենայնիվ, Նա նույնպես սուրբ է, արդար է և ուղղությամբ է դատում Իր բոլոր գործերում և դատաստաններում: Նա չի կարող ուրանալ Իր սրբությունը՝ հանուն սիրո, և չի կարող անտեսել Իր արդարադատությունը՝ ողորմություն ցուցաբերելու համար: Բարի նպատակներ ունեցող բազմաթիվ ավետարանիչներ սխալմամբ սովորեցրել են, որ Աստված որոշել է սիրել մեղավորին՝ նրա հետ արդարությամբ վարվելու փոխարեն: Այնուամենայնիվ, այս սխալմունքի տրամաբանական եզրակացությունը կլինի հետևյալը. կա՛մ Աստծո սերն անարդար է, կա՛մ Նա անտեսում է Իր արդարությունը՝ հանուն սիրո: Նման խոսքերը մատնում են այդ մարդկանց անտեղյակությունն Աստծո հատկանիշների մասին: Ավետարանի գեղեցկությունն այն չէ, որ Աստված գերադասեց սերը դատաստանից, այլ, որ արդար լինելով հանդերձ, Նա կարող է ներում ու սեր շնորհել մեզ:

Երրորդը՝ Աստված ամբողջ երկրի Դատավորն է: Նրա գործն է, որ արդարությունը պահպանվի, չար մարդիկ պատժվեն, իսկ արդարները արդարացվեն: Երկնային Դատավորը չի կարող ներում շնորհել չարագործին ճիշտ այնպես, ինչպես որ երկրային դատավորը չի կարող ներում շնորհել մեղավոր ճանաչված հանցագործին, ով կանգնած է իր առջև դատարանում: Մի՞թե շատերը չեն բողոքում, որ մեր արդարադատության համակարգը կաշառված է: Մի՞թե մենք չենք վրդովվում, երբ դատապարտված հանցագործներին արդարացնում են: Եվ մի՞թե մենք պետք է ակնկալենք ավելի քիչ արդարադատություն Աստծուց, քան այս աշխարհի դատավորներից: Կա մի անվիճելի ճշմարտություն. առանց արդարադատության՝ բոլոր ազգերը, ժողովուրդները և մշակույթները կսլանան դեպի անիշխանությունը և ինքնակործանումը: Եթե Աստված անտեսեր Իր իսկ արդարությունը, եթե Նա ներում շնորհեր՝ առանց արդարադատությունը բավարարելու, և եթե չարը վերջնական պատիժ չկրեր, արարչագործությունը չէր դիմանա դրան:

ԱՅՍ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԸ՝ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Հավանաբար, մեծագույն հարցը ամբողջ Աստվածաշնչում հետևյալն է. «Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և միաժամանակ արդարացնել նրանց, ովքեր պետք է դատապարտվեն»: Ինչպե՞ս Նա կարող է արդար լինել և արդարացնել մեղավորներին: Հետևյալ աստվածաշնչյան հատվածներում այս ***աստվածային երկընտրանքն*** ի հայտ կգա անժխտելի պարզությամբ:

1. Ելից 23.7-ը և Հռոմեացիների 4.5-ը գերազանց ներկայացնում են այս աստվածային երկընտրանքը. «Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և արդարացնել մեղավորներին»:

ա. Ի՞նչ է Աստված հայտնում Իր մասին Ելից 23.7-ում:

(1) Ես Չ_____ չեմ Ա_____:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արդարացնել» բառը թարգմանված է եբրայերեն ***«ցադեկ»*** բառից, որը նշանակում է «արդարացնել, արդարություն շնորհել կամ արդար հայտարարել»:

բ. Ինչպե՞ս է Պողոս առաքյալը նկարագրում Աստծուն Հռոմեացիների 4.5-ում:

(1) Նա, որ Ա_____ Ա_____ է:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արդարացնել» բառը թարգմանված է հունարեն ***«դիկաիո՛ո»*** բառից, որը նշանակում է «արդար հռչակել կամ արդարացնել»:

գ. Ինչպե՞ս են այս երկու հատվածները միասին պատկերում աստվածային երկընտրանքը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ելից 23.7-ը միանշանակ ցույց է տալիս, որ Աստված չի արդարացնի չարագործին, այլ կվարվի նրա հետ կատարյալ արդարադատությամբ: Այնուամենայնիվ, Հռոմեացիների 4.5-ը համարձակ ազդարարում է ամեն հավատացյալի մեծագույն հույսը՝ Աստված արդարացնում է ամբարշտին: Ինչպե՞ս կարող են այս երկու պնդումներն էլ ճշմարիտ լինել:

2. Առակաց 17.15-ում գրված է ամենաազդեցիկ օրինակներից մեկը ամբողջ Աստվածաշնչում՝ աստվածային երկընտրանքի վերաբերյալ:

ա. Ի՞նչ համընդհանուր և անփոփոխ ճշմարտություններ են ներկայացված Առակաց 17.15-ում:

(1) Ա_____-ին Ա_____...

Զ_____ է Տիրոջը:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Զզվելի» բառը թարգմանված է եբրայերեն ***«տոեբա»*** բառից, որը նշանակում է «զզվելի, գարշելի և նողկալի մի բան»: Սա ամենաազդեցիկ բառերից մեկն է եբրայերեն Սուրբ գրքում:

բ. Ինչպե՞ս է ճշմարտությունը՝ հայտնված Առակաց 17.15-ում, և ճշմարտությունն այն մասին, որ Աստված արդարացնում է ամբարշտին (Հռոմեացիների 4.5), միասին պատկերում աստվածային երկընտրանքը:

_____

_____

_____

_____

_____

_____

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք արդեն ներկայացրինք աստվածային երկընտրանքը Պողոս առաքյալի շրջասության ենթարկված խոսքով. «Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և արդարացնել մեղավորներին»: Ահա նույն երկընտրանքը՝ այլ ձևակերպմամբ. «Ինչպե՞ս Աստված կարող է արդարացնել մեղավորներին այն կերպով, որը զզվելի կամ գարշելի չէ Նրա սուրբ և արդար բնավորության համար»:

3. Ելից 34.5-7-ում գրված է աստվածային երկընտրանքի ևս մեկ պարզ օրինակ: Կարդացե՛ք այս հատվածը և լրացրե՛ք բաց թողնված բառերը:

ա. Խոսք 7-ում Աստված երկու հակասական թվացող պնդումներ է անում, որոնք ազդեցիկ կերպով պատկերում են աստվածային երկընտրանքը: Ցույց տվեք դրանք:

(1) Աստված ներում է Ա_____, Հ_____ և Մ_____:

(2) Աստված բնավ Ա_____ չի թողնի Հ_____:

բ. Բացատրե՛ք խոսք 7-ում պատկերված երկընտրանքը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ինչպե՞ս կարող են այս երկու պնդումներն էլ ճշմարիտ լինել: Նույն Սուրբ գիրքը, որը խոստանում է ներում ամեն տեսակի մեղքերի համար, զգուշացնում է, որ Աստված չի ների հանցավորին և անպատիժ չի թողնի նրան:

4. Այս գլուխն ավարտելու համար կդիտարկենք ամբողջ Աստվածաշնչի ամենահրաշալի հատվածներից մեկը: Հռոմեացիների 4.7,8-ում Պողոս առաքյալը մեջբերում է Սաղմոս 32.1,2-ը: Ծանոթացե՛ք Հռոմեացիների թղթի այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. Ըստ Հռոմեացիների 4.7,8-ի՝ ի՞նչ հատկանիշներ ունի Աստծուց օրհնված մարդը:

(1) Նրա Ա_____ Թ_____ (խս. 7):

(2) Նրա Մ_____ Ծ_____ (խս. 7):

(3) Տերը նրան Մ_____ չի Հ_____ (խս. 8):

բ. Ի՞նչ աստվածաբանական բարդություններ են ներկայացված Հռոմեացիների 4.7,8-ում:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ինչպե՞ս արդար Աստված կարող է ներել մարդու անօրինությունները, ծածկել նրա մեղքերը և չհամարել դրանք:

ԱՍՏԾՈ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Աստծո խոսքի մեծագույն պնդումներից մեկն այն է, որ Աստծո համար անհնարին ոչինչ չկա: Այս ճշմարտությունն ամենից ակնհայտ երևաց այն բանում, թե ինչպես Աստված խորհեց պահպանել Իր արդարությունը և միաժամանակ ներում շնորհել մեղավոր մարդկությանը: Աստված Մարդ դարձավ, վերցրեց Իր ժողովրդի մեղքերը խաչի վրա և ընդունեց նրանց համար որոշված աստվածային դատաստանը: Չարչարվելով և մահանալով Իր ժողովրդի փոխարեն՝ Աստված գոհացրեց Իր արդարության պահանջները և խաղաղեցրեց Իր զայրույթն Իր ժողովրդի դեմ, որպեսզի Իր ողորմությունը նրանց հանդեպ կատարելապես համապատասխանի Իր արդարությանը:

Մեծ երկընտրանքը՝ այն, թե «Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և արդարացնել մեղավորներին», պատասխան ստացավ Հիսուս Քրիստոսի Ավետարանում: Նույն Աստված, Ով Իր արդարությամբ դատապարտում է մեղավորներին, Մարդ դարձավ և մահացավ մեղավորների փոխարեն: Աստված չանտեսեց Իր արդարության պահանջները, չհրաժարվեց դրանցից և չաղավաղեց դրանք՝ մեղավորներին արդարացնելու համար: Փոխարենը՝ Նա կատարեց արդարադատության պահանջները՝ Աստծո Որդու չարչարանքի և մահվան միջոցով Գողգոթայում:

Գլուխ 2. Աստծո դրդապատճառը՝ մարդուն փրկելու համար

Արժե հարցնել, թե ինչ դրդապատճառ ուներ Աստված, երբ մահվան ուղարկեց Իր միածին Որդուն՝ որպեսզի մեղավորները փրկություն ստանային: Աստծո Խոսքում մենք տեսնում ենք, որ Աստված չի փրկում մարդուն այն պատճառով, որ Ինքն ինչ-որ կարիք ունի, որ մարդիկ ինչ-որ ներհատուկ արժեք ունեն, կամ ինչ-որ սխրանքի պատճառով, որը մարդիկ կարող են գործել: Փոխարենը, Աստված իրագործեց փրկությունը Իր փառքի գովասանքի համար և այն մեծ սիրո շնորհիվ, որով Նա սիրեց մեզ:

Ամենից ակնածալի ճշմարտություններից մեկն Աստծո մասին այն է, որ Նա բացարձակապես ոչ մի կարիք չունի: Նրա գոյությունը, Նրա կամքի իրագործումը և Նրա հաճությունը կախված չեն Իրենից դուրս գտնվող որևէ մեկից կամ որևէ բանից: Նա միակ Էակն է, Ով ճշմարտապես ինքնագո, ինքնապահպանվող, ինքնաբավ, անկախ և ազատ է: Մնացած բոլոր արարածները ստանում են իրենց կյանքը և օրհնություններն Աստծուց, բայց այն ամենը, ինչ անհրաժեշտ է Աստծո գոյության և կատարյալ երջանկության համար, գտնվում է Իրենում: Սովորեցնելը կամ նույնիսկ ենթադրելը, որ Աստված ստեղծեց մարդուն և փրկում է նրան, քանի որ ունի նրա կարիքը կամ անլիարժեք է առանց նրա, անմտություն է և նույնիսկ հայհոյություն է:

> «Այն Աստված, որ աշխարհը և ամեն բան, որ նրանում կա, արեց, Նա, երկնքի և երկրի Տերը լինելով, ձեռագործ տաճարներում չի բնակվում: Եվ ո՛չ էլ մարդկանց ձեռքով է պաշտվում, իբր թե մի բանի կարոտ. Նա է ամեն մեկին կյանք և շունչ և ամեն բան տվողը...» (Գործք 17.24,25, կարդացե՛ք նաև Սաղմոս 50.9-12):

Ամենից խոնարհեցնող աստվածաշնչյան ճշմարտություններից մեկը մարդու մասին այն է, որ նա լիովին զուրկ է որևէ առաքինությունից կամ արժեքից: Այդ իսկ պատճառով, չկա որևէ բան, ինչով անկում ապրած մարդը երբևէ կարող էր դրդել Աստծուն սիրել իրեն. նրա գործերը և հատկանիշները միմիայն դատաստան և դատապարտություն են բերում նրա վրա: Այդ դեպքում ի՞նչը դրդեց Աստծուն՝ ուղարկել Իր միածին Որդուն՝ մեղավորներին փրկելու համար: Համաձայն Աստծո Խոսքի, Աստված արեց դա Իր փառքի գովասանքի համար և այն մեծ սիրո շնորհիվ, որով Նա սիրեց մեզ:

ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ՀԱՄԱՐ

Աստվածաշունչը սովորեցնում է, որ տիեզերքի արարումը, մարդու անկումը, Իսրայելի ժողովուրդը, Քրիստոսի խաչը, Եկեղեցին և ազգերի դատաստանը ունեն մեկ մեծ և վերջնական նպատակ՝ Աստծո փառքը: Սա նշանակում է, որ Աստված անում է այն, ինչ անում է, որպեսզի Իր էությունը լիովին հայտնվի Իր ստեղծագործությանը, և Իրեն գնահատեն, երկրպագեն և վայելեն Աստծուն արժանի կերպով:

Շատերը և նույնիսկ անկեղծ քրիստոնյաները հաճախ հարցնում են, թե արդյոք ճի՞շտ է, որ Աստված գործի Իր փառքի համար: Այս հարցին պատասխանելու համար մենք պարզապես պետք է հասկանանք, թե ով է Աստված: Համաձայն Աստվածաշնչի՝ Նա ***անսահմանորեն ավելի մեծ է***, քան Իր ստեղծագործությունն ամբողջությամբ: Այդ իսկ պատճառով, ոչ միայն ճիշտ է, այլև անհրաժեշտ է, որ Նա զբաղեցնի բարձրագույն դիրքը և դարձնի Իր փառքն Իր բոլոր գործերի մեծագույն պատճառը և գլխավոր նպատակը: Նա պետք է իրավամբ զբաղեցնի գլխավոր դիրքը և իրագործի ամեն ինչ այնպես, որ Իր փառքը (այսինքն՝ Իր ամբողջական ինքնությունը) հայտնի դառնա բոլորին, և արդյունքում Նա փառավորվի (այսինքն՝ գնահատանք և երկրպագություն ստանա) ամեն ինչից առավել: Նման նախապատվությունից խուսափելը կնշա-

նակեր, որ Նա մերժում է Իր աստվածությունը: Քանի որ, եթե որևէ մեկը՝ բացի Աստծուց, ձգտեր նման նախապատվության, դա կարելի էր համարել կռապաշտության ծանրագույն տեսակը:

Անչափ կարևոր է, որ հասկանանք, որ Աստված չի ձգտում Իր փառքին՝ Իր արարչագործության առավելագույն շահերից դուրս: Իրականում, մեծագույն շահը, որն Աստծո արարչագործությունը կարող է ստանալ Նրանից, և մեծագույն բարությունը, որը Նա երբևէ կարող է ցուցաբերել Իր արարչագործությանը, Իրեն փառավորելն է, այսինքն՝ ուղղորդել ամեն ինչ և գործել ամեն ինչում այնպես, որ Իր էությունն ամբողջովին ի հայտ գա նրանց համար: Եթե Աստված անսահման է Իր արժեքով, փառքով և գեղեցկությամբ, նշանակում է՝ ամենափառավոր և ամենագեղեցիկ պարգևը, որը Նա երբևէ կարող է տալ Իր արարածներին, Իր էությունն ամբողջովին հայտնելն է:

1. Համաձայն Հռոմեացիների 11.36-ի՝ ո՞րն է ամեն ինչի մեծագույն կամ վերջնական նպատակը:

_____

_____

_____

_____

2. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ո՞րն է Աստծո դրդապատճառը՝ Իր ժողովրդին փրկելու համար. նրանց արժե՞քը, թե՞ Իր փառքը: Համապատասխանեցրե՛ք ամեն մի խնդրանքը ճիշտ աստվածաշնչյան հատվածի հետ:

___ Սաղմոս 79.9	ա. Իր գովասանքի համար:
___ Սաղմոս 106.6-8	բ. Իր անվան փառքի համար:
___ Եսայի 48.9	գ. Իր մեծ անունը սրբելու համար:
___ Եսայի 63.12	դ. Որպեսզի Իր համար հավիտենական անուն շինի:
___ Եզեկիել 36.22,23	ե. Իր զորությունը հայտնելու (կամ՝ հասկացնելու) համար:

3. Երեմիա 33.8,9-ն այնքան կարևոր և նշանակալի հատված է, որ այն նույնիսկ առանձնանում է վերևում թվարկված աստվածաշնչյան հատվածներից: Համաձայն այս խոսքերի՝ ինչո՞ւ է Աստված փրկում մարդկանց: Պատճառը մեր արժանի՞քն է, թե՞ Նրա փառքը:

_____

_____

_____

_____

_____

4. Համաձայն հետևյալ հատվածների Հին և Նոր կտակարաններից՝ ո՞րն էր Աստծո մեծագույն դրդապատճառը, որով Նա փրկեց թե՛ հրեաներին, թե՛ հեթանոսներին:

   ա. Աստված փրկեց Իսրայելին, որ Իր համար Ա_____ Ա_____ (Բ Թագավորաց 7.23):

   բ. Աստված փրկեց հեթանոսներին Իր Ա_____ համար (Գործք 15.14):

> **ՆՇՈՒՄՆԵՐ.** Այս երկու արտահայտություններն էլ ցույց են տալիս, որ Աստված փրկեց մարդուն Իր համբավի, պատվի և փառքի համար:

5. Եփեսացիների 1.3-14-ում Սուրբ գրքի մեծագույն հայտարարություններից մեկն է Աստծո փրկության նպատակի մասին: Համաձայն այս հատվածի՝ ինչո՞ւ Աստված գործեց՝ մեզ փրկելու համար: Ո՞րն է մեր փրկության մեծագույն նպատակը:

   ա. Աստված փրկեց մեզ Իր կամքի Հ_____ պես (խս. 5): Այս բառը թարգմանված է հունարեն ***«եվդոկի՛ա»*** բառից, որը կարելի է թարգմանել «բարեհաճություն» կամ «բարի կամեցողություն»:

   բ. Աստված փրկեց մեզ Իր Փ_____ շնորհքի Գ_____ համար (խս. 6): Մեր փրկությունը՝ ինքնանպատակ չէ. այն նպատակին հասնելու միջոց է: Իսկ նպատակն այն է, որ Աստված փառավորվի Իր ժողովրդին ցուցաբերած շնորհքի համար:

   գ. Աստված փրկեց մեզ Իր Փ_____ Գ_____ համար (խս. 12,14): Այս արտահայտության կրկնվելը շեշտադրում է, որ մեր փրկության վերջնական աստվածային նպատակը՝ Աստծո փառքն է:

ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՍԻՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

Աստվածաշնչի կարևորագույն հռչակումներից մեկն Աստծո հատկանիշների մասին հետևյալն է. «Աստված սեր է» (Ա Հովհաննես 4.8): Նա ամենից շատ փառք է ստանում հենց անարժան մեղավորների հանդեպ ունեցած սիրո համար: Ամբողջ հավիտենության ընթացքում Աստված երկրպագություն է ստանալու Իր ժողովրդի հանդեպ ունեցած անպայմանական սիրո շնորհիվ: Մեծ ուրախություն և մխիթարություն է իմանալը, որ Աստված, Ով փրկում է Իր ժողովրդին հանուն Իր անվան, նույն Աստված է, Ով փրկում է հանուն Իր սիրո, որը մենք չենք կարող ո՛չ հասկանալ, ո՛չ էլ նկարագրել:

Կարևոր է, որ հասկանանք, որ Որդու գալուստը՝ մեղավորներին փրկելու համար, կատարելապես համապատասխանում է Հայր Աստծո կամքին: Մենք երբեք չպետք է մտածենք, որ Հայրը ցասկոտ Աստված է, Ով ցանկանում է անօրենների մահը, և որ Որդու փրկարար աշխատանքն ի կատար է ածվել Հորից անկախ և մեզ Նրանից փրկելու համար: Համաձայն Աստծո Խոսքի՝ Հայր Աստված էր, Ով ***այնպես սիրեց այս աշխարհը***, որ ուղարկեց Իր Որդուն ոչ թե աշխարհը դատապարտելու համար, այլ՝ որպեսզի Նրա միջոցով աշխարհը փրկվի (Հովհաննես 3.16,17): Որդու փրկարար աշխատանքը նաև Հոր փրկարար աշխատանքն է: Որդու սերը մեղավորների հանդեպ՝ Հոր սիրո կատարյալ արտացոլքն է:

1. Համաձայն Ա Հովհաննես 4.9,10-ի՝ ո՞րն է Հոր սիրո մեծագույն դրսևորումը մեղավոր մարդկանց հանդեպ: Ինչպե՞ս է այս հատվածն ապացուցում, որ Աստված ուղարկեց Իր Որդուն ոչ թե մարդկանց արժանիքների պատճառով, այլ՝ Իր սիրո:

   _____

   _____

2. Հովհաննես 3.16,17-ը ամենահայտնի և ամենասիրելի հատվածներից մեկն է ամբողջ Սուրբ գրքում: Համաձայն այս հատվածի՝ ո՞րն էր Աստծո դրդապատճառը Իր Որդուն ուղարկելու համար՝ որպեսզի Նա փրկեր մեղավորներին: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

ՆՇՈՒՄՆԵՐ. Բառացի թարգմանությունն այսպիսին է. «Որովհետև այս կերպով Աստված սիրեց աշխարհը. Նա տվեց Իր միակ Որդուն, որպեսզի՝ ով հավատում է Նրան, չկործանվի, այլ հավիտենական կյանք ունենա»:

3. Համաձայն Երկրորդ Օրինաց 7.6-8-ի՝ ո՞րն էր Աստծո ճշմարիտ դրդապատճառը Իսրայելի ժողովրդին փրկելու համար: Ինչպե՞ս կարելի է կիրառել այս ճշմարտությունը մեր հանդեպ:

4. Հիմնվելով հետևյալ աստվածաշնչյան հատվածների վրա՝ ցույց տվեք, որ Աստված փրկեց մեզ Իր սիրո՛ շնորհիվ, ո՛չ թե մարդկանց արժանիքների:

ա. Հռոմեացիների 5.6-10

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչև դարձի գալը, մարդիկ նկարագրվում են որպես տկար (խս. 6), ամբարիշտ (խս. 6), մեղավոր (խս. 8) և Աստծո թշնամիներ (խս. 10)։

բ. Եփեսացիների 2.1-5

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչև դարձի գալը, մարդիկ նկարագրվում են որպես մահացած մեղքերի մեջ (խս. 1,5), աշխարհի և սատանայի համախոհներ (խս. 2) և բարկության որդիներ, որոնք առաջնորդվում են մարմնի ցանկություններով (խս. 3)։

գ. Տիտոս 3.4,5

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 3. Որդու դրդապատճառը՝ մեզ փրկելու համար

Այս գլխում մենք կխոսենք այն բաների մասին, որոնք դրդեցին Որդուն՝ թողնել Իր փառքը, մարմին հագնել և զոհել կյանքը մարդկության փրկության համար: Մենք կբացահայտենք, որ Նա չարեց դա մարդու մեջ գտնվող ինչ-որ արժանիքի պատճառով, այլ՝ Իր Հոր փառքի համար, այն մեծ սիրո համար, որով Նա սիրեց մեզ, և Իր առջև դրված ուրախության համար:

ԻՐ ՀՈՐ ՓԱՌՔԻ ՀԱՄԱՐ

Քրիստոսի կյանքը նույնիսկ հպանցիկ ուսումնասիրելուց հետո ակնհայտ է դառնում, որ Նրա մեծագույն ձգտումը Հորը փառավորելն էր՝ Նրա կամքը կատարելու միջոցով: Քրիստոսի Անձի ամենից անըմբռնելի կողմերից մեկն այն է, որ թեև Նա Իր էությամբ Աստված էր, Նա չէր համարում հավասարությունն Աստծո հետ այնպիսի բան, ինչից պետք էր կառչել: Նա հոժարությամբ և ուրախությամբ թողեց աստվածության արտոնությունները և Մարդ դարձավ: Նա հնազանդ էր Հորը նույնիսկ մինչև Իր մահը խաչի վրա (Փիլիպեցիների 2.5-8, Եբրայեցիների 10.9): Թեև կային այլ շարժառիթներ, որոնցից դրդված՝ Քրիստոսը զոհաբերեց Իր կյանքն անկում ապրած մարդկության համար, սակայն առաջին և գլխավոր պատճառը՝ Հորը փառավորելու կրակոտ ցանկությունն էր: Այս իմաստով, սխալ չի լինի ասել, որ ***Քրիստոսը մահացավ Աստծո համար***:

1. Եբրայեցիների 10.7-ում մեջբերված է մի մեսիական մարգարեություն՝ Սաղմոս 40.7,8-ից: Համաձայն այս երկու հատվածների՝ ո՞րն էր մեծագույն նպատակը, որի համար Աստծո Որդին եկավ այս աշխարհ: Ո՞րն էր Նրա մեծագույն փափագը և առաջնահերթությունը:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

2. Ի՞նչ են հետևյալ աստվածաշնչյան հատվածները սովորեցնում մեզ այն մասին, որ Որդին (1) հնազանդվում էր Հոր կամքին, (2) ձգտում էր Հոր փառքին և (3) Հոր հանդեպ Իր սերը հայտնելու կրակոտ ցանկություն ուներ: Բացատրեք, թե ինչո՞ւ է ճիշտ ասել, որ Քրիստոսը կատարեց Իր բոլոր գործերը և նույնիսկ մահացավ, նախ և առաջ, Աստծո համար:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ա. Քրիստոսի հնազանդությունը Հոր կամքին (Հովհաննես 4.34)

_____

_____

_____

_____

բ. Քրիստոսի ծգտումը Հոր փառքին (Հովհաննես 17.4)

_____

_____

_____

_____

գ. Քրիստոսի կրակոտ ցանկությունը՝ հայտնելու Իր սերը Հոր հանդեպ (Հովհաննես 17.4)

_____

_____

_____

_____

3. Հռոմեացիների 15.8,9-ում գրված է Քրիստոսի գալստյան նաև թե՛ հրեաների, թե՛ հեթանոսների միջև կատարած փրկարար աշխատանքի երկու պատճառ: Որո՞նք են այդ պատճառները, և ինչպե՞ս են դրանք ցույց տալիս, որ Քրիստոսի գալուստը, նախ և առաջ, Աստծո փառքի համար էր:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը եկավ՝ կատարելու բոլոր խոստումները, որոնք Աստված տվել էր հրեաներին, որ նրանք փառավորեն Աստծուն Նրա հավատարմության համար: Քրիստոսը նույնպես եկավ հեթանոսների մոտ, որ նրանք փառավորեն Աստծուն Նրա ողորմության համար:

ԱՅՆ ՄԵԾ ՍԻՐՈ ՀԱՄԱՐ, ՈՐՈՎ ՆԱ ՍԻՐԵՑ ՄԵԶ

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Հայր Աստված ուղարկեց Իր Որդուն, որ աշխարհը փրկվի Նրա միջոցով (Հովհաննես 3.16,17)։ Այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ, որ Որդին հարկադրված չստանձնեց փրկարար աշխատանքը, և ո՛չ էլ դժկամորեն կատարեց այն։ Նա տվեց Իրեն ամբողջովին և հոժարաբար, որպեսզի Իր սիրո առարկան՝ կորսված, հարստահարված և ապստամբ մարդկությունը ստանա ներում և հավիտենական կյանք։ Մեծ խրախուսանք և մխիթարություն է իմանալը, որ Որդին, Ով կատարեց փրկության մեծագույն աշխատանքը, արեց այն ոչ միայն Աստծո փառքի համար, այլև այն մեծ սիրո համար, որով Նա սիրեց Իր ժողովրդին։ Քրիստոսը, Ով մահացավ ***Աստծո համար***, նույնպես մահացավ ***մեզ համար***:

1. Հովհաննես 15.9-ում գրված է Աստվածաշնչի ամենազարմանալի հայտարարություններից մեկը։ Ի՞նչ է այն ցույց տալիս մեզ Քրիստոսի փրկարար աշխատանքի դրդապատճառի մասին։

_____

_____

_____

_____

_____

2. Համաձայն Աստվածաշնչի՝ սերն առաջնորդեց Քրիստոսին զոհել Իր կյանքն Իր ժողովրդի համար։ Ինչպե՞ս են Գաղատացիների 2.20-ը և Եփեսացիների 5.2-ը հաստատում այս ճշմարտությունը։

_____

_____

_____

_____

_____

3. Քրիստոսի սիրո չափն այն է, որ Նա տվեց Իր կյանքը մեզ համար։ Սիրո ավելի մեծ դրսևորում կամ օրինակ չի կարող լինել։ Ի՞նչ է Սուրբ գիրքը սովորեցնում մեզ այս ճշմարտության մասին։ Ինչպե՞ս է այն ևս մեկ անգամ ապացուցում, որ Որդու գալուստի դրդապատճառը ոչ թե մարդու արժանիքները կամ արժեքն էր, այլ՝ Իր սերը։

ա. Հովհաննես 15.13,14

_____

_____

_____

_____

բ. Ա Հովհաննես 3.16

ԻՐ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Որդին զոհեց Իր կյանքն Իր Հոր փառքի համար. այսպիսով, Նա ***մահացավ Աստծո համար:*** Որդին զոհեց Իր կյանքն այն մեծ սիրո շնորհիվ, որով Նա սիրեց մեզ. այսպիսով, Նա ***մահացավ Իր ժողովրդի համար:*** Մեր ուսումնասիրությունն ավարտելու համար՝ կդիտարկենք Որդու խաչ բարձրանալու վերջին դրդապատճառը. Նա ***մահացավ Իր առջև դրված ուրախության համար:***

Եթե պնդենք, որ Որդին դրդված էր ապագա ուրախության հույսով, ոմանց կթվա, որ դրանով մենք շահախնդիր ենք անվանում Քրիստոսին: Ինչպե՞ս Նա կարող է միաժամանակ փնտրել Աստծո փառքը, Իր ժողովրդի փրկությունը և Իր ուրախությունը: Այս առարկությանը կարելի է հեշտորեն պատասխանել: Առաջինը՝ մենք պետք է հասկանանք, որ Աստծո Որդու մեծագույն ուրախությունը Հոր կամքը և փառքը տարածելն էր: Այդ իսկ պատճառով, Որդու ուրախությունը, Հոր փառքը և Իր ժողովրդի փրկությունը համարժեք էին Քրիստոսի համար: Նրա սրտում չկար ոչ մի երկվություն: Նույնպես, մենք պետք է հասկանանք, որ Աստծո Որդին իրավունք ունի ձգտելու Իր ուրախությանը: Ամեն ինչ ստեղծվեց Նրանով և Նրա համար (Կողոսացիների 1.16): Հայրը ամեն բան տվել է Որդուն (Հովհաննես 3.35) և ցանկանում է, որ բոլորը պատվեն Որդուն, ինչպես որ պատվում են Իրեն (Հովհաննես 5.23): Հորը հաճելի է, որ Որդու ուրախությունը կատարյալ լինի: Ամբողջ արարչագործությունը ամենուր ունի մեկ մեծ և վերջնական նպատակ՝ փառավորել և հաճեցնել Աստծո Որդուն:

1. Համաձայն Եբրայեցիների 12.2-ի՝ ինչո՞ւ էր Աստծո Հոգին կամենում թողնել երկնային փառքը, մարդկային մարմին հագնել և կրել խաչի նվաստացումը և ցավը:

2. Եբրայեցիների 12.2-ը պարզորեն սովորեցնում է, որ Քրիստոսը բարձրացավ Գողգոթայի խաչը՝ Իր առջև դրված ուրախությամբ: Այնուամենայնիվ, մենք պետք է հարց տանք. ինչի՞ց էր բաղկացած այդ ուրախությունը: Ի՞նչ են սովորեցնում մեզ հետևյալ հատվածները:

ա. ***ԻՐ ՅՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ (ՍԱՂՄՈՍ 16.9-11)***

ՆՇՈՒՄՆԵՐ. Պետրոս առաքյալը մեջբերեց այս հատվածը, երբ քարոզում էր Պենտեկոստեի օրը՝ խոսելով Քրիստոսի հարության և մեծարման մասին (Գործք 2.25-28)։ Պողոս առաքյալը խոսեց այս մասին, երբ քարոզում էր Անտիոքի ժողովարանում (Գործք 13.35)։ Իր Հոր երկնային բնակավայրը թողնելը անասելի փորձություն էր Աստծո Որդու համար, բայց Իր ժողովրդի մեղքերը կրելը և նրանց փոխարեն չարչարվելը անսահմանորեն ավելի մեծ փորձություն էր։ Նա կրեց աննկարագրելի կտտանքներ, սակայն արհամարհեց դրանք, քանի որ նայում էր Իր Հոր հետ կրկին բնակվելու և Նրա ներկայության մեջ կրկին ցնծալու ապագա հույսին։

բ. ***ԻՐ ՅՈՐ ՓԱՌՔԻՆ ԲԱԺՆԵԿՑԵԼՈՒ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ (ՅՈՎՀԱՆՆԵՍ 17.4,5,24)***

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն ուրախությունը, որը դրդեց Քրիստոսին՝ զոհաբերել Իրեն Իր ժողովրդի մեղքերի համար, մասամբ բաղկացած էր Իր ապագա փառավորումից կամ մեծարումից՝ դեպի այն դիրքը, որն իրավամբ Իրեն էր պատկանում նույնիսկ մինչև աշխարհի սկիզբը։ Նա վերադառնալու էր որպես Տեր և Փրկիչ՝ մեծարված Հաղթող, Ով հաղթեց ամեն մի խոչընդոտ, որ ստանար Իր ժողովրդի փրկությունը։

գ. ***ԻՐ ՀԱՄԱՐ ՓՐԿՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՍՏԱՆԱԼՈՒ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ*** - Մինչև աշխարհի հիմնադրումը, Աստված որոշել էր փրկել մի ժողովրդի մեղավոր մարդկության բազմությունից, որը կապրեր Որդու փառքի, պատվի և գովասանքի համար: Համաձայն Հոր կամքի և ակնկալելով Իր առջև դրված ուրախությունը (ուրախությունն Իր փրկագնված ժողովրդի համար)՝ Որդին հոժարությամբ և նույնիսկ ուրախությամբ կրեց ամեն բան Իր Հարսնացուի համար, և այն ուրախության համար, որն Իր Հարսնացուն ի վերջո պարգևելու էր Իրեն: Իր մարմնավորման և մահվան միջոցով Նա ապահովեց Իր համար մեծ բազմություն՝ ամեն ցեղից, լեզվից, ժողովրդից և ազգից: Նա դարձրեց նրանց ուրախության, գոհության և փառքի մշտական աղբյուր՝ ամբողջ հավիտենության համար: Ինչ են սովորեցնում մեզ հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

(1) Սաղմոս 2.8

_____

_____

_____

_____

_____

(2) Եսայի 53.11

_____

_____

_____

_____

_____

(3) Ղուկաս 15.10

_____

_____

_____

_____

_____

(4) Եբրայեցիների 2.11-13

(5) Հայտնություն 5.9,10, 7.9,10, 22.3-5

Գլուխ 4. Աստծո Որդին՝ փառքի մեջ

Որպեսզի հասկանանք Աստծո Որդու գալուստի մեծությունը և վեհությունը, նախ պետք է խոսենք Նրա աստվածային բնության և հավիտենական փառքի մասին: Այս գլխում մենք կիմանանք, որ Աստծո Որդու գոյությունը սկիզբ չառավ, երբ Նա ծնվեց Բեթլեհեմում, այլ՝ որ Նա գոյություն է ունեցել ամբողջ հավիտենության ընթացքում՝ լինելով հավասար Հորը և՛ բնությամբ, և՛ փառքով: Այնպես չէր, որ մի հասարակ մարդ կամ նույնիսկ մի հրեշտակապետ տվեց իր կյանքը մեր փրկության համար, այլ՝ Աստծո հավիտենական Որդին՝ ամեն ինչի Արարիչը, Պահապանը և Գերիշխան Տերը: Մենք կարժևորենք և կգնահատենք Ավետարանը այնչափ, որչափ որ կհասկանանք, թե ով է իրականում Աստծո Որդին:

ՈՐԴՈՒ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Աստծո Խոսքը վկայում է, որ միակ ճշմարիտ Աստված գոյություն ունի որպես Երրորդություն (լատիներեն՝ «***տրինիտաս***», որը նշանակում է «եռապատիկ» կամ «երեքը՝ մեկում»)՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Նրանք երեք որոշակի Անձեր են, ովքեր տարբեր են Մեկը Մյուսից, բայց ունեն նույն աստվածային ***բնությունը*** կամ ***էությունը***, և ունեն հավիտենական և անխաթար հաղորդակցություն Իրար հետ: Որդին, Ով Մարդ դարձավ և մահացավ Գողգոթայի խաչի վրա, հավիտենական Աստված է: Նա հավասար է Հորը և Հոգուն և ամեն առումով բաժնեկցում է Նրանց անըմբռնելի փառքին:

Բացարձակապես անհրաժեշտ է, որ հասկանանք, թե որքան կարևոր է այս ուսմունքը: Աստծո Որդու աստվածությունը՝ քրիստոնեական հավատքի հիմնարար վարդապետություններից մեկն է: Ցանկացած ուսմունք, որը դիտարկում է Նրան ցածր Հորից կամ «ավելի ցածր փառք ունեցող աստված», պարզապես քրիստոնեական չէ: Որդին ստեղծված էակ չէ. Նա ո՛չ հրեշտակ է, ո՛չ էլ՝ կիսաստված, ով պետք է դասակարգվի ինչ-որ տեղ Աստծո և արարչագործության միջև: Նա Աստված է այդ բառի բարձրագույն իմաստով: Մեր փրկության հավաստիացումը և մեր Ավետարանի անաղարտությունը կախված է այս ճշմարտությունը ակնածանքով և ի սրտե ընդունելուց:

1. Հովհաննես 1.1-4-ում գրված է ամենապարզ հայտարարություններից մեկը Աստծո Որդու և՛ աստվածային, և՛ հավիտենական լինելու մասին: Գտե՛ք այն ճշմարտությունները, որոնք հայտնված են այս հատվածներում:

   ա. «Սկզբում էր Բ_____ (կամ՝ Խոսքը)» (խս. 1): Սա ակնհայտ հղում է Աստծո Որդուն (խս. 14): «Բան» կամ «Խոսք» բառը թարգմանված է հունարեն «***լո՛գոս***» բառից, որը նշանակում է «բառ» կամ «դատողություն»: Հրեաները հաճախ էին օգտագործում այս բառը՝ որպես հղում Աստծուն: Հույների համար այն նշանակում էր աստվածային դատողություն կամ ռացիոնալ սկզբունք, որը կառավարում է տիեզերքը: Օգտագործվելով Աստծո Որդու վերաբերյալ՝ այս բառը նշանակում է, որ Նա Աստվածություն է (լիարժեք և ճշմարիտ Աստված) և Միջնորդ, որի միջոցով Աստված հայտնում է Իրեն Իր արարչագործությանը: Որդին Աստծո հետ էր «սկզբում»՝ մինչև արարչագործությունը. Նա անստեղծ, հավիտենական և աստվածային է:

   բ. «Եվ Բանը (կամ՝ Խոսքը) Աստծո Մ_____ էր» (խս. 1): Մենք տեսնում ենք այն միասնությունը և տարանջատումը, որոնք գոյություն են ունեցել Հոր և Որդու միջև ամբողջ հավիտենության ընթաց-

քում: Առաջին հերթին՝ այս բառը ենթադրում է միասնություն և հավասարություն. այսինքն՝ Հայրը և Որդին գոյություն են ունեցել կատարյալ հաղորդության մեջ: Այս հատվածը կարելի է թարգմանել. «Եվ Խոսքը երես առ երես Աստծո հետ էր»՝ մատնանշելով այն մտերիմ շփումը, հաղորդությունը և բերկրանքը, որոնք կային Հոր, Որդու և Սուրբ Հոգու միջև: Երկրորդ հերթին՝ այն նաև ենթադրում է տարանջատում: Հայրը և Որդին ունեն նույն աստվածային էությունը, բայց Նրանք երկու իրական և առանձին Անձեր են, որոնք գոյություն ունեն կատարյալ հաղորդության մեջ Մեկը Մյուսի և Սուրբ Հոգու հետ:

գ. *«Եվ Բանն (կամ՝ Խոսքն) Ա_____ էր» (խս. 1):* Սա անժխտելի պնդում է Խոսքի աստվածության մասին: Հունարեն բնագրում այս արտահայտությունը բառացիորեն այսպես է գրված. «Եվ Աստված Խոսքն էր» (***կաի՛ Թեո՛ս են հո Լո՛գոս»***): Անվանական ստորոգյալը («Աստված» բառը) նախորդում է ենթակային (Խոսքը), որպեսզի շեշտադրի այն փաստը, որ Խոսքն իրականում և ճշմարտապես Աստված է: Աստծո Որդին՝ Որդի Աստված է: Աստվածության լիությունը բնակվում է Նրանում (Կողոսացիների 2.9):

դ. *«Ամեն ինչ Ն_____ (կամ՝ «Նրա միջոցով») եղավ, և առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ» (խս. 3):* Դրական իմաստով՝ ամեն ինչ ստեղծվեց Որդու միջոցով (նույնպես կարդացե՛ք Կողոսացիների 1.16): Նա արարչագործության մասնակիցն էր՝ Հոր և Հոգու հետ: Բացասական իմաստով՝ գոյություն չունի որևէ բան, ինչը կյանքի չի կոչվել Նրա կողմից: Այնպես չէ, որ Որդին Աստծո հետ էր միայն սկզբում. Նա նույնպես կատարում էր Աստծո գործերը՝ որպես Աստված:

ե. *«Ն_____ (կամ՝ Նրանում) էր Կ_____, և կյանքը մարդկանց լույսն էր» (խս. 4):* Սաղմոս 36.9-ը հայտնում է. «Որովհետև կյանքի աղբյուրը Քեզ (այսինքն՝ Աստծո) մոտ է, և Քո լույսով ենք տեսնում լույս»: Ակնառու է, որ այն, ինչ սաղմոսերգուն վերագրում է Աստծուն, Հովհաննես առաքյալը վերագրում է Որդուն: Այն ամենը, որ երբևէ կյանք է ունեցել, ապրել է Աստծո Որդու շնորհքով: Ցանկացած ճշմարիտ գիտելիք Աստծո մասին, որը մարդիկ երբևէ ունեցել են, շնորհվել է նրանց որպես ողորմած պարգև Որդուց: Անըմբռնելի հրաշք է, որ կյանքի Աղբյուրը զոհել է Իր կյանքը նրանց համար, ովքեր կյանք չունեն:

2. Փիլիպեցիների 2.6-ում գրված է ևս մեկ ապացույց Քրիստոսի աստվածային և հավիտենական էության մասին: Գտե՛ք այն ճշմարտությունները, որոնք հայտնված են այս խոսքում:

ա. *«Որ Աստծո Կ_____ Լ_____»:* Որդու գոյությունը չսկսվեց Նրա մարմնավորման պահից: Նա հավիտենական է՝ առանց սկիզբ և վերջ: «Կերպարանք» բառը թարգմանված է հունարեն «***մորֆե՛***» բառից, որը նշանակում է ոչ միայն ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի արտաքին տեսքը կամ երևույթը, այլև դրա էությունը կամ դրա հիմքում ընկած իրողությունը: Այնպես չէ, որ Որդին սոսկ Աստծո ***նմանությունն ուներ***. Նա իրականում Աստված ***էր***՝ էությամբ և բնությամբ:

բ. *«Հափշտակություն չհամարեց Աստծուն Հ_____ լինել»:* «Հավասար» բառը թարգմանված է հունարեն ***«ի՛սոս»*** բառից, որը նշանակում է «լինել հավասար՝ քանակով կամ որակով»: Որդու մեջ բնակվում էր աստվածության (որակ) լիությունը (քանակ) (Կողոսացիների 2.9): Նա չուներ ոչ մի պակասություն՝ աստվածության առումով. Նա հավասար էր ամեն կերպով՝ այս բառի լիարժեք իմաստով:

ՈՐԴՈՒ ՓԱՌՔԸ

Հաստատելով Աստծո Որդու հավիտենական գոյությունը և աստվածությունը՝ այժմ կխոսենք այն փառքի մասին, որը պատկանում էր Որդուն Նրա մարմնավորումից առաջ, աշխարհի սկզբից առաջ և հավիտենից ի վեր: Թեև Աստվածաշունչը միայն հպանցիկ է խոսում հավիտենական անցյալի մասին, դա բավական է՝ ապացուցելու համար, որ Որդին Աստված էր՝ այդ բառի բարձրագույն և ամենավեհ իմաստով, և որ Նա կրում էր Աստծո փառքը՝ ինչպես Աստված: Նա Հոր հետ էր և կիսում էր Հոր փառքը (Հովհաննես 17.5): Նա Հոր գերագույն և անսպառ բերկրանքն էր, և Հորը հաճելի էր, որ Նա լիներ արարչագործությունը կյանքի կոչելու գործիքը և դրա կիզակետը, ուրախության աղբյուրը, երկրպագության առարկան և գոյության մեծագույն նպատակը: Արարչագործության սկզբից ի վեր, յուրաքանչյուր վսեմ արարած, որը բնակվում է Երկնքում, ունեցել է միայն մեկ մեծ ցանկություն՝ տեսնել Աստծո փառքը, որն արտացոլվում է Նրա մեծարված Որդու դեմքում:

Եթե մենք թեկուզ որոշ չափով հասկանանք այս ճշմարտությունները, պատշաճ կերպով կդիտարկենք և կարժևորենք Ավետարանը: Այնպես չէր, որ մի հասարակ մարդ կամ նույնիսկ մարմին հագած մի հրեշտակ մահացավ մեզ համար այդ օրը: Դա փառքի Աստված էր՝ տիեզերքի Տերը և մեր երկրպագության Առարկան, Միակը, Ում միջոցով ամեն ինչ ստեղծվեց, և Ում համար ամեն ինչ գոյություն ունի:

1. Կողոսացիների 1.15-17-ը ազդեցիկ կերպով հռչակում է Որդու հավիտենական բնության և փառքի մասին, որը Նա ուներ մինչև Իր մարմնավորումը՝ նույն բնության և փառքի, որն ունի նաև Հայրը: Հիմնվելով այս հատվածի վրա՝ ավարտե՛ք ստորև բերված պնդումները:

   ա. Որդին աներևույթ Աստծո Պ_____ է (խս. 15): Այս բառը թարգմանված է հունարեն ***«էյ-կոն»*** բառից, որը նշանակում է «պատկեր» կամ «նմանություն»: Միայն Աստված կարող է կրել Աստծո ճշգրիտ նմանությունը: Եբրայեցիների 1.3-ը պնդում է. «Նա՝ Նրա փառքի պայծառությունն է և Նրա բնության ճշգրիտ պատկերումը» (NASB):

   բ. Որդին ամեն ստեղծվածներից Ա_____ Ծ_____ է (կամ՝ ամբողջ ստեղծագործության առաջնեկը, խս. 15): Սա ո՛չ Քրիստոսի աստվածության ժխտում է, ո՛չ էլ ապացույց, որ Նա ստեղծված էակ է: Սաղմոս 89.27-ում Աստված հռչակում է հետևյալը Դավթի մասին. «Եվ Ես առաջնեկ կդնեմ նրան՝ երկրի թագավորների վրա բարձրացած»: Ակնհայտ է, որ Դավիթն Աստծո առաջնեկն էր այն իմաստով միայն, որ նա բարձր էր դասվել մնացած բոլոր թագավորներից: Աստծո Որդին «առաջնեկ» է այն իմաստով, որ Նա բարձր է և առանձին է ամբողջ արարչագործությունից: Նրան պատկանում են առաջնեկի բոլոր իրավունքները և արտոնությունները:

   գ. Որդին ամեն ինչից Ա_____ է (խս. 17): Այս հռչակումը Որդու հավիտենական էության, գերիշխանության և գերազանցության մասին է:

   դ. Որդին ամեն ինչ Ս_____ է (խս. 16): Ամբողջ ստեղծագործությունն իր գոյությամբ պարտական է Որդուն, անմիջականորեն կախված է Նրանից և կապված է Նրա հետ:

   ե. Որդին ամեն ինչի Պահապանն է. ամեն ինչ Նրանով է Հ_____ (խս. 17): Ամբողջ ստեղծագործության գոյությունը բացարձակապես կախված է Որդուց: Նա «Իր զորության խոսքով ամեն բան կրում է»: Որդին առասպելական Ատլանտը չէ, որը հառաչում է ընդամենը մեկ աշխարհի ծանրության տակ. Նա պահում է անթիվ աշխարհներ ընդամենը մեկ խոսքով:

գ. Որդին ամեն ինչի Մեծագույն Նպատակն է՝ ամեն ինչ ստեղծվեց Նրա Հ_____ (խս. 16): Որդու հավիտենական փառքը երևում է այն բանում, որ ամեն ինչ ստեղծվեց Նրա ***միջոցով*** և Նրա փառքի և հաճության ***համար****:*

2. Եսայի 6.1-10-ում Աստծո փառքի ամենապատկերավոր և ամենավեհ նկարագրությունն է Աստվածաշնչում: Այնուամենայնիվ, եթե ավելի խորը ուսումնասիրենք այն, կպարզվի, որ իր տեսիլքի մեջ Եսային տեսել էր Որդուն: Ծանոթացե՛ք Եսայի 6.1-5-ի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. Համաձայն խոսքեր 1-3-ի՝ Եսային տեսավ Տ_____:

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսք 1-ում «Տեր» բառը թարգմանված է եբրայերեն «***ադոնայ***» բառից, իսկ խոսք 3-ում՝ եբրայերեն «***Յահվեհ***» կամ «***Եհովա***» բառից: Անառարկելի է, որ Եսային տեսել էր Աստծուն: Այնուամենայնիվ, Հովհաննես 12.39-41-ը հայտնում է, որ այս Էակը Երրորդության երկրորդ Անձը, այսինքն՝ Աստծո Որդին է, սրանով իսկ հաստատելով, որ Քրիստոսը Աստված է:

բ. Համաձայն Եսայի 6.1-ի՝ ինչպե՞ս է նկարագրված Աստծո Որդին: Ի՞նչ է սա հայտնում մեզ Նրա փառքի մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Որդին վեր էր երկնքում և երկրի վրա գտնվող ամբողջ արարչագործությունից: Նրա հանդերձի քղանցքը ծածկել էր տաճարը, ինչը խորհրդանշում է Նրա համընդհանուր, անսահմանափակ և անարգել գերիշխանությունը:

գ. Համաձայն խոսքեր 2,3-ի՝ ինչպե՞ս էին արձագանքում սերովբեները (որոնք, միգուցե, բարձրագույն աստիճանն ունեցող էակներն են ամբողջ արարչագործության մեջ) Աստծո Որդուն: Ի՞նչ է սա ցույց տալիս Նրա փառքի և գերազանցության մասին:

_____

_____

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՆՇՈՒՄՆԵՐ. Տիեզերքի ամենից զորավոր և վեհ ստեղծվածները երկյուղածությամբ խոնարհվում են Աստծո Որդու ներկայության մեջ: «Սուրբ» բառը թարգմանված է եբրայերեն «***կադոշ***» բառից, որն առանձնացված լինելու իմաստ ունի: Այս բառը ցույց է տալիս այն, ինչն առանձնացված է, բաժանված է կամ եզակի է: Աստված առանձնանում է ամբողջ արարչագործությունից: Չկա մեկը՝ Նրա նման, և ոչ ոք չի կարող համեմատվել Նրա հետ (Եսայի 40.18): Որդուն նույնիսկ ամենասքանչելի ստեղծվածի հետ համեմատելը անսահմանորեն ավելի մեծ անմտություն կլինի, քան աննշան կայծը կեսօրյա արևի հետ համեմատելը: Որդու սրբությունը հռչակվում է երեք անգամ, ինչը գերադրության ամենաուժգին ձևն է եբրայերեն լեզվում: Այս հատվածն օգնում է մեզ հասկանալ, թե ինչ նկատի ուներ Հիսուսը Հովհաննես 17.5-ում. «Եվ հիմա, փառավորի՛ր Ինձ Դու, Հա՛յր, Քեզ մոտ այն փառքով, որ աշխարհի լինելուց առաջ ունեի Քեզ մոտ»: Մի՞թե զարմանալի չէ, որ Նրա նմանը մահացավ մեզ պես մեղավորների համար:

Գլուխ 5. Որդին մարդ դարձավ

ՄԱՍ ՄԵԿ. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Աստծո Որդու հավիտենական փառքին անդրադառնալուց հետո մենք կխոսենք Նրա ***մարմնավորման*** մասին: «Մարմնավորվել» բառը լատիներենում ***«ինկարնարե»*** բառն է (***«ին»*** = մեջ + ***«կարո»*** = մարմին), ինչը նշանակում է «մարմին դարձնել» կամ «մարմին դառնալ»: Աստվածաշնչում մարմնավորում ասելով՝ հասկանում ենք այն մեծ ճշմարտությունը, որ մոտավորապես երկու հազար տարի առաջ Աստծո հավիտենական Որդին հղացվեց Սուրբ Հոգու կողմից մի կույսի որովայնում, և ծնվեց Նազովրեցի Հիսուսը՝ Աստված-Մարդը: Նա աստվածության լիությունն էր՝ մարմնով (Կողոսացիների 2.9), բայց նման էր մեզ ամեն առումով՝ բացի մեղքից (Եբրայեցիների 4.15): Նա կատարելապես արդար կյանք վարեց Հին կտակարանի Օրենքի ներքո և մատուցեց Իրեն որպես զոհ՝ Իր ժողովրդի մեղքերի համար:

Անկասկած՝ Աստծո Որդու գալուստը աշխարհ՝ մարդկության պատմության ամենաակնառու իրադարձությունն է և առանցքային դեր է կատարում աստվածաշնչյան քրիստոնեության մեջ: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է, որ լրջորեն ուսումնասիրենք մարմնավորման վարդապետությունը:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Թեև մարմնավորումը տեղի ունեցավ մոտավորապես երկու հազար տարի առաջ, կարևոր է հասկանալ, որ դրանից առաջ եղել են «ակնարկներ» այս մեծագույն իրադարձության մասին Հին կտակարանի մարգարեների գրվածքներում: Մենք կդիտարկենք այդ հինկտակարանյան մարգարեություններից մի քանիսը, ինչը և՛ օգտակար, և՛ խրախուսական կլինի: Այն փաստը, որ դրանք գրվել են Նազովրեցի Հիսուսի ծնվելուց հարյուրավոր տարիներ առաջ, ծանրակշիռ կերպով հաստատում է Նոր կտակարանի պնդումները և՛ Նրա մարմնավորման, և՛ Նրա աստվածության մասին:

1. Միքիա 5.2-ում գրված է մի ազդեցիկ մարգարեություն Մեսիայի մասին: Ծանոթացե՛ք այս խոսքի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

   ա. Ինչպե՞ս է այս մարգարեությունն ապացուցում, որ Մեսիան մարդ է լինելու:

   (1) Նա գալու էր Հ_____ Հ_____ (կամ՝ տոհմերից):

   ՆՇՈՒՄՆԵՐ. Մեսիան գալու էր Հուդայի ցեղից և Դավթի տնից: Հռոմեացիների 1.3-ում Պողոս առաքյալը հաստատում է, որ Հիսուսը «մարմնի կողմից Դավթի զավակից եղավ»: Նա պետք է լիներ լիարժեք Աստված և լիարժեք մարդ: Որպես մարդ՝ Նա ծնվելու էր Դավթի ցեղից:

   բ. Ինչպե՞ս է այս մարգարեությունը հայտնում, որ Մեսիան լինելու է ավելին, քան մարդ, որ Նա հավիտենական Աստված է:

   (1) Նրա ելքը Հ_____ օրերից է:

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա պարզ ցուցանիշ է այն մասին, որ Քրիստոսը լինելու էր ավելին, քան մարդ: Այս արտահայտությունը պարզապես չի նշանակում, որ Նրա գալուստը վաղուց կանխասված էր, այլ որ Նա գոյություն ուներ Իր ծնունդից առաջ՝ հավիտենից ի վեր: Նման բան կարելի է ասել միայն Աստծո մասին. այդ իսկ պատճառով, այս նկարագրությունը նաև պարզ հղում է Մեսիայի աստվածությանը: Եթե Նա հավիտենական է, Նա նույնպես Աստված է, քանի որ Աստված հավիտենական է:

2. Եսայի 7.14-ում գրված է մի մարգարեություն, որը մեջբերվում է Մատթեոսի Ավետարանում: Այն խոսում է Հիսուս Քրիստոսի և՛ մարմնավորման, և՛ կուսական ծննդի մասին (Մատթեոս 1.22,23): Ի՞նչ է կանխասում այս հատվածը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ամենայն հավանականությամբ, այս մարգարեությունը սկզբնապես իրականացավ, երբ մարգարեուհին ծնեց Եսայու որդուն (8.3), քանի որ գրված է, որ մինչև այդ երեխան սովորեր կանչել «հայրս» և «մայրս», Հուդայի թշնամիներն արդեն կպարտվեին (8.4): Սակայն այդ մարգարեությունն ուներ ավելի լայն իրականացում՝ ի դեմս Մեսիայի: Թեև այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Եսայու խոսքերն իրականացան կարճ ժամանակ անց, ակնհայտ է, որ նրա մարգարեությունը գնում էր շատ ավելի հեռուն, քան ցանկացած ենթադրյալ ***ամբողջական*** իրականացում նրա կամ նրա որդու կյանքի ընթացքում: Եբրայերենում կա երկու բառ, որոնք կարելի է թարգմանել որպես «կույս»: Առաջինը ***«ալմա»*** բառն է, որը նշանակում է՝ «կույս կամ ամուսնական տարիքի երիտասարդ կին». երկրորդը ***«բտուլա»*** բառն է, որը միայն նշանակում է «կույս»: Մարդիկ հաճախ օգտագործել են այն փաստը, որ Եսային օգտագործել է ***«ալմա»*** բառը՝ ***«բտուլա»*** բառի փոխարեն, բայց դրա պատճառը պարզ է: Սուրբ Հոգու իմաստությունն ընտրեց այնպիսի բառ, որը կատարելապես համապատասխան կլիներ և՛ այդ մարգարեության մասնակի իրականացմանը Եսայու օրերում, և՛ դրա ամբողջական իրականացմանը՝ ի դեմս Մեսիայի: Եսայու ժամանակ ***երիտասարդ կինը*** հղացավ բնական միջոցով և որդի ծնեց, բայց այդ մարգարեության լիարժեք իրականացման ժամանակ ***կույսը*** հղացավ Սուրբ Հոգուց և Որդի ծնեց, Ով և՛ Աստված էր, և՛ Մարդ: Կարևոր է նշել, որ երբ հրեա դպիրները թարգմանեցին Եսայի 7.14-ը հունարեն լեզվով (Յոթանասունից կամ LXX թարգմանությունը), նրանք ընտրեցին հունարեն ***«հե՛ պարթենոս»*** արտահայտությունը (այսինքն՝ «կույսը»)՝ որպես եբրայերեն ***«ալմա»*** բառի պատշաճ թարգմանություն: Մատթեոսը մեջբերում է այս հատվածը հունարեն Յոթանասունից թարգմանությունից Մատթեոս 1.22,23-ում: Նա օգտագործում է ***«հե՛ պարթենոս»*** արտահայտությունը՝ վկայելով Հիսուս Քրիստոսի կուսական ծննդի մասին: Այն մարդիկ, ովքեր ժխտում են, որ Մեսիան գերբնականորեն հղացվել է Կույս Մարիամի որովայնում, չեն կարող օգտագործել Նոր կտակարանը՝ որպես փաստարկ: Ավետարանի հեղինակները ոչ երկիմաստ կերպով ցույց տվեցին, որ Քրիստոսը ծնվել է կույսից: Մատթեոս 1.23-ում առաքյալը ներկայացնում է մեզ «Էմմանուել» տիտղոսի պատշաճ թարգմանությունը՝ «Աստված մեզ հետ»: Այս անունը Եսայի 7.14-ի անմիջական համատեքստում պարզապես ենթադրում է, որ այդ երեխայի ծնունդը լինելու է Աստծո երաշխավորությունը և ապացույցն այն մասին, որ Նա Հուդայի հետ է, և որ Նա կազատի նրանց իրենց թշնամիներից՝ Իսրայելից և Ասորեստանից: Իսկ երբ խոսքը Մեսիայի մասին է, ապա, համաձայն Մատթեոսի ըմբռնման, այդ անունը նշանակում է ոչ պակաս, քան «Խոսքը մարմին դարձավ և բնակվեց մեր մեջ» (Հովհաննես 1.14):

3. Եսայի 9.6ա-ում տեսնում ենք Մեսիայի հրաշալի և առեղծվածային գալստյան մեծագույն ակնարկներից մեկը Հին կտակարանում: Ծանոթացե՛ք այս խոսքի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք ստորև բերված հարցերին: Ի՞նչ կերպով է այս մարգարեությունը փոխանցում ճշմարտությունը մարմնավորման մասին՝ այն, որ Մեսիան լինելու է ավելին, քան մարդ, և որ Նրանում բնակվելու է աստվածության լիությունը:

ա. Ինչպե՞ս է այս մարգարեությունը հայտնում Մեսիայի մարդկային բնությունը:

(1) Մեզ մի մանուկ Ծ_____:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս մարգարեության մեջ գրված է իրական մարդկային ծնունդի մասին: Թեև Մեսիան գերբնականորեն էր հղացվել կույսի որովայնում, նա ծնվելու էր այնպես, ինչպես ցանկացած մարդ, որը մուտք է գործում այս աշխարհ: Չունենալով աստվածային հայտնություն՝ ոչ ոք չէր հասկանա, որ մսուրում դրված այդ նորածինը հավիտենական և անիմանալի Աստված էր:

բ. Ինչպե՞ս է այս մարգարեությունը հայտնում Մեսիայի աստվածային բնությունը:

(1) Մեզ մի Ո_____ Տ_____:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքերի միջոցով մենք նայում ենք Սրբության սրբոցի քողից այն կողմ՝ տեսնելով Մեսիայի Անձը և բացահայտելով, որ Նա և՛ մարդ է, և՛ Աստված: Երկրային տեսանկյունից՝ մի մանուկ էր ծնվել, բայց երկնային տեսանկյունից՝ Որդի էր տրվել: Ճիշտ ժամանակին ծնված այս երեխան Աստծո հավիտենական Որդին էր՝ տրված Հորից և ուղարկված Երկնքից:

գ. Ինչպե՞ս է այս մարգարեությունը հայտնում Մեսիայի թագավորական դիրքը և գերիշխանությունը:

(1) Ի_____ կլինի Նրա Ու_____ վրա:

ՆՇՈՒՄՆԵՐ. Առեղծվածը շարունակում է բացահայտվել: Այդ Մանուկն իշխանություն էր ստանձնելու ամբողջ արարչագործության վրա: Շնորհիվ Իր զորության և իմաստության՝ Նա կառավարելու էր տիեզերքը բացարձակ գերիշխանությամբ: Բոլոր տիրույթների պատասխանատվությունը հանգչելու էր Նրա ուսերին, բայց Նրա համար դա լինելու էր ինչպես փետուրը՝ գրանիտե ժայռի վրա: Նման իշխանության պահանջներն անսահմանորեն գերազանցում են մարդկային կամ հրեշտակային կարողությունները, բայց դրանք ոչինչ են Նրա համար, Ով ստեղծել է ամեն ինչ և պահում է ամեն ինչ Իր բերանի խոսքով (Եբրայեցիների 1.3): Այս ամենը մեծ ապացույց է, որ Մեսիան պետք է մարմնավորված Աստված լիներ: Միայն աստվածության լիությունն է ի զորու այդքան մեծ աշխատանք կատարել:

4. Եսայի 9.6բ-ում Մեսիային վերագրվում են մի քանի անուններ կամ տիտղոսներ: Ի՞նչ կարևոր ճշմարտություններ են դրանք հայտնում մեզ Նրա մասին:

ա. Ս_____: Եբրայերեն «**պիլի**» բառից, որը նշանակում է «հրաշալի» կամ «անիմանալի»: Այս հատկանիշը կարելի է վերագրել միայն աստվածությանը: Երբ Աստված հայտնվեց Սամսոնի ծնողներին՝ որպես Տիրոջ Հրեշտակ, Նա օգտագործեց նույն անունը՝ Իրեն նկարագրելու

համար (Դատավորաց 13.18,22)։ Բոլոր մարդիկ և նույնիսկ ամենավսեմ հրեշտակը Երկնքում սահմանափակ էակներ են, որոնց հատկանիշները կարող են իմացվել։ Միայն Աստված է անսահմանորեն սքանչելի և վեր բոլորի ընկալումից։

բ. Խ_____: Եսայի 28.29-ում Եհովայի մասին գրված է, որ Նրա «խորհուրդը սքանչելի է»։ Այդ իսկ պատճառով, նույն տիտղոսը Մեսիային վերագրելը նշանակում է անհերքելի հայտարարություն անել Նրա աստվածության մասին։ Պողոս առաքյալը կոչում է Քրիստոսին «Աստծո իմաստությունը» (Ա Կորնթացիների 1.24), որում «ծածկված են իմաստության և գիտության բոլոր գանձերը» (Կողոսացիների 2.3)։ Նման բան անկարելի է ասել նույնիսկ ամենաիմաստուն մարդկանց կամ հրեշտակների մասին։

գ. Հ_____ Ա_____: Այս անվանումը թարգմանվել է եբրայերեն ***«Էլ գիբբոր»*** արտահայտությունից, որով ավանդապես անվանում են Աստծուն Երկրորդ Օրինաց 10.17, Երեմիա 32.18, Նեեմիա 9.32 և Սաղմոս 24.8 խոսքերում։ Այս հինկտակարանյան ապացույցը Մեսիայի աստվածության մասին համապատասխանում է Նոր կտակարանի վկայությանը։ Քրիստոսը «Աստված» է (Հովհաննես 1.1), «մեր մեծ Աստված» (Տիտոս 2.13) և «ամենի վրա Աստված՝ օրհնյալ հավիտյան» (Հռոմեացիների 9.5)։

դ. Հ_____ Հ_____ (կամ՝ Հավիտենական Հայր): Այս Մանուկը, Ով ծնվել էր ճիշտ ժամանակին, կենդանի էր մինչև ժամանակվա սկիզբը։ Երբ Քրիստոսին հարցրին Իր և Աբրահամի մասին, Նա բացահայտ հռչակեց. «Աբրահամի լինելուց առաջ եմ Ես»։ Հրեաները ճշտորեն հասկացան, որ հավիտենական լինելու պնդումը հավասար էր Աստված լինելու պնդմանը, և ուզեցին քարկոծել Նրան հայհոյության համար (Հովհաննես 8.58,59)։ «Հայր» անվան նպատակը՝ Երրորդության Անձերի միջև շփոթություն առաջացնելը չէ։ Այն շեշտադրում է երկու կարևոր հատկանիշ եկող Մեսիայի վերաբերյալ. (1) հավիտենությունից ի վեր Նա եղել է ամեն ինչի Սկիզբը, Աղբյուրը և Պահապանը (Հովհաննես 1.3,4), և (2) ամենասկզբից Նա եղել է Իր ժողովրդի Մատակարարը և Պաշտպանը։

ե. Խ_____ Ի_____: Մեսիան և Նրա թագավորությունը բերելու էին խաղաղություն՝ ոչ թե քաղաքական իմաստով, այլ ինչն ավելի կարևոր է՝ խաղաղություն Աստծո և մարդու միջև։ Ահա ևս մեկ հրաշալի ապացույց Մեսիայի աստվածության մասին։ Այդ Խաղաղարարը պետք է դներ Իր ձեռքը մարդու և Աստծո վրա՝ նրանց միաբանելու համար, սակայն ո՞վ կհամարձակվեր պարզել իր ձեռքը և հպվել կենդանի Աստծուն՝ բացի Նրանից, Ով կրում է Աստծո բնությունը։ Սա այն մեծ երկվությունն էր, որին բախվեց Հոբը. «Որովհետև Նա (այսինքն՝ Աստված) ինձ նման մարդ չէ, որ պատասխանեի Նրան, միասին դատաստան գնայինք։ Մեր մեջտեղը միջնորդ դատավոր չի լինի, որ ձեռքը մեր երկուսի վրա դներ» (Հոբ 9.32,33)։ Այս խոսքում Եսային մարգարեանում էր, որ Հոբի, ինչպես նաև մեր երկվությունը հավիտյան լուծված էր լինելու Մեսիայի Անձում։ Նա ունենալու էր խաղաղարարի կամ միջնորդի բոլոր անհրաժեշտ որակավորումները։ Որպես Աստված՝ Նա պարզելու էր Իր ձեռքը դեպի Աստված, և որպես Մարդ՝ Նա պարզելու էր Իր ձեռքը դեպի մարդիկ։ Պողոս առաքյալը գրում է. «Արդ մենք, հավատքով արդարացած լինելով, Աստծո հետ խաղաղություն ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Հռոմեացիների 5.1)։

5. Մեր դիտարկած հինկտակարանյան մարգարեությունները հայտնեցին մեզ մի շարք կարևոր ճշմարտություններ Քրիստոսի մասին։ Ստորև ամփոփե՛ք դրանցից մի քանիսը։

_____

_____

ԺԱՄԱՆԱԿԻ ԼՐՈՒՄԸ

Անկասկած՝ Աստծո Որդու գալուստը աշխարհ՝ ամենաակնառու իրադարձությունն է մարդկության պատմության մեջ: Այն պարզորեն կանխասվել էր Հին կտակարանի գրքերում և տեղի ունեցավ ճիշտ այն պահին, որը որոշված էր Աստծո կամքով: Նա չեկավ պատահական սկզբունքով, այլ՝ ըստ Աստծո ծրագրի: Այս ճշմարտությունը հայտնվում է Գաղատացիների 4.4,5-ում.

> *«Բայց երբ որ ժամանակի լրումն եկավ, Աստված ուղարկեց Իր Որդուն՝ կնոջից ծնված և օրենքի ներքև եղած, որ օրենքի տակ լինողներին փրկի, որ որդեգրությունն ընդունենք»:*

Սա ուշագրավ խոսք է, և «ժամանակի լրումը» արտահայտությունը շատ խորը իմաստ ունի: Միգուցե ոմանք վիճարկեն այն փաստը, որ Փրկչի մեծ ուշացման ետևում Աստծո իմաստությունն էր: Միգուցե նրանք չհասկանան, թե ինչու այդքան երկար ժամանակ անցավ Նրա գալստյան առաջին խոստումից (Ծննդոց 3.15) մինչև Նրա փաստացի գալուստը: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը սովորեցնում է, որ Քրիստոսը եկավ ճիշտ այն ժամանակ, որը նախատեսել էր Աստված, և հենց այն պահին մարդկության պատմության մեջ, երբ մարդկությունն իր մեծագույն կարիքի մեջ էր:

Կարևոր է նշել հետևյալը. «Ժամանակի լրումը» արտահայտությունը ցույց է տալիս, որ Քրիստոսը եկավ ոչ միայն մարդկության մեծագույն կարիքի ժամանակ, այլև այն ժամանակ, որը կանխասվել էր Հին կտակարանի Մեսիական մարգարեություններում: Կարելի է հստակորեն ապացուցել, որ Մեսիայի գալուստը տեղի է ունեցել: Եթե Նազովրեցի Հիսուսը Մեսիան չէ, նշանակում է՝ Սուրբ գիրքը չի կատարվել և չի կարող կատարվել: Տեսե՛ք ստորև բերված հինկտակարանյան մարգարեությունները Մեսիայի մասին:

- Համաձայն Ծննդոց 49.10-ի՝ «Չպակասի իշխողությունը Հուդայից և օրենսդիրը նրա ոտքերի մեջտեղից, մինչև որ Սելովը [հղում Մեսիային հին հրեական գրվածքներում] գա»: Այս խոսքում խոստում կա, որ Հուդայի ժառանգներից մեկն իշխելու է մինչև Մեսիայի գալուստը: Մ.թ. 70թ.-ին Երուսաղեմ քաղաքը կործանվեց, հրեաները զրկվեցին քաղաքական իշխանությունից, և ազգը ցրվեց: Մոտավորապես երկու հազարամյակ է՝ Հուդայի ցեղից ոչ մի իշխան չի եղել: Եթե Հիսուսը Քրիստոսը չէ, նշանակում է՝ Աստծո խոստումը Ծննդոց 49.10-ում ձախողվել է, քանի որ ժամանակն անցել է, և այդ խոստումն այլևս չի կարող իրականանալ:

- Համաձայն Դանիել 9.24-27-ի՝ Երուսաղեմ քաղաքը պետք է վերակառուցվի գերությունից հետո յոթանասուն յոթնյակի (այսինքն՝ քառասունինը տարվա) ընթացքում, իսկ Մեսիան կհայտնվի Երուսաղեմը վերակառուցելուց վաթսուներկու յոթնյակ (չորս հարյուր երեսուներկու տարի) անց: Այս մարգարեությունը կատարելապես համընկնում է Հիսուսի կյանքի հետ: Եթե Հիսուսը Քրիստոսը չէ,

նշանակում է՝ Աստծո խոստումը Դանիել 9.24-27-ում ձախողվել է, քանի որ ժամանակն անցել է, և այդ խոստումն այլևս չի կարող իրականանալ:

– Մաղաքիա 3.1-3-ը սովորեցնում է, որ Մեսիան պետք է գար այն ժամանակ, երբ երկրորդ Տաճարը դեռ կանգուն էր: Երկրորդ տաճարը կործանվեց մ.թ. 70թ.-ին: Եթե Հիսուսը Քրիստոսը չէ, նշանակում է՝ այս մարգարեությունը ձախողվել է, քանի որ ժամանակն անցել է, և այդ խոստումն այլևս չի կարող իրականանալ:

– Մեսիան պետք է լիներ Դավթի որդին կամ ժառանգը, և նա պետք է գար այն ժամանակ, երբ Դավթի տունը ցածր դիրք ուներ և անարգված էր՝ մինչև արմատները կտրված ծառի նման: Եսայի 11.1-ում Սուրբ գիրքը հռչակում է. «Եվ Հեսսեի բնից մի շառավիղ է դուրս գալու, և մի ընձյուղ է բուսնելու նրա արմատներից»: Հիսուսը հայտնվեց՝ որպես Մեսիա, նման ժամանակում: Եթե Նա Մեսիան չէ, նշանակում է՝ Աստծո Խոսքը չի կարող կատարվել, քանի որ Հեսսեի արմատը «դուրս քաշվեց հողից», երբ Երուսաղեմը կործանվեց մ.թ. 70թ.-ին: Այդ ժամանակ բոլոր ազգագրական տվյալները կործանվեցին, և այժմ անհնարին կլինի ապացուցել ցանկացած ենթադրյալ «Մեսիայի» տոհմաբանությունը:

– Համաձայն Դանիել 9.27-ի՝ Մեսիան հաստատելու էր Նոր ուխտը և դադարեցնելու էր Հին ուխտի զոհաբերությունների համակարգը: Զոհաբերությունների համակարգը դադարեցվեց Երուսաղեմի և Տաճարի կործանմամբ մ.թ. 70թ.-ին: Եթե Հիսուսը Քրիստոսը չէ, նշանակում է՝ Հին կտակարանի զոհաբերությունների համակարգը դադարեց՝ առանց Մեսիայի գալստյան:

– Համաձայն Ամովս և Եսայի մարգարեների (ինչպես նաև՝ այլոց)՝ Մեսիայի գալուստը պետք է նշանավորվեր ազգերի կամ հեթանոսների հունձքով (Եսայի 2.2,3, 11.10, 42.1-6, 49.6, 60.3, Ամովս 9.11,12, կարդացե՛ք նաև Ծննդոց 17.5, 49.10, Սաղմոս 2.8, 22.27,30, Զաքարիա 8.22, Գործք 15.15-18): Մոտավորապես երկու հազար տարվա ընթացքում (Հիսուսի մահից և հարությունից հետո) անթիվ բազմություններ ամեն ազգից նույնացրել են իրենց Իսրայելի Աստծո հետ և հավատացել են հրեական Սուրբ գրքին: Այս երևույթը չունի նախադեպ պատմության մեջ:

Գլուխ 6. Որդին մարդ դարձավ

ՄԱՍ ԵՐԿՈՒ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Աստծո Որդու մարմնավորումը կուսական ծննդի միջոցով՝ քրիստոնեական հավատքի և Ավետարանի կարևորագույն վարդապետություններից մեկն է: Ժխտելով այս վարդապետությունը՝ մարդիկ ժխտում են Սուրբ գրքի պարզ վկայությունը և Եկեղեցու դարավոր համոզմունքները: Եթե Քրիստոսի հղացումը գերբնական չէր, նշանակում է՝ Նա մարմնավորված Աստված չէ, Ավետարանը սուտ է, իսկ խաչը չունի փրկելու զորություն: Անհրաժեշտ է մեծ ուշադրությամբ վերաբերվել այս հիմնարար վարդապետությանը և հարել դրան բացարձակ նվիրվածությամբ:

Ի՞նչ է նշանակում ասելը, որ Հիսուս Քրիստոսը ***մարդեղած Աստված*** է կամ ***Աստված՝ մարմնով***: Անչափ կարևոր է, որ հասկանանք՝ Աստծո Որդին չդադարեց Աստված լինել մարմնավորման ժամանակ, և ո՛չ էլ ինչ-որ միջանկյալ բնություն հագավ՝ Աստծո և մարդու միջև: Փոխարենը, Աստծո Որդին դարձավ այն, ինչը Նա նախկինում երբեք չէր եղել: Նա մարդեղություն ավելացրեց Իր աստվածությանը և դարձավ Աստված-Մարդ: Նա մեկ Անձ էր՝ երկու հստակ, բայց անբաժանելի բնություններով՝ աստվածային և մարդկային: Նա չթողեց Իր աստվածային հատկանիշներից որևէ մեկը, այլ հոժարությամբ հնազանդեցրեց դրանց գործածությունը Հոր կամքին: Նա պարզապես չհագավ մարդու արտաքին կերպարանք կամ չունեցավ մարդու տեսք. Նա իսկական Մարդ դարձավ, նման մեզ ամեն ինչով՝ բացի մեղքից:

1. Մատթեոս 1.18-25-ում գրված է առաջին պատմությունը Հիսուս Քրիստոսի հրաշքով հղացվելու մասին: Ի՞նչ ճշմարտություն է գրված խոսք 20-ում: Ինչո՞վ է այն կարևոր:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ծնված» բառը թարգմանված է հունարեն ***«գեննա՛ո»*** բառից, որը նշանակում է «ծնել կամ առաջացնել»: Այս բառով սովորաբար անվանում էին կյանքի բեղմնավորումը որովայնում: Սուրբ գիրքը վկայում է, որ Հիսուսը չուներ երկրային հայր, այլ գերբնականորեն հղացվել էր Սուրբ Հոգուց:

2. Ղուկաս 1.26-38-ում Աստծո Որդու գերբնական հղացվելն է՛լ ավելի մանրամասնորեն է նկարագրված: Կարդացե՛ք այս հատվածը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ա. Համաձայն խոսք 34-ի՝ ինչպե՞ս Մարիամն արձագանքեց հրեշտակի հայտարարությանն այն մասին, որ ինքը լինելու էր Մեսիայի մայրը: Ինչպե՞ս է նրա արձագանքը հաստատում ճշմարտությունն այն մասին, որ Քրիստոսի հղացվելը գերբնական էր:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարիամի կուսությունը հինգ անգամ հիշատակվում է Ավետարաններում. Մատթեոս 1.23,25, Ղուկաս 1.27 (երկու անգամ), 34: Նույնիսկ եթե ինչ-որ մեկը ժխտի առաքյալների վկայությունը կուսական ծննդի մասին, նա չի կարող ժխտել, որ նրանք վկայում էին այդ մասին: Մարիամի հարցը չէր բխում անհավատությունից, այլ՝ այն փաստից, որ նա կույս էր: Նա մտածում էր, թե ինչպես կարող էր հղանալ:

բ. Ի՞նչ պատասխանեց հրեշտակը խոսք 35-ում: Ի՞նչ է դա սովորեցնում մեզ Հիսուսի հրաշքով հղացվելու մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Նույն «հովանավորել» բառը (հունարեն ***«էպիսկիա՛զո»***) օգտագործվում է Քրիստոսի այլակերպման պատմության մեջ, երբ մի պայծառ ամպ հովանի եղավ Պետրոսի, Հովհաննեսի և Հակոբոսի վրա Այլակերպման սարում (Մատթեոս 17.5, Մարկոս 9.7, Ղուկաս 9.34): Սա նույնպես հիշեցնում է մեզ արարչագործության պատմությունը, երբ Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրայով (Ծննդոց 1.2): Քանի որ Սուրբ Հոգին տիեզերքի արարման գլխավոր մասնակիցներից մեկն է, Նա, անկասկած, ի զորու է կյանք ստեղծել կույսի որովայնում:

գ. Խոսք 37-ում Գաբրիել հրեշտակը կարևոր հայտարարություն է անում Աստծո մասին: Ինչպե՞ս է այս հիմնարար ճշմարտությունն օգնում հավատալ Հիսուսի հրաշքով հղացվելուն:

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Երբ մարդու ներսում հաստատվում է հավատք Ամենակարող Աստծո հանդեպ, դժվար չէ հավատալ, որ կույսը հրաշքով հղացավ Քրիստոսին: Աստված կարող է անել ամեն ինչ՝ բացի այն ամենից, ինչը հակասում է Նրա սուրբ, արդար և սիրով լի բնությանը:

3. Հովհաննես 1.14-ում գրված է ամենաազդեցիկ և ամենագեղեցիկ հատվածներից մեկը մարմնավորման մասին: Ծանոթացե՛ք այս խոսքի բովանդակությանը, իսկ հետո գրե՛ք ձեր մտքերը հետևյալ պնդումների վերաբերյալ:

ա. Եվ Բանը (կամ՝ խոսքը) մարմին եղավ և բնակվեց մեր մեջ:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Խոսքը» բառը հղում է Աստծո հավիտենական Որդուն (խս. 1): «Դառնալ» բայը ենթադրում է փոփոխություն կամ անցում՝ մի վիճակից մյուսը: Հավիտենական Որդին միշտ չէ, որ մարմին էր. Նա մարմին «դարձավ», երբ Մարիամը հղացավ Նրան իր որովայնում: Մարմին դառնալով՝ Նա չդադարեց Աստված լինել. փոխարենը, Նա մարդկային բնություն ավելացրեց Իր աստվածությանը և դարձավ Աստված-Մարդ: «Բնակվեց» բառը թարգմանված է հունարեն *«սկենո՛ն»* բառից, որը խորանում կամ վրանում բնակվելու իմաստ ունի: Մարմնավորման միջոցով Աստված «դրեց Իր վրանը» կամ «բնակվեց» մարդկանց միջև:

բ. Եվ Նրա փառքը տեսանք՝ ինչպես Հորից եղած միածնի փառք՝ շնորհքով և ճշմարտությամբ լիքը:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՆՇՈՒՄՆԵՐ. «Փառք» բառը (հունարեն՝ ***«դո՛քսա»***) վերաբերում է Որդու աստվածային մեծությանը: «Միածին» (հունարեն՝ ***«մոնոգենե՛ս»***) բառի ավելի ճիշտ թարգմանությունն է «մեկ և միակ»: Այն, որ Քրիստոսը լի է շնորհքով և ճշմարտությամբ, անժխտելի պնդում է Նրա աստվածության մասին, քանի որ այդպես Նրան վերագրվում են այն երկու հատկանիշները, որոնք սովորաբար վերագրվում են միայն Աստծուն (կարդացե՛ք Կողոսացիների 2.9):

4. Փիլիպեցիների 2.6-8-ում Պողոս առաքյալն անցկացնում է մեզ Աստծո Որդու անցած ճանապարհով՝ Նրա հավիտենական փառքից և զորությունից դեպի Նրա մարմնավորումը և մինչև Գողգոթայի խաչը: Հիմնվելով այս հատվածի վրա՝ ավարտե՛ք հետևյալ պնդումները մարմնավորման մասին:

ա. «Որ Աստծո Կ_____ Լ_____» (խս. 6): Սուրբ գիրքը վկայում է, որ Որդին Աստված էր մինչև Իր մարմնավորումը, ինչպես նաև՝ դրանից հետո: «Կերպարանք» բառը (հունարեն ***«մորֆե՛»***) նշանակում է ոչ միայն արտաքին տեսքը կամ երևույթը, այլև էությունը կամ դրա հիմքում ընկած իրողությունը: Այնպես չէր, որ որդին սոսկ Աստծո ***նմանությունն*** ուներ. Նա ***իրականում*** Աստված էր:

բ. «Նա հափշտակություն չհամարեց Աստծուն Հ_____ լինել (խս. 6): «Հավասար» բառը (հունարեն ***«ի՛սոս»***) անժխտելի հղում է Որդու աստվածությանը: «Հափշտակություն համարել» բառակապակցությունը (հունարեն ***«հարպագամո՛ս»***) նշանակում է բարձր գնահատվող ինչ-որ բանի ոչ լիազորված հափշտակում: Իր մարմնավորման միջոցով Որդին ցույց տվեց, որ պատրաստ է հրաժարվել աստվածության արտոնություններից՝ Իր Հոր կամքը կատարելու համար:

գ. «Այլ Իր Անձն Ու_____» (խս. 7): Մարմնավորման ժամանակ Որդին մի կողմ դրեց Իր աստվածության փառքը և արտոնությունները և Մարդ դարձավ: Դա չի նշանակում, որ Նա Աստծուց պակաս ինչ-որ բան դարձավ, այլ որ Նա մի կողմ դրեց այն փառքը և արտոնությունները, որոնք իրավամբ Իրենն էին՝ որպես Աստված (Հովհաննես 17.5):

դ. «Ծ_____ Կ_____ առնելով» (խս. 7): «Կերպարանք» բառը (հունարեն ***«մորֆե՛»***) նշանակում է ոչ միայն արտաքին տեսքը կամ երևույթը, այլև էությունը կամ դրա հիմքում ընկած իրողությունը: Այնպես չէր, որ որդին սոսկ ծառայի նմանություն ուներ. Նա իրականում ծառա դարձավ ամեն առումով:

ե. «Մարդկանց Ն_____ լինելով և Կ_____ մարդու պես գտնվելով» (խս. 7,8): «Նման» բառը (հունարեն ***«հոմոլո՛մա»***) նշանակում է «նմանություն»: Քրիստոսը ճշմարիտ Մարդ էր և կրում էր մարդկությանը հատուկ բոլոր հատկանիշները: «Կերպարանք» բառը (հունարեն ***«սքե՛մա»***) վերաբերում է սովորություններին կամ կենսակերպին: Քրիստոսը ոչ միայն Մարդ էր, այլև լիարժեք մարդ էր թվում նրանց, ովքեր ճանաչում էին Նրան և հետևում էին Նրա վարքին:

զ. «Իրեն Խ_____ և Հ_____ եղավ մինչև մահ, և այն էլ՝ խաչի մահ» (խս. 8): Անմեղ Քրիստոսի համար մահվան գնալը հոժարակամ հնազանդություն էր Հոր կամքին: Այն ոչ թե հարկադրված էր որպես պատիժ, այլ տրված էր որպես առաջադրանք:

5. Բ Կորնթացիների 8.9-ում գրված է Սուրբ գրքի ամենասքանչելի հատվածներից մեկն Աստծո Որդու մարմնավորման մասին: Գրե՛ք ձեր մտքերն այս խոսքի մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այլ բան է, որ մի հարուստ մարդ աղքատության երդում աներ և սկսեր ապրել աղքատների հետ, և այլ բան է, որ տիեզերքի Աստված մարմին հագներ և ապրեր հասարակ մարդկանց հետ՝ նրանցից մեկի պես: Մենք պետք է հիշենք, որ Որդու ինքնակամ աղքատությունը հստակ փրկարար նպատակ ուներ. Նա թողեց Երկնքի փառքերը, որպեսզի մենք կարողանանք մուտք գործել այնտեղ:

6. Ա Տիմոթեոս 3.16-ում գրված է Աստվածաշնչի ամենահակիրճ և գեղեցիկ պնդումներից մեկը մարմնավորման մասին: Ի՞նչ է հայտնում Պողոս առաքյալը մարմնավորման մասին այս հատվածի առաջին մասում:

ա. Եվ հայտնապես Մ_____ է աստվածապաշտության Խ_____: «Հայտնապես» բառը նույնպես կարելի է թարգմանել որպես «բոլորի համաձայնությամբ» կամ «առանց հակասության և վեճի»: «Խորհուրդ» բառը (հունարեն ***«մուստե՛ռիոն»***) նշանակում է այն, ինչը թաքնված է կամ անկարելի է հասկանալ: «Աստվածապաշտություն» բառը (հունարեն ***«եվսեբիա»***) նշանակում է ամեն ճշմարիտ նվիրում Աստծուն: Այս խոսքը լավագույնս կարելի է թարգմանել հետևյալ կերպով. «Բոլոր քրիստոնյաները դավանում են՝ առանց վիճարկելու, որ մեծ է այն խորհուրդը, որն առ Աստված ամեն ճշմարիտ նվիրման հիմքը և աղբյուրն է»:

բ. Աստված Հ_____ Մ_____: Այն խորհուրդը, որն ամեն ճշմարիտ աստվածապաշտության հիմքը և աղբյուրն է, Աստծո Որդին է և այն փրկարար աշխատանքը, որը Նա կատարեց «մարմնում»: Մարմնավորումը քրիստոնեական հավատքի հիմնարար վարդապետություն է: Եթե Հիսուսը չէր հղացվել կույսի որովայնում Սուրբ Հոգուց, Նա մարմին առած Աստված չէ, և Ավետարանը սուտ է, խաչը չունի փրկարար զորություն, հարությունը կեղծ լուր է, իսկ մենք դեռ մեր մեղքերի մեջ ենք՝ բաժանված Աստծուց և առանց հույսի:

Գլուխ 7. Որդին ապրեց կատարյալ կյանքով

Այն, որ Աստծո Որդին Մարդ դարձավ, դեռ բավական չէր. անհրաժեշտ էր, որ Նա ապրեր Աստծո Օրենքի ներքո՝ կատարյալ հնազանդությամբ: Եթե Նա մեղավոր գտնվեր թեկուզ մեկ օրինազանցության մեջ՝ մտքով, վերաբերմունքով, խոսքով և գործով, Նա կորակազրկեր Ինքն Իրեն՝ որպես մեղքի զոհ: Այնպես որ, ճիշտ կլինի ասել, որ եթե չլիներ Քրիստոսի կատարյալ հնազանդությունը Նրա ամբողջ կյանքի ընթացքում, Նրա կյանքի և ծառայության մնացած բոլոր կողմերն անօգուտ կլինեին: Միայն կատարելապես հնազանդ Երկրորդ Ադամը կարող էր չեղյալ դարձնել այն, ինչ առաջացրեց առաջին Ադամը՝ իր բարոյական անկման պատճառով (Հռոմեացիների 54.12-19): Միայն անարատ և անբիծ Գառը կարող էր տալ Իր կյանքն այս աշխարհի մեղքերի համար (Հովհաննես 1.29, Ա Պետրոս 1.19): Միայն Արդարը կարող էր դնել Իր կյանքն անարդարների համար, որ մոտեցներ նրանց Աստծուն (Ա Պետրոս 3.18): Միայն անմեղ Փրկիչը կարող էր տալ Իր կյանքը՝ որպես փրկանք շատերի համար (Մարկոս 10.45):

1. Մինչև առաջ գնալը, կարդանք Հռոմեացիների 8.3-ը: Ի՞նչ է այն սովորեցնում մեզ Քրիստոսի մարմնավորման մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո Որդին չհագավ այնպիսի մարմին, որը մարդիկ ունեին մեղանչումից առաջ. Նա հագավ այնպիսի մարմին, որը թեև ապականված չէր մեղքով, բայց ենթակա էր մեր անկում ապրած ցեղի բոլոր սարսափելի հետևանքներին: Որպես Մարդ՝ Նա ենթակա էր անկում ապրած մարդկության բոլոր սահմանափակումներին, տկարություններին, տառապանքներին և չարչարանքներին: Աստծո Որդու համար մեծ նվաստացում կլիներ, եթե Նա մարդկային մարմին հագներ մինչև մեղանչումը, երբ այն լի էր փառքով և ուժով: Այնուամենայնիվ, նա ուղարկվեց «մեղքի մարմնի նմանությամբ»:

2. Համաձայն Ղուկաս 1.35-ի՝ ինչպե՞ս Հիսուսը հղացվեց առանց ապականված ադամական բնության, որի պատճառով ամբողջ մարդկային ցեղը բարոյական կործանում ապրեց:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սուրբ» բառն այս խոսքում նույն բառն է, որն օգտագործվում է Հոգուն անվանելու համար: Նա Սուրբ Որդի էր, քանի որ հղացվել էր Սուրբ Հոգուց:

3. Աստվածաշնչում մարդու անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուն է վերագրվում Քրիստոսին Գործք 3.14-ում, և ի՞նչ է այն սովորեցնում մեզ Նրա բնության մասին:

ա. Ս_____ և Ա_____:

ՆՇՈՒՄՆԵՐ. Պետրոսը մեջբերում է Սաղմոս 16.10-ը: «Սուրբ» բառը (հունարեն ***«հա՛գիոս»***) նշանակում է «չպղծված մեղքով, ազատ անօրինությունից և բարոյապես մաքուր»: «Արդար» բառը (հունարեն ***«դի՛կայիոս»***) նշանակում է «համապատասխան Աստծո բնությանը և կամքին»: Կարևոր է նշել, որ այս տիտղոսը, որը Հին կտակարանում վերագրվում է միմիայն Աստծուն (Եսայի 24.16), վերագրվում է Հիսուսին երեք անգամ Գործք առաքելոց գրքում (Գործք 3.14, 7.52, 22.14):

4. Ի՞նչ է վկայում Հայրը Հիսուսի մասին Մատթեոս 3.17-ում: Ի՞նչ է ցույց տալիս Նրա վկայությունը Քրիստոսի բնության և գործերի վերաբերյալ:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հռչակումն առաջին անգամ գրված է Եսայի 42.1-ում, որը մեսիական մարգարեություն է: Այն ազդարարվեց Քրիստոսի մկրտության (Մատթեոս 3.17, Մարկոս 1.11, Ղուկաս 3.22) և այլակերպման (Մատթեոս 17.5, Մարկոս 9.7) ժամանակ: Աստծո վկայությունը Քրիստոսի մասին ապացուցում է Նրա անմեղությունը: Ամենասուրբը կարող է հավանել միայն Ամենասուրբին: Նույնիսկ աննշան մեղքը կհեռացներ Աստծո ժպիտը և կխոժոռեցներ Նրա երեսը:

5. Համաձայն հետևյալ խոսքերի՝ ի՞նչ վկայեց Հիսուսն Իր մասին և Աստծո կամքին հնազանդ լինելու մասին:

ա. Հովհաննես 8.29

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ամենազարմանալի բանը Քրիստոսի պնդման մեջ «միշտ» մակբայն է: Անկում ապրած մարդը երբեք չի կարող պնդել տևական կատարյալ հնազանդության մասին, բայց Քրիստոսը պնդում է, որ Իր հնազանդությունը ոչ միայն կատարյալ է, այլև մշտական և անխաթար: Նա հնազանդ էր՝ առանց նույնիսկ աննշան թերացման, Իր կյանքի ամբողջ ընթացքում:

բ. Հովհաննես 17.4

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այլ բան է խոսել կատարելության մասին մարդկանց առջև, և այլ բան է անել նույնը Աստծո առջև: Հիսուսը կանգնում է Հոր առջև և պնդում է, որ կատարելապես հնազանդ է Իր սրտում և Իր գործերով: Նույնիսկ Աստծո լավագույն ծառաները չեն կարող անել Հիսուսի պնդումը. նրանք պետք է խոստովանեն. «Մենք անպիտան ծառաներ ենք, որովհետև այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու» (Ղուկաս 17.10):

6. Համաձայն Ավետարանների՝ նույնիսկ Քրիստոսին հակառակվողները ստիպված էին ընդունել Նրա արդարությունը: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

___ Մատթեոս 27.3,4	ա. Ավազակը հասկացավ, որ Քրիստոսը ոչ մի չարիք չէր գործել:
___ Մատթեոս 27.19	բ. Պիղատոսի կինն արդար մարդ անվանեց Քրիստոսին:
___ Մատթեոս 27.23,24, Ղուկաս 23.4	գ. Հուդան ճանաչեց Քրիստոսի անմեղությունը:
___ Ղուկաս 23.39-41	դ. Հարյուրապետը վկայեց, որ Քրիստոսն անմեղ էր:
___ Ղուկաս 23.47	ե. Պիղատոսը հանցանք չգտավ Քրիստոսի մեջ:

7. Մենք կշարունակենք՝ դիտարկելով մի շարք կարևոր խոսքեր առաքյալների նամակներում այն մասին, որ Հիսուսը զերծ էր մեղքից: Ամփոփե՛ք ամեն մի խոսքը ձեր բառերով:

ա. Բ Կորնթացիների 5.21

_____

_____

_____

_____

_____

բ. Եբրայեցիների 4.15

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը փորձվեց այն ամենում, ինչը հատուկ է մեր թույլ մարդկային վիճակին: Մեր տկարության պատճառով մենք տեղի ենք տալիս նույնիսկ փոքր փորձությունների, և այդ պատճառով հազվադեպ ենք բախվում ավելի մեծերի: Քրիստոսը հաղթահարեց փոքր փորձությունները, որոնց բախվում են բոլորը, ***և*** ավելի մեծ փորձություններ, որոնց ոչ մի մարդ երբևէ չի բախվել:

գ. Եբրայեցիների 7.26

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սուրբ» բառը (հունարեն ***«հո՛սիոս»***) նշանակում է «չպղծված մեղքով, ազատ անօրինությունից և բարոյապես մաքուր»: «Անմեղ» կամ «անվնաս» բառը (հունարեն ***«ակակոս»***) նշանակում է «անմեղ կործանարար չարիքի կամ քինախնդրության մեջ»: «Անարատ» բառը (հունարեն ***«ամի՛անտոս»***) նույնպես կարելի է թարգմանել «չկեղտոտված» կամ «անբիծ» բառերով: «Մեղավորներից ջոկված» արտահայտությունը խոսում է Քրիստոսի և մարդկության միջև մեծ տարբերության մասին. Նա առանց մեղքի էր:

դ. Ա Պետրոս 1.19

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի արյունը պատվական էր, քանի որ Նա անբիծ և անարատ Գառ էր: «Անբիծ» բառը (հունարեն ***«ամոմոս»***) նշանակում է «անթերի կամ առանց հանցանքի»: «Անարատ» բառը (հունարեն ***«ասպիլոս»***) նշանակում է «առանց արատի, չարատավորված կամ չկեղտոտված, ազատ պարսավանքից և նախատինքից»: Համաձայն Օրենքի՝ զոհաբերվող գառը չպետք է ունենար ոչ մի արատ (Ղևտացիների 22.20-25, Թվոց 6.14, 28.3,9): Այսպիսով, Քրիստոսը պետք է լիովին ազատ լիներ մեղքից:

ե. Ա Պետրոս 2.22

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքն ամբողջությամբ Եսայի 53.9-ում գտնվող մեսիական մարգարեությունից է՝ ըստ Յոթանասունից թարգմանության: Սա ազդեցիկ և պարզ պնդում է Տեր Հիսուս Քրիստոսի անմեղ կատարելության մասին: Ըստ Աստծո Խոսքի՝ մարդու բերանի խոսքերը ցույց են տալիս նրա սրտի վիճակը (Եսայի 6.5, Մատթեոս 15.18): Քրիստոսի խոսքում նենգություն չկար, քանի որ Նրա սրտում նույնպես նենգություն չկար: Հակոբոսը գրում է. «Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է, որ կարող է իր ամբողջ մարմինը սանձահարել» (Հակոբոս 3.2): Տրամաբանությունը պարզ է. Հիսուսը չսայթաքեց խոսքով, քանի որ Նա կատարյալ էր:

զ. Ա Հովհաննես 3.5

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը «մեղք չգիտեր» (Բ Կորնթացիների 5.21) և Նրանում մեղք չկա (Ա Հովհաննես 3.5):

Գլուխ 8. Որդին կրեց մեր մեղքը

Քրիստոսի խաչը հիշեցնում է այն վիրավորանքները և մարմնական ցավը, որոնք Նա կրեց: Խաչի վրա մահանալը վատագույնն է բոլոր նվաստացումներից և չարչարանքներից: Այնուամենայնիվ, մարմնական ցավը և ամոթը, որոնք Քրիստոսը կրեց, խաչի ամենակարևոր կողմերը չէին: Այնպես չէ, որ մենք փրկվեցինք զուտ այն պատճառով, որ մարդիկ մտրակներով հարվածեցին Քրիստոսին և գամեցին խաչին: Մենք փրկված ենք, քանի որ Նա կրեց մեր մեղքը և ջախջախվեց Աստծո դատաստանի ներքո:

ՈՐԴԻՆ ԶԲԱՂԵՑՐԵՑ ՄԵՐ ՏԵՂԸ

Համաձայն Աստծո Խոսքի՝ Որդու մարմնավորման և կատարյալ կյանքի նպատակը Իր ժողովրդի փոխարեն Իր կյանքը տալն էր: Նա եկավ, որ Իր վրա վերցներ նրանց հանցանքը, ընդուներ նրանց դատավճիռը և կրեր նրանց պատիժը՝ մահը: Այս ճշմարտությունը Սուրբ գրքի մեծագույն ուղերձներից է և քրիստոնեական հավատքի հիմնաքարն է: Ահա թե ինչու Քրիստոսի աշխատանքը հաճախ կոչվում է ***«քավչարար»:*** Այս բառը լատիներենում ***«վիկարիուս»*** բառն է («**վիսիս**» = փոփոխություն, փոխարինում կամ փոխարենը»). նշանակում է փոխվել տեղերով և կանգնել մեկ այլ մարդու տեղում՝ նրա փոխարեն:

ՔՐԻՍՏՈՍԸ ՄԱՀԱՑԱՎ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ *ՓՈԽԱՐԵՆ*

Հունարեն ***«անտի՛»*** նախդիրն օգտագործվում է, երբ նկարագրվում է Քրիստոսի խաչելությունը և մահը Իր ժողովրդի համար[1]: Այս նախդիրը թարգմանվում է «փոխարեն» կամ «տեղ» կապերով:

*«Եվ լսելով, թե Արքեղայոսն է թագավորում Հրեաստանի վրա իր հայր Հերովդեսի **տեղ**, վախեցավ գնալ այնտեղ, և երազում պատգամ առնելով՝ գնաց Գալիլեայի կողմերը» (Մատթեոս 2.22):*

*«Ինչպես Մարդու Որդին չեկավ, որ Իրեն ծառայեն, այլ որ Ինքը ծառայի, և շատերի **փոխանակ** (կամ՝ **փոխարեն**) Իր անձը փրկանք տա» (Մատթեոս 20.28):*

ՔՐԻՍՏՈՍԸ ՄԱՀԱՑԱՎ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ *ՀԱՄԱՐ*

Հունարեն ***«պերի՛»*** նախդիրն օգտագործվում է, երբ նկարագրվում է Քրիստոսի խաչելությունը և մահը Իր ժողովրդի համար[2]: Այս նախդիրը թարգմանվում է «համար» կապով:

*«Որովհետև այդ է Իմ արյունը նոր ուխտի, որ թափվում է շատերի **համար** ի թողություն մեղաց» (Մատթեոս 26.28):*

*«Սրանում է սերը, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ որ Նա սիրեց մեզ, և ուղարկեց Իր Որդուն՝ քավություն մեր մեղքերի **համար**» (Ա Հովհաննես 4.10):*

---

[1] Նույնպես կարդացե՛ք Մարկոս 10.45-ը՝ որպես այս նախդիրի օգտագործման ևս մեկ օրինակ:
[2] Նույնպես կարդացե՛ք Ա Հովհաննես 2.2-ը՝ որպես այս նախդիրի օգտագործման ևս մեկ օրինակ:

ՔՐԻՍՏՈՍԸ ՄԱՀԱՑԱՎ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ *ՀԱՄԱՐ*

Հունարեն ***«հուպեր»*** (կամ՝ ***«հիպեր»***) նախդիրն օգտագործվում է, երբ նկարագրվում է Քրիստոսի խաչելությունը և մահը Իր ժողովրդի համար[3]: Այս նախդիրը թարգմանվում է «համար» կամ «վրա» կապերով:

*«Ես եմ բարի հովիվը: Բարի հովիվն Իր անձը դնում է ոչխարների **համար**» (Հովհաննես 10.11):*

*«Եվ ամենի **համար** մեռավ, որ կենդանի լինողները այլևս ոչ թե իրենց անձերի համար կենդանի լինեն, այլ Նրա համար, որ իրենց **համար** մեռավ, և հարություն առավ» (Բ Կորնթացիների 5.15):*

*«Որովհետև Քրիստոսն էլ մեկ անգամ մեղքերի համար չարչարվեց, այն Արդարն անարդարների **վրա** (կամ՝ **համար**)» (Ա Պետրոս 3.18):*

ՔՐԻՍՏՈՍԸ ՄԱՀԱՑԱՎ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ *ՀԱՄԱՐ*

Հունարեն ***«դի՛ա»*** նախդիրն օգտագործվում է, երբ նկարագրվում է Քրիստոսի խաչելությունը և մահը Իր ժողովրդի համար: Այս նախդիրը թարգմանվում է «համար» կապով:

*«Եվ այն տկար եղբայրը կկորչի քո գիտության պատճառով, որի **համար** Քրիստոսը մեռավ» (Ա Կորնթացիների 8.11):*

*«Որովհետև գիտեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ **համար** աղքատացավ Նա, որ հարուստ էր, որ դուք Նրա աղքատությամբ հարստանաք» (Բ Կորնթացիների 8.9):*

ՈՐԴԻՆ ԿՐԵՑ ՄԵՐ ՄԵՂՔԸ

Աստծո խոսքում տեսնում ենք, որ Ադամի մեղքը ***վերագրվեց*** ամբողջ մարդկային ցեղին: Իր կատարյալ արդարությամբ և անըմբռնելի իմաստությամբ Աստված համարեց Ադամի մեղքը բոլորին: Այդ իսկ պատճառով, բոլոր մարդիկ մեղանչեցին ***Ադամի մեջ*** և հանցավոր համարվեցին նրա մեղքով: Հաջորդ էջերում մենք կտեսնենք վերագրման ևս մեկ կողմ՝ մեր մեղքի վերագրումը Քրիստոսին: Ինչպես որ Ադամի մեղքը վերագրվեց ամբողջ մարդկությանը, այնպես էլ Աստծո ժողովրդի մեղքերը վերագրվեցին Քրիստոսին:

1. Հին կտակարանում Աստծո ժողովրդի փոխարեն կենդանիներ զոհաբերելը ընդամենը շուք կամ խորհրդապատկեր էր, որը վերջնականապես իրականացավ Քրիստոսում: Այնուամենայնիվ, այդ կենդանական զոհաբերությունները գերազանց կերպով ցույց են տալիս, թե ինչպես Քրիստոսը կրեց Աստծո ժողովրդի մեղքերը և զոհաբերեց Իր կյանքը նրանց փոխարեն: Կարդացե՛ք Ղևտացիների 16.21,22-ը և բացատրե՛ք, թե ի՞նչ կապ ունի այս հատվածը Քրիստոսի զոհի հետ:

_____

_____

_____

[3] Նույնպես կարդացե՛ք Մարկոս 14.24, Հռոմեացիների 5.6,8, Գաղատացիների 3.13, Եփեսացիների 5.2, Ա Տիմոթեոս 2.6, Տիտոս 2.14 և Ա Հովհաննես 3.16 խոսքերը՝ որպես այս նախդիրի օգտագործման այլ օրինակներ:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քանի որ անհնար է, որ մեկ զոհաբերությունը լիովին խորհրդապատկերեր կամ նկարագրեր Մեսիայի քավչարար մահվան նպատակը, որը բաղկացած էր երկու մասից, զոհաբերվում էր երկու այծ (Ղևտացիների 16.5-10)։ Առաջին այծը մորթվում էր Տիրոջ առջև՝ որպես մեղքի պատարագ, և դրա արյունը սրսկվում էր Սրբության սրբոցի քողի ետևում գտնվող Շնորհքի աթոռի վերևի և առջևի մասերին (խս. 9,15,20)։ Սա Քրիստոսի քավչարար մահվան հրաշալի օրինակ է. Նա թափեց Իր արյունը, որ բավարարեր Աստծո արդարադատությունը, հանդարտեցներ Նրա զայրույթը և խաղաղություն բերեր։ Երկրորդ այծը բերվում էր Տիրոջ առջև որպես քավության այծ (խս. 10)։ Քահանայապետն այդ կենդանու գլխին էր դնում «իր երկու ձեռքերը... և...» խոստովանում էր «...նրա վրա Իսրայելի որդիների բոլոր անօրինություններն ու հանցանքները՝ իրենց մեղքերով» (խս. 21)։ Դրանից հետո թողության այծը, որը կրում էր իր վրա ժողովրդի բոլոր անօրինությունները, տարվում էր անապատ՝ մի մեկուսի վայր (խս. 21,22)։ Դա Քրիստոսի խորհրդապատկերն էր, Ով «մեր մեղքերն իր մարմնում խաչափայտի վրա բարձրացրեց» (Ա Պետրոս 2.24) և մահացավ «բանակից դուրս» (Եբրայեցիների 13.11,12)։ Սա Քրիստոսի քավող մահվան դիպուկ խորհրդապատկեր է. Նա կրեց մեր մեղքը։ Սաղմոսերգուն գրում է. «Որքան որ արևելքը հեռու է արևմուտքից, այնքան Նա հեռացրեց մեզնից մեր հանցանքները» (Սաղմոս 103.12)։

2. Հին կտակարանի զոհերը ընդամենը շուք կամ խորհրդապատկեր էին, որոնք մատնացույց էին անում Քրիստոսին և վերջնականորեն իրականանալու էին Նրանում։ Նա զոհեց Իր կյանքը՝ կրելով մեր մեղքերը։ Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածներն այս ճշմարտության մասին։

ա. Եսայի 53.6

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Տերը (եբրայերեն ***«Յահվեհ»***) դրեց Իր ժողովրդի մեղքերը Իր միածին Որդու վրա։ «Դնել» բառը այս խոսքում վրա հասնելու և զարկելու իմաստ է կրում։ Աստծո ժողովրդի մեղքերը վրա հասան Քրիստոսին ճնշող, սրընթաց կերպով՝ ինչպես հարձակվող բանակ կամ հանկարծակի և աննահանջ փոթորիկ (կարդացե՛ք նաև Եսայի 53.11,12)։

բ. Բ Կորնթացիների 5.21

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը մեղք դարձավ նույն կերպով, ինչպես որ հավատացյալները դարձան «Աստծո արդարությունը»: Այն պահին, երբ մարդը հավատում է Հիսուսին, նրա մեղքերը ներվում են, և Քրիստոսի արդարությունը վերագրվում կամ հաշվեգրվում է նրան: Աստված իրավաբանորեն արդար է հռչակում հավատացյալին և վերաբերվում է՝ ինչպես արդարի: Խաչի վրա Քրիստոսը պիղծ կամ անարդար չդարձավ, այլ Աստված վերագրեց Նրան մեր մեղքերը՝ Նրան իրավաբանորեն մեղավոր հայտարարելով, և վերաբերվեց Նրան՝ ինչպես մեղավորի:

գ. Եբրայեցիների 9.27,28

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի մարմնավորման և մահվան նպատակն էր՝ կրել Իր ժողովրդի մեղքերը: «Վեր առնել» բառը թարգմանված է հունարեն ***«անաֆե՛րո»*** բառից, որը բառացիորեն նշանակում է «բարձրացնել»:

դ. Ա Պետրոս 2.24

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բարձրացնել» բառը թարգմանված է հունարեն ***«անաֆե՛րո»*** բառից: Խաչը անբարո մարդկության կողմից հորինված կտտանքների ամենադաժան գործիքն է, բայց նաև այն զոհասեղանն էր, որի վրա Աստծո Որդին մատուցեց Իրեն՝ որպես զոհ: Քրիստոսի խաչվելու և մահանալու նպատակը ոչ միայն մեզ վերականգնելն էր՝ Աստծո հետ ճիշտ հարաբերություններ ունենալու համար, այլև մեզ կարողություն տալը, որ Աստծո զորությամբ մահանանք մեղքի համար և ապրենք հանուն արդարության: Մեջբերելով Եսայի 53.5-ը՝ Պողոսը խոսում է ոչ թե մարմնի բժշկության մասին, այլ՝ մեղքի և դրա հետևանքների:

3. Այս բաժինը եզրափակելու համար կդիտարկենք Հովհաննես 3.14,15-ը, որը շատ կարևոր հատված է: Ի՞նչ է այս հատվածը սովորեցնում մեզ այն մասին, որ Քրիստոսը կրեց Իր ժողովրդի մեղքերը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք պետք է հասկանանք Հիսուսի խոսքերը՝ Թվոց 21.5-9-ի համատեքստով: Քանի որ Իսրայելը գրեթե մշտապես ապստամբում էր Տիրոջ դեմ և մերժում էր Նրա ողորմությամբ տրված մատակարարումը, Աստված «կիզող օձեր» ուղարկեց ժողովրդի մեջ, և շատերը մահացան: Այնուամենայնիվ, մարդկանց ապաշխարության և Մովսեսի բարեխոսության արդյունքում Աստված ևս մեկ անգամ փրկություն տվեց նրանց: Նա պատվիրեց Մովսեսին «մի կիզող օձ շինել և այն մի ձողի վրա դնել»: Դրանից հետո Նա խոստացավ, որ եթե այն մարդը, որին օձ էր կծել, նայեր այդ պղնձե օձին, կապրեր: Այս պատմությունն ազդեցիկ օրինակ է խաչի մասին: Իսրայելցիները մահանում էին կիզող օձերի թույնից. մարդիկ մահանում են իրենց իսկ մեղքի թույնից: Մովսեսը պատվեր ստացավ՝ դնել մահվան պատճառը ձողի վրա. Աստված դրեց մեր մահվան պատճառն Իր Որդու վրա, երբ Նա խաչի վրա էր: Նա եկավ «մեղքի մարմնի նմանությամբ» (Հռոմեացիների 8.3) և դարձավ «մեղք՝ մեր փոխարեն» (Բ Կորնթացիների 5.21): Այն իսրայելցիները, որոնք հավատացին Աստծուն և նայեցին պղնձե օձին, ողջ մնացին. այն մարդը, ով հավատում է Աստծո վկայությանը Իր Որդու մասին և հավատքով նայում է Նրան, կփրկվի (Ա Հովհաննես 5.10,11):

Գլուխ 9. Որդին անեծք դարձավ

Նախորդ գլխում իմացանք, որ Քրիստոսը «մեղք դարձավ» մեր փոխարեն: Այս գլխում մենք կդիտարկենք մի հավասարապես անըմբռնելի վարդապետություն այն մասին, որ Քրիստոսն անեծք դարձավ մեզ համար: Սուրբ գիրքը պարզորեն սովորեցնում է, որ նրանք, ովքեր մեղանչել են, օրենքի անեծքի տակ են: Մեզ փրկելու համար Աստծո Որդին Մարդ դարձավ, կրեց մեր մեղքը և անեծք դարձավ մեր փոխարեն:

1. Համաձայն Գաղատացիների 3.10-ի՝ ի՞նչ դիրք ունի մեղավոր և անկում ապրած մարդն Աստծո առջև:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Որովհետև, որոնք որ օրենքի գործերից են» արտահայտությունը վերաբերում է այն մարդկանց, որոնք մտածում են, որ իրենց բարոյական առաքինությունը, անձնական արդարությունը կամ հնազանդությունն Աստծո օրենքին՝ ընդունելի կդարձնի իրենց Աստծո համար: Աստվածաշունչը հայտնում է, որ նման մարդիկ անեծքի տակ են, քանի որ Օրենքը պահանջում է կատարյալ և անխաթար հնազանդություն, և ոչ ոք չի կարող կատարել այդ պահանջը: «Անեծք» բառը հունարեն *«կատա՛րա»* բառից է, որը նույնպես թարգմանվում է «նզովք», «անհարգալից վերաբերմունք» կամ «հայհոյանք»: Այն ենթադրում է դաժանաբար մեղադրել որևէ առարկա, երևույթ կամ որևէ անձի՝ խիստ զզվանքով, նողկանքով կամ ատելությամբ: Երկնքի տեսանկյունից՝ նրանք, ովքեր խախտում են Աստծո օրենքը, պիղծ են և արժանի են նողկանքի: Նրանք արդարացիորեն ենթակա են աստվածային վրիժառությանը և մատնված են հավիտենական կործանման: Թեև նման լեզուն վիրավորական է աշխարհի համար և նույնիսկ՝ նրանց համար, ովքեր քրիստոնյա են համարում իրենց, այն աստվածաշնչյան է, և այս ճշմարտությունները պետք է ասվեն: Եթե, ելնելով քաղաքավարությունից, մենք հրաժարվենք բացատրել և նկարագրել այս խիստ աստվածաշնչյան ճշմարտությունները, կկատարվի այն, որ Աստծուն սուրբ չեն համարի, մարդիկ չեն հասկանա իրենց զարհուրելի դրությունը, և այն գինը, որը Քրիստոսը վճարել է, երբեք ճշմարտապես չի գնահատվի: Եթե մենք չհասկանանք, թե ինչ է նշանակում, որ մարդը գտնվում է աստվածային անեծքի ներքո, մենք երբեք չենք հասկանա, թե Քրիստոսի համար ինչ էր նշանակում «անեծք դառնալ մեզ համար»: Մենք երբեք լիովին չենք հասկանա Գողգոթայում կատարվածի ամբողջ զարհուրանքը և սքանչելիքը:

2. Համաձայն Գաղատացիների 3.13-ի՝ ի՞նչ արեց Քրիստոսը՝ մեզ անեծքից ազատելու համար:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գնեց» բառը թարգմանված է հունարեն ***«էքսագորա՛զո»*** բառից, որը նշանակում է «գնել կամ վճարում կատարել՝ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին մեկ ուրիշի տիրապետությունից ետ ստանալու համար»: Այն հաճախ օգտագործվում է պարտապանի կամ ստրուկի ազատությունը գնելու իմաստով: Քրիստոսն արեց սա Իր ժողովրդի համար՝ վերցնելով Իր վրա մեր մեղքը և դառնալով աստվածային նզովքի առարկան: Նա դաժան մեղադրանք ստացավ և զգաց սուրբ Աստծո ամբողջ տհաճությունը մեղքի հանդեպ: Նա հայտնվեց ամենախիստ աստվածային դատաստանի և դատապարտության ներքո՝ հանուն մեզ:

3. Աստվածային անեծքը՝ աստվածային օրհնության հականիշն է (այսինքն՝ այն ունի հակառակ իմաստը): Մատթեոս 5.3-12-ում, որտեղ գրված է Երանելիների (կամ՝ օրհնվածների) մասին, մենք տեսնում ենք, թե ինչ է նշանակում օրհնված լինել Աստծո առջև: Դիտարկելով այդ օրհնությունները, իսկ հետո կարդալով դրանց հականիշները՝ մենք կարող ենք հասկանալ, թե ինչ է նշանակում այն, որ Քրիստոսն անեծք դարձավ մեր փոխարեն:

ա. Օրհնվածներին շնորհվում է երկնքի Թ_____ (խս. 3), իսկ անիծվածներին թույլ չի տրվում մտնել այդտեղ:

բ. Օրհնվածները Մ_____ են Աստծուց (խս. 4), իսկ անիծվածները ենթակա են աստվածային զայրույթի:

գ. Օրհնվածները Ժ_____ են երկիրը (խս. 5), իսկ անիծվածները կտրվում են երկրից:

դ. Օրհնվածները Կ_____ են (խս. 6), իսկ անիծվածները թշվառ ու դժբախտ են:

ե. Օրհնվածները Ո_____ են գտնում (խս. 7), իսկ անիծվածներն անխղճաբար դատապարտվում են:

զ. Օրհնվածները կտեսնեն Ա_____ (խս. 8), իսկ անիծվածները կհեռացվեն Նրա ներկայությունից:

է. Օրհնվածներն Աստծո Ո_____ են (խս. 9), իսկ անիծվածներից ուրանում են՝ թողնելով խայտառակության մեջ:

ՆՇՈՒՄՆԵՐ. Գողգոթայի խաչի վրա Քրիստոսը կրեց Իր ժողովրդի մեղքերը և աստվածային անեծքը՝ ամբողջ ծանրությամբ: Նա թողնվեց Աստծուց (Մատթեոս 27.46) և խմեց աստվածային զայրույթի բաժակը՝ Իր ժողովրդի փոխարեն (Մատթեոս 26.39,42, Սաղմոս 75.8, Երեմիա 25.15,16): Նա կրեց մեր վշտերը, զարկվեց, պատժվեց Աստծուց և պատվազրկվեց (Եսայի 53.4): Մեր պատճառով Տիրոջը հաճելի էր զարկել և ցավեցնել Նրան (Եսայի 53.10):

4. Թվոց 6.24-26-ում գրված է օրհնության ամենագեղեցիկ խոստումներից մեկը, որոնք Աստված երբևէ տվել է մարդուն: Այնուամենայնիվ, այս օրհնությունը լուրջ աստվածաբանական խնդիր է ներկայացնում: Ինչպե՞ս արդար Աստված կարող է նման օրհնություններ շնորհել մեղավոր մարդկանց՝ առանց փոխզիջման գնալու Իր արդարության հետ: Պատասխանը կրկին Քրիստոսի խաչն է: Մեղավորը կարող է օրհնված լինել, միայն որովհետև Քրիստոսն անեծք է ընդունել նրա փոխարեն: Ցանկացած օրհնություն Աստծուց, որը երբևէ շնորհվել է կամ կշնորհվի Իր ժողովրդին, ունի միայն մեկ պատճառ՝ Խաչի վրա Քրիստոսն անեծք դարձավ մեզ համար: Դիտարկելով Թվոց 6.24-26-ում գրված օրհնություններից ամեն մեկը և տեսնելով դրանց հականիշները՝ մենք կարող ենք հասկանալ, թե ինչ է նշանակում այն, որ Քրիստոսն անեծք դարձավ մեր փոխարեն:

ա. Տերը Օ_____ և Պ_____ քեզ (խս. 24): Սա միայն հնարավոր է այն պատճառով, որ Հայրը անեծք դարձրեց Քրիստոսին և կործանման մատնեց Նրան:

բ. Տերը Պ_____ Իր երեսը քեզ վրա և Ո_____ քեզ (խս. 25): Սա միայն հնարավոր է այն պատճառով, որ Հայրը հեռացրեց Իր ներկայության լույսը Քրիստոսից և դատապարտեց Նրան՝ կատարյալ արդարադատությամբ և առանց խղճահարության:

գ. Տերը բարձրացնի Իր երեսը քեզ վրա և Խ_____ տա քեզ (խս. 26): Սա միայն հնարավոր է այն պատճառով, որ Հայրը հեռացրեց Իր հայացքը Քրիստոսից և թափեց Իր զայրույթը Նրա վրա: Սաղմոսերգուն գրում է օրհնվածների մասին, որ նրանք ուրախությամբ ուրախանում են Աստծո երեսի առջև (Սաղմոս 21.6), ճանաչում են տոնական փողերի ուրախալի ձայնը և գնում են Աստծո երեսի լույսով (Սաղմոս 89.15): Հանուն մեզ՝ Քրիստոսը տրտմություն ապրեց՝ զրկվելով Հոր ներկայությունից, ճանաչեց դատաստանի փողի սարսափազդու ձայնը և հայտնվեց Աստծո երեսի բարկության անտանելի խավարում: Ադամի ճակատագրական որոշման պատճառով բոլոր ստեղծվածները հառաչում էին անեծքի տակ և ստրկացված էին ապականությանը և ունայնությանը (Հռոմեացիների 8.20-22): Ստեղծվածներին ազատելու համար Քրիստոսը (վերջին Ադամը) վերցրեց Իր վրա Իր ժողովրդի մեղքերը՝ հառաչելով այդ ահասարսուռ լուծի ներքո: Մենք խաղաղություն ունենք Աստծո հետ (Հռոմեացիների 5.1), միայն որովհետև Գողգոթայի խաչի վրա Քրիստոսը կրեց Աստծո ամբողջ զայրույթը՝ ուղղված մեր մեղքի դեմ:

5. Համաձայն Սաղմոս 32.1,2-ի (նաև Հռոմեացիների 4.7,8)՝ ինչպե՞ս է Դավիթը նկարագրում այն մարդուն, ով ճշմարտապես օրհնված է Աստծուց: Ինչպե՞ս է նման օրհնությունը հնարավոր:

ա. Նրա անօրինությունը Թ_____ է և նրա մեղքը Ծ_____ է (խս. 1): Ինչպե՞ս սուրբ և արդար Աստված կարող է ծածկել մեղքը՝ արդար մնալով: Դա միայն հնարավոր է, քանի որ Քրիստոսը կրեց մեր մեղքը և խայտառակությունը Աստծո և երկնային զորքերի առջև: Նա ի ցույց հանվեց մարդկանց առջև և ծաղրական տեսարան դարձավ թե՛ հրեշտակների, թե՛ դևերի աչքի առջև: Նրա կրած անօրինությունները չթողվեցին Իրեն, և Նրա վերցրած մեղքերը չծածկվեցին:

բ. Տերը Ա_____ չի Հ_____ նրան (խս. 2): Սա միայն հնարավոր է, քանի որ խաչի վրա մեր մեղքերը վերագրվեցին Քրիստոսին: Եթե մարդը երանելի կամ օրհնված է համարվում, քանի որ նրա անօրինությունը չի համարվում նրան, նշանակում է՝ Քրիստոսը անասելի անեծք կրեց, որովհետև բոլորիս մեղքը դրվեց Նրա վրա (Եսայի 53.6):

6. Երկրորդ Օրինաց 27 և 28 գլուխներում Աստված բաժանեց Իսրայելի ժողովրդին երկու խմբի: Նա ուղարկեց մի խմբին Գարիզին սարի վրա, իսկ մյուսին՝ Գեբաղ սարի վրա: Գարիզին սարում գտնվող մարդիկ պատվեր էին ստացել հռչակելու օրհնություններ, որոնք հասնելու էին նրանց, ովքեր ջանասիրաբար հնազանդվում էին իրենց Տեր Աստծուն (Երկրորդ Օրինաց 28.1-14): Գեբաղ սարում գտնվող մարդիկ պատվեր էին ստացել հռչակելու աստվածային դատաստանի այն սարսափելի անեծքները, որոնք հասնելու էին բոլոր անհնազանդներին (Երկրորդ Օրինաց 28.15-68):

ա. Այն ամենի լույսի ներքո, ինչ Սուրբ գիրքը սովորեցնում է մեր մեղքի մասին, այդ երկու սարերից ո՞րն է ավելի շատ վերաբերվում մեզ: Համաձայն մեր գործերի՝ մեր կյանքում պետք է ազդարարվեն աստվածային օրհնությունն՞ը, թե՞ անեծքները: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

_____

_____

_____

_____

_____

բ. Երկրորդ Օրինաց 29.20,21-ում Աստված կրկին ազդարարում և ամփոփում է այն դատաստանները, որոնք պետք է հռչակվեին Գեբաղ սարի վրա: Համաձայն այս հատվածի՝ ի՞նչ է Աստված հռչակում ցանկացած մարդու կյանքում, ով անհնազանդ է Իր օրենքին և խախտում է ուխտն Աստծո հետ:

_____

_____

_____

_____

_____

գ. Ինչպե՞ս է Քրիստոսի չարչարանքը և մահը Գողգոթայում փրկում մեզ նման դատաստանից:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Գողգոթայում Մեսիան «բաժանվեց» չարիքի համար, և Օրենքի գրքում գրված «ամեն անեծքը» իջավ Նրա վրա: Քրիստոսն ուներ բոլոր իրավունքները Գարիզին սարի օրհնությունների համար, բայց Նրա Հայրը որոտաց Նրա դեմ Գեբաղ սարից, երբ Նա փայտից կախված էր Գողգոթայում: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով կուռք է շինում և ծածուկ տեղն է դնում այն: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով անարգում է իր հորը և մորը, ով փոխում է իր դրացու սահմանը, ով կույրին ճանապարհից մոլորեցնում է: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով ծռում է պանդուխտի, որբի և այրի կնոջ իրավունքը: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով մեղավոր է ամեն տեսակի անբարոյության և պղծության մեջ, ով ծածուկ մեռցնում է իր դրացուն և կաշառք է վերցնում՝ անմեղ մարդ մեռցնելու համար: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով չի կենում Օրենքի խոսքերի մեջ՝ դրանք կատարելու համար (Երկրորդ Օրինաց 27.15-26): Ըստ Առակաց 26.2-ի՝ «զուր անեծքը չի կատարվի»: Սակայն անեծքը հասավ անմեղ Քրիստոսին, քանի որ Նա կրեց Իր ժողովրդի մեղքերը Աստծո դատաստանի առջև:

Գլուխ 10. Որդին վերցրեց Իր վրա Աստծո զայրույթը

Նախորդ երկու գլուխներում մենք տեսանք, որ Քրիստոսը կրեց մեր մեղքը և անեծքը Աստծո առջև, երբ խաչի վրա էր: Այս գլխում կիմանանք, որ Քրիստոսը կրեց մեր մեղքը, որպեսզի վերցներ Իր վրա մեղքի պատճառով առաջացած Աստծո զայրույթը: Այդպիսով Նա բավարարեց Աստծո արդարադատության պահանջները և հնարավոր դարձրեց, որ Աստված լինի և՛ արդար, և՛ մեղավորներին արդարացնող (Հռոմեացիների 3.25,26):

ՔՐԻՍՏՈՍԸ ԹՈՂՆՎԵՑ ԱՍՏԾՈՒՑ

Աստծո զայրույթի արտահայտություններից մեկը, որ Քրիստոսը վերցրեց Իր վրա, Հայր Աստծուց թողված և օտարացված լինելն էր: Աստված բարոյապես կատարյալ է և առանձնացված է ամեն չարիքից: Անհնար է, որ Նա հաճություն ցուցաբերի մեղքի հանդեպ կամ հաղորդակցություն ունենա անարդարության գործողների հետ: Այս պատճառով, Աստծո ժողովրդի մեղքը մեծ և անխոցելի պատնեշ էր, որն անհնար էր դարձնում շփումն Աստծո հետ: Աստծո և Նրա ժողովրդի այս մեծ բաժանումը հեռացնելու համար Քրիստոսը զբաղեցրեց մեր տեղը, կրեց մեր հանցանքը և թողնվեց Աստծուց՝ մինչև մեր մեղքերի պատիժը լիովին վճարելը:

1. Ի՞նչ է Սուրբ գիրքն ասում Աստծո մասին Ամբակում 1.13-ում:

   ա. Նրա աչքերը Մ_____ են Չ_____ տեսնելուց:

   բ. Նա չի կարող Մ_____ Տ_____ (կամ՝ նայել բարեհաճությամբ) անիրավությանը (Եսայի 40.28):

2. Համաձայն Եսայի 59.2-ի՝ ինչպե՞ս է մեղքն ազդում Աստծո և մարդկանց հարաբերությունների վրա: Աստված կարո՞ղ է հաղորդակցություն ունենալ անօրենների հետ:

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդու մշտական անկում ապրած և թշվառ վիճակը չի առաջացել այն պատճառով, որ Աստված թերացել է ինչ-որ բանում: Մարդու մեղքն է, որ մեծ անդունդ է ստեղծում իր և Աստծո միջև. մեղքն է, որ անթափանցելի պատնեշ է կառուցում: Մարդն ինքն է հանցավոր իր թշվառության մեջ, քանի որ նա թշնամացել է Աստծո դեմ և ապստամբել է Նրա օրենքի դեմ:

3. Ինչպե՞ս է Եփեսացիների 2.12-ը նկարագրում մեղավորներին:

ա. Ա_____ Քրիստոսի: Հունարեն ***«խորի՛ն»*** բառից, որն առանձնացված կամ անկախ լինելու իմաստ է կրում: Մեղավորն առանձին կամ անկախ է կյանքը, ուրախությունը և խաղաղությունը Պարգևողից:

բ. Հ_____ Իսրայելի քաղաքակցությունից: Հունարեն ***«ապալլոտրիո՛ն»*** բառից, որը նշանակում է «խորթացնել կամ օտարել»: Մեղավորն օտարացված է Աստծո ժողովրդից:

գ. Օ_____ խոստման ուխտերից: Հունարեն ***«քսենոս»*** բառից, որը նշանակում է «օտարական կամ օտարերկրացի»: Մեղավորն օտարական է Աստծո բոլոր խոստումների համար:

դ. Հ_____ չունեիք և Ա_____ էիք աշխարհում: Հավանաբար, սա մեղքի ամենասարսափելի հետևանքն է:

4. Աստծո ժողովրդի մեղքերը, անանցանելի պատնեշի պես, անհնար էին դարձնում շփումն Աստծո հետ: Աստծո և Իր ժողովրդի այս մեծ բաժանությունը հեռացնելու համար Քրիստոսը զբաղեցրեց մեր տեղը, կրեց մեր մեղքը և թողնվեց Աստծուց: Նա օտարացավ Աստծուց և կտրվեց Նրա ներկայությունից ու բարեհաճությունից՝ մինչև մեղքի պատիժը վճարելը: Ինչպե՞ս է այս ճշմարտությունը նկարագրվում Մատթեոս 27.45,46-ում:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսի աղաղակը խաչի վրա գրված է այստեղ եբրայերեն և արամեերեն լեզուներով: «Էլի» բառը եբրայերենով է, բայց մնացածը՝ արամեերենով: Մարկոսը գրում է ամբողջ այս աղաղակն արամեերենով (Մարկոս 15.34): «Թողնել» բառը թարգմանված է հունարեն ***«էգկատալեի՛պո»*** բառից, որը նշանակում է «թողնել, լքել կամ թողնել նեղության մեջ»:

5. Մատթեոս 27.46-ում Հիսուսը մեջբերում էր Դավթի խոսքերը Սաղմոս 22.1-18-ից: Ամբողջությամբ կարդացե՛ք այս հատվածը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. Ո՞րն էր Քրիստոսի բողոքը կամ աղաղակը խոսքեր 1,2-ում: Ի՞նչ է այն նշանակում:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Թողնել» բառը թարգմանված է եբրայերեն ***«ազաբ»*** բառից, որը նշանակում է «թողնել, լքել կամ հեռանալ»: Իր նեղության մեջ Դավիթը զգում էր, որ Աստված իր հետ չէր, սակայն միայն Քրիստոսը վերապրեց կատարյալ լքվածություն՝ լրիվ չափով: «Հառաչանք» բառը թարգմանված է եբրայերեն ***«շեհագա»*** բառից, որը բառացիորեն նշանակում է «մռնչալ»՝ առյուծի պես: Քրիստոսի հառաչանքները խաչի վրա վերածվեցին ահասարսուռ մռնչյունների: Նա աննահանջ փնտրտուքի մեջ էր. Նրա աղաղակը չէր դադարում. Նրա չարչարանքը չափից ավելին էր: Բայց երկինքը պղնձի պես էր դարձել: Չկար ոչ մի պատասխան Աստծուց. միայն լռություն էր և Նրա ներկայության ու բարեհաճության բացակայությունը: Մենք բաժանված էինք Աստծուց մեր մեղքի պատճառով: Այս բաժանությանը վերջ դնելու և մեզ Աստծո ներկայության ու բարեհաճության մեջ վերադարձնելու համար անհրաժեշտ էր, որ Քրիստոսը կրեր այն սարսափելի լքվածությունը Աստծուց, որին մենք էինք արժանի:

բ. Համաձայն Քրիստոսի՝ խոսքեր 3-ում և 6-ում, ինչո՞ւ էր Աստված թողել Նրան կամ երես թեքել Նրանից:

(1) Դու Ս_____ ես (խս. 3):

ՆՇՈՒՄՆԵՐ. Իր անասելի չարչարանքների մեջ Քրիստոսը հռչակում է Իր անսասան վստահությունը Աստծո սրբության հանդեպ: Աստված թողեց Նրան Իր արդարության և սրբության պատճառով. Քրիստոսը դարձել էր Իր ժողովրդի մեղքերը կրողը և Աստծո սուրբ զայրույթի առարկան:

(2) Ես Ո_____ եմ, ոչ թե Մ_____ (խս. 6):

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև Նա կատարյալ Մարդ էր, Նա եղավ մեղք (Բ Կորնթացիների 5.21) և անեծք (Գաղատացիների 3.13): Թեև Նա անբիծ Գառ էր (Ա Պետրոս 1.19), Նա դարձավ անապատում բարձրացրած օձը (Հովհաննես 3.14)՝ որդ, ոչ թե մարդ: Թեև Նա պետք է շռայլորեն ստանար Գարիզին սարի բոլոր օրհնությունները, Գեբաղ սարի բոլոր դատաստանները թափվեցին Նրա գլխին:

ՔՐԻՍՏՈՍԸ ՎԵՐՑՐԵՑ ԻՐ ՎՐԱ ԱՍՏԾՈ ԶԱՅՐՈՒՅԹԸ

Այն, որ Քրիստոսը վերցրեց Իր վրա Աստծո զայրույթը, նշանակում է ավելին, քան թողնված լինել (այսինքն՝ Աստծո ներկայությունից և բարեհաճությունից զրկված լինել). դա նույնպես նշանակում է, որ Աստված զարկեց Նրան Իր արդարության գավազանով: Աստծո օրենքը խախտվել էր, և աստվածային պատիժը պետք է լիներ գործած հանցանքի չափով: Արդարադատությունը պետք է բավարարված լիներ. նժարները պետք է հավասարվեին: Խաչի վրա Քրիստոսը վերցրեց Իր ժողովրդի հանցանքը, թողնվեց Աստծուց և լիովին կրեց Նրա պատժիչ արդարությունը և զայրույթը:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

1. Ի՞նչ է սովորեցնում Սաղմոս 7.11-13-ը այն մասին, որ Աստծո զայրույթը մեղավորների հանդեպ իրական է:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բարկանալ» բառը թարգմանված է եբրայերեն ***«զաա՛մ»*** բառից, որը նշանակում է «դատապարտել, վրդովմունք զգալ կամ բարկանալ այնպիսի բանի պատճառով, ինչի հանդեպ մարդը նողկանք է զգում»: Սուրբ և արդար Աստված պետք է նողկանք և բարկություն զգա այն ամենի հանդեպ, ինչը հակասում է Իր բնությանը և կամքին: Աստծո վրդովմունքը նույնքան Նրա բնավորության մասն է, որքան Նրա սերը և ողորմությունը: Եթե մարդը շարունակի հակառակվել Աստծո Անձին և կամքին, Աստծո արդար զայրույթն անխուսափելի կլինի: Սրած թրի և լարած աղեղի հիշատակումը խոսում է այն մասին, որ Աստված պատրաստ է դատաստան անելու: Պատրաստություններն արդեն արված են. Նրա թուրը սրած է, իսկ աղեղը՝ լարած, և Նրա նետերը կրակով բորբոքված են: Երկնքի զորքերի Հրամանատարը պատրաստվել է սուրբ պատերազմի: Միայն Աստծո երկայնամտությունն է պահում Իր զայրույթն այս աշխարհից:

2. Սաղմոս 7.11-13-ում սաղմոսերգուն հավաստիացնում է մեզ, որ Աստծո զայրույթը՝ աստվածաշնչյան իրողություն է: Նա օգտագործում է փոխաբերություններ, ինչպիսիք են պատերազմի համար պատրաստված աղեղը և սրած թուրը՝ Աստծո զայրույթի խստությունը մեզ փոխանցելու համար: Երբ մարդկային չարությունը հակառակվում է Աստծո արդարությանը և սրբությանը, արդյունքն աստվածային վրդովմունքը և զայրույթն է: Որպեսզի մենք փրկվեինք Աստծո արդարադատության թրից, անհրաժեշտ էր, որ Աստծո Որդին կրեր դրա հարվածը մեր փոխարեն: Ի՞նչ է Աստված պատվիրում Իր թրին Զաքարիա 13.7-ում: Ո՞ւմ դեմ է ուղղված այդ պատվերը: Ի՞նչ է ցույց տալիս այս խոսքը Գողգոթայում Քրիստոսի չարչարանքների մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թուրը վերաբերում է Աստծո դատաստանին, ինչպես Սաղմոս 7.11-13-ում է գրված: «Իմ հովիվը» Մեսիան է: Նա Բարի Հովիվն է (Հովհաննես 10.11,14)՝ ի հակադրություն հիմար հովվի (Զաքարիա 11.15-17): «Իմ ընկեր»-ը թարգմանված է եբրայերեն ***«ամիթ»*** բառից, որը նշանակում է «գործակից, ընկեր կամ հարևան»: Քրիստոսի վերաբերյալ այս բառը հատուկ նշանակություն է ստանում: Նա Հոր Որդին, Ընկերը և սերտ Գործակիցն է: Նա և Հայրը Մեկ են (Հովհաննես 10.30): Որդու մահը տեղի ունեցավ համաձայն Աստծո գերիշխան կամքի: Հենց Հայրը հրամայեց Իր թրին վեր կենալ Իր Որդու դեմ: Մատթեոսը մեջբերում է այս հատվածը Մատթեոս 26.31-ում՝ Քրիստոսի մահվան և Նրա աշակերտների ցրվելու վերաբերյալ:

3. Եսայի 53-ում պատկերավոր ներկայացված է, թե ինչպես Քրիստոսը չարչարվեց Աստծո զայրույթի ներքո՝ Աստծո ժողովրդի մեղքերի պատճառով: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ Քրիստոսը...

   ա. Պ_____ (կամ՝ հարվածվեց) Աստծուց (խս. 4): Եբրայերեն ***«նագա»*** բառից, որը նշանակում է «հարվածել, գետին գցել, զարկել կամ խփել»: Աստված արթնացրեց Իր արդարության թուրը և զարկեց մեզ Փոխարինողին:

   բ. Հ_____ Աստծուց (խս. 4): Եբրայերեն ***«նակա»*** բառից, որը նշանակում է «հարվածել, վիրավորել կամ սպանել»: Այն մարդիկ, ովքեր դիտում էին, թե ինչպես էր Քրիստոսը մահանում, հասկացան, որ Աստված էր զարկում Նրան, բայց սխալմամբ կարծեցին, որ պատճառը Իր՝ Քրիստոսի մեղքերն էին, ոչ թե՝ իրենց:

   գ. Ն_____ եղավ Աստծուց (խս. 4): Եբրայերեն ***«անա»*** բառից, որը նշանակում է «չարչարել, նեղություն պատճառել կամ ճնշել»: Աստված չարչարեց Քրիստոսին այն զայրույթով, որը պետք է հասներ մեզ, մինչև որ Քրիստոսը լիովին վճարեց մեր պատժի համար:

   դ. Վ_____ մեր մեղքերի համար (խս. 5): Եբրայերեն ***«խալալ»*** բառից, որը ենթադրում է մարդու մարմինը ցանկացած կերպով խոցելը: Այս խոսքը կատարվեց բառացի իմաստով խաչելության ժամանակ, երբ Քրիստոսը գամվեց մեխերով և խոցվեց գեղարդով: Եվ այն կատարվեց փոխաբերական իմաստով, երբ Քրիստոսը խոցվեց՝ զգալով Հոր բացակայությունը և Նրա զայրույթը:

   ե. Հ_____ մեր անօրինությունների համար (խս. 5): Եբրայերեն ***«դակա»*** բառից, որը նշանակում է «կոտրել, կտոր-կտոր անել, փշրել, վնասել, կործանել, խախտել կամ զարկել»: Քարերի պատռվելը Քրիստոսի մահվան ժամանակ (Մատթեոս 27.51) միայն աննշան կերպով է ներկայացնում այն զայրույթը, որը հարվածեց Քրիստոսին Գողգոթայի վրա:

   զ. Պ_____ մեր խաղաղության համար (խս. 5): Եբրայերեն ***«մուվկար»*** բառից, որը կարող է նշանակել «պատիժ, խրատ, ուղղում կամ հանդիմանություն»: Այն պատիժը, որը Քրիստոսը վերապրեց խաչի վրա, նման չէր հայրական փրկող կամ շտկող խրատի՝ որդու հանդեպ. այն նման էր դատավորի պատժիչ վրեժխնդրության՝ հանցագործի հանդեպ:

   է. Վ_____ ստացավ մեր բժշկության համար: Եբրայերեն «խաբբուրա» բառից, որը կարող է նշանակել նաև «մտրակել, վիրավորել կամ խոցել»: Քրիստոսը զբաղեցրեց մեր տեղը և մտրակվեց Աստծո զայրույթով, որին մենք էինք արժանի:

4. Ավետարաններում գրված է Քրիստոսի աղոթքը Գեթսեմանիում՝ նախքան Նրա ձերբակալվելը և խաչվելը: Հավանաբար, ուրիշ ոչ մի իրադարձություն Քրիստոսի կյանքում այդքան պարզորեն չի պատ-

կերում Գողգոթայում սպասվող սարսափելի չարչարանքները Աստծո զայրույթի ներքո: Ի՞նչ են հայտնում մեզ Ղուկաս 22.41-44-ում նկարագրված իրադարձություններն այդ չարչարանքների մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն անասելի չարչարանքը, որը սպասվում էր Քրիստոսին Գողգոթայում, պարզորեն երևում է հետևյալ դիտարկումներից. (1) Քրիստոսի խնդրանքն այն մասին, որ չարչարանքի բաժակը հեռացվեր Իրենից, (2) հրեշտակների ներկայությունը, որի նպատակն էր՝ զորացնել Քրիստոսին խաչելության համար, (3) այն փաստը, որ Քրիստոսը պատերազմում էր աղոթքի մեջ՝ մեծ եռանդով և տագնապի մեջ («տագնապ» բառը թարգմանված է հունարեն ***«ագոնի՛ա»*** բառից, որը հաճախ օգտագործվում է մարմնամարզական վարժությունների կամ ըմբշամարտի իմաստով. այն նույնպես կարելի է թարգմանել «տառապանք» բառով), և (4) այն փաստը, որ Քրիստոսի քրտինքի փոխարեն արյան կաթիլներ էին թափվում: Բժշկությունն անվանում է այս երևույթը ***«հերմատիդրոսիս»:*** Այն տեղի է ունենում, երբ արյունը խառնվում է քրտինքի հետ սարսափելի մտավոր կամ մարմնական տառապանքի ժամանակ:

5. Ի՞նչ սարսափելի բան էր պարունակում այդ գավաթը, որ Քրիստոսը երեք անգամ տագնապով աղոթեց, որ, եթե հնարավոր է, չխմեր դրանից: Դա պարզապես այն վայրագությունները չէին, որոնք Նա ստանալու էր չար մարդկանցից, այլ՝ Աստծո զայրույթը: Հետևյալ աստվածաշնչյան հատվածները պատկերում են բաժակից թափվող Աստծո զայրույթը: Խոսքն այն զայրույթի մասին է, որը Քրիստոսը պետք է խմեր խաչի վրա: Ամփոփեք յուրաքանչյուրը ձեր բառերով:

ա. Սաղմոս 11.5,6

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ինչպես որ օրհնությունը՝ արդարների բաժակը կամ բաժինն է (Սաղմոս 23.5), այնպես էլ զայրույթը՝ անօրենների համար պահված բաժակը կամ բաժինն է: Այս բաժակը սարսափելի է. դրանում մահացու թույն կա: Խաչի վրա Աստծո Որդին վերցրեց այն բաժակը, որը պատկանում էր Աստծո ժողովրդին, և խմեց այն մինչև վերջին կաթիլը:

բ. Սաղմոս 75.8

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված է որոշում և պատրաստում Իր զայրույթն ամբարիշտների համար: «Մրուրներ» բառը թարգմանված է եբրայերեն ***«շեմեր»*** բառից, որը կարող է նաև թարգմանվել որպես «նստվածք» և նշանակում է գինու շշի նստվածքը կամ տականքը: Ամբարիշտները կուլ կտան ամեն մի կաթիլ, մինչև որ կլանեն բաժակի տակի դառը նստվածքը: Խաչի վրա Աստծո Որդին զբաղեցրեց Աստծո ժողովրդի տեղը: Նա վերցրեց այդ զայրույթի բաժակն Աստծո ձեռքից և խմեց այն մինչև վերջին կաթիլը: Նա չորացրեց այն բաժակը, որում Աստծո բարկությունն էր՝ ընդդեմ մեղքի:

6. Դիտարկելով այն սարսափելի զայրույթը, որը Քրիստոսը կրեց խաչի վրա, մենք պետք է ևս մեկ անգամ շեշտադրենք, որ Նրա չարչարանքն Աստծո կամքն էր և այն միջոցը, որով Աստծո ժողովուրդը փրկություն էր ստանալու: Ի՞նչ է սովորեցնում Եսայի 53.10-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Տեր» բառը թարգմանված է եբրայերեն ***«Յահվեհ»*** (կամ ***«Եհովա»***) բառից և վերաբերում է անձամբ Աստծուն: Համաձայն Գործք 2.23-ի՝ Քրիստոսը մատնվեց «Աստծո սահմանված խորհրդով և կանխագիտությամբ»: «Հաճեց» բառը թարգմանված է եբրայերեն ***«խաֆեց»*** բառից, որը նշանակում է «բերկրանք ապրել, գոհ լինել կամ ցանկանալ»: Հայրը սադիստական հաճույք չէր զգում՝ զարկելով Իր Որդուն զայրույթի ամբողջ ծանրությամբ. Նրա հաճության պատճառն այն էր, որ Քրիստոսի չարչարանքի և մահվան միջոցով կատարվեց Իր կամքը և բացվեց փրկության ճանապարհը Իր ժողովրդի համար: «Զարկել» բառը թարգմանված է եբրայերեն ***«դակա»*** բառից, որը նշանակում է «կոտրել, կտոր-կտոր անել, փշրել, վնասել, կործանել, խախտել կամ զարկել»: Հայրը զարկեց և ցավեցրեց Քրիստոսին, որպեսզի Նրա ժողովուրդը փրկվեր Նրա չարչարանքների և մահվան միջոցով:

Գլուխ 11. Որդին մահացավ

Այն անհավատալի չարչարանքը, որը Քրիստոսը կրեց Գողգոթայում, բավական չէր՝ մեր մեղքերը քավելու համար: Մեղքի հատուցումը՝ մահն է. այնպես որ, անհրաժեշտ էր, որ Քրիստոսը մահանար:

ՄԵՐ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՀՎԱՆԸ

Աստվածաշնչում, սկսած առաջին իսկ հիշատակումից, մահը ներկայացվում է որպես Աստծո դատաստանի արդյունքը՝ մարդու մեղքի պատճառով (Ծննդոց 2.17): Ամեն մի տապանաքար՝ Աստծո դատաստանի դրսևորումն է մեր անկում ապրած ցեղի հանդեպ: Մենք չպետք է մտածենք, որ ոմանք մահանում են ավելի վաղ, քան մյուսները, քանի որ նրանք ավելի մեղավոր են: Կան երեխաներ, որոնք մահանում են իրենց մայրերի որովայններում՝ չգործելով նույնիսկ մեկ մեղք, և կան մարդիկ, ովքեր ապրում են տասնամյակներ շարունակ՝ ապստամբելով Աստծո դեմ: Մեզնից ամեն մեկը մարդկային անկում ապրած ցեղի մասն է, և մահը՝ մեր դեմ ուղղված Աստծո դատաստանի դրսևորումներից մեկը:

1. Ըստ Հռոմեացիների 5.12-ի՝ ինչպե՞ս մահը մուտք գործեց Աստծո ստեղծած աշխարհը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեկ մարդն» այս խոսքում Ադամն է: Սուրբ գիրքը պարզորեն նկարագրում է, որ մահը բնական երևույթ չէ, այլ՝ մեղքի աստվածային դատաստանի հետևանքը: Մահը մուտք գործեց այս աշխարհ Ադամի մեղքի միջոցով և փոխանցվեց Ադամի ժառանգներից ամեն մեկին մեղքի պատճառով (նաև կարդացե՛ք խս. 15 և 17):

2. Մենք պետք է հասկանանք, որ մահը մեղքի բնական հետևանքը չէ, որը գրեթե առնչություն չունի Աստծո հետ: Համաձայն Աստվածաշնչի՝ ամեն մարդու մահը տեղի է ունենում Աստծո գերիշխան հրամանով: Նա ոչ միայն որոշել է ամեն մեկի մահը, այլև անձամբ իրագործում է այն: Ի՞նչ են սովորեցնում Երկրորդ Օրինաց 32.39, Ա Թագավորաց 2.6 և Եբրայեցիների 9.27 խոսքերը այս ճշմարտության մասին:

_____

_____

3. Ամբողջ Աստվածաշնչում մահը դիտարկվում է որպես մարդու մեղքի արդյունք: Անկախ այն բանից՝ պատճառը Ադամի՞ մեղքն է, թե՞ ամեն մեկի անձնական անարդարությունը, սկզբունքը նույնն է. բոլոր մարդիկ մահանում են, քանի որ բոլոր մարդիկ մեղանչում են: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. Եզեկիել 18.4,20

բ. Հռոմեացիների 6.23

4. Եսայի 64.6-ը բանաստեղծական կերպով պատկերում է կապը մահվան և մեղքի միջև: Ծանոթացե՛ք այս խոսքի բովանդակությանը: Ինչպե՞ս է նկարագրվում մարդու մեղավորությունը: Որո՞նք են բարոյական քայքայմանը և մեղքին ձգտելու անխուսափելի հետևանքները:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Բոլորս խախտել ենք Աստծո օրենքը և արժանի ենք մահվան և դժոխքի: Ներում ստանալն անհնար է, քանի դեռ մեր մեղքերի գինը չի վճարվել և Աստծո օրենքի արդարացի պահանջները չեն բավարարվել: Սա Հիսուս Քրիստոսի Ավետարանի սիրտն է: Նա վերցրեց մեր մեղքերը և մահացավ մեր փոխարեն՝ կրելով այն պատիժը, որը պահանջում էր սուրբ Աստված և Նրա արդար օրենքը:

1. Խաչի վրա Քրիստոսը կրեց մեր մեղքը և չարչարվեց մեր փոխարեն՝ վերցնելով Իր վրա Աստծո զայրույթը: Նրա մահը բավարարեց այն օրենքի պահանջները, որոնք մենք զանց էինք առել, և ներում շնորհեց մեզ: Հետևյալ սուրբգրային հատվածների ամփոփումը կօգնի մեզ հասկանալ այս ճշմարտությունը:

   ա. Բոլորս Մ_____ (Հռոմեացիների 3.23), բայց Աստված Քրիստոսի վրա դրեց մեր ամենի Մ_____ (Եսայի 53.6):

   բ. Մենք Ա_____ տակ էինք մեր մեղքի պատճառով (Գաղատացիների 3.10), բայց Քրիստոսը գնեց մեզ դրանից՝ մեզ համար Ա_____ լինելով (Գաղատացիների 3.13)

   գ. Մեր անօրինությունները Բ_____ մեր և մեր Աստծո մեջտեղը (Եսայի 59.2), բայց խաչի վրա Քրիստոսը Թ_____ մեր փոխարեն (Մատթեոս 27.46):

   դ. Մենք արժանի էինք սուրբ Աստծո պատժին և բարկությանը, բայց խաչի վրա Քրիստոսը Վ_____ մեր Մ_____ համար և Հ_____ մեր Ա_____ համար (Եսայի 53.5):

   ե. Մեղքի վարձքը Մ_____ է (Հռոմեացիների 6.23), բայց խաչի վրա Քրիստոսը մեկընդմիշտ Մ_____ մեր մեղքերի համար, Ա_____՝ Ա_____ համար, որ մոտեցնի մեզ Աստծուն (Ա Պետրոս 3.18):

2. Ա Կորնթացիների 15.1-4-ում գրված է Ավետարանի ամենից ամբողջական և համառոտ սահմանումը Աստվածաշնչում: Համաձայն այս հատվածի՝ որո՞նք են աստվածաշնչյան Ավետարանի երեք հիմնական տարրերը:

   ա. Քրիստոսը Մ_____ մեր մեղքերի համար՝ Գրքերի համեմատ (խս. 3): Մենք տեսնում ենք, որ անհրաժեշտ էր, որ Քրիստոսը ոչ միայն կրեր Աստծո զայրույթը Գողգոթայում, այլև մահանար մեր մեղքերի համար:

   բ. Քրիստոսը Թ_____ (խս. 4): Սխալ կլինի ասել, որ սա ընդամենը անցումային փուլ է Քրիստոսի մահվան և հարության միջև: Քրիստոսի թաղումը նշված է՝ շեշտադրելու համար Նրա մահվան իրական լինելը: Նա իրականում թաղվեց, քանի որ Նա իրականում մահացել էր:

   գ. Քրիստոսը Հ_____ առավ երրորդ օրը՝ Գրքերի համեմատ (խս. 4): Հիսուս Քրիստոսի հարությունը երբեք չպետք է ավելացնել մեր Ավետարանի քարոզման վերջում այնպես, ասես այն ուշացած միտք է կամ՝ ոչ էական փաստ: Գործք առաքելոց գրքում հարության հռչակումն առաջնահերթ է համարվում:

3. Բոլոր չորս Ավետարանների հեղինակները ստուգորեն ներկայացրել են Հիսուսի մահը: Թեև նրանց նկարագրությունները հակիրճ են, դրանց կարելի է վստահել: Կարդացե՛ք հետևյալ խոսքերը. Մատթեոս 27.50, Մարկոս 15.37, Ղուկաս 23.46, Հովհաննես 19.30: Ի՞նչ հիմնական մտքեր են դրանք փոխանցում:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ավետարաններում գտնվող այս պատմությունները փոխանցում են երկու միտք. (1) Քրիստոսի մահն իրական է. մեղքի հատուցումը մահն է, և Քրիստոսը կրեց Իր Ժողովրդի պատիժը՝ մահանալով նրա փոխարեն, և (2) Քրիստոսն իշխանություն ուներ Իր մահվան վրա. Նա արձակեց Իր Հոգին (Մատթեոս 27.50, Հովհաննես 19.30). Նա ավանդեց Իր հոգին Իր Հոր ձեռքը (Ղուկաս 23.46): Քրիստոսը չմահացավ իր կամքին հակառակ սպանվող նահատակի պես. Նա հոժարաբար տվեց Իր կյանքը՝ որպես քավության զոհ Իր ժողովրդի համար:

4. Հետևյալ խոսքերն ամենակարևոր աստվածաշնչյան հատվածներից են Քրիստոսի մահվան մասին և այն մասին, թե ինչ նշանակություն ունի այն Իր ժողովրդի համար: Ամփոփե՛ք այս խոսքերից ամեն մեկը ձեր բառերով:

ա. Հռոմեացիների 5.6

_____

_____

_____

_____

բ. Հռոմեացիների 5.8

_____

_____

_____

_____

գ. Հռոմեացիների 5.10

_____

_____

_____

_____

5. Համաձայն Բ Կորնթացիների 5.14,15-ի՝ ինչպե՞ս մենք՝ հավատացյալներս, պետք է արձագանքենք այն իրողությանը, որ Քրիստոսը մահացավ մեր փոխարեն:

_____

_____

_____

_____

_____

6. Մենք կամփոփենք այս դասը՝ խոսելով Երկնքի և հավիտենության մասին: Համաձայն Հայտնություն 5.8-10-ի՝ ինչի՞ մասին են հավիտյան երգելու հրեշտակները և փրկվածները:

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 12. Քրիստոսը՝ մեր քավությունը

«Քավություն» բառը լատիներենում ***«պրոպիսիարե»*** բառն է, որը նշանակում է «քավել, խաղաղեցնել կամ բարեհաճ դարձնել»: Նոր կտակարանում «քավություն» բառը թարգմանված է հունարեն ***«հիլասմոն»*** բառից, որը նշանակում է «զոհ, որը բավարարում է Աստծո արդարադատության չափանիշները և խաղաղեցնում է Նրա զայրույթը»: Քավության իմաստը և նշանակությունը լիովին հասկանալու համար մենք կվերանայենք մի քանի առանցքային ճշմարտություններ, որոնք արդեն սովորել ենք նախորդ գլուխներում:

Աստվածաշունչը ցույց է տալիս մեծագույնը բոլոր երկընտրանքներից: Աստված արդար է: Նշանակում է՝ Նա պետք է վարվի ըստ արդարության խստագույն կանոնների. Նա պետք է արդարացնի անմեղներին և դատապարտի մեղավորներին: Եթե Նա ների մեղավորին և չպատժի Իր օրենքի ամեն մի խախտում և անհնազանդություն, Նա անարդար կլինի: Այնուամենայնիվ, եթե Նա իսկապես արդարությամբ վարվի ամբողջ մարդկության հետ, այսինքն՝ հատուցի յուրաքանչյուրին՝ ըստ արժանվույն, բոլորը կդատապարտվեն: Այսպիսով, մեր առջև է ամբողջ Սուրբ գրքի մեծագույն հարցը. «Ինչպե՞ս է հնարավոր, որ Աստված արդար լինի և միաժամանակ ողորմություն ցուցաբերի նրանց հանդեպ, ովքեր պետք է դատապարտություն ստանան»: Կամ, եթե հարցի վերածենք Պողոս առաքյալի խոսքերը Հռոմեացիների 3.26-ում, «Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և արդարացնել մեղավորներին»:

Այս հարցերի պատասխանը «քավություն» բառի մեջ է այն իմաստով, ինչ իմաստով այն վերաբերում է Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Նույն Աստված, Ով Իր արդարությամբ դատապարտում է մեղավորներին, Մարդ դարձավ և մահացավ մեղավորների փոխարեն: Աստված չանտեսեց Իր արդարության պահանջները, չհրաժարվեց դրանցից և չաղավաղեց դրանք՝ մեղավորներին արդարացնելու համար: Փոխարենը, Նա բավարարեց նրանց դեմ եղած արդարադատության պահանջները և խաղաղեցրեց Իր բարկությունը՝ Իր Որդու չարչարանքի և մահվան միջոցով: Քրիստոսը մեր քավությունն է այն իմաստով, որ Նրա զոհի պատճառով, սուրբ և արդար Աստված կարող է ողորմած լինել մեր հանդեպ և ներել այն հանցանքները, որոնք մենք գործել ենք Նրա դեմ:

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՄ ՔՐԵԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Խոսելով այն մասին, որ Քրիստոսը բավարարեց աստվածային արդարադատության պահանջները՝ կարևոր է հասկանալ, թե ինչ է դա նշանակում: Ընդհանուր առմամբ, գոյություն ունի հատուցման երկու տեսակ՝ ***առևտրային*** և ***դատական*** (կամ ***քրեական***):

> **Առևտրային հատուցում**. Պարտքը հատուցվում է միայն, երբ այն վճարվում է ճիշտ նույն չափով: Հիսուն ԱՄՆ դոլարի պարտքը չի կարող հատուցվել քսանհինգ ԱՄՆ դոլարով. նույնպես, տասը ունցիա ոսկու պարտքը չի կարող հատուցվել նույն քաշն ունեցող կավով:
>
> **Դատական կամ քրեական հատուցում**. Պարտքը հատուցվում է, երբ հանցագործը կատարում է դատավորի կողմից որոշված դատավճիռը: Անպայման չէ, որ դատավճիռը լինի միևնույն բնույթի՝ ինչ հանցագործությունը. ընդամենը պահանջվում է, որ այն արդարացիորեն համարժեք լինի հանցանքին: Գողությունը կարելի է պատժել տուգանքով, սպանությունը՝ բանտարկությամբ, իսկ դավաճանությունը՝ աքսորով:

Վերևում բերված օրինակներից ակնհայտ է, որ Քրիստոսի չարչարանքներն ունեին ոչ թե առևտրային, այլ՝ ***դատական*** կամ ***քրեական*** հատուցման բնույթ: Քրիստոսը չկրեց ճիշտ այն պատիժը, որով դատապարտված էր Իր ժողովուրդը. Նա հավիտյան չդատապարտվեց դժոխքում: Բայց Նրա չարչարանքն այն

էր, ինչը, ըստ սուրբ և արդար Աստծո գնահատականի, պետք է վճարվեր՝ աստվածային արդարությունը բավարարելու և հանցավորներին մեղքի պատժից ազատելու համար:

ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՍԱՀՄԱՆ ԱՐԺԵՔԸ

Խոսելով Քրիստոսի կողմից աստվածային պահանջները բավարարելու մասին՝ անհրաժեշտ է նաև հաշվի առնել Հիսուս Քրիստոսի անսահման արժեքի մասին վարդապետությունը: Ինչպե՞ս մի Մարդ, մի քանի ժամ խաչի վրա չարչարվելով, կարող էր վճարել գրեթե անթիվ մեղավորների մեղքերի համար և փրկել նրանց՝ դժոխքում հավիտյան չարչարվելուց: Ինչպե՞ս այդ Մարդու կյանքը կարող էր բավարարել կատարելապես սուրբ Աստծո արդարադատության պահանջները: Պատասխանը Չարչարվողի և Մահացողի բնության մեջ է: Քանի որ Աստծո Որդին աստվածության լիությունն է մարմնով (Կողոսացիների 2.9), Նրա կյանքն անսահմանափակ արժեք ունի: Նրա կյանքի արժեքն անհաշվելի չափով ավելին է, քան՝ որոնց համար Նա մահացավ: Սա ամենագեղեցիկ ճշմարտություններից մեկն է Աստվածաշնչում:

ՔԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Ստորև կդիտարկենք մի քանի շատ կարևոր հատվածներ Աստվածաշնչում, որոնք ներկայացնում են Քրիստոսի զոհը՝ որպես քավություն մեր մեղքերի:

1. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածները այն մասին, որ Քրիստոսը՝ մեր մեղքերի քավությունն է:

ա. Ա Հովհաննես 2.2

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քավություն» բառը թարգմանված է հունարեն ***«հիլասմո՛ս»*** բառից (սահմանումը՝ այս գլխի ներածության մեջ): Քրիստոսի զոհը չէր սահմանափակվում հրեաներով, այլ նաև ընդգրկում էր մարդկանց ամեն ցեղից, լեզվից, ժողովրդից և ազգից (Հայտնություն 5.9):

բ. Ա Հովհաննես 4.10

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քավություն» բառը թարգմանված է հունարեն ***«հիլասմո՛ս»*** բառից: Աստծո դրդապատճառն Իր Որդուն ուղարկելու համար՝ Իր գերիշխան և անպայմանական սերն էր Իր ժողովրդի հանդեպ, որը բոլորովին կախված չէր նրանց արժանիքներից կամ արժեքից: Աստծո սիրո վերջնական կնիքը կամ ապացույցը Իր Որդու քավիչ մահն էր մեզ համար:

գ. Եբրայեցիների 2.17

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քավել» բառը թարգմանված է հունարեն ***«հիլա՛սկոմայ»*** բայից, որն առաջացել է ***«հիլասմո՛ս»*** գոյականից: Մարդկանց օգնելու համար Աստծո Որդին պետք է հագներ նրանց բնությունը: Միայն մարդը կարող էր մահանալ մարդկանց համար (Եբրայեցիների 10.4), և միայն Աստված-Մարդը կարող էր ներկայացնել թե՛ Աստծուն մարդկանց առջև, թե՛ մարդկանց՝ Աստծո առջև:

2. Հռոմեացիների 3.23-28-ն անզուգական կերպով բացատրում է Քրիստոսի մահվան իմաստը՝ որպես քավություն մեր մեղքերի: Գրե՛ք ձեր մեկնաբանությունները հետևյալ արտահայտություններից ամեն մեկի վերաբերյալ:

ա. Որին Աստված առաջուց սահմանեց՝ քավություն լինելու համար (խս. 25):

ՆՇՈՒՄՆԵՐ. «Առաջուց սահմանեց» արտահայտությունը թարգմանված է հունարեն ***«պրոտի՛տեմայ»*** բառից, որը նշանակում է «դնել կամ ի ցույց հանել հանրության առջև»: Աստված վճռել էր, որ Իր Որդին հրապարակավ խաչվեր, որպեսզի պարզորեն հայտներ Իր արդարությունը բոլորին: Այս խոսքում «քավություն» բառը թարգմանված է հունարեն ***«հիլաստե՛րիոն»*** բառից, որը նշանակում է «զոհ, որը մատուցվում է՝ զայրույթը դադարեցնելու, խաղաղեցնելու կամ հանդարտեցնելու համար, ինչպես նաև տուժած կողմից բարեհաճություն ստանալու համար»: Խաչի վրա Աստված ի ցույց հանեց Իր Որդուն ամբողջ աշխարհի առջև՝ որպես քավություն մեղքի համար:

բ. Հավատալով Նրա արյունով (խս. 25):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածի ամենաբնական մեկնաբանությունն այն է, որ Քրիստոսի քավության պտուղները ստացվում են հավատքով: Մենք հաշտվել ենք Աստծո հետ Քրիստոսում և մեր փոխարեն ունեցած Նրա անձնազոհ (արյունոտ) մահով:

գ. Որ ցույց տար Իր արդարությունը, քանի որ Աստված Իր երկայնամտությամբ թողտվություն էր արել նախկինում գործված մեղքերի համար (խս. 25):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն մեծ նպատակը, որն Աստված հետապնդում էր՝ Իր Որդու մահը հրապարակավ ի ցույց հանելով, Իր արդարությունը հայտնելը կամ ապացուցելն էր: Բայց ինչո՞ւ էր դա անհրաժեշտ: Վերևում բերված պնդումը պատասխանում է այս հարցին. «Քանի որ Աստված Իր երկայնամտությամբ թողտվություն էր արել նախկինում գործված մեղքերի համար»: Թվում է՝ այն ողորմությունը և երկայնամտությունը, որոնք Աստված ցուցաբերում էր մեղավոր մարդկության հանդեպ Ադամի անկումից ի վեր, կասկածի էին ենթարկում Նրա արդարությունը: Ադամը և Եվան արժանի էին մահվան, բայց նրանց կյանք շնորհվեց: Ամբողջ աշխարհը պետք է կործանվեր ջրհեղեղի ժամանակ, բայց Աստված խնայեց մեղավոր Նոյին և նրա ընտանիքը: Իսրայելի մշտական ապստամբությունն Աստծո օրենքի դեմ պետք է ավարտվեր այդ ազգի կործանմամբ: Դավիթը չպետք է ներվեր իր հանցանքների՝ շնության և սպանության համար: Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել, բայց ողորմություն ցուցաբերել նրանց հանդեպ, ովքեր պետք է դատապարտվեին: Այս հարցի պատասխանը Քրիստոսի չարչարանքների և մահվան մեջ է: Ադամի անկումից ի վեր Աստծո երկայնամտությունը Իր ժողովրդի մեղքերի հանդեպ՝ Նրա անտարբերության կամ անարդարության դրսևորումը չէր. այն հիմնված էր Քրիստոսի ապագա գալուստի վրա, որի նպատակն էր լինելու մահանալ նրանց մեղքերի համար: Այն ողորմությունը, երկայնամտությունը և ներումը, որոնք Աստված շռայլում էր Իրեն հավատացող Հին կտակարանի սրբերին, ուներ միայն մեկ պատճառ. Քրիստոսը գալու էր, որպեսզի մահանար բոլոր այդ մարդկանց համար: Աստծո անցյալ, ներկա և ապագա ողորմությունները հնարավոր են միայն Քրիստոսի մահվան շնորհիվ: «Թեև փրկության աշխատանքը չէր կատարվել մինչև Քրիստոսի մարմնավորումը, սակայն դրա առաքինությունը, արդյունավետությունը և առավելությունները հաջողությամբ փոխանցվել էին բոլոր դարերում ապրող ընտրյալներին՝ աշխարհի սկզբից ի վեր»[4]:

դ. «Որ Իր արդարությունը երևացնի այս ժամանակում, որ Ինքը լինի արդար և արդարացնող նրան, որ Հիսուսի հավատքից է (կամ՝ «որ հավատում է Հիսուսին»)» (խս. 26):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուս Քրիստոսի չարչարանքը Գողգոթայում հեռացրեց ամեն մի խոչընդոտ, որն արգելում էր արդար Աստծուն՝ ներել Իր մեղավոր ժողովրդին: Աստված ցուցադրեց Իր արդարությունը՝ պատժելով Իր ժողովրդի մեղքերը, գոհացնելով Իր արդարադատության պահանջները և խաղաղեցնելով Իր զայրույթը: Նա փրկության ճանապարհ պատրաստեց Իր ժողովրդի համար՝ զբաղեցնելով նրանց տեղը, կրելով նրանց մեղքը և հանգցնելով նրանց համար նախատեսված զայրույթն Իր մարմնում: Ահա թե ինչու Աստված կարող է արդարացնել Իր ժողովրդին՝ առանց որևէ հակասության Իր սրբության և արդարության հետ:

[4] *«Վեստմինստերյան հավատքի հանգանակ»*, Գլուխ VIII, Հոդված 6

Գլուխ 13. Քրիստոսը՝ մեր փրկությունը

Երեք ամենակարևոր և ամենագեղեցիկ բառերը Սուրբ գրքում, որոնք նկարագրում են Աստծո փրկարար աշխատանքը Հիսուս Քրիստոսի միջոցով, ***փրկել***, ***փրկագին (կամ՝ փրկանք)*** և ***փրկություն*** բառերն են: Նախորդ գլխում մանրամասնորեն դիտարկեցինք աստվածաշնչյան ճշմարտությունը քավության մասին: Այժմ խոսելու ենք փրկության մասին, որը ոչ պակաս կարևոր է խաչը հասկանալու համար: Երկու ճշմարտություններն էլ հիմքային են աստվածաշնչյան քրիստոնեության համար, և երկուսն էլ պետք է ազդարարել ու պաշտպանել:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

«Փրկել» (կամ՝ «փրկագնել») բառը լատիներենում *«ռեդիմերե»* բառն է *(«ռե»* = կրկին + *«էմերե»* = գնել): Փրկելը կամ փրկագնելը նշանակում է՝ ետ գնել այն մարդուն, որը վաճառված է եղել ստրկության կամ գերված է եղել: ***Փրկողը*** այն մարդն է, ով փրկագնում է մեկ ուրիշին: ***Փրկագինը*** այն վճարն է, որը տրվում է դրա համար: Փրկությունը կամ փրկագնումը վերաբերում է գնված ազատությանը: Սուրբ գրքում Քրիստոսը մեր ***Փրկիչն*** է, Ով ***փրկել*** է Իր ժողովրդին՝ տալով Իր կյանքը որպես ***փրկագին***:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՓՐԿԻՉ ԵՎ ՓՐԿԱԳԻՆ

Աստվածաշունչը հռչակում է, որ Հիսուս Քրիստոսը Իր ժողովրդի և՛ ***Փրկիչն*** է, և՛ ***Փրկագինը*** (կամ՝ փրկանքը): Զարմանալի չէ, որ այս երկու բառերը դարեր շարունակ արժևորվել են Աստծո ժողովրդի կողմից:

1. Քրիստոսը՝ Իր ժողովրդի Փրկիչն է, Ով տվեց Իր կյանքը՝ որպես փրկագին: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

   ա. Քրիստոսը եկավ, որ տար Իր Անձը որպես Փ_____ շատերի փոխարեն (Մատթեոս 20.28): Հունարեն ***«լո՛ւտրոն»*** բառից է, որն առաջացել է ***«լո՛ւո»*** (թուլացնել, թեթևացնել) բառից: Այն նշանակում է՝ թուլացնել հագուստը, զրահը, կապանքները և այլն: Մատթեոս 20.28-ի համատեքստում խոսքն այն գնի մասին է, որը վճարվել է ստրկացված կամ գերված մարդուն ազատելու համար: Այն փրկանքը, որը Քրիստոսը վճարեց Իր ժողովրդի ազատության համար, Իր կյանքն էր:

   բ. Քրիստոսն Իր Անձն ամենի համար Փ_____ տվեց (Ա Տիմոթեոս 2.5,6): Հունարեն ***«ան-տի՛լուտրոն»*** բառից է, որը վերաբերում է ինչ-որ մեկի ազատության համար վճարված գնին: «Վկայություն լինի իր ժամանակներում» արտահայտությունը նշանակում է, որ Քրիստոսը տվեց Իր Անձը որպես փրկագին՝ համաձայն Աստծո կատարյալ կամքի և Նրա կողմից որոշված ժամանակ:

2. Ստորև բերված են երկու ամենագեղեցիկ աստվածաշնչյան հատվածները, որոնք խոսում են այն գնի մասին, որը վճարվել է՝ Աստծո ժողովրդին փրկելու համար: Ամփոփե՛ք այս ճշմարտությունները ձեր բառերով:

   ա. Գործք 20.28

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը պարզապես չփրկեց (կամ՝ ստացավ) Եկեղեցին. Նա փրկեց այն Իր համար: Եկեղեցին այստեղ կոչվում է «Աստծո եկեղեցին, որ ***Իր արյունով*** ստացավ»: Սա համոզիչ հղում է Քրիստոսի աստվածությանը: Այն Մարդը, Ով թափեց Իր արյունը Գողգոթայում, աստվածության լիությունն էր՝ մարմնով (Կողոսացիների 2.9): Նրա արյունը՝ թափված մեր փրկության համար, անսահման արժեք ուներ:

բ. Ա Պետրոս 1.18,19

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պատվական» բառը թարգմանված է հունարեն ***«տի՛միոս»*** բառից, որը նշանակում է այնպիսի բան, որը մեծ գին ունի, որն արժանի է պատվի և գնահատանքի, կամ հատկապես թանկ մի բան: Քրիստոսի պատվական արյունը միանշանակ կերպով հակադրվում է այն ***ապականացու*** բաներին, որոնք մարդիկ կարող են առաջարկել իրենց փրկության համար: «Անբիծ» բառը (հունարեն ***«ա՛մոմոս»***) նշանակում է «անթերի կամ առանց հանցանքի»: «Անարատ» բառը (հունարեն ***«ա՛սպիլոս»***) նշանակում է «առանց արատի, չարատավորված կամ չկեղտոտված, ազատ պարսավանքից և նախատինքից»:

3. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ սուրբգրային հատվածները փրկության մասին: Արդյո՞ք այն կատարված փաստ է: Արդյո՞ք մեր մեղքի պարտքը լիովին վճարված է:

ա. Հովհաննես 19.30

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կատարված է» բառը ազատության ամենաազդեցիկ հռչակումն է, որ այս աշխարհը երբևէ իմացել է: Այն թարգմանված է հունարեն ***«տելեո՛ն»*** բառից, որը նշանակում է «ավարտել, կատարել կամ իրագործել. ավարտին հասցնել կամ եզրափակել. կատարել վերջնական գործողությունը կամ քայլը, որն ինչ-որ գործընթաց է ավարտում»: Նույն բառն օգտագործվում է ընդամենը երկու խոսք առաջ՝ Հովհաննես 19.28-ում. «Սրանից հետո Հիսուսը, իմանալով, որ ամեն բան արդեն ***լրացած*** է, որպեսզի գրվածը կատարվի, ասաց. «Ծարավ եմ»»:

բ. Եբրայեցիների 9.12

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Իր մահվան շնորհիվ Քրիստոսը բարձրացավ Երկինք՝ որպես Միջնորդ Աստծո ժողովրդի համար: «Հավիտենական փրկություն գտավ» արտահայտությունից մենք քաղում ենք երկու մեծ ճշմարտություն: Առաջինը՝ մեր փրկությունը ժամանակավոր չէ, այլ՝ հավիտենական և անփոփոխ: Երկրորդը՝ մեր փրկությունն արդեն ձեռք է բերված. այն ապահով է:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՏԺԻՑ

Ամեն մարդ խախտել է Աստծո օրենքը և ենթակա է դրա պատժին կամ անեծքին: Հիսուս Քրիստոսը փրկեց Իր ժողովրդին օրենքի անեծքից՝ վճարելով նրանց պատժի համար Իր կյանքով:

1. Ինչպե՞ս է օրենքի պատիժը նկարագրվում Գաղատացիների 3.10-ում: Ո՞վ է ենթակա այս պատժին: Ի՞նչ է դա նշանակում:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Օրենքը կատարյալ հնազանդություն է պահանջում: Պողոսն օգտագործում է «կենալ» և «անել» բառերը՝ շեշտադրելու համար, որ օրենքը պահանջում է շարունակական, կատարյալ և գործնական հնազանդություն: Նույնիսկ նվազագույն շեղման արդյունքում մարդը հայտնվում է օրենքի անեծքի տակ: «Անեծք» բառը թարգմանված է հունարեն ***«կատա՛րա»*** բառից, որը կարող է թարգմանվել նաև «նզովք», «անհարգալից վերաբերմունք» կամ «հայհոյանք» բառերով: Այն նշանակում է խստագույն աստվածային դատաստան և դատապարտություն, կամ ինչ-որ մեկին պատժի կամ կործանման հանձնելը:

2. Համաձայն Գաղատացիների 3.13-ի՝ ինչի՞ց է փրկվել Աստծո ժողովուրդը և ինչպե՞ս է Քրիստոսը ստացել այս փրկությունը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գնեց» բառը թարգմանված է հունարեն ***«էքսագորա՛զո»*** բառից, որը նշանակում է «գնել կամ վաճառում կատարել՝ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին մեկ ուրիշի տիրապետությունից ետ ստանալու համար»: Այն հաճախ օգտագործվում է ստրուկի ազատությունը գնելու իմաստով: Քրիստոսը կրեց մեր մեղքը, անեծք դարձավ և վերցրեց Իր վրա Աստծո զայրույթը՝ մեր փրկությունը կատարելու համար: «Փայտ» բառը թարգմանված է հունարեն ***«քսո՛կոն»*** բառից, որը հենց «փայտ» է նշանակում: Դասական հունարեն լեզվում այս բառն օգտագործվում էր՝ որպես հղում սյուներին և ցցերին, որոնց վրա կապում էին մարդկանց մարմինները: Հին կտակարանի օրենքի ներքո հանցագործները կախվում էին ծառերից և սյուներից՝ որպես նշան, որ նրանք անիծված էին Աստծուց (Երկրորդ Օրինաց 21.23):

3. Կողոսացիների 2.14-ում Քրիստոսի փրկության աշխատանքը նկարագրվում է շատ պատկերավոր: Համաձայն այս խոսքի՝ ինչի՞ց Քրիստոսն ազատեց Իր ժողովրդին: Ինչպե՞ս այս փրկությունն ի կատար ածվեց: Գրե՛ք ձեր մտքերն ամեն մի արտահայտության ներքևում:

ա. Եվ ջնջեց այն մեզ հակառակ ձեռագիրը (կամ՝ պարտամուրհակը) հրամաններով, որ մեզ հակառակ էր:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ձեռագիր» բառը թարգմանված է հունարեն *«խիրո՛գրաֆոն»* բառից: Այն հաճախ էր օգտագործվում գրավոր պարտամուրհակների կամ հանցագործի դեմ կազմված մեղադրական ակտերի իմաստով: «Հրամաններ» բառը թարգմանված է հունարեն *«դո՛գմա»* բառից, որը գրավոր հրամանի կամ կարգադրության իմաստ ունի: Այս համատեքստում խոսքը, հավանաբար, այն մասին է, որ օրենքն իրավական պահանջներ ունի մեր դեմ՝ մեր անհնազանդության պատճառով: «Ջնջեց» բառը թարգմանված է հունարեն *«էքսալեի՛ֆո»* բառից, որը նշանակում է «սրբել, ջնջել կամ հեռացնել»:

բ. Եվ նրան վերցրեց մեջտեղից և խաչափայտի վրա բևեռեց:

ՆՇՈՒՄՆԵՐ. Իր մահով Քրիստոսը Գողգոթայում վճարեց մեր պարտքը և բավարարեց ցանկացած պահանջ մեր դեմ: «Խաչափայտի վրա բևեռեց» արտահայտությունը մի քանի հնարավոր մեկնաբանություն ունի: Ոմանք համոզված են, որ խոսքն այն ավանդույթի մասին է, որ պարտամուրհակը վճարելուց հետո այն փակցնում էին հասարակական վայրում, որպեսզի բոլորը տեսնեին դա: Նպատակը՝ պարտատիրոջը արդարացնելն էր և երաշխավորելը, որ նրա հանդեպ այլևս ոչ մի պահանջ չէր ներկայացվի: Մեր պարտքը վճարվեց Քրիստոսի մահով. օրենքն այլևս չէր կարող պահանջներ ներկայացնել մեր հանդեպ: Մյուսները պնդում են, որ խոսքն այլ ավանդույթի մասին է, որ հանցագործի մեղադրանքը փակցնում էին նրա մարմնի վերևում (օրինակ՝ խաչի վրա), որպեսզի հրապարակավ հայտնի դարձնեին նրա հանցանքները և ցույց տային մարդկանց նրա մահապատժի պատճառը (Մատթեոս 27.37): Գողգոթայում Քրիստոսը կրեց մեր մեղքը և օրենքի պատիժը՝ մեր փոխարեն:

Գլուխ 14. Քրիստոսը՝ մեր ազատությունը

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ անկում ապրած մարդը ոչ միայն ենթակա է օրենքի պատժին, այլև ստրկացված է սատանայի իշխանությանը: Քրիստոսը փրկեց Իր ժողովրդին այս սարսափելի իրողությունից՝ մահանալով նրանց փոխարեն. Նա թե՛ կրեց այն պատիժը, որին նրանք արժանի էին, թե՛ զրկեց սատանային իշխանությունից:

Մինչև մեր ուսումնասիրությունը շարունակելը, շատ կարևոր է հասկանալ, որ թեև Քրիստոսը փրկեց Իր ժողովրդին սատանայի իշխանությունից, փրկագինը տրվեց ոչ թե սատանային, այլ՝ Աստծուն: Դարեր շարունակ քրիստոնեության պատմության մեջ ոմանք սխալմամբ հավատացել են, որ Քրիստոսը փրկագին տվեց սատանային՝ ազատելով Իր ժողովրդին ստրկությունից: Այս տեսանկյունը բացահայտ կերպով հակասում է Աստվածաշնչին, նսեմացնում է Քրիստոսի փրկարար աշխատանքը և ոչ սուրբգրային կարգավիճակ է վերագրում սատանային: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Քրիստոսը մատուցեց Իր Անձը որպես զոհ Աստծուն՝ վճարելով Իր ժողովրդի մեղքերի համար: Նրա մահը գոհացրեց Աստծո արդարադատությունը և ջնջեց մեր պարտքը՝ դրանով իսկ զրկելով սատանային մեղադրելու իշխանությունից:

ՍԱՏԱՆԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Աստված բացարձակ իշխանություն ունի ամբողջ արարչագործության վրա, իսկ սատանային տրվել է սահմանափակ իշխանություն, որը տարածվում է այս անկում ապրած աշխարհի և դրա բնակիչների վրա:

1. Ղուկաս 4.5,6-ում սատանան մի հայտարարություն է անում իր մասին և այս անկում ապրած աշխարհում իր ունեցած դիրքի մասին: Ինչի՞ մասին է խոսքը, և ի՞նչ է նշանակում նրա հայտարարությունը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մեղանչումից հետո ամբողջ աշխարհը և դրա բնակիչները հայտնվեցին սատանայի իշխանության ներքո: Այնուամենայնիվ, մենք պետք է մտապահենք, որ այս իշխանությունը ենթակա է Աստծո կամքին:

2. Սատանայի պնդումը Ղուկաս 4.6-ում դատարկ պարծանք չէր: Նա իրականում տիրում է այս անկում ապրած աշխարհին: Ինչ է սովորեցնում Ա Հովհաննես 5.19-ը այս ճշմարտության մասին:

ա. Բոլոր Ա_____ չարության մեջ է կենում (կամ՝ Ամբողջ աշխարհը ենթակա է չարի իշխանությանը):

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բոլոր» բառը վերաբերում է ոչ միայն մարդկությանը՝ հավաքական առումով, այլև ամեն անհատի, ով Քրիստոսում չէ: «Կենալ» բառը թարգմանված է հունարեն ***«կեի՛մայի»*** բառից, որը նշանակում է «ընկած կամ պառկած լինել»: Մարդկությունը, ընդհանուր առմամբ, չի պայքարում՝ սատանայի իշխանությունից ազատվելու համար, այլ ապրում է դրա ներքո:

3. Աստվածաշնչում անունը հաճախ ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ կամ տիտղոսներ են տրված սատանային հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

   ա. Այս Ա_____ Ի_____ (Հովհաննես 12.31, 14.30, 16.11): «Իշխան» բառը թարգմանված է հունարեն ***«ա՛րքոն»*** բառից, որը նույնպես կարելի է թարգմանել որպես «հրամանատար» կամ «գլխավոր»: «Աշխարհ» բառը վերաբերում է մարդկության ստվար զանգվածին, որն ապրում է օտարացած Աստծուց և ապստամբելով Նրա կամքի դեմ:

   բ. Այս Ա_____ Ա_____ (Բ Կորնթացիների 4.4): Գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ Աստված (Ա Կորնթացիների 8.4-6), սակայն այս անկում ապրած աշխարհը հետևում է սատանային՝ ասես նա այս աշխարհի աստվածն է: Թեև սատանան չունի Աստծուն հատուկ հատկանիշներ, նա ներկայացնում է իրեն որպես Աստված և ուզում է Աստծո պես երկրպագություն ստանալ:

   գ. Օ_____ Ի_____ Ի_____ (Եփեսացիների 2.2): Սատանան հոգի է. այնպես որ, նա սահմանափակ չէ մարդկային նյութական արգելքներով: Նրա զորությունը և իշխանությունը մեծապես գերազանցում են ցանկացած «երկրային» ղեկավարի իշխանությանը: Նա ունի իրական զորություն և ազդեցություն հոգևորապես մահացած մարդկանց կյանքերում (կարդացե՛ք խս. 1):

4. Ինչպե՞ս է անկում ապրած մարդը նկարագրվում հետևյալ աստվածաշնչյան հատվածներում: Ինչպիսի՞ կապ կա անկում ապրած մարդու և սատանայի միջև:

   ա. Անկում ապրած մարդը Ս_____ որդի է (Ա Հովհաննես 3.8,10, Հովհաննես 8.44): Անկում ապրած մարդը սատանայի որդի է այն իմաստով, որ նա արտացոլում է սատանայի բնավորությունը և կամքը: Հովհաննես 8.44-ում Հիսուսն ասաց, որ փարիսեցիներն իրենց սատանա հորից էին և կամենում էին իրենց հոր «ցանկություններն անել»:

   բ. Անկում ապրած մարդը գտնվում է սատանայի Ի_____ ներքո (Գործք 26.18): Այս բառը թարգմանված է հունարեն ***«էքսուսի՛ա»*** բառից, որը նույնպես կարելի է թարգմանել որպես «տիրապետում»: Անկում ապրած մարդն ապրում է սատանայի իշխանության կամ տիրապետման ներքո: Կողոսացիների 1.13-ում սատանայի իշխանությունը ներկայացվում է որպես հոգևոր և բարոյական խավարի տիրույթ:

   գ. Անկում ապրած մարդը գնում է սատանայի կամքի Պ_____ (Եփեսացիների 2.2): Անկում ապրած մարդն անհնազանդ է Աստծուն և ապրում է սատանայի կամքով: Անկում ապրած մարդիկ իրավամբ կոչվում են «անհնազանդության որդիներ», և նրանցում գործում է սատանան: «Գործել» բառը թարգմանված է հունարեն ***«էներգե՛ո»*** բառից, որը նշանակում է «գործուն լինել, գործել՝ արդյունավետ կամ լի ուժերով»:

դ. Անկում ապրած մարդը Կ_____ է սատանայի կողմից (Բ Կորնթացիների 4.4): Այն մարդիկ, ովքեր հրաժարվում են հավատալ վկայությանը Աստծո մասին, ենթարկվում են սարսափելի դատաստանի. նրանք հանձնվում են սատանայի ձեռքը՝ հոգևորապես և բարոյապես կուրացվելով նրա ստերով և խաբեությամբ:

ե. Անկում ապրած մարդը որսացվել է սատանայի Ո_____ մեջ (Բ Տիմոթեոս 2.26): Այս բառը թարգմանված է հունարեն ***«պագի՛ս»*** բառից, որը նշանակում է «թակարդ, ծուղակ, օղակ, որի մեջ զոհը խճճվում և բռնվում է»: Այն սովորաբար քողարկված է լինում և հանկարծակի դուրս է պրծնում իր զոհերի վրա՝ նրանց անակնկալ կերպով բռնելով: Անկում ապրած մարդիկ անգիտակցաբար բռնված են սատանայի թակարդի մեջ, մինչև որ Աստծո շնորհքով նրանք ուշքի չեն գալիս և չեն ազատվում Ավետարանի լույսի միջոցով:

զ. Անկում ապրած մարդը Ո_____ է սատանայի կողմից (Բ Տիմոթեոս 2.26): Այս բառը թարգմանված է հունարեն ***«զոգրե՛ո»*** բառից, որը նշանակում է «գերել կամ կենդանի բռնել»: Մերժելով Աստծո բարյացակամ իշխանությունը՝ անկում ապրած մարդը հայտնվում է սատանայի ստրկացնող իշխանության ներքո: Սատանան առաջարկում է անկում ապրած մարդուն ազատություն Աստծո բարոյական օրենքից, բայց այդ «ազատությունը» միշտ մեղքի ***ստրկության*** է տանում:

է. Անկում ապրած մարդը Խ_____ է սատանայի ետևից (կամ՝ հետևում է սատանային) (Ա Տիմոթեոս 5.15): «Խոտորվել» բառը թարգմանված է հունարեն ***«էկտրե՛պո»*** բառից, որը բառացիորեն նշանակում է «շրջել կամ պտտելով դուրս հանել»: Այն ունի ինչ-որ մեկից շրջվելու իմաստ՝ հանդիպումից կամ շփումից խուսափելու նպատակով: Բժշկության մեջ այս բառը նշանակում էր դուրս ընկած վերջույթներ: Այն մարդիկ, ովքեր շրջվում են Աստծուց, ցույց են տալիս, որ իրենք չեն ուզում որևէ կերպով առնչվել Նրա հետ: Դրանով իսկ նրանք դառնում են սատանայի «հետևորդները»: Անկում ապրած մարդը կարող է հետևել սատանային առանց հասկանալու, բայց ոչ՝ առանց ուզելու: Սատանայի և անկում ապրած մարդու միջև բնական հակվածություն կա: Նրանք ունեն նույն ապականված բնությունը և արտահայտում են նույն թշնամանքն Աստծո հանդեպ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՎ ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշունչը սովորեցնում է, որ մեղքի պատիժը մահն է (Հռոմեացիների 6.23), և որ սատանան այդ պատիժն ի կատար ածելու իշխանություն է ստացել (Եբրայեցիների 2.14,15): Քրիստոսը հաղթեց սատանային Իր կյանքով, մահով և հարությամբ: Մահանալով Իր ժողովրդի համար՝ Նա վճարեց նրանց պարտքը և զրկեց սատանային նրա իշխանությունից:

1. Ծննդոց 3.15-ում մենք անչափ կարևոր մարգարեություն ենք տեսնում այն մասին, թե ինչ էր անելու Մեսիան, երբ գար: Համաձայն այս մարգարեության՝ ինչպե՞ս էր Քրիստոսը վարվելու սատանայի և նրա գործերի հետ: Ինչպե՞ս էր Նա պարտության մատնելու սատանային:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը հաճախ կոչվում է նախաավետարանական (լատիներեն՝ ***«պրոտոեվանգելիում»***, «***պրոտո***» = առաջին + ***«եվանգելիում»*** = Ավետարան), կամ՝ «առաջին Ավետարան»: Կնոջ սերունդը (կամ՝ սերմը) Աստծո Որդին է, Ով, մարմին ստանալով, պատերազմ էր հայտարարելու սատանայի դեմ և հաղթելու էր նրան: Մեսիան ջախջախելու էր սատանայի գլուխը, այսինքն՝ մահացու վերք էր հասցնելու նրան: Սատանան խայթելու էր Մեսիայի կրունկը, այսինքն՝ Քրիստոսը չարչարվելու էր օձի հետ պատերազմելիս (Եսայի 53.4,5), բայց այդ վերքը մահացու չէր լինելու. Մեսիան հարություն էր առնելու: Համաձայն Հռոմեացիների 16.20-ի՝ Աստծո ժողովուրդը նույնպես ստանալու էր Մեսիայի հաղթանակը. «Եվ խաղաղության Աստված խորտակի (կամ՝ ջախջախի) սատանային ձեր ոտքերի տակ շուտով»:

2. Ի՞նչ է սովորեցնում Ա Հովհաննես 3.8-ը Քրիստոսի գալուստի նպատակի մասին:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քանդել» բառը թարգմանված է հունարեն ***«լո՛ւո»*** բառից, որը նշանակում է թուլացնել, թեթևացնել, քանդել կամ կործանել: Քրիստոսի գալուստը կործանեց սատանայի գործերը, հատկապես՝ Իր ժողովրդի գերությունը:

3. Ի՞նչ է սովորեցնում Կողոսացիների 2.15-ը այն մասին, որ Քրիստոսը պարտության մատնեց սատանային և փրկություն բերեց Իր ժողովրդին:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Իշխանություններ և պետություններ» արտահայտությունը վերաբերում է սատանային և նրա ընկած հրեշտակներին: Աստծո ժողովրդի կյանքում սատանայի ունեցած իշխանության հիմքը նրանց մեղքն էր, որն առանձնացրել էր նրանց Աստծուց, անեծք էր բերել նրանց կյանքում և ենթակա էր դարձրել մեղքի պատժին, որը մահն է: Երբ Քրիստոսը միջամտեց և պատիժ կրեց Իր ժողովրդի մեղքի կամ պարտքի համար, սատանայի իշխանությունը նրանց կյանքում չեղյալ դարձավ: «Մերկացնել» (կամ՝ զինաթափ անել) բառը թարգմանված է հունարեն *«ապեկդո՛ւոմայ»* բառից, որը նշանակում է «մերկացնել, թալանել կամ զինաթափել»: «Հայտնապես խայտառակել» արտահայտությունը թարգմանված է հունարեն *«դեիգմատի՛զո»* բառից, որը նշանակում է «օրինակ դարձնել կամ ցուցադրել՝ որպես օրինակ»: Քրիստոսը հայտնապես ի ցույց հանվեց որպես մեր քավությունը (Հռոմեացիների 3.25), և Նրա մահը Գողգոթայում հանգեցրեց սատանայի հրապարակային պարտությանը: Քրիստոսի հաղթանակը սատանայի և նրա հրեշտակների հանդեպ՝ խաչի միջոցով էր: Խաչի վրա Նա կրեց մեր մեղքը, չարչարվեց մեր փոխարեն և ջնջեց այն ձեռագիրը, որը հակառակ էր մեզ: Ազատվելով մեղքից՝ մենք ազատվեցինք նաև մահից, և սատանան այլևս իշխանություն չունի այն ի կատար ածելու համար:

4. Ի՞նչ է սովորեցնում Եբրայեցիների 2.14,15-ը այն մասին, որ Քրիստոսը պարտության մատնեց սատանային և փրկություն բերեց Իր ժողովրդին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մասնակից լինել» բառը հունարեն *«կոինոնե՛ո»* բառից է, որը նշանակում է «շփվել, մասնակցել կամ հաղորդակցվել»: Բոլոր մարդիկ մասնակցություն ունեն մարմնի և արյան կյանքին և միասին վերապրել են այն ցավերը, որոնք առաջացել են մեղանչելու հետևանքով: Աստծո հավիտենական Որդին միացավ մեր մարմնի և արյան հաղորդակցմանը և խմեց մեր թշվառության բաժակից: Սատանան մահվան իշխանություն ուներ, քանի որ նա կարող էր արդարացիորեն մեղադրել մարդկությանը մեղքի մեջ և պահանջել մեղքի արդար պատիժը, որը մահն էր: Քրիստոսը կրեց այդ պատիժը և լռեցրեց բոլոր մեղադրանքները:

Գլուխ 15. Քրիստոսը՝ մեր հաշտությունը
Մաս մեկ. Հաշտության վարդապետությունը

Գոյություն ունի մեկ հարց, որը տրվում է աշխարհի գրեթե բոլոր կրոններում. «Ինչպե՞ս մեղավոր մարդը կարող է հաշտվել արդար Աստծո հետ»: Թեև մնացած կրոնները մատնանշում են մարդու գործերը՝ որպես հաշտության միջոց, Սուրբ գիրքը հեռացնում է շեշտադրումը մարդուց և մատնանշում է Հիսուս Քրիստոսի Անձը և Նրա կատարած աշխատանքը: Մեղավոր մարդը կարող է հաշտվել Աստծո հետ միայն Գողգոթայում Քրիստոսի կատարած աշխատանքի արդյունքում:

ԻՆՉ Է ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

«Հաշտեցնել» բառը լատիներենում ***«ռեկոնսիլիարե»*** բառն է (***«ռե»*** = նորից, կրկին + ***«կոնսիլիարե»*** = ժողովել, միավորել, համոզել): Այն նշանակում է «կրկին համախմբել, կրկին միավորել, համաձայնության բերել, բարենպաստ կամ ընկալունակ դարձնել, վերականգնել ընկերությունը կամ ներդաշնակությունը»: Նոր կտակարանում «հաշտեցնել» կամ «հաշտություն» բառերը թարգմանված են հետևյալ հունարեն բառերից.

դիալլա՛սսո. փոխվել կամ մտափոխվել. հաշտվել. վերականգնել հարաբերություններն ինչ-որ մեկի հետ: Այս բառը միայն օգտագործվում է Մատթեոս 5.24-ում՝ վիրավորված եղբոր հետ հաշտվելու վերաբերյալ:

կատալլա՛սսո. փոխել կամ փոխանակել, ինչպես որ փոխանակում են տարադրամը. հաշտվել. կրկին բարեհաճությամբ վերաբերվել: Ա Կորնթացիների 7.11-ում այս խոսքը վերաբերում է հաշտությանը կնոջ և ամուսնու միջև: Իսկ Հռոմեացիների 5.10-ում (երկու անգամ) և Բ Կորնթացիների 5.18-20-ում (երեք անգամ) այն օգտագործվում է Աստծո հետ հաշտվելու իմաստով:

ապոկատալլա՛սսո. ***«կատալլա՛սսո»*** բառի ավելի ուժգին իմաստը: Այն ենթադրում է կատարյալ հաշտություն: Այն օգտագործվում է Եփեսացիների 2.16 և Կողոսացիների 1.20,22 խոսքերում՝ Աստծո վերաբերյալ:

կատալլագե. ***«կատալլա՛սսո»*** բայի հետ կապված գոյական: Աշխարհիկ գրականության մեջ այս բառը վերաբերում է դրամ փոխողների աշխատանքին և նշանակում է համարժեք փոխանակում կամ տարբերությունների ճշգրտում: Փոխաբերական իմաստով այն վերաբերում է հաշտությանը կամ վերականգնմանը՝ հօգուտ դիմացինի: Նոր կտակարանում այն վերաբերում է Աստծո բարեհաճության վերականգնմանը մեղավորների հանդեպ, ովքեր ապաշխարում են և հավատում են Քրիստոսի Անձին և Նրա կատարած աշխատանքին (Հռոմեացիների 5.11, 11.15, Բ Կորնթացիների 5.18,19):

Ո՞Վ ՀԱՇՏՎԵՑ, ԵՎ Ո՞ՒՄ ՀԵՏ

«Հաշտվել» և «հաշտություն» աստվածաշնչյան տերմինները դիտարկելուց հետո պետք է պատասխանենք մի շատ կարևոր հարցի. «Ո՞վ հաշտվեց, և ո՞ւմ հետ»: Արդյո՞ք խաչը հաշտեցրեց մարդուն Աստծո հետ (այսինքն՝ դարձրեց մարդուն դրականորեն տրամադրված Աստծո հանդեպ), թե՞ Աստծուն՝ մարդու հետ (այսինքն՝ դարձրեց Աստծուն դրականորեն տրամադրված մարդու հանդեպ):

Այս հարցը կարևոր է, քանի որ ոմանք սխալմամբ հավատում են, որ թեև մեղավոր մարդն Աստծո թշնամին է (այսինքն՝ Աստծո դեմ է), Աստված երբեք թշնամություն չի ունեցել մարդու դեմ: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված նույնպես թշնամաբար է վերաբերվում մեղավորին: Նա արդար և սուրբ է, և այդպիսով, Նա բարկացած է մեղավորների վրա (Սաղմոս 5.5, 7.11, Հովհաննես 3.36), բաժանված է մեղավորներից (Սաղմոս 5.4, Եսայի 59.2) և պատրաստ է դատել մեղավորներին (Սաղմոս 7.11-13, 11.15,16):

Այնպես որ, մեր պատասխանը «Ո՞վ հաշտվեց, և ո՞ւմ հետ» հարցին՝ բաղկացած է երկու մասից. (1) ***Խաչը հաշտեցրեց Աստծուն մեզ հետ***. Քրիստոսը վճարեց մեր մեղքի պարտքը՝ բավարարելով Աստծո արդարադատությունը և խաղաղեցնելով Նրա զայրույթը: Նրա զոհը հեռացրեց մեր դեմ ուղղված Աստծո թշնամանքը և հնարավորություն տվեց Նրան՝ արդարացնելու մեզ Իր Որդու հանդեպ ունեցած հավատքով: (2) ***Մենք հաշտվում ենք Աստծո հետ՝ խաչի միջոցով***. Սուրբ Հոգու վերստին ծնունդ և կյանք պարգևող աշխատանքի շնորհիվ մենք ապաշխարում ենք մեր մեղքերից (այսինքն՝ թողնում ենք մեր թշնամանքը մեր մտքում և մեր գործերով) և հավատում ենք Քրիստոսին:

1. Հռոմեացիների 5.10,11-ը Աստվածաշնչի ամենակարևոր հատվածներից մեկն է հաշտության վարդապետության մասին: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո գրե՛ք ձեր մտքերը հետևյալ պնդումների վերաբերյալ: Ի՞նչ են սովորեցնում դրանք աստվածաշնչյան հաշտության մասին:

   ա. «Որովհետև, թե որ դեռ թշնամի էինք...» (խս. 10):

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Թշնամի» բառը թարգմանված է հունարեն ***«էխտրո՛ս»*** ածականից, որը վերաբերում է ինչ-որ մեկի, ով լցված է թշնամանքով, ատելությամբ կամ դառը հակառակությամբ մեկ այլ մարդու հանդեպ: Այս բառն օգտագործվում է՝ սատանային նկարագրելու համար (Մատթեոս 13.39, Ղուկաս 10.19): Հռոմեացիների 8.7 և Կողոսացիների 1.21 խոսքերում այն օգտագործվում է՝ նկարագրելու համար անկում ապրած մարդու «թշնամանքով լի» միտքը և խորհուրդները: Հաճախ ասում են, որ մարդը Աստծո թշնամին է, բայց Աստված ոչ մի դեպքում մարդու թշնամին չէ: Այնուամենայնիվ, նման պնդումը խիստ մոլորեցնող է: Թեև խոսք 10-ում նկարագրված թշնամությունը երկկողմանի է, շատ աստվածաբաններ շեշտադրում են Աստծո սուրբ թշնամությունը կամ արդար վրդովմունքը՝ ընդդեմ մեղավոր մարդու: Չարլզ Հոջիսը գրում է. «Գոյություն ունի ոչ միայն մեղավորի չար հակառակությունը՝ ընդդեմ Աստծո, այլև Աստծո սուրբ հակառակությունը՝ ընդդեմ մեղավորի»[5]: Ռոբերտ Լ. Ռեյմոնդը գրում է. ««Թշնամի» բառն այս հատվածում չի ընդգծում մեր անսուրբ ատելությունն Աստծո հանդեպ, այլ՝ Աստծո սուրբ ատելությունը մեր հանդեպ»[6]: Մեթյու Հենրին գրում է. «Այս թշնամությունը փոխադարձ է. Աստված նողկանք է զգում մեղավորի հանդեպ, իսկ մեղավորը նողկանք է զգում Աստծո հանդեպ»[7]:

[5] *«Հռոմեացիների թղթի մեկնություն»*, էջ 138
[6] *«Քրիստոնեական հավատքի նոր համակարգված աստվածաբանություն»*, էջ 646
[7] *«Մեթյու Հենրիի մեկնություն»*, հտ. 6, էջ 397

բ. «...Աստծո հետ հաշտվեցինք Նրա Որդու մահով...» (խս. 10):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաշտվել» բառը թարգմանված է հունարեն ***«կատալլա՛սսո»*** բառից (տեսե՛ք սահմանումը վերևում՝ «Ի՞նչ է հաշտությունը» ենթավերնագրի ներքո)։ Քրիստոսի մահն այն հիմքն է, որով հավատացյալը հաշտվում է Աստծո հետ։ ***Ինչ վերաբերում է Աստծուն***, Քրիստոսի մահը բավարարեց Աստծո օրենքի արդարացի պահանջները և հնարավոր դարձրեց, որ Աստված և՛ պահպանի Իր արդարադատությունը, և՛ արդարացնի մեղավորին։ ***Ինչ վերաբերում է մարդուն***, Քրիստոսի մահը հեռացրեց մեղքի խոչընդոտը և դրա պատիժը՝ մեղավորի սրտում դուռ բացելով Աստծո փրկության վերափոխող աշխատանքի համար։ Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի շնորհիվ, մեղավորի ատելությունը կամ թշնամանքն Աստծո հանդեպ փոխվում է սիրո, իսկ նրա արհամարհանքն Աստծո օրենքի հանդեպ՝ երկյուղածության և հնազանդվելու ցանկության։

գ. «...որքա՞ն ավելի, որ հաշտված ենք, կապրենք Նրա կյանքով»:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հավատացյալը ***հաշտվել է***։ Հավատացյալի հաշտությունը հիմնված է Քրիստոսի մեկընդմիշտ տեղի ունեցած մահվան վրա։ Մենք չենք սպասում, որ կհաշտվենք Աստծո հետ. մենք լիովին հաշտվում ենք այն պահին, երբ հավատում ենք։ ***Հարց***. Եթե մենք հաշտված ենք Նրա մահով, ինչպե՞ս ենք փրկվում Նրա կյանքով։ ***Պատասխան***. Քրիստոսի մահը՝ Աստծո հետ մեր հաշտության սոսկ հիմքն է։ Հարություն առած և մեծարված Քրիստոսն է, որ կանչում է մեզ, կենդանացնում է մեզ, պահպանում է մեզ, կատարյալ է դարձնում մեզ և հավիտյան ապրում է, որ բարեխոսի մեզ համար Աստծո գահի առջև (Եբրայեցիների 7.25)։

դ. «Եվ ոչ միայն այսքանը, այլ Աստծով էլ պարծենում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով, որով հիմա հաշտությունն ընդունեցինք» (խս. 11):

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ովքեր հասկանում են, որ իրենց հաշտությունը միայն Քրիստոսի միջոցով է, սկսում են պարծենալ միայն Աստծով: «Պարծենալ» բառը թարգմանված է հունարեն ***«կաուխա՛ոմայ»*** բառից, որը նշանակում է «ցնծալ» կամ նույնիսկ «պարծենալ ինչ-որ բանով կամ ինչ-որ մեկով»: Փիլիպեցիների 3.3-ում Պողոս առաքյալը գրում է, որ ճշմարիտ քրիստոնյան «պարծենում է Քրիստոս Հիսուսով և մարմնի վրա վստահություն չունի»: Ա Կորնթացիների 1.31-ում Պողոսը գրում է. «Նա, որ պարծենում է, թող Տիրոջով պարծենա»:

2. Կողոսացիների 1.19-22-ը կարևոր հատված է հաշտության վարդապետության վերաբերյալ: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո գրե՛ք ձեր կարծիքը հետևյալ պնդումների մասին:

ա. «Որովհետև Աստված հաճեց, որ Նրանում Աստվածության ամբողջ լիությունը բնակվի» (խս. 19):

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը՝ Աստված է մարմնում: Սա նշանակում է, որ չկա ոչ մի թերի բան Նրա Անձի կամ Նրա կատարած աշխատանքի մեջ. չկա այնպիսի բան, ինչը կարող է ձախողվել. չկա ոչ մի թույլ օղակ մեր փրկության շղթայի մեջ: Մեր հաշտությունն արդեն իսկ ձեռք բերված է և փոփոխման ենթակա չէ:

բ. «Եվ Նրանով ամենը հաշտեցնի Իր հետ...» (խս. 20):

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կողմից նշանակված Հաշտեցնողը միայն Քրիստոսն է, և ուրիշ ոչ ոք: Այս խոսքում և խոսք 22-ում «հաշտվել» բառը թարգմանված է հունարեն ***«ապոկատալլա՛սսո»*** բառից (տեսե՛ք սահմանումը վերևում՝ «Ի՞նչ է հաշտությունը» ենթավերնագրի ներքո): Համաձայն խոսք 20-ի՝ «ամենը» բառը նշանակում է «ամեն ինչ թե՛ երկրի վրա, թե՛ երկնքում»:

գ. «...խաղաղություն անելով... Նրա խաչի արյամբ...» (խս. 20):

ՆՇՈՒՄՆԵՐ. Հաշտությունը և խաղաղությունն Աստծո հետ հնարավոր են միայն Քրիստոսի քավչարար զոհի և մահվան միջոցով: Ցանկացած «ավետարան», որը մերժում է կամ փոքրացնում է այս ճշմարտության կարևորությունը, կեղծ ավետարան է: Միայն Քրիստոսի մահվան միջոցով է, որ մեր մեղքի պարտքը մարվել է, Աստծո արդարությունը բավարարվել է, և Նրա զայրույթը խաղաղեցվել է:

դ. «...Նրա ձեռքով... թե՛ երկրի վրա, թե՛ երկնքում լինողներին» (խս. 20):

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքից կարելի է քաղել մի քանի ճշմարտություն: Առաջինը՝ մեղքն ազդեցություն է թողել ամբողջ արարչագործության վրա (Հռոմեացիների 8.19-21): Միայն Քրիստոսի խաչի միջոցով է, որ մեղքը կարող է քավվել, և դրա կործանարար հետևանքները կարող են շտկվել: Երկրորդը՝ Քրիստոսի գործը հաշտություն է բերում ոչ միայն Աստծո և մարդու միջև, այլև մարդկանց միջև: Ի վերջո՝ Քրիստոսը խաղաղություն կբերի ամբողջ տիեզերքում: Նա կաքսորի ընկած հրեշտակներին և չփրկված մարդկանց, որպեսզի նրանք այլևս պառակտում և թշնամանք չառաջացնեն Աստծո արարչագործության մեջ:

ե. «Եվ ձեզ էլ, որ մի ժամանակ օտարացած և թշնամի էիք մտքով, չար գործերում» (խս. 21):

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն բառերը, որոնք օգտագործվում են՝ քրիստոնյայի նախկին վիճակը նկարագրելու համար, ուղիղ հակադարձ են հաշտությանը: «Օտարացած» բառը թարգմանված է հունարեն ***«ապալլոտրի՛ոո»*** բառից, որը նշանակում է, որ ինչ-որ մեկին արգելվում է հաղորդակցվել և մտերիմ հարաբերություններ ունենալ մյուսի հետ: «Թշնամի» բառը թարգմանված է հունարեն ***«էխտրո՛ս»*** բառից, որը վերաբերում է թշնամանքով, ատելությամբ լցված և հակառակվող մարդուն:

զ. «Հիմա հաշտեցրեց Իր մսեղեն մարմնի մեջ Իր մահի ձեռքով...» (խս. 22):

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում աչքի է ընկնում երկու ճշմարտություն: Առաջինը՝ հաշտությունը հնարավոր է միայն Քրիստոսի քավչարար չարչարանքի և մահվան միջոցով: Երկրորդը՝ հավատացյալի հաշտությունը՝ կատարված փաստ կամ իրողություն է:

է. «...որ ձեզ սուրբ և անբիծ և անարատ կանգնեցնի Իր առջև» (խս. 22):

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՆՇՈՒՄՆԵՐ. Այստեղ նկարագրված է մեր հաշտության մեծագույն նպատակներից մեկը՝ լինել սուրբ, անբիծ և արդար Աստծո առջև: Սա վերաբերում է ոչ միայն հավատացյալի անվանական դիրքին Աստծո առջև՝ Քրիստոսում, այլև նրա փաստացի և անձնական վերափոխմանը: Այն ընթացքը, որի միջոցով Աստված վերափոխում է նրանց, ում Նա արդարացրել և հաշտեցրել է Իր հետ, կոչվում է սրբացում (լատիներենում՝ ***«սանկտիֆիկատիո»***, ***«սանկտուս»*** = սուրբ + ***«ֆասերե»*** = դարձնել): Այս ընթացքը սկսվում է դարձի պահից, շարունակվում է հավատացյալի ամբողջ կյանքում և կատարյալ է դառնում, երբ հավատացյալը փառավորվում է Երկնքում:

Գլուխ 16. Քրիստոսը՝ մեր հաշտությունը
Մաս երկու. Հաշտության ծառայությունը

Նախորդ գլխում մենք դիտարկեցինք «հաշտություն» բառի իմաստները, ուսումնասիրեցինք հաշտության վարդապետության աստվածաշնչյան բացատրությունը և երկու աստվածաշնչյան հատված, որոնք վերաբերում են այս թեմային: Այս գլխում մենք հանգամանալից կուսումնասիրենք ևս մեկ աստվածաշնչյան հատված, որը լույս է սփռում Քրիստոսում ունեցած մեր հաշտության և՛ վարդապետական, և՛ գործնական կարևորության վրա, ինչպես նաև մանրամասնորեն ներկայացնում է ***հաշտության ծառայությունը***, որը վստահվել է մեզ: Ինչպե՞ս Աստծո հետ հաշտություն ունենալը պետք է ազդի մեր կյանքի վրա: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր արձագանքն Աստծուց տրված հաշտության պարգևին:

1. Բ Կորնթացիների 5.17-20-ը կարևոր հատված է, որը վերաբերում է և՛ հաշտության վարդապետությանը, և՛ հավատացյալներին վստահված հաշտության ծառայությանը: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո գրե՛ք ձեր մտքերը հետևյալ պնդումների վերաբերյալ:

ա. «...այն ամենն Աստծուց է, որ մեզ Իր հետ հաշտեցրեց Հիսուս Քրիստոսի ձեռքով...» (խս. 18):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաշտվել» բառը թարգմանված է հունարեն ***«կատալլա՛սսո»*** բառից (տեսե՛ք սահմանումը նախորդ գլխում՝ «Ինչ է հաշտությունը» ենթավերնագրի ներքո): Այս հատվածում կա երեք սկզբունքային ճշմարտություն: Առաջինը՝ հավատացյալների հաշտությունը կատարված իրողություն է: Երկրորդը՝ հաշտությունը Աստծո գործն է, որը Նա նախաձեռնել և կատարել է. մարդն անզոր է հաշտություն բերելու հարցում: Եվ վերջապես, հաշտությունը տեղի ունեցավ միայն Քրիստոսի Անձի և Նրա կատարած գործի միջոցով:

բ. «...և մեզ հաշտության պաշտոնը (կամ՝ ծառայությունը) տվեց» (խս. 18):

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո հետ հաշտված մարդիկ մեծ պաշտոն կամ պատասխանատվություն են ստացել՝ պատմել Ավետարանն այլ մարդկանց, որպեսզի նրանք նույնպես հաշտվեն Աստծո հետ: Աստված որոշել է հաշտեցնել մարդկանց Իր հետ Ավետարանը քարոզելու միջոցով:

գ. «Որովհետև Աստված էր Քրիստոսում, որ աշխարհը հաշտեցրեց Իր հետ և նրանց հանցանքները չհամարեց նրանց...» (խս. 19):

ՆՇՈՒՄՆԵՐ. Ահա ևս մեկ ապացույց Քրիստոսի աստվածության մասին: Քրիստոսում Աստված եկավ այս աշխարհ՝ մեր հաշտությունը ուժի մեջ մտցնելու համար: Հաշտությունը հնարավոր է միայն, որովհետև Քրիստոսը հեռացրեց միակ մեծ խոչընդոտը դեպի խաղաղությունն Աստծո հետ՝ մեր հանցանքները: Նա կատարեց սա՝ մահանալով Իր ժողովրդի մեղքերի համար, բավարարելով Աստծո արդարադատության պահանջները և խաղաղեցնելով Նրա զայրույթը:

դ. «...և հաշտության խոսքը մեր մեջ դրեց» (խս. 19):

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուս Քրիստոսի Ավետարանը՝ Նրա հաշտության գործն է: «Դնել» բառը թարգմանված է հունարեն *«տի՛թեմի»* բառից, որը նշանակում է «նշանակել, հանձնարարել կամ կարգել»: Հավատացյալներին վստահվել է մեծ հանձնարարություն կամ պաշտոն՝ քարոզել Ավետարանն իրենց սերնդին:

ե. «Արդ Քրիստոսի կողմից պատգամավորություն ենք անում, իբրև թե Աստված է հորդորում մեզնով» (խս. 20):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված օգտագործում է մարդկանց, որպեսզի հայտնի դարձնի Իր հաշտության գործը մյուսներին: Սա թագավորական կոչում է: Ավետարանը քարոզող մարդիկ՝ բարձրաստիճան պաշտոնյաներ են, ովքեր փոխանցում են Աստծո կոչը մարդկանց:

զ. «Աղաչում ենք Քրիստոսի տեղ, հաշտվե՛ք Աստծո հետ» (խս. 20):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Աղաչել» բառը թարգմանված է հունարեն ***«դե՛ոմայ»*** բառից, որը նշանակում է «աղերսել, պաղատել, խնդրել կամ աղաչել»: Աղերսելով մարդկանց հաշտվել Աստծո հետ՝ մենք պարզապես կոչ չենք անում նրանց թողնել իրենց թշնամանքն Աստծո հանդեպ, այլ նաև՝ ընդունել Աստծո հաշտության առաջարկը Հիսուս Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի միջոցով: Աստված պարզելու է խաղաղության ձիթենու ճյուղը միայն հստակորեն որոշված օրերի ընթացքում: Այդ առաջարկը ետ կվերցվի ամեն մարդու մահվան պահին և Քրիստոսի երկրորդ գալուստի ժամանակ: Մենք պետք է մեծ հրատապությամբ աղաչենք մարդկանց ընդունել Քրիստոսին: Պողոս առաքյալը հայտնում է. «Ահա հիմա է ընդունելի ժամանակը. ահա հիմա է փրկության օրը» (Բ Կորնթացիների 6.2): Կրկին, Եբրայեցիների թղթի հեղինակը պնդում է. «Այսօր, եթե Նրա ձայնը լսեք, մի՛ խստացրեք ձեր սրտերը» (3.15, 4.7):

Գլուխ 17. Քրիստոսը՝ մեր Զոհը

«Զոհ» բառը լատիներենում *«սակերֆասերե»* բառն է *(«սակեր»* = սուրբ + *«ֆասերե»* = «պատրաստել»): Եբրայերեն և հունարեն լեզուներում համապատասխանաբար օգտագործված են *«զեբա»* և *«թուսի՛ա»* բառերը: Երկու բառերն էլ նշանակում են այնպիսի բան, ինչը մորթվել կամ սպանվել է՝ որպես զոհ ինչ-որ մեկի փոխարեն: Աստծո արդարադատությունը պահանջում է մեղավորի մահը. Զոհը սպանվում և մատուցվում է մեղավորի փոխարեն՝ Աստծո արդարադատությունը բավարարելու և Նրա զայրույթը խաղաղեցնելու համար:

Հին կտակարանում Օրենքի ամեն մի խախտումը փոխարինող զոհ էր պահանջում: Մի անբիծ կենդանի մորթվում և զոհաբերվում էր Աստծուն այն մարդու փոխարեն, ով խախտել էր Նրա պատվիրանը: Կարևոր է նշել, որ «այծերի և ցլերի» արյունը անկարող է վերցնել մեղքը (Եբրայեցիների 10.4): Այդ զոհերն ընդամենը մատնանշում էին հետևյալը. (1) մեղքի լրջությունը և դրա պատիժը. «Մեղքի վարձքը մահն է» (Հռոմեացիների 6.23), (2) փոխարինող զոհի անհրաժեշտությունը, որը կբավարարեր Աստծո արդարադատության պահանջները, (3) մեծ և վերջնական զոհի անհրաժեշտությունը, որը պետք է արվեր անսահման արժեք Ունեցողի՝ Աստծո Որդու կողմից:

1. Կարդացե՛ք Եբրայեցիների 10.1-4-ը: Ինչպե՞ս է այս հատվածը ցույց տալիս, որ կենդանական զոհաբերություններն անկարող են վերցնել մեղքը:

   ա. Համաձայն 1ա խոսքի՝ ինչո՞ւ կենդանական զոհաբերությունները, որոնք պահանջվում էին ըստ Հին կտակարանի օրենքի, չէին կարող վերցնել Աստծո ժողովրդի մեղքերը:

   (1) Օրենքը՝ իր զոհաբերություններով, ընդամենը գալիք բարիքների Ծ_____ էր, ոչ թե դրանց հատուկ Կ_____:

   ՆՇՈՒՄՆԵՐ. «Շուք» բառը թարգմանված է հունարեն *«սկի՛ա»* բառից, որը կարող է նշանակել շուք կամ ուրվագիծ: «Կերպարանք» բառը թարգմանված է հունարեն *«էկոն»* բառից, որը նշանակում է «ձև կամ պատկեր»: Հին կտակարանի զոհերը ընդամենը ճշմարիտ պատկերի՝ Քրիստոսի զոհի թույլ շողքը կամ կոպիտ ուրվագիծն էին:

   բ. Համաձայն խոսքեր 1բ-2-ի՝ ինչո՞ւ Հին կտակարանի կենդանական զոհաբերությունները չէին կարող վերցնել մեղքը և մաքրել Աստծո ժողովրդին:

   (1) Մ_____ պատարագները պետք է մատուցվեին ամեն տարի (խս. 1բ):

   (2) Եթե դրանք վերցնեին մեղքը, մարդիկ Կ_____ դրանք մատուցելուց (խս. 2):

   ՆՇՈՒՄՆԵՐ. Այս տրամաբանությունը դժվար չէ հասկանալ: Եթե կենդանական զոհաբերությունները կարողանային մաքրել Աստծո ժողովրդին, կարիք չէր լինի «ամեն տարի մատուցել միևնույն պատարագները»: Մեկ անգամը բավական կլիներ: Մատուցվելով տարեց տարի՝ այս զոհաբերությունները հիշեցնում էին մարդկանց, որ իրենց մեղքը կամ հանցանքը ջնջված չէ:

գ. Համաձայն խոսք 4-ի՝ կենդանական զոհաբերություններն անկարող են վերցնել Աստծո ժողովրդի մեղքերը և մաքրել նրանց ապականությունից: Ըստ այն ամենի, ինչ մենք տեսանք նախորդ խոսքերում՝ բացատրե՛ք ձեր բառերով, թե ինչու է այդպես:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդը մեղանչել է Աստծո դեմ. այդ պատճառով նա պետք է մահանա: Զոհաբերման կենդանիները ոչ մի դեպքում չէին կարող բավարարել աստվածային արդարադատության պահանջները մարդու դեմ: Միակ բավարար զոհը անսահման կատարելություն և արժեք ունեցող Մարդն էր՝ Աստված-Մարդ Հիսուս Քրիստոսը:

2. Եբրայեցիների 10.5-10-ը՝ ամենակարևոր աստվածաշնչյան հատվածն է Քրիստոսի զոհի գերազանցության մասին: Կարդացե՛ք այս հատվածը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. Համաձայն խոսքեր 5,6-ի՝ ի՞նչ հայտարարեց Քրիստոսը կենդանական զոհաբերությունների վերաբերյալ:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը չի ժխտում, որ Աստված նշանակել էր կենդանական զոհաբերությունները Մովսեսի Օրենքի ներքո. Նա պարզապես հայտնում է, որ դրանք անկարող են վերցնել մեղքը: Դրանց նպատակը՝ Քրիստոսին մատնացույց անելն էր:

բ. Համաձայն Քրիստոսի հայտարարության (խոսքեր 5-7)՝ ի՞նչն էր փոխարինելու անարդյունավետ կենդանական զոհաբերություններին:

(1) «Բայց մի Մ_____ Պ_____ Ինձ համար (խս. 5): Եբրայեցիների թղթի հեղինակը մեջբերում է Սաղմոս 40.6-ը Յոթանասունից թարգմանությունից (եբրայերեն Հին կտակարանի հունարեն թարգմանությունը): Այս մարգարեությունը վերաբերում է Քրիստոսի մարմնավորմանը և Աստծո կամքը կատարելու բացարձակ նվիրմանը:

(2) Ահա գալիս եմ... Քո Կ_____ Ա_____, ով Աստված (խս. 7)։ Այս խոսքը նշանակում է, որ Քրիստոսը ոչ միայն պատրաստ էր կատարելու Աստծո կամքը, այլև լիարժեք կերպով կատարեց այն։

գ. Համաձայն խոսք 10-ի՝ ո՞րն էր Աստծո կամքը, և ի՞նչ այն իրականացրեց։

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կամքն էր, որ Քրիստոսը մեկընդմիշտ զոհաբերեր Իր մարմինը՝ կրելով Իր ժողովրդի մեղքը։ Նրա կատարյալ զոհը սրբեց Իր ժողովրդին, այսինքն՝ սուրբ դարձրեց նրանց Աստծո առջև (Ա Թեսաղոնիկեցիների 3.13)։

դ. Համաձայն խոսք 9-ի՝ երբ Քրիստոսը մահացավ Իր ժողովրդի մեղքերի համար, ի՞նչ փոփոխություն տեղի ունեցավ Աստծո և Իր ժողովրդի հարաբերությունների մեջ։

(1) Ա_____ դեն է գցում որ Ե_____ հաստատի։

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի մարմնավորումը և փրկարար աշխատանքը վերջ դրեցին Հին կտակարանի զոհաբերությունների համակարգին՝ քահանաներով և ծեսերով հանդերձ։ Քրիստոսը Հին կտակարանի բոլոր խոստումների և խորհրդապատկերների ***Իրականացումը*** և Նոր ուխտի ***Հիմքն*** է։ Նրա միջոցով հավատացյալը մոտենում է Աստծուն։

3. Եբրայեցիների 9.11-14-ը ևս մեկ զարմանալի հատված է Քրիստոսի զոհի գերազանցության մասին։ Ինչպե՞ս է Քրիստոսի քահանայության և զոհի գերազանցությունը ի հայտ գալիս այս խոսքերում։

ա. Խոսք 11

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հին կտակարանի քահանաները մուտք էին գործում երկրային սրբարանը կենդանիների արյունով: Քրիստոսը զոհաբերեց Իր Անձը Գողգոթայի խաչի վրա և մուտք գործեց անմիջապես Աստծո ներկայության մեջ:

բ. խոսք 12

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թափելով Իր արյունը Գողգոթայում, Քրիստոսը հայտնվեց Աստծո առջև Երկնքում՝ որպես Իր ժողովրդի Ներկայացուցիչ: Այս խոսքը չի սովորեցնում, որ Երկնքում Քրիստոսը ներկայացրեց Իր արյունը Աստծուն:

գ. խոսքեր 13,14

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եթե կենդանիների արյունը, որը մատուցվում էր մեղավոր քահանաների կողմից երկրային սրբարանում, ծիսական կամ արտաքին մաքրում էր բերում անմաքուրներին, Քրիստոսի արյունը կարող է անել շատ ավելին: Մեր բարի գործերը չեն կարող լռեցնել մեր խղճի խայթը, որը հայտարարում է, որ մենք մեղավոր ենք՝ անկախ արդար լինելու բոլոր անօգուտ փորձերից: Քրիստոսի մեկընդմիշտ մատուցած զոհը կարող է վերցնել ամեն մի մեղք, ամբողջովին մաքրել մեր խիղճը մեղքի զգացումից և ազատել մեզ, որ ուրախությամբ և խաղաղությամբ ծառայենք Աստծուն:

4. Ամենակարևոր ճշմարտություններից մեկը Քրիստոսի զոհի մասին՝ հետևյալն է. այն մեկընդմիշտ մատուցվել է Աստծո ժողովրդի ամեն մի մեղքի համար: Եբրայեցիների թղթում այս ճշմարտությունը կրկնվող թեմա է: Գրե՛ք ձեր մտքերը հետևյալ հատվածներից ամեն մեկի մասին:

ա. Եբրայեցիների 9.25,26

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի զոհի գերազանցությունը Հին ուխտի զոհերի համեմատ այն է, որ մեկ զոհը մեկընդմիշտ վերջ դրեց Իր ժողովրդի մեղքին:

բ. Եբրայեցիների 9.27,28

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի զոհը մեղքի համար այն աստիճան ամբողջական է, որ Նա վերադառնալու է, որ փրկություն բերի Իր ժողովրդին՝ առանց որևէ կերպով հիշատակելու նրանց մեղքերը:

գ. Եբրայեցիների 10.12

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քահանայապետը «ամեն օր կանգնած» է (խս. 11), իսկ Քրիստոսը «նստեց»: Այն, որ Քրիստոսը նստեց Հոր աջ կողմը, վկայում է, որ Նրա աշխատանքն ավարտված է:

դ. Եբրայեցիների 10.14

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո հետ ճիշտ հարաբերություններ ունենալու համար մարդը պետք է լինի կատարյալ, լիովին բաժանված մեղքից և առանձնացված Աստծո համար: Այն, ինչն անկարելի է մեղավոր մարդու համար, հնարավոր է դարձել Քրիստոսում: Ովքեր վստահում են Քրիստոսին և Նրա զոհին, կատարյալ, անփոփոխ և հավիտենական դիրք են ստացել Աստծո առջև: Նրանց մեղքերը և անօրինություններն այլևս չեն հիշվի (խս. 17):

Գլուխ 18. Քրիստոսը՝ մեր Գառը

Քրիստոսի զոհ լինելը Աստվածաշնչում սերտորեն առնչվում է Քրիստոսը որպես Աստծո Գառ հասկացության հետ: Գառը կարևոր դեր էր կատարում Իսրայելի պատմության և պաշտամունքի մեջ: Հին կտակարանի զոհաբերությունների համակարգի ներքո անբիծ գառը մատուցվում էր որպես ամենօրյա առավոտյան և երեկոյան զոհ (Ելից 29.38,39): Շաբաթ օրերին զոհաբերությունների քանակը կրկնապատկվում էր (Թվոց 28.9,10): Նույնպես գառ էին մորթում Զատկին՝ կրոնական տոնակատարության ժամանակ, որը հիշատակում էր, որ Աստված փրկեց Իսրայելը Եգիպտոսի երկրից և ստրկության սարսափելի կապանքներից:

Թեև գառան այլաբանությունը ենթադրում է Քրիստոսի վարքին հատուկ հեզությունը և խոնարհությունը, դրա գլխավոր նշանակությունն այլ է: Հին ուխտի պատմական լույսի ներքո Քրիստոսի պատկերը՝ որպես «Գառ», առաջին հերթին մատնացույց է անում Նրան որպես քավող զոհ Իր ժողովրդի մեղքերի համար:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ԶՈՀԱԲԵՐՎՈՂ ԳԱՌ

Գառը կարևոր դեր էր կատարում Հին կտակարանի զոհաբերությունների համակարգում: Այնուամենայնիվ, այդ զոհերն ընդամենը շուք և խորհրդապատկեր էին, որոնք մատնացույց էին անում այն Գառանը, Ով գալու էր, որ վերցներ աշխարհի մեղքերը: Այդ Գառը Նազովրեցի Հիսուս Քրիստոսն է:

1. Ինչպե՞ս է Հովհաննես Մկրտիչն անվանում Հիսուսին Հովհաննես 1.29 և 1.36 խոսքերում: Ի՞նչ ճշմարտություններ է դա փոխանցում մեզ: Գրե՛ք ձեր մտքերը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Լինելով քահանայական ընտանիքից՝ Հովհաննես Մկրտիչն ավելի քան ծանոթ էր զոհաբերման գառան և Զատկի գառան գաղափարներին: Այն, որ Հովհաննեսի խոսքը կրկնվում է երկու անգամ (1.29,36), շատ կարևոր է: Հովհաննես Մկրտիչը չէր դիտարկում Հիսուսին՝ որպես քաղաքական փրկիչ կամ ընդամենը մարդ, որին կարելի է նմանակել, այլ՝ զոհաբերման Գառ, որ որոշված էր Աստծուց աշխարհի մեղքերը վերցնելու համար: «Վեր առնել» բառը թարգմանված է հունարեն ***«αἴρω»*** բառից, որն ինչ-որ բան բարձրացնելու և հեռացնելու գաղափար է փոխանցում: Այս բայը ներկա ժամանակով է և ենթադրում է շարունակական գործողություն: Քրիստոսի մահվան զորությունը կամ արդյունավետությունն ուժի մեջ է մինչև աշխարհի վերջը: «Մեղք» բառը եզակի թվով է, քանի որ խոսքն ընդհանուր առմամբ ամեն ձևի և տեսակի մեղքի մասին է:

2. Եսայի 53.6,7-ը նկարագրում է Աստծո ժողովրդին և այն աշխատանքը, որը Մեսիան կատարեց նրանց փոխարեն: Ինչո՞վ է Եսայու նկարագրությունը նման Հովհաննես Մկրտչի խոսքերին Հովհաննես 1.29-ում:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մոլորվել» բառը թարգմանված է եբրայերեն ***«տաահ»*** բառից, որը նշանակում է «սխալվել, շեղվել, թափառել կամ երերալով քայլել»: Երբեմն այն օգտագործվում է հարբածության իմաստով: Բոլոր մարդիկ մոլորվեցին Աստծուց և նման են հարբածների, որոնք երերալով քայլում են: «Յուրաքանչյուրն իր ճանապարհին դառավ» արտահայտությունն ապացուցում է, որ բոլոր մարդիկ հետևել են այնպիսի ճանապարհի, որը ճիշտ էր թվում նրանց, բայց այդ ճանապարհի վերջը մահվան ճանապարհներ են (Առակաց 14.12): Մեզ փրկելու համար անհրաժեշտ էր, որ Քրիստոսը կրեր մեր անօրինությունը և մորթվելու տարվեր մեր փոխարեն: Մենք տեսնում ենք, որ Հովհաննես Մկրտիչն առաջին մարգարեն չէր, ով անվանեց Մեսիային Գառ, որը կրելու էր Իր ժողովրդի մեղքը:

3. Ա Պետրոս 1.18-20-ում գրված է ամենագեղեցիկ հատվածներից մեկը ամբողջ Աստվածաշնչում Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի մասին: Ինչպե՞ս է Պետրոսը խոսում Հիսուս Քրիստոսի և այն փրկարար աշխատանքի մասին, որը Նա կատարեց Իր ժողովրդի համար: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը և գրե՛ք ձեր մտքերը հետևյալ խոսքերի մասին:

ա. Դուք չփրկվեցիք ապականացու արծաթով կամ ոսկով ձեր հայրենավանդ ունայն վարմունքից (խս. 18):

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Փրկվել» բառը թարգմանված է հունարեն ***«լուտրո՛ն»*** բառից, որը նշանակում է «ետ գնել ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին ստրկությունից կամ գերությունից»: Այս համատեքստում հավատացյալը փրկված է ունայն կամ դատարկ կյանքից, որը նա ժառանգել է իր նախահայրերից: Սա կարող է վերաբերել թե՛ հեթանոսներին, թե՛ հրեաներին: Թե՛ հրեաների, թե՛ հեթանոսների ավանդույթները, կրոնական ծեսերը և բարոյական չափանիշները չունեն փրկելու զորություն:

բ. Այլ Քրիստոսի պատվական արյամբ, ինչպես մի անբիծ և անարատ Գառան (խս. 19):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Համաձայն Ղևտացիների 22.20-24-ի՝ զոհի համար անհրաժեշտ էր ունենալ գառ՝ առանց որևէ արատի: Համաձայն Պետրոսի՝ Քրիստոսն է այդ Գառը: Աստծո Խոսքը պնդում է. «Որովհետև թանկ է նրանց (մարդկանց) անձերի փրկանքը, և հավիտյան կդադարի (կամ՝ և նա (մարդը) պետք է հավիտյան վերջ տա այն *վճարելու* փորձերին)» (Սաղմոս 49.8): Ոչ մի գին, որ մարդը կարող է վճարել, բավական չէ՝ իր անձը փրկելու համար: Բավական է միայն Քրիստոսի կողմից թափված արյունը Գողգոթայում, քանի որ դրա արժեքն անսահման է:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ԶԱՏԿԻ ԳԱՌ

Գառ էր մորթվում նաև Զատկի ժամանակ՝ այն կրոնական տոնակատարության, որը հիշատակում էր Իսրայելի փրկությունը Եգիպտոսի երկրից և ստրկության սարսափելի կապանքներից: Այն գիշերը, երբ Աստված դատեց եգիպտացիներին, ամեն ընտանիք Իսրայելում պատվեր ստացավ՝ մի գառ մորթել և քսել դրա արյունը իրենց տան դռան կողափայտերին և ճակատամասին: Երբ մահվան հրեշտակն անցնում էր Եգիպտոսի միջով՝ դատաստանի համար, նա անցնում էր Աստծո ժողովրդի վրայով, երբ տեսնում էր մորթված գառան արյունը: Դժվար չէ հասկանալ, թե ինչ առումով է Զատկի գառը համարվում Քրիստոսի խորհրդապատկերը: Մարդը խախտել է Աստծո օրենքը և դատապարտված է մահվան: Քրիստոսը զբաղեցրեց Իր դատապարտված ժողովրդի տեղը՝ մահանալով նրանց փոխարեն: Նման Հին կտակարանի Զատկի գառանը, Հիսուսի արյունը թափվեց՝ Իր ժողովրդին մահից ազատելու համար:

1. Ելից 12.1-24-ում գրված է այն մասին, թե ինչպես Զատկի գառան մահվան շնորհիվ Իսրայելն ազատվեց Եգիպտոսից: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

   ա. Ինչպե՞ս է նկարագրվում Զատկի գառը Ելից 12.5-ում: Ինչպե՞ս է այս նկարագրությունը համապատասխանում Քրիստոսին՝ որպես Աստծո Գառան:

   (1) Գառը պետք է Ա_____ լինի:

   ՆՇՈՒՄՆԵՐ. Այս բառը թարգմանված է եբրայերեն ***«թամիմ»*** բառից, որը նշանակում է «լիարժեք, առողջ, ձեռք չտված և անմեղ»: Մեղքի արդյունքում մարդը կործանված, արժեզրկված և մեղավոր է: Անբիծ գառը անմեղ Քրիստոսի խորհրդապատկերն էր, Ով զոհաբերելու էր Իր Անձը Իր ժողովրդի մեղքի համար:

բ. Համաձայն Ելից 12.21-ի՝ ի՞նչ պետք է արվեր Զատկի գառան հետ: Ինչպե՞ս է այս ճշմարտությունը վերաբերում Քրիստոսին՝ որպես Աստծո Գառան:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մորթել» բառը թարգմանված է եբրայերեն ***«շախաթ»*** բառից, որը նշանակում է «սպանել» կամ «մորթել»: Զատկի գառը մորթելը ցույց էր տալիս Քրիստոսի մահը և Իր ժողովրդի փրկությունը: Հայտնություն 5.9 խոսքում երկնային զորքերը երկրպագում են Քրիստոսին՝ ասելով. «Եվ նոր երգ են երգում և ասում. «Արժանի ես առնելու այդ գիրքը և դրա կնիքները բանալու, որովհետև մորթվեցիր և Քո արյունով մեզ գնեցիր Աստծո համար ամեն ցեղից և լեզվից և ժողովրդից և ազգից»»:

գ. Համաձայն խոսք 22-ի՝ ի՞նչ պետք է արվեր Զատկի գառան հետ: Ի՞նչ պետք է աներ յուրաքանչյուր իսրայելցին արյունը իր տան դռան կողափայտերին և ճակատամասին քսելուց հետո: Ինչպե՞ս է այս ճշմարտությունը վերաբերում Քրիստոսին՝ որպես Աստծո Գառան: Համաձայն այս ճշմարտության՝ ինչպիսի՞ն պետք է լինի յուրաքանչյուր քրիստոնյայի արձագանքը Քրիստոսին և հարաբերությունները Նրա հետ:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Առաջին հերթին, անհրաժեշտ էր, որ իսրայելցիները հավատային Աստծուն և վստահեին այն փրկության միջոցին, որը Նա նախասահմանել էր: Զատկի գառան արյունն էր, որ փրկելու էր նրանց գալիք դատաստանից: Նույն կերպով, մենք պետք է հավատանք Աստծո վկայությանը Նրա Որդու մասին (Ա Հովհաննես 5.9-12), որ Նրա զոհը մեր մեղքերի համար՝ մեր փրկության և Աստծո հետ հաշտության միակ միջոցն է: Երկրորդը՝ անհրաժեշտ էր, որ իսրայելցիները մնային իրենց տներում՝ արյան պաշտպանության ներքո. տնից դուրս գտնվողները մահանալու էին: Նույն կերպով, հավատացյալը չունի փրկություն Քրիստոսից և Գողգոթայում Նրա քավչարար աշխատանքից դուրս: Միայն «Քրիստոսում» է, որ Աստծո հետ նորոգված հարաբերությունների բոլոր օրհնությունները հասնում են մարդուն: Ուշադրություն դարձրե՛ք, թե քանի անգամ է «Քրիստոսում» (կամ՝ «Նրանում», «Նրանով», «Իրենում», «Քրիստոսով», «Սիրելիով») բառն օգտագործվում Եփեսացիների 1.3-13-ում, որում Պողոսը նկարագրում է փրկության օրհնությունները (խս. 3,4,6,7,9,10 (երկու անգամ), 12,13):

դ. Համաձայն խոսք 23-ի՝ ինչո՞վ էր կարևոր Զատկի գառան արյունը: Ինչպե՞ս է այս ճշմարտությունը վերաբերում Քրիստոսի զոհին և Աստծո դատաստանին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Արյունը՝ միակ տարբերությունն էր Աստծո զայրույթով կործանված եգիպտացիների և Նրա դատաստանից փրկված իսրայելցիների միջև: Նույն կերպով, հավատացյալը փրկվում է Աստծո դատաստանից ոչ թե իր բնավորության կամ գործերի պատճառով, այլ՝ շնորհիվ Քրիստոսի և այն արյան, որը Նա թափեց հավատացյալի համար Գողգոթայում:

2. Ա Կորնթացիների 5.7-ում մենք անչափ կարևոր հղում ենք տեսնում Քրիստոսի մասին: Ի՞նչ է այն սովորեցնում մեզ:

ա. Մեր Զ_____ Մ_____ մեզ համար՝ Քրիստոսը:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում Սուրբ գիրքը պարզորեն ցույց է տալիս, որ Զատկի գառը Հիսուս Քրիստոսի և Գողգոթայում Նրա քավչարար աշխատանքի խորհրդապատկերը և շուքն էր: «Մորթվել» բառը թարգմանված է հունարեն *«թուՒն»* բառից, որը կարելի է թարգմանել «զոհաբերել, սպանել կամ մորթել»: Ամեն քրիստոնյայի համար և ընդհանուր առմամբ Եկեղեցու համար Քրիստոսը «մեր» Զատիկն է, որի արյամբ մենք արդարացված ենք և փրկված ենք գալիք բարկությունից (Հռոմեացիների 5.9): Կարևոր է նշել, որ Քրիստոսի՝ մեր Զատկի զոհաբերական մահը նույնպես դրդապատճառ է մեզ համար՝ սուրբ և մեղքով չխոչընդոտվող կյանք վարելու: Իսրայելցիներին պատվիրվել էր ուտել միայն անթթխմոր հաց և հեռացնել ամբողջ թթխմորը (մեղքի խորհրդապատկերը) իրենց տներից Զատկի ընթացքում (Ելից 12.15): Նույն կերպով, քրիստոնյաները պետք է ձգտեն հեռացնել մեղքն իրենց կյանքից՝ որպես ճիշտ արձագանք Քրիստոսին՝ մեր Զատկի զոհին:

Գլուխ 19. Քրիստոսը՝ մեր քավության այծը

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Քավության օրը հրեական օրացույցի ամենասուրբ օրն էր, քանի որ այդ օրը մատուցվում էր տարեկան քավության զոհը ժողովրդի մեղքերի համար: Դա տարվա միակ օրն էր, երբ քահանայապետն անցնում էր տաճարի քողով և մտնում էր Սրբության սրբոցը, որտեղ Աստծո ներկայությունն էր: Այդ օրը մատուցվում էին տարբեր զոհեր, բայց դրանցից մեկն առավել ուշագրավ կերպով է ցույց տալիս Քրիստոսի քավչարար աշխատանքը: Ընտրվում էր երկու այծ, որոնցից մեկը մորթվում էր զոհասեղանի վրա մեղքի համար, իսկ մյուսը բաց էր թողնվում անապատ՝ տանելով իր հետ Աստծո ժողովրդի մեղքերը:

Դժվար չէ հասկանալ, որ և՛ զոհաբերվող, և՛ քշվող այծը Քրիստոսի խորհրդապատկերը և շուքն էին: Մեկ զոհը չէր կարող լիովին պատկերել Քրիստոսի քավչարար աշխատանքի երկակի նպատակը: Այդ իսկ պատճառով, առաջին այծը մորթվում էր զոհասեղանի վրա՝ պատկերելով Քրիստոսի զոհը, Ով մահացավ, որ վճարեր Իր ժողովրդի մեղքի պարտքը: Մյուս այծը, որը քշվում էր անապատ՝ հեռացնելու Աստծո ժողովրդի մեղքը, նույնպես պատկերում էր Քրիստոսին՝ որպես մեղքերը Կրող, Ով հեռացրեց Իր ժողովրդի անօրինությունները:

1. Ղևտացիների 16.8-ում Ահարոնը պետք է վիճակ գցեր այդ երկու այծերի համար: Ծանոթացե՛ք այս խոսքի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

   ա. Ի՞նչ նշանակություն ուներ Ահարոնի վիճակ գցելը:

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Առակաց 16.33-ում գրված է. «Ծոցն է գցվում վիճակը, բայց Տիրոջից է գալիս նրա ամբողջ վճիռը»: Վիճակ գցելը ցույց էր տալիս Տիրոջ որոշումը կամ գերիշխանությունը վճռի հարցում: Անսահմանորեն ավելի խորը կերպով Հիսուս Քրիստոսն Աստծո ընտրությունն էր նույնիսկ մինչև աշխարհի սկիզբը (Ա Պետրոս 1.20): Նա Աստծո ընտրված միջոցն էր փրկություն բերելու համար: Գողգոթայում Քրիստոսի մահվան ամեն մանրուք տեղի ունեցավ ըստ Աստծո վճռի: Պետրոս առաքյալը Երուսաղեմում հրեաներին ազդարարեց. «Նրան, որ ***Աստծո սահմանված խորհրդով և կանխագիտությամբ*** մատնված էր, առաք անօրենների ձեռքով, փայտի վրա բևեռած սպանեցիք» (Գործք 2.23):

բ. Ինչպե՞ս են նկարագրվում երկու այծերը:

(1) Մեկ այծը Տ_____ համար է:

(2) Մյուս այծն Ա_____ Ա_____ այծն է (կամ՝ քավության այծը):

ՆՇՈՒՄՆԵՐ. Ընդամենը մեկ զոհաբերությունը չի կարող լիարժեք պատկերել Քրիստոսի քավչարար աշխատանքի երկու կողմերը: Այն այծը, որը «Տիրոջ համար» էր, մորթվում և զոհաբերվում էր՝ պատկերելով Քրիստոսի մահը, որով Նա վճարեց Իր ժողովրդի մեղքի պարտքը: Մյուս այծը, որը կոչվում է «քավության այծ», քշվում էր անապատ՝ պատկերելով այն, որ Քրիստոսը կրեց Իր ժողովրդի մեղքը և հեռացրեց այն նրանցից: «Ազատ արձակվող այծը» կամ «քավության այծը» բառացիորեն թարգմանվել է «այծը՝ ***ազազելի*** համար» արտահայտությունից: «Ազազել» բառը մեկնվել է տարբեր կերպերով պատմության ընթացքում: Որոշ աստվածաբաններ համոզված են, որ այն առաջացել է երկու եբրայերեն բառերից (***«Էզ»*** = այծ + ***«ազալ»*** = հեռանալ), և հասկանում են այն որպես «այծ, որը հեռանում է»: Այլ աստվածաբաններ համոզված են, որ այն առաջացել է արաբերեն ***«ազալա»*** բառից, որը նշանակում է «վտարել կամ հեռացնել»: Մյուսները կարծում են, որ այն սատանային վերագրվող անձնանուն է: Ըստ վերջին կարծիքի՝ այծերից մեկը զոհաբերվում է Աստծուն, իսկ մյուսը՝ սատանային, ինչը կոպտորեն հակասում է այն ամենին, ինչ Աստվածաշունչը սովորեցնում է քավության մասին: Պետք էր խաղաղեցնել ոչ թե սատանայի, այլ արդար և սուրբ Աստծո զայրույթը: Թեև հնարավոր է, որ այս բառի ճշգրիտ իմաստն այդպես էլ անորոշ մնա, ամենահավանական իմաստն այն է, որ խոսքը քավության այծի մասին է՝ այն այծի, որին պետք է դուրս անեին ժողովրդի ճամբարից, որպեսզի նա խորհրդապատկերային ձևով անապատ տաներ ժողովրդի մեղքերը:

ԱՅԾԸ՝ ՏԻՐՈՋ ՀԱՄԱՐ

Աստված արդար է. այդ իսկ պատճառով, Նա չի կարող պարզապես անտեսել կամ մի կողմ դնել մեր մեղքը՝ նախ՝ առանց Իր արդարադատության պահանջները բավարարելու: Մեղքի հատուցումը մահն է: Առաջին այծը՝ «Տիրոջ համար», մորթվում էր զոհասեղանի վրա՝ պատկերելով Քրիստոսին որպես Զոհ, Ով մահացավ, որ վճարեր Իր ժողովրդի մեղքի պարտքը»:

1. Համաձայն Ղևտացիների 16.9-ի՝ ի՞նչ պետք է արվեր Տիրոջ համար նախատեսված այծը:

ա. Այն պետք է զոհաբերվեր որպես Մ_____ Պ_____:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս արտահայտությունը թարգմանված է եբրայերեն ***«չատտա»*** բառից, որը կարող է վերաբերել մեղքին կամ մեղքի զոհին: Այս համատեքստում այն նշանակում է Աստծուն մատուցված զոհ, որի նպատակն էր՝ հեռացնել մեղքի հանցանքը և պատիժը: Այն պարզորեն խորհրդապատկերում է Քրիստոսի միակ ճշմարիտ զոհը աշխարհի մեղքերի համար:

2. Համաձայն Ղևտացիների 16.15,16-ի՝ ի՞նչ պատվիրեց Աստված քահանայապետին Տիրոջ համար նախատեսված այծի վերաբերյալ: Ինչպե՞ս է դա պատկերում Քրիստոսին և Նրա քավչարար աշխատանքը:

ա. Նա պետք է Մ_____ այծը (խս. 15):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եբրայերեն ***«շախատ»*** բառից, որը նշանակում է «մորթել կամ հարվածել»: Այս բառը սովորաբար օգտագործում էին զոհաբերվող կենդանիների վերաբերյալ: Եսայի 53.7-ում Մեսիան նման էր մորթվելու տարվող ոչխարի (եբրայերեն ***«տեվախ»***): Նոր կտակարանում Հիսուսը մորթված Գառն է (Հայտնություն 5.6,9,12, 13.8):

բ. Նա պետք է տանի արյունը վարագույրի Ն_____ (խս. 15):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քահանայապետը պետք է մուտք գործեր Սրբության սրբոց, որտեղ Աստծո ներկայությունն էր, որպեսզի մատուցեր արյան զոհը ժողովրդի մեղքերի համար: Եբրայեցիների թղթի հեղինակը հայտնում է մեզ, որ Քրիստոսը, թափելով իր արյունը՝ որպես զոհ մեղքերի համար, մտավ անմիջապես Աստծո ներկայության մեջ Երկնքում (Եբրայեցիների 9.11,12): Երբ Քրիստոսը մահացավ, տաճարի քողը պատռվեց՝ երկու կես լինելով, դա նշանակում է, որ ճանապարհը՝ դեպի Իր ժողովրդի լիարժեք ներումը և Աստծո հետ անխոչընդոտ հաղորդությունը, բացվել էր (Մատթեոս 27.51):

գ. Նա պետք է սրսկի արյունը Ք_____ (կամ՝ Ողորմության աթոռի) վրա և դրա առջև (խս. 15):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քավություն» բառը թարգմանված է եբրայերեն ***«կապպորետ»*** բառից, որը նույնպես կարելի է թարգմանել որպես «ողորմության աթոռ» կամ «քավության վայր»: Այն ոսկե կափարիչ էր՝ մոտավորապես 115x70սմ չափերով, որը դրվում էր Ուխտի տապանակի վրա: Քավության վրա երկու հրեշտակների արձաններ էին, որոնք քերովբեներ էին կոչվում: Նրանց հայացքներն ուղղված էին իրար, նրանց տարածած թևերի եզրերը դիպչում էին իրար՝ ամբողջությամբ ծածկելով Ուխտի տապանակի վրա դրված կափարիչը՝ քավությունը: Այն դրված էր Տաճարում՝ Սրբության սրբոցում, որն Աստծո գահի սրահի երկրային ներկայացուցչությունն էր (կարդացե՛ք Եսայի 6.1-3): Աստված խոստացել էր, որ կհանդիպեր Իր ժողովրդին Ուխտի տապանակի վրա եղած քավության վրայից (Թվոց 7.89): Հենց այդտեղ էր սրսկվում զոհի արյունը, այդտեղ էր արվում քավությունը և այդտեղ էր ստացվում ողորմությունը: Յոթանասունից թարգմանության մեջ (Հին կտակարանի հունարեն թարգմանությունը) ***«կապպորետ»*** բառը թարգմանված է հունարեն ***«հիլաստերիոն»*** բառով, որը նշանակում է «քավության վայր կամ առարկա»: «Հիլաստերիոն» բառն օգտագործվում է Հիսուսի վերաբերյալ Հռոմեացիների 3.25-ում. «Որին Աստված առաջուց սահմանեց ***քավություն*** լինելու համար՝ հավատալով Նրա արյունով...»: Քրիստոսի մահը՝ քավություն էր, որը բավարարեց աստվածային արդարադատության պահանջները և թույլ տվեց արդար Աստծուն ողորմություն ցուցաբերել մեղավորներին՝ առանց փոխզիջման գնալու Իր աստվածային արդարության հետ: Երկրային տաճարում քավության վրա սրսկած գառան արյունը խորհրդապատկեր կամ շուք էր, որը ներկայացնում էր Քրիստոսի արյունը, որը թափվեց, որպեսզի հաշտեցներ Իր ժողովրդին և թույլ տար մարդկանց մուտք գործել անմիջապես Աստծո ներկայության մեջ Երկնքում:

դ. Նա պետք է Ք_____ անի (խս. 16):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քավություն» բառը եբրայերեն «***կիպպեր***» կամ ***«կիպպուր»*** բառից է: Այս բառի ***«կաֆար»*** բայաձևը նշանակում է մաքրել, նաև՝ քավություն կամ հաշտություն անել: Քանի որ «անկարելի է, որ նոխազների և ցլերի արյունը մեղքեր վեր առնի» (Եբրայեցիների 10.4), ակնհայտ է, որ այս զոհը, որը տարեց տարի կրկնվում էր, ընդամենը Քրիստոսի մեկընդմիշտ արվող զոհի խորհրդապատկերը կամ շուքն էր:

ՔԱՎՈՒԹՅԱՆ ԱՅԾԸ

Մենք դիտարկեցինք Տիրոջ համար նախատեսված այծին, որը խորհրդապատկերում էր Քրիստոսի կողմից մարդկանց մեղքի պարտքը վճարելը: Այնուամենայնիվ, մեկ այծը բավական չէր՝ պատկերելու համար Քրիստոսի ապագա աշխատանքի երկակի բնույթը: Այժմ կդիտարկենք «քավության այծին», որն ուղարկվում էր անապատ՝ որպես խորհրդապատկեր, որ Քրիստոսը կրելու էր Իր ժողովրդի մեղքերը:

1. Ըստ Ղևտացիների 16.21,22-ի՝ ի՞նչ պատվիրեց Աստված քահանայապետին քավության այծի վերաբերյալ, և ինչպե՞ս է դա խորհրդապատկերում Քրիստոսին և Նրա քավչարար աշխատանքը:

ա. «Ահարոնն իր երկու ձեռքերը ողջ նոխազի գլխին դնի և խոստովանի նրա վրա Իսրայելի որդիների բոլոր անօրինությունները և նրանց բոլոր հանցանքները իրենց բոլոր մեղքերով, և նրանց դնի նոխազի գլխին...» (խս. 21):

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա հանցանքի վերագրման (լատիներեն ***«ինպուտարե»***, ***«ին»*** = «մեջ» կամ «դեպի» + ***«պուտարե»*** = «համարել») վարդապետության ազդեցիկ և գեղեցիկ օրինակ է, որում Աստված վերագրում է Իր ժողովրդի մեղքերը մի անմեղ զոհի, որը կրում է այդ մեղքերի պատիժը նրանց փոխարեն: Այն փաստը, որ քահանայապետը պետք է դներ իր ***երկու*** ձեռքերն այդ այծի վրա և խոստովաներ դրա վրա Իսրայելի ***բոլոր*** հանցանքները, խորհրդանշում է ժողովրդի հանցանքի ***ամբողջական*** փոխանցումն այդ զոհին: Եսային մարգարեացավ, որ Տերը Մեսիայի վրա է դնելու ***մեր ամենի*** մեղքը (Եսայի 53.6): Նոր կտակարանը պարզորեն հայտնում է, որ մեր մեղքը վերագրվեց Քրիստոսին, իսկ Նրա արդարությունը վերագրվեց մեզ (Բ Կորնթացիների 5.21):

բ. «Եվ նոխազը նրանց բոլոր անօրինություններն իր վրա մի անբնակ երկիր տանի, և մարդն անապատում թող տա նոխազը» (խս. 22):

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո ժողովրդի մեղքը կրող այծը վտարվում էր Աստծո ներկայությունից և միայնության մատնվում անապատում: Գողգոթայում Քրիստոսը կրեց Իր ժողովրդի մեղքերը և թողնվեց Աստծուց՝ նրանց փոխարեն: Ահա թե ինչու Նա աղաղակեց խաչի վրա. «Իմ Աստվա՜ծ, իմ Աստվա՜ծ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» (Մատթեոս 27.46): Նման քավության այծին, որը թափառում էր անապատում, և այն զոհաբերվող կենդանիների մարմիններին, որոնք այրվում էին քաղաքի դարպասից դուրս, Քրիստոսը չարչարվեց քաղաքի դարպասից դուրս և թողնվեց մահանալու՝ կտրված Աստծուց և Աստծո ժողովրդից (Եբրայեցիների 13.11,12):

Գլուխ 20. Քրիստոսը թաղվեց

Այս գլխում կդիտարկենք Ավետարանի անչափ կարևոր, բայց հաճախ անտեսված մի կողմ՝ Քրիստոսի հարության կարևոր նախապայմաններից մեկը՝ Նրա թաղումը:

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Աստվածաշունչը պնդում է Ա Կորնթացիների 15.3,4-ում. «Քրիստոս մեր մեղքերի համար մեռավ՝ գրքերի համեմատ... թաղվեց... երրորդ օրը հարություն առավ՝ գրքերի համեմատ»: Քրիստոնեական հավատքի այս երկու սյուների միջև՝ «Քրիստոսը մահացավ» և «Քրիստոսը հարություն առավ», գտնվում է Նրա թաղումը: Այն ընդգրկված չէ այս հատվածում պարզապես այս երկու նշանակալի իրադարձությունների կապը ցույց տալու համար, այլ՝ դրանք վավերացնելու նպատակով: Քրիստոսի թաղումն ապացույց է, որ Նա իսկապես մահացել է, ինչը, իր հերթին, ապացուցում է նաև Նրա հարության փաստը: Այնպես որ, Քրիստոսի թաղման փաստը հաստատելը կարևոր էր Առաջին եկեղեցու համար:

1. Եսայի 53.9-ում գրված մարգարեությունը տպավորիչ կերպով ապացուցում է, որ Քրիստոսը՝ Հիսուս Մարդն էր, և որ նույնիսկ Նրա կյանքի ու մահվան ամենաանշան մանրամասները համապատասխանում են Աստվածաշնչին: Ի՞նչ է այս մարգարեությունը ազդարարում եկող Մեսիայի մասին: Համաձայն Մատթեոս 27.57-60-ի՝ ինչպե՞ս այս մարգարեությունը կատարվեց Հիսուսի մահով:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Որոշվեց» բառը նույնպես կարելի է թարգմանել «նշանակվեց» կամ «սահմանվեց» բառերով: Սովորաբար խաչված հանցագործների մարմինները նետում էին ինչ-որ փոսի մեջ, որպեսզի շները կամ գիշանգղերն ուտեին: Բայց Աստված որոշեց, որ Իր Որդին պատվով թաղվի: Հովհաննես 19.39-ում մենք կարդում ենք, որ Քրիստոսի թաղման ժամանակ օգտագործվեց մոտավորապես հարյուր լիտրի չափ զմուռս և հալվե: Նման քանակություն օգտագործելն արտառոց երևույթ էր, քանի որ այդ նյութերը շատ թանկ արժեին:

2. Բոլոր չորս Ավետարանների հեղինակները նկարագրել են Հիսուսի թաղումը (Մատթեոս 27.57-66, Մարկոս 15.42-47, Ղուկաս 23.50-56, Հովհաննես 19.38-42): Կարդացե՛ք այս պատմությունները և գտե՛ք այն ապացույցները, որոնք հաստատում են Քրիստոսի մահվան և թաղման իրական լինելը:

   ա. Նա թաղվեց Ա_____ Հ_____ անունով մի մարդու կողմից (Մարկոս 15.42,43): Այն մարդը, ով կազմակերպեց Քրիստոսի թաղումը, և ում գերեզմանում Նա թաղվեց, երևելի խորհրդական էր այն Սինեդրիոնում, որը մահվան դատապարտեց Քրիստոսին: Ղուկասը նշում է, որ նա «բարի և արդար մարդ» էր և համաձայն չէր Քրիստոսի մահվանը (Ղուկաս 23.50,51): Նրա վկայութ-

յունը մեծ կշիռ ունի: Նա ոչինչ չէր շահում՝ Քրիստոսի համար պատշաճ թաղում կազմակերպելով. ընդհակառակը՝ նա կարող էր կորցնել ամեն ինչ այդ պատճառով: Հովսեփի ռիսկը ծնվեց Քրիստոսի հանդեպ ունեցած սիրուց:

բ. *Ն_____ ուղեկցեց Հովսեփին և օգնեց նրան պատրաստել Հիսուսի մահացած մարմինը թաղման համար (Հովհաննես 19.39):* Այդ մարդը փարիսեցի և հրեաների իշխան էր (Հովհաննես 3.1): Փարիսեցիները դավադրություն էին կազմել Սինեդրիոնի հետ՝ Հիսուսին խաչելու համար: Ինչպես և Հովսեփը, Նիկոդեմոսը քննադատվում էր մյուս փարիսեցիների կողմից Հիսուսին պատվելու համար: Նիկոդեմոսի վկայությունը Քրիստոսի մահվան մասին և Նրա թաղմանը մասնակցելը նշանակալի ապացույցներ են, որոնք հաստատում են այդ իրադարձությունների իրական լինելը:

գ. *Պ_____ թույլ տվեց Հովսեփին վերցնել Հիսուսի մարմինը՝ թաղելու համար (Հովհաննես 19.38):* Հիսուսի մահը հաստատվում է այն փաստով, որ Պիղատոսը թույլ տվեց վերցնել այն միայն սպառիչ քննությունից հետո, երբ համոզվեց, որ Հիսուսնն իրականում մահացած էր (Մարկոս 15.44,45):

դ. *Այն, թե ինչպես Հիսուսի մարմինը պատրաստվեց թաղման համար, նույնպես մեծ ապացույց էր, որ Նա մահացել էր: Ամփոփե՛ք Հովհաննես 19.38-40-ում գտնվող պատմությունն այդ մասին: Ինչ կերպով է այն ցույց տալիս, որ Հիսուսն իրականում մահացած էր, ոչ թե պարզապես անգիտակից վիճակում էր:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եթե Քրիստոսը ողջ լիներ, մի՞թե Հովսեփը և Նիկոդեմոսը չէին հայտնաբերի դա: Ովքեր տեսել էին Քրիստոսի մարմինը, համոզված էին, որ Նա մահացած էր. հռոմեացի զինվորները (Մարկոս 15.44,45, Հովհաննես 19.32-34), Հովսեփը (Ղուկաս 23.50-53), Նիկոդեմոսը (Հովհաննես 19.39) և այն կանայք, որոնք ականատես էին եղել Նրա խաչելությանը և թաղմանը (Ղուկաս 23.55,56):

Ո՞ՒՐ ԳՆԱՑ ՔՐԻՍՏՈՍԸ, ԵՐԲ ՄԱՀԱՑԱՎ

Կան բազմաթիվ թյուրըմբռնումներ այն մասին, թե որտեղ էր Քրիստոսը Իր մահվան և հարության միջև եղած երեք օրվա ընթացքում: Այնուամենայնիվ, Սուրբ գիրքն ուշադրությամբ ուսումնասիրելու դեպքում կարելի է տեսնել բոլոր հեղինակների համաձայնությունն այս հարցում: Իր մահվան և հարության միջև ընկած ժամանակահատվածում Քրիստոսի հոգին չէր մնացել գերեզմանում, և ոչ էլ դժոխք էր իջել: Քրիստոսի իսկ խոսքերով, որոնք ուղղված էին ապաշխարող ավազակին, Նա գնացել էր «Դրախտ»՝ Իր Հոր փառավոր բնակավայրը (Ղուկաս 23.43): Հաջորդ էջերում կուսումնասիրենք ամենակարևոր հատվածներն այս մասին:

Սաղմոս 16.10

«Որովհետև Իմ անձը չես թողնի գերեզմանում (կամ՝ շեոլում), և Քո Սուրբին ապականություն տեսնել չես տա»:

«Շեոլ» բառը նույն եբրայերեն բառի գրադարձությունն է և կարող է թարգմանվել որպես «անդրաշխարհ», «գերեզման», «փոս» կամ «դժոխք»: Այս համատեքստում սաղմոսերգուն պարզապես պնդում է,

որ Աստված թույլ չի տա, որ Մեսիայի մարմինը ենթարկվի քայքայման, այլ հարություն կտա նրան մեռելներից: Այս խոսքն այսպես են մեկնաբանում Պետրոսը (Գործք 2.27-31) և Պողոսը (Գործք 13.34,35):

Գործք 2.27-ում Պետրոսը մեջբերում է այս հատվածը՝ ի պաշտպանություն Քրիստոսի հարության. «Իմ անձը չես թողնի գերեզմանում (կամ՝ «հադեսում»): *«Հա՛դես»* բառը *«շեոլ»* բառի հունարեն թարգմանությունն է և ունի միևնույն իմաստը: Այս հատվածների պարզագույն իմաստն այն է, որ Հայրը թույլ չէր տալու, որ Հիսուսի մարմինը ենթարկվեր քայքայման մահվան կապանքներում, այլ հարություն կտար Նրան մեռելներից: Չարլզ Հոջը գրում է. «Այդ իսկ պատճառով, աստվածաշնչյան լեզվով հադես իջնելը պարզապես նշանակում է իջնել գերեզմանը, անցնել տեսանելի աշխարհից՝ անտեսանելին, ինչպես որ լինում է այն մարդկանց հետ, ովքեր մահանում և թաղվում են»[8]:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 10.7

«Ո՞վ կիջնի անդունդը (կամ՝ աբիսսը), այսինքն՝ Քրիստոսին մեռելների միջից հանելու համար»:

Հիմնվելով հենց Պողոսի մեկնության վրա («մեռելների միջից հանելու»)՝ «աբիսս» բառը վերաբերում է մեռելների տիրույթին, և հավաստիացում չէ այն մասին, որ Քրիստոսը դժոխք է գնացել: Մեթյու Հենրին գրում է. «Սա պարզորեն ցույց է տալիս, որ Քրիստոսի անդունդ կամ *«ա՛բուսսոս»* իջնելը ընդամենը նշանակում է լինել մահացած վիճակում»[9]:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.9

«Այն «վեր ելավ»-ը ի՞նչ է, եթե ոչ՝ որ առաջ վայր իջավ երկրի ցած կողմերը»:

Այս համատեքստը ենթադրում է, որ Պողոսը գրում է Քրիստոսի մարմնավորման մասին, ոչ թե դժոխք իջնելու: Այն Քրիստոսը, Ով վեր ելավ Երկինք (համբարձվեց), նույն Անձն է, Ով երկիր եկավ Երկնքից (մարմնավորվեց): Եսայի 44.23-ում գրված է. «Ցնծացե՛ք, ո՛վ երկինք, որովհետև Տերն է արել. ցնծալով աղաղակե՛ք, ո՛վ երկրի խորքեր. ուրախալից ձայներ հանեք, ո՛վ սարեր, ո՛վ անտառ և բոլոր նրա միջի ծառեր, որովհետև Տերը փրկել է Հակոբին, և Նա Իսրայելի մեջ փառավորված է»: Կրկին, այս հատվածում «երկրի խորքեր» արտահայտությունը պարզապես նշանակում է երկիրը՝ ի հակադրություն երկնքի:

Ա ՊԵՏՐՈՍ 3.18-20

«Որովհետև Քրիստոսն էլ մեկ անգամ մեղքերի համար չարչարվեց, այն Արդարն անարդարների վրա, որ մեզ մոտեցնի Աստծուն, որ թեև մեռավ մարմնով, բայց կենդանի եղավ հոգով: Որով գնաց բանտում եղող հոգիներին էլ քարոզեց, որոնք մի ժամանակ ապստամբ էին, երբ որ Աստծո երկայնամտությունը համբերում էր նրանց Նոյի օրերում տապանը պատրաստվելիս, որի մեջ քիչ, այսինքն՝ ութ հոգի ջրից պրծան»:

Ոմանք մեկնում են այս հատվածը որպես ուսմունք այն մասին, որ Քրիստոսն իջավ դժոխք, երբ մահացավ, որպեսզի հռչակեր Իր հաղթանակը նրանց, ովքեր գտնվում էին այնտեղ: Ավելի հետևողական մեկնությունն այն է, որ Սուրբ Հոգին, Ով հարություն տվեց Քրիստոսին մեռելներից, այն գործիքն էր, որի միջոցով Քրիստոսը խոսում էր Նոյի սերնդին: Քրիստոսը խոսում էր նրանց Սուրբ Հոգով՝ Նոյի քարոզի միջոցով: Նրանք չհավատացին Քրիստոսի խոսքերին, որոնք քարոզում էր Նոյը. այդ իսկ պատճառով, նրանք մահացան իրենց մեղքերի մեջ և մինչև օրս բանտում են (այսինքն՝ դժոխքում):

Ա ՊԵՏՐՈՍ 4.6

«Որովհետև իսկ սրա համար մեռելներին էլ ավետարանվեց, որ մարդու կողմից մարմնով դատվեն, բայց կենդանի լինեն Աստծո կողմից հոգով»:

---

[8] *«Համակարգված աստվածաբանություն»*, հտ. 2, էջ 617

[9] *«Մեթյու Հենրիի մեկնությունը»*, հտ. 6, էջ 439

Ոչ մի պատճառ չկա մեկնաբանելու այս հատվածն այն իմաստով, որ Քրիստոսն իջավ դժոխք, որպեսզի քարոզեր Ավետարանն այնտեղ գտնվողներին: Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է, որ «...մարդկանց մեկ անգամ սահմանված է մեռնել, և նրանից հետո դատաստանը» (Եբրայեցիների 9.27): Այս հատվածը պետք է պարզապես մեկնաբանել այն իմաստով, որ Ավետարանը քարոզվել էր որոշ մարդկանց, ովքեր Պետրոսի գրելու ժամանակ արդեն մահացել էին:

ՂՈՒԿԱՍ 23.43

«Եվ Հիսուսն ասաց նրան. «Ճշմարի՛տ ասում եմ քեզ, դու այսօր Ինձ հետ դրախտում կլինես»»:

Եթե Քրիստոսը չգնաց դժոխք, ապա ո՞ւր գնաց: Այս հարցի լավագույն պատասխանը Քրիստոսի խոսքերին հավատալն է: Հիսուսն ասաց մահացող ավազակին. «Ճշմարի՛տ ասում եմ քեզ, դու այսօր Ինձ հետ դրախտում կլինես»: Քրիստոսի մահվան ժամանակ Նրա հոգին անմիջապես անցավ Աստծո ներկայության մեջ: Հարության ժամանակ Նրա մարմինը և հոգին կրկին միացան: Ակնառու է, որ «դրախտ» բառն օգտագործվում է ևս երկու անգամ Նոր կտակարանում, և երկու անգամ էլ այն ակնհայտորեն վերաբերում է Երկնքին (Բ Կորնթացիների 12.4, Հայտնություն 2.7):

ՂՈՒԿԱՍ 23.46

«Եվ Հիսուսը մեծ ձայնով կանչեց և ասաց. «Հա՛յր, հոգիս Քո ձեռքն եմ ավանդում», և այս ասելով հոգի տվեց»:

Այս կարճ, բայց ազդեցիկ հայտարարության մեջ կրկին ապացույց ենք տեսնում, որ մահանալով՝ Քրիստոսը գնաց Հոր մոտ: Այս հայտարարության մեջ կա մեծ վստահություն՝ նման «այսօր Ինձ հետ դրախտում կլինես» պնդմանը: Մեթյու Հենրին գրում է. «[Քրիստոսը] ավանդում է Իր հոգին Իր Հոր ձեռքը, որպեսզի այն ընդունվի դրախտում և վերադարձվի երրորդ օրը»[10]:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 20.17

«Հիսուսը նրան ասաց. «Մի՛ դիպչիր Ինձ, որովհետև դեռ չեմ վեր ելել Իմ Հոր մոտ: Բայց դու գնա՛ Իմ եղբայրների մոտ և նրանց ասա՝ Ես վեր եմ ելնում Իմ Հոր մոտ և ձեր Հոր մոտ, Իմ Աստծո մոտ և ձեր Աստծո մոտ»»:

Երբեմն վիճարկվում է, որ Քրիստոսը կարող էր Երկինք բարձրանալ այն երեք օրվա ընթացքում, երբ Իր մարմինը գերեզմանում էր՝ հիմնվելով այս հատվածի վրա, որում Նա խոսեց Մարիամ Մագդաղենացու հետ: Այնուամենայնիվ, ավելի ուշադիր դիտարկման դեպքում ակնհայտ է, որ չկա ոչ մի հակասություն Քրիստոսի խոսքերի մեջ՝ ուղղված ավազակին (Ղուկաս 23.43), և Նրա խոսքերի մեջ՝ ուղղված Մարիամ Մագդաղենացուն (Հովհաննես 20.17): Երեք օր անց Քրիստոսը միացավ Իր երկրային մարմնին և հարություն առավ մեռելներից: Մարիամը չհասկացավ Աստծո ծրագիրը և չիմացավ, որ Քրիստոսը կրկին համբարձվելու էր (այս անգամ՝ մարմնով) դեպի Հոր աջ կողմը՝ որպես Իր ժողովրդի Բարեխոս: Նա սպասում էր, որ Հիսուսը մնար երկրի վրա և թագավորեր որպես երկրային Մեսիա: Մարիամի հետ խոսելիս Քրիստոսը չէր ժխտում, որ Իր ***հոգին*** համբարձվել էր Հոր մոտ խաչի վրա մահանալուց հետո, այլ ասում էր, որ Ինքը դեռ չէր համբարձվել ***մարմնով***: Թեև Մարիամը չէր հասկանում դա, մարմնով հարություն առնելը բացարձակապես անհրաժեշտ էր փրկության աշխատանքն ավարտին հասցնելու համար:

[10] *«Մեթյու Հենրիի մեկնությունը»*, հտ. 5, էջ 830

Գլուխ 21. Քրիստոսը հարություն առավ

Հաճախ մարդիկ ամփոփում են Ավետարանի ուղերձը՝ ասելով. «Հիսուսը մահացավ մեր մեղքերի համար»: Սա կոպիտ սխալ է: Համաձայն Ա Կորնթացիների 15.1-4-ի՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանն ընդամենը այն չէ, որ Նա մահացավ Աստծո ժողովրդի մեղքերի համար, այլ՝ որ Նա հարություն առավ մեռելներից երրորդ օրը: Քրիստոսի հարությունը և մահը՝ քրիստոնեության երկու մեծ սյուներն են: Առանց հարության՝ Քրիստոսի մահը բարի լուր չէր լինի:

Հույսի մեծագույն հռչակումը, որը հնչել է ցանկացած մահկանացուի կամ հրեշտակի շուրթերից, «Քրիստոսը հարություն է առել» խոսքերն են: Նրա հարությունը մեծ ապացույց է Նրա աստվածության և Անձի արդարացման մասին: Հարությունը երաշխիք է, որ Աստված ընդունեց Քրիստոսի մահը՝ որպես հատուցում Իր ժողովրդի մեղքերի: Գոյություն ունեն ընդամենը մի քանի վարդապետություններ, որոնք ավելի կարևոր են, սակայն ոչ մի վարդապետություն այնքան հարձակումների չի ենթարկվել անհավատների կողմից, որքան Հիսուս Քրիստոսի հարությունը: Քրիստոնեական հավատքի արժանահավատությունը և հավատացյալների փրկությունը հիմնված են այս վարդապետության վրա:

ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

«Վեբսթերի բառարանը» սահմանում է «պատմականություն» տերմինը որպես «պատմական լինելու հատկանիշ՝ ի հակադրություն դիցաբանականի կամ առասպելականի»: Աստծո Որդու գալստյան պատմությունը, որը գրված է չորս Ավետարաններում (Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի), մեծապես տարբերվում է առասպելական պատումից այն բանով, որ այդ իրադարձությունն իրականում տեղի է ունեցել մարդկության պատմության մեջ: Աստծո Որդին իրականում եկավ այս աշխարհ որոշակի ժամանակում և որոշակի վայրում: Նա իրական, պատմական Անձ էր, և Նրա կյանքի պատմությունը գրի է առնված այն մարդկանց կողմից, ովքեր և՛ ճանաչում էին Նրան, և՛ Նրա կյանքի և ուսուցումների ականատեսներն էին: Նրանց համար Հիսուս Քրիստոսի հարությունը ո՛չ առասպել էր, ո՛չ խորհրդապատկերային իրադարձություն, այլ՝ պատմական իրողություն: Հարությունը իրական պատմական իրադարձություն չհամարելը՝ նշանակում է մերժել Սուրբ գրքի վկայությունը:

1. Ղուկաս 1.1-4-ում մենք գտնում ենք ազդեցիկ ապացույց այն մասին, որ Ավետարանների հեղինակները լիովին համոզված էին, որ ներկայացնում էին պատմական փաստ՝ հիմնված կա՛մ իրենց անձնական վկայության, կա՛մ այլ մարդկանց սպառիչ կերպով ստուգված վկայությունների վրա: Ինչպե՞ս է Ղուկասի Ավետարանի ներածությունը ցույց տալիս, որ Ղուկասը հավատում էր, որ իրական պատմական դեպքեր էր գրի առնում:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վերստին կարգել» արտահայտությունը (խս. 1) թարգմանված է հունարեն ***«անատա՛ս-սոմայ»*** բառից, որը նշանակում է «ի մի բերել՝ համակարգելու համար»: Ղուկասը պարտավորություն էր ստանձնել գրի առնել հաջորդական և պատմականորեն ճշգրիտ պատմություն Աստծո Որդու մարմնավորման և գործերի մասին: «Ավանդել» բառը (խս. 2) թարգմանված է հունարեն ***«պարադի՛դոմի»*** բառից, որը նշանակում է «հանձնել ինչ-որ բան մեկ ուրիշին՝ պահպանելու կամ օգտագործելու համար. հանձնարարել կամ վստահել ինչ-որ բան ինչ-որ մեկին»: Այն առաքյալները, ովքեր Քրիստոսի հետ էին «սկզբից», հավատարմորեն «ավանդեցին» ճշմարտությունը Նրա Անձի և գործերի մասին: «Ականատես» բառը (խս. 2) թարգմանված է հունարեն ***«աուտո՛պտես»*** բառից, որը վերաբերում է ինչ-որ մեկին, ով իր աչքերով ինչ-որ բան է տեսել: «Դիահերձում» կամ «աուտոպսիա» բժշկական տերմինը, որը նշանակում է «մանրամասն զննում», առաջացել է այս բառից: «Ականատեսները» և «Խոսքին սպասավոր լինողները», հավանաբար, առաքյալներն են: «Հետևել» (կամ՝ «հետաքննել») բառը (խս. 3) թարգմանված է հունարեն ***«պարակոլոութե՛ո»*** բառից, որը նշանակում է «հետևել» կամ «ինչ-որ մեկի հետ լինել՝ ուր էլ նա գնա»: Փոխաբերական իմաստով, սա նշանակում է տեղեկություն հայթայթել ինչ-որ բանի մասին կամ հիմնավոր կերպով հետաքննել դա: «Ամեն բաներին ճշմարտությամբ» արտահայտությունը ցույց է տալիս, որ Ղուկասի քննությունը և՛ սպառիչ էր, և՛ ջանասիրաբար արված: Նա քննել էր բոլոր հասանելի տվյալները: Նրա նպատակն էր փոխանցել պատմական ճշմարտությունը՝ առանց այն ճոխացնելու: «Կարգավ» բառը (խս. 3) թարգմանված է հունարեն ***«կաթեքսես»*** բառից, որը նշանակում է հաջորդականություն և կարգ: Այն պարտադիր կերպով չի նշանակում ժամանակագրական հաջորդականություն, այլ՝ փաստերի տրամաբանական և համակարգված համաձայնեցում: «Ստուգություն» բառը (խս. 4) հունարեն «ասֆա՛լեյա» բառից է, որը նշանակում է հաստատունություն, կայունություն և հստակություն: Ղուկասը գրում էր իր Ավետարանը, որպեսզի Թեոփիլեն լիարժեք վստահություն ունենար այն ամենի վերաբերյալ, ինչ ուսուցանել էին իրեն:

2. Գրելով Գործք առաքելոց գիրքը՝ Ղուկասը սկսում է այն ներածությամբ, որը նման է իր Ավետարանի ներածությանը: Ինչպե՞ս է Գործք 1.3-ը ցույց տալիս, որ Ղուկասը, իր համոզմամբ, պատմական փաստ էր արձանագրում՝ գրելով հարության մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ապացույցներ» բառը թարգմանված է հունարեն ***«տեկմերիոն»*** բառից, որը կարելի է թարգմանել նաև որպես «համոզիչ ապացույց» կամ «պարզ ցուցումներ»: Նոր կտակարանում գրված է Քրիստոսի հայտնվելու տասներեք դեպք՝ Իր հարությունից հետո: Եթե Քրիստոսը հայտնվեր միայն մեկ մարդու՝ մեկ անգամ և կարճ ժամանակով, դա հնարավոր կլիներ կասկածի ենթարկել, սակայն քառասուն օրվա ընթացքում մի քանի անգամ բազմաթիվ մարդկանց հայտնվելը հաստատում է առաջին աշակերտների վկայությունը: «Աստծո արքայության համար խոսելով» արտահայտությունը խիստ

կարևոր է: Քրիստոսը պարզապես չէր հայտնվում և անհայտանում: Նա ժամանակ էր անցկացնում աշակերտների հետ և սովորեցնում էր նրանց այնպես, ինչպես Իր մահից առաջ: Առաքյալները և առաջին աշակերտները չէին հիմնավորում իրենց վկայությունը ուրվական հիշեցնող երևույթներ տեսնելու վրա: Նրանց հիմքը հարություն առած Քրիստոսի հետ ունեցած իրական, անձնական շփումն էր (կարդացե՛ք նաև Ղուկաս 24.27):

3. Գործք 10.38-42-ում գրված է Պետրոս առաքյալի քարոզը՝ ուղղված այն մարդկանց, ովքեր լինելու էին առաջին քրիստոնյա նորադարձները: Կարդացե՛ք այս հատվածը և հետևե՛ք առաքյալի դատողություններին՝ Քրիստոսի հարության պատմական լինելու վերաբերյալ խոսքեր 40-42-ում:

ա. Աստված Հ_____ տվեց Նրան Ե_____ օրը (խս. 40): Սրանով Աստված հաստատեց Նազովրեցի Հիսուսի Անձը և Նրա կատարած աշխատանքը (Հռոմեացիների 1.4): Ամբողջ քրիստոնեությունը հիմնվում է այս ճշմարտության վրա: Ահա թե ինչու է հարությունն այդքան հաճախ ազդարարվում Նոր կտակարանում:

բ. Եվ Հ_____ արեց Նրան (կամ՝ «տեսանելի դարձրեց») (խս. 40): Քրիստոսի հայտնվելը Աստծո ողորմածության դրսևորումն էր Իր ժողովրդի հանդեպ:

գ. Ոչ թե ամբողջ ժողովրդին, այլ Աստծուց առաջագույն Ը_____ Վ_____ (խս. 41): Ինչպես և Նրա երկրային ծառայության բոլոր հրաշքները, Քրիստոսի հայտնվելու դեպքերը Նրա հարությունից հետո գտնվում էին Աստծո գերիշխան առաջնորդության ներքո և ունեին հատուկ նպատակ, որը Իր Եկեղեցին կառուցելն էր: Քրիստոսը չհայտնվեց անհավատներին՝ Իրեն արդարացնելու համար: Այնուամենայնիվ, սա տեղի կունենա Նրա երկրորդ գալուստի ժամանակ:

դ. Մեզ, որ Կ_____ և Խ_____ Նրա հետ Նրա մեռելներից հարություն առնելուց հետո (խս. 41): Քրիստոսը չհայտնվեց որպես եթերային ուրվական կամ անցողիկ տեսիլք. Նա հաղորդակցվեց Իր ժողովրդի հետ և տվեց նրանց հստակ ապացույցներ Իր մարմնով հարության մասին (Հովհաննես 20.26,27, 21.9-14):

ե. Եվ պատվիրեց մեզ Վ_____ դնել (խս. 42): Այս արտահայտությունը թարգմանված է հունարեն ***«դիամարտուրոմայ»*** բառից, որը նշանակում է «վկայել մեծ նախանձավորությամբ, լրջությամբ և նույնիսկ՝ խստությամբ»:

զ. Որ Ինքն է Աստծուց Ս_____ Դ_____ մեռելներին և կենդանիներին (խս. 42): Հարությունը՝ ապացույց է, որ Քրիստոսը Փրկիչ է (Գործք 4.12), Տեր է (Գործք 2.36) և Դատավոր է (Գործք 17.31):

է. Ինչպե՞ս է այս հատվածը ցույց տալիս, որ Պետրոսը դիտարկում էր Քրիստոսի հարությունը որպես փաստացի պատմական իրադարձություն:

_____

_____

_____

_____

4. Ա Կորնթացիների 15.3-9-ում գրված է ևս մեկ վկայություն, որը հաստատում է հարության իսկությունը: Լրացրե՛ք բաց թողնված հատվածներն այն մարդկանց անուններով, որոնք տեսել են հարություն առած Քրիստոսին՝ համաձայն Պողոսի թվարկման:

ա. Կ_____ (խս. 5): Խոսքը Պետրոսի մասին է (Հովհաննես 1.42): Քրիստոսի հայտնվելու այս դեպքը, որի մասին գրված է Ղուկաս 24.34-ում, տեղի ունեցավ Քրիստոսի հարության օրը:

բ. Տ_____ (խս. 5): Թեև Հուդան այլևս առաքյալների հետ չէր, և նրանք արդեն տասնմեկն էին, բայց դեռ «տասներկուսն» էին կոչվում: Հիսուսը մի քանի անգամ հայտնվեց Իր աշակերտներին հարություն առնելուց հետո (կարդացե՛ք խս. 7), և սա այդ դեպքերից մեկն է: Այս դեպքը տեղի ունեցավ հարության երեկոյան, և այս մասին գրված է Ղուկաս 24.36-43 և Հովհաննես 20.19-23 հատվածներում:

գ. Հ_____ Հ_____ ավելի եղբայրներին մեկ անգամ (խս. 6): Հավանաբար, սա հղում է Գործք 1.6-11 խոսքերին: Այն, որ Քրիստոսը հայտնվեց հինգ հարյուր վկաների մեկ անգամ (նույն ժամանակ և նույն վայրում), խիստ անհավանական է դարձնում շփոթմունքի կամ զգայախաբության վարկածը: Համաձայն Հին կտակարանի օրենքի՝ «երկու կամ երեք վկաների բերանով հաստատվի բանը» (Երկրորդ Օրինաց 19.15): Այն փաստը, որ այդ հինգ հարյուր վկաների մեծ մասը դեռ ողջ էին Պողոսի գրելու ժամանակ և կարող էին հաստատել դա, է՛լ ավելի է հաստատում Պողոսի փաստարկը:

դ. Հակոբին (կամ՝ Հակոբոսին), (խս. 7): Խոսքը Հիսուսի խորթ եղբոր մասին է (Մատթեոս 13.55): Մինչև հարությունը նա չէր հավատում Հիսուսի մեսիական հայտարարություններին (Հովհաննես 7.5), սակայն հարությունից հետո նա միացավ առաքյալներին (Գործք 1.14) և դարձավ առաջին քրիստոնյաների ամենաակնառու առաջնորդներից մեկը (Գործք 15.13 և այլն):

ե. Մի Վ_____ (խս. 8): Այս բառը հունարեն ***«էկտրոմա»*** բառն է, որը վերաբերում է վիժմանը կամ մահացած ծնունդին: Պողոսը առաջին տասներկու աշակերտների թվում չէր, ովքեր քայլում էին Քրիստոսի հետ Նրա երկրային ծառայության ընթացքում: Նա դարձի եկավ ավելի ուշ, երբ Քրիստոսը հանդիպեց նրան Դամասկոսի ճանապարհին (Գործք 9.3-6,17):

զ. Ձեր բառերով բացատրե՛ք, թե ինչպես է այս հատվածը ցույց տալիս, որ Պողոսը հարությունը համարում էր փաստացի պատմական իրադարձություն:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թվարկելով հարությունից հետո Քրիստոսի հայտնվելու դեպքերը ժամանակագրական հաջորդականությամբ՝ Պողոս առաքյալը ցույց տվեց, որ ինքը դիտարկում էր Քրիստոսի հարությունը որպես փաստացի պատմական իրադարձություն, որը հաստատվում էր ականատեսների կողմից:

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

Մենք կշարունակենք խոսել Քրիստոսի հարության մասին, բայց մինչ այդ օգտակար կլինի դիտարկել մի շարք պատմական իրադարձություններ այնպես, ինչպես դրանք նկարագրված են Սուրբ գրքում:

Հիսուսի մահվան երրորդ օրվա առավոտն էր: Կանայք երկչոտությամբ գնում էին դեպի այն պարտեզը, որտեղ Քրիստոսի մարմինը գերեզմանի մեջ էր դրվել: Նրանք գնում էին ոչ թե հույսով, այլ խղճահարությամբ: Նրանք միայն ուզում էին պատվել իրենց սիրելի Հիսուսի մարմինը պատշաճ թաղումով: Նրանց խոսակցությունը սահմանափակվում էր աննշան կազմակերպչական հարցերով, օրինակ՝ «Ո՞վ կգլորի քարը» (Մարկոս 16.2-4): Հարությունը՝ վերջին բանն էր, ինչի մասին նրանք մտածում էին: Այնուամենայնիվ, նրանց խղճահարությունը վերածվեց վախի, վախը՝ անմար հույսի, իսկ հույսը՝ անասելի և փառավոր ուրախության: Նրանք տեսան գլորված քարը և դատարկ գերեզմանը և լսեցին Բարի լուրի ավետումը հրեշտակներից. «Ինչո՞ւ եք կենդանին մեռելների մեջ որոնում: Այստե՛ղ չէ, հարություն առավ» (Ղուկաս 24.5-8):

Կանայք արագ հեռացան գերեզմանից «վախով և մեծ ուրախությամբ» (Մատթեոս 28.8): Նրանք վազեցին՝ պատմելու Նրա աշակերտներին, բայց նրանց վկայությունը ցնորք երևաց այն մարդկանց, ովքեր պետք է հավատային (Ղուկաս 24.11): Դրանից հետո, առանց հույսի՝ հուսալով, Պետրոսը և Հովհաննեսը վազեցին դեպի դատարկ գերեզմանը: Կարճ և շփոթեցնող ստուգումից հետո նրանք վերադարձան մյուսների մոտ՝ առանց որևէ հստակ տեղեկության, «որովհետև տակավին չգիտեին գիրքը, թե պետք է Նա մեռելներից հարություն առնի» (Հովհաննես 20.9):

Արագ հեռանալով՝ նրանք թողեցին լաց լինող Մարիամ Մագդաղենացուն, ով առաջինը տեսավ հարություն առած Տիրոջը: Նա պատվեր ստացավ՝ ևս մեկ անգամ վերադառնալ կասկածող աշակերտների մոտ և կրկին հաստատել Քրիստոսի հարությունը (Հովհաննես 20.11-18): Քրիստոսը երկրորդ անգամ հայտնվեց գերեզմանից վերադարձող կանանց (Մատթեոս 28.9,10), իսկ հետո՝ Կղեոպասին և մեկ այլ աշակերտի Էմմաուսի ճանապարհին (Ղուկաս 24.13-32): Դրանից հետո Նա հայտնվեց միայն Պետրոսին (Ղուկաս 24.34), և երկու անգամ՝ տասներկու աշակերտներին, սկզբում՝ առանց Թովմասի (Հովհաննես 20.19-25), իսկ հետո՝ նրա հետ (Հովհաննես 20.26-29): Նա նույնիսկ հայտնվեց Իր անհավատ խորթ եղբայր Հակոբոսին (Ա Կորնթացիների 15.7), որի կյանքն այնպես փոխվեց այդ հանդիպումից հետո, որ նա դարձավ առաքյալների թիմի անդամ (Գործք 1.14) և Երուսաղեմի եկեղեցու սյուներից մեկը (Գործք 15.13 և այլն): Ի վերջո, Նա հայտնվեց «մի վիժածի» (Ա Կորնթացիների 15.8)՝ Տարսոնացի Սողոսին (հետագայում՝ Պողոս), Դամասկոսի ճանապարհին (Գործք 9.3-19): Գրեթե ավելորդ է գրել այս հանդիպման և դրա ազդեցության մասին: Այն մարդը, ով որոշում էր կայացրել կործանել քրիստոնեությունը, դարձավ դրա ամենակրակոտ քարոզիչը և պաշտպանը (Գործք 9.1,2, Ա Կորնթացիների 15.10):

Ի վերջո, մենք ունենք Սուրբ գրքի հաստատ խոսքը, որ համբարձվելուց առաջ մեր Տերը հայտնվեց վկաների մեծ բազմության՝ թե՛ անհատների, և թե՛ «հինգ հարյուրից ավելի եղբայրների՝ մեկ անգամ» (Ա Կորնթացիների 15.6):

Գլուխ 22. Հարություն. մեր հավատքի հիմքը

ՀԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԼԻՆԵԼԸ

Այս գլուխն ամենակարճն է մեր ուսումնասիրության մեջ, բայց և ամենակարևորներից մեկը, քանի որ ներկայացնում է հավատացյալների համոզմունքները Քրիստոսի և Նրա հարության վերաբերյալ:

Քրիստոնեության թշնամիները ճիշտ են վարվում՝ կենտրոնացնելով իրենց հարձակումները Քրիստոսի պատմական հարության վրա, քանի որ, ինչպես Պողոսը մատնացույց է անում Ա Կորնթացիների 15-րդ գլխում, մեր հավատքը լիովին կախված է դրանից: Եթե Քրիստոսը հարություն չի առել, մեր հավատքն ունայն կամ դատարկ է (խս. 14,17): Ավելին՝ դրանից տրամաբանորեն հետևում է, որ քարոզելով հարությունը՝ մենք Աստծո կեղծ վկաներ ենք, քանի որ վկայում ենք, որ Նա հարություն է տվել Քրիստոսին մեռելներից, այնինչ, Նա չի արել դա (խս. 15): Ի վերջո, եթե Քրիստոսը հարություն չի առել մեռելներից, մենք զավեշտալի կերպով վատնում ենք մեր կյանքը. մենք անտեղի նեղություններ ենք կրում և ատելի ենք կեղծ մարգարեի պատճառով, ով չունի փրկելու զորություն: Ինչպես գրում է Պողոս առաքյալը՝ «Եթե միայն այս կյանքում ունենք հույս Քրիստոսի վրա, ամեն մարդկանցից ավելի ողորմելի ենք» (խս. 19):

Մեր իսկ խոստովանությամբ, հարությունը՝ ամեն ինչ է քրիստոնեական կյանքի համար: Եթե Քրիստոսը հարություն չի առել, մեր հավատքը կեղծ է: Այդ իսկ պատճառով, լավ կլինի, որ մի շատ կարևոր հարց տանք. «Որտեղի՞ց գիտենք, որ Քրիստոսն իրականում հարություն է առել»: Հաջորդ երկու գլուխներում մենք կթողնենք ուսումնական ձեռնարկի ձևաչափը, որպեսզի դիտարկենք երկու կարևոր, բայց հիմնովին տարբեր միջոցներ, որոնցով մենք համոզվում ենք Քրիստոսի հարության մեջ: Այն ***հայտնվում*** է մեզ Սուրբ Հոգու լուսավորող և վերածնող աշխատանքի շնորհիվ և ***հաստատվում*** է այս իրադարձության պատմական վկայության միջոցով: Առաջինը լիովին անփոխարինելի է: Երկրորդը քրիստոնեական հավատքի ազդեցիկ հաստատություն է և արդյունավետ միջոց՝ անհավատ աշխարհի հետ երկխոսություն վարելու համար:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բողոքական եկեղեցին հաճախ փորձում է հաստատել իր հավատքը հարության հանդեպ՝ մատնացույց անելով դատարկ գերեզմանը, այն, որ Քրիստոսի թշնամիները չկարողացան գտնել Նրա մահացած մարմինը, փոփոխությունը Նրա աշակերտների մեջ և շատ այլ պատմական և իրավական ապացույցներ: Այնուամենայնիվ, թեև այդ փաստարկները ցույց են տալիս, որ քրիստոնեական հավատքն անտրամաբանական կամ հակապատմական չէ, դրանք չպետք է դիտարկվեն որպես քրիստոնեական հավատքի ***հիմք*** կամ ***հենարան***: Մենք ցույց կտանք դա հետևյալ փաստերի միջոցով:

Առաջինը՝ առաքյալները չէին օգտագործում այս տեսակի փաստարկներ իրենց քարոզի մեջ: Նրանք ձգտում էին ոչ թե ապացուցել հարությունը, այլ՝ հռչակել այն (Գործք 4.2,33, 17.18, 24.21): Նրանց վստահությունը հիմնված չէր ազդեցիկ փաստարկների վրա, այլ՝ Ավետարանի փրկարար զորության: Ահա թե ինչ գրեց Պողոս առաքյալը Կորնթոսի եկեղեցուն ուղարկվող իր առաջին նամակում.

> *«Որովհետև խաչի խոսքը կորածների համար հիմարություն է, բայց մեզ՝ փրկվածներիս համար, Աստծո զորությունն է... Եվ որովհետև հրեաները նշան են ուզում, և հույներն իմաստություն են խնդրում, մենք էլ խաչյալ Քրիստոսը քարոզում ենք հրեաներին՝ գայթակղություն, և հույներին՝ հիմարություն: Բայց այն կանչված հրեաներին և հույներին Քրիստոսը քարոզում ենք՝ Աստծո զորություն և Աստծո իմաստություն» (1.18,22-24):*

«Եվ ես էլ, եղբայրնե՛ր, որ ձեզ մոտ եկա, ոչ թե խոսքի կամ իմաստության գերազանցությամբ եկա՝ Աստծո վկայությունը ձեզ պատմելու: Որովհետև միտքս չէի դրած մի ուրիշ բան գիտենալ ձեր մեջ, բայց միայն Հիսուս Քրիստոսին, և այն էլ՝ խաչվածին: Եվ ես տկարությամբ և վախով և շատ դողով եղա ձեզ մոտ: Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ Հոգու և զորության ապացուցությամբ (կամ՝ ցուցադրմամբ), որ ձեր հավատքը մարդկանց իմաստությամբ չլինի, այլ՝ Աստծո զորությամբ» (2.1-5):

Երկրորդը՝ Եկեղեցու պատմության մեջ քրիստոնեությանը դարձի եկածների ճնշող մեծամասնությունը՝ ներառյալ ամենաակնառու մտավորականները, չեն եկել հավատքի՝ ուսումնասիրելով հարության պատմական և իրավական ապացույցները, այլ՝ լսելով հարության հռչակումը:

Երրորդը՝ եթե մեր հավատքը հարության հանդեպ հիմնված է պատմական և իրավական ապացույցների վրա, ինչպե՞ս կարող ենք բացատրել անթիվ հավատացյալների կյանքը, ովքեր ապրել են իրենց հավատքով և մահացել են դրա համար՝ չունենալով նույնիսկ աննշան գիտելիքներ այդ ապացույցների մասին: Ինչպե՞ս մենք կարող ենք բացատրել ցեղային հասարակարգերում քրիստոնեության դարձած մարդկանց վարքը, ովքեր հազիվ են կարողանում կարդալ և չեն կարող ներկայացնել որևէ պատմական փաստարկ հարության մասին, բայց ավելի շուտ պատրաստ են կրել ամենից արհամարհական հալածանքները և նույնիսկ նահատակվել, քան ուրանալ այն հավատքը, որը նրանք չեն կարող տրամաբանորեն պաշտպանել: Այս ճշմարտությունների լույսի ներքո մենք պետք է եզրակացնենք, որ թեև հարության պատմական և իրավական ապացույցներն ***օգտակար*** են շատ առումներով, դա հարության հանդեպ մեր հավատքի ***հիմքը չէ***:

Այդ դեպքում, ո՞րն է հարության հանդեպ հավատացյալի համոզմունքների հիմքը: Որտեղի՞ց նա գիտի, որ Քրիստոսը հարություն է առել: Աստվածաշնչում մենք պարզորեն տեսնում ենք այս հարցի պատասխանը: Հարության հանդեպ գիտելիք և անսասան հավատք ունենալու համար մենք պարտական ենք Սուրբ Հոգու վերածնող և լուսավորող աշխատանքին: Մեր համոզմունքները Հիսուս Քրիստոսի հարության և քրիստոնեության վավերականության վերաբերյալ գերբնականորեն տրվում են մեզ վերստին ծնվելու պահին (Հովհաննես 3.3): Մենք գիտենք, որ Քրիստոսը հարություն է առել մեռելներից, քանի որ Սուրբ Հոգին լուսավորել է մեր միտքը, որ հասկանանք Սուրբ գրքի ճշմարտությունը, քանի որ այն վկայում է Քրիստոսի մասին (Հովհաննես 5.39, Ա Հովհաննես 5.6-10): Կարճ ասած՝ մենք հավատում ենք, քանի որ Սուրբ Հոգին վերածնում է մեր սիրտը՝ փոխանցելով հավատք և սեր Քրիստոսի հանդեպ, Ով հայտնվել է մեզ: Պողոս առաքյալը նկարագրում է Հոգու այս հրաշագործ աշխատանքը Բ Կորնթացիների 4.6-ում.

«Որովհետև Աստված, որ ասաց, թե «Խավարից լույս ծագի», Ինքը մեր սրտերի մեջ ծագեցրեց՝ Աստծո փառքի գիտության լուսավորությունը տալու համար Հիսուս Քրիստոսի դեմքում»:

Այն մարդիկ, ովքեր վերստին ծնվել են, այլևս չեն կարող ժխտել Հիսուս Քրիստոսի հարությունը, ինչպես որ չեն կարող ժխտել իրենց իսկ գոյությունը: Աստծո ինքնիշխան վճռով և Սուրբ Հոգու վկայությամբ այն անառարկելի ապացույց է դարձել նրանց համար (Մատթեոս 11.25): Ինչպես որ նկատեցին քրիստոնեական հավատքի հալածողները, «Քրիստոսի կրոնով վարակվածների համար այլևս բուժում չկա»[11]:

Այն ճշմարտությունները, որոնք մենք իմացանք, և՛ զգուշացնում, և՛ առաջնորդում են մեզ: Թեև ջատագովությունը (կամ՝ ապոլոգետիկան)[12] ունի իր տեղը, Երկնքի թագավորությունը տարածվում է հիմնականում Ավետարանի հռչակման միջոցով: Մարդիկ հավատքի են գալու ոչ թե ճարտար տրամաբանական փաստարկների պատճառով, այլ՝ երբ մենք հավատարմորեն հռչակենք Հիսուս Քրիստոսի կյանքը, մահը

[11] Ասում են, թե այսպես էին ասում խորհրդային զինվորները, որոնք փորձում էին հեռացնել քրիստոնյաներին կենդանի Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքից:

[12] Ջատագովությունը գիտական ճյուղ է, որի նպատակն է՝ պաշտպանել քրիստոնեական հավատքը: Դրա կողմնակիցներն օգտագործում են տրամաբանական փաստարկներ, որպեսզի ցույց տան սխալմունքները քրիստոնեության հակառակորդների հակափաստարկների մեջ:

և հարությունը: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ մեր առաքելությունը անօգուտ գործ կլինի, և մեր աշխատանքը ժամանակի վատնում կլինի, եթե Աստծո Հոգին չգործի՝ լուսավորելով մեզ լսողների մտքերը և վերածնելով նրանց սրտերը: Այս պատճառով, մենք պետք է հրաժարվենք ապավինել մարդկային իմաստության կոտրված գավազանին (Եսայի 36.6): Փոխարենը, մենք պետք է հարենք այն ճշմարտությանը, որ միայն Ավետարանն է Աստծո զորությունը, որը կարող է փրկել ամեն հավատացողի (Հռոմեացիների 1.16):

Գլուխ 23. Քրիստոսի հարության ապացույցը

Մարդու հավատքը Քրիստոսի հանդեպ կախված չէ այն բանից, թե արդյո՞ք նա կարող է թվարկել Քրիստոսի հարության պատմական կամ իրավական ապացույցները, և ո՛չ էլ այն բանից, թե արդյո՞ք նա կարող է պաշտպանել դրա վավերականությունը՝ օգտագործելով ջատագովության կամ դասական տրամաբանության սկզբունքները[13]: Այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ, որ քրիստոնեական հավատքը հռչակելը չի հակասում պատմությանը կամ դատողության բարձրագույն և անաղարտ գործածությանը: Ճշմարիտ քրիստոնեությունը ոչ մի դեպքում չի փորձում վերածել առասպելը խրատական պատմության, որպեսզի ինչ-որ բարոյական արժեքներ առաջադրի այս աշխարհում: Ընդհակառակը՝ քրիստոնեական հավատքը և համոզվածությունը Քրիստոսի հարության մեջ հիմնված են փաստացի պատմական իրադարձությունների վրա, որոնք միանշանակ կարելի է հիմնավորել՝ օգտագործելով նույն տեսակի ապացույցներ, որոնք օգտագործում են «աշխարհիկ պատմաբանները»:

Կան մարդիկ, ովքեր հերքում են քրիստոնեության պնդումները՝ դրանք ոչ պատմական կամ առասպելական համարելով: Նրանց կողմնակալ մոտեցումը թույլ չի տալիս, որ ճշմարտությունը խոսի իր փոխարեն: Ինչպես ասում է Ռոբերտ Ռեյմոնդը, նրանք անում են դա «խիստ վիճարկելի քննադատական և փիլիսոփայական հիմքերի վրա, որոնց միջոցով նրանք պարզապես ավելի հարմարավետ են զգում իրենց՝ հոգեբանական կամ կրոնական առումով»[14]: Այդպիսի մարդիկ վտանգավոր տրամաբանություն ունեն. նրանք նախապես որոշել են, որ հարությունն անհնար է. այնպես որ, ցանկացած ապացույց, որը խոսում է հօգուտ այդ իրադարձության, պետք է որ սխալական լինի, և ամեն մի պնդում դրա վավերականության մասին պետք է որ անմիտի եզրակացություն կամ խաբեբայի գյուտ լինի:

Մեղավոր մարդու հակակրանքն Ավետարանի հանդեպ ևս մեկ պատճառ է, որ առանց Աստծո շնորհքի և Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի՝ ոչ մի մարդ չի ընդունի Քրիստոսի Խոսքը: Մարդը կանտեսի այն ամենը, ինչը կկարողանա անտեսել, կաղավաղի այն ամենը, ինչը չի կարողանա անտեսել, և կհակառակվի այն ամենին, ինչը չի կարողանա աղավաղել: Այլ կերպ ասած, նա ավելի շատ ուժեր է ծախսելու ճշմարտությունը մերժելու համար, քան այն դեպքում, եթե պարզապես ընդուներ այն:

Թեև Քրիստոսի հարությունը հաստատող բոլոր ապացույցները դիտարկելը չի մտնում այս գրքի շրջանակների մեջ, այս գլխում մենք կուսումնասիրենք որոշ իրավական և տրամաբանական ապացույցներ, որոնք առավել օգտակար են թե՛ հավատացյալների համոզմունքների, թե՛ ճշմարտությունը որոնողների հարցումների համար:

ԿԱՆԽԱՍՎԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հիսուս Քրիստոսի մահը և հարությունը անկանխատեսելի իրադարձություններ չէին, որոնք հանկարծակի վրա հասան Նրա կյանքում: Գոյություն ունեին մարգարեություններ, որոնք պարզորեն ցույց էին տալիս, որ դրանք անհրաժեշտ էին Աստծո կամքի իրականացման համար: Սա ակնհայտ է Հիսուսի խոսքերից (Ղուկաս 24.25,26), որոնցում Նա խոսեց Իր կասկածամիտ աշակերտների հետ հարությունից հետո.

> *«Ո՛վ անմիտներ և թուլասիրտներ՝ հավատալու այն բոլոր բաներին, որ մարգարեները խոսեցին: Չէ՞ որ պետք էր, որ Քրիստոսը այս չարչարանքները քաշեր և Իր փառքը մտներ»:*

Մեսիայի հարությունը պարզորեն հայտնված էր Հին կտակարանի մարգարեություններում, որոնք գրվել էին Նրա գալուստից հարյուրավոր տարիներ առաջ: Դավիթը կանխասեց, որ Աստված չէր թող-

[13] Այս գաղափարով ես պարտական եմ հովիվ Չարլզ Լեյտերին

[14] *«Քրիստոնեական հավատքի նոր համակարգված աստվածաբանություն»*, էջ 581

նի Մեսիային գերեզմանում, և թույլ չէր տա, որ նրա մարմինը քայքայման ենթարկվեր (Սաղմոս 16.8-11): Եսայի մարգարեն, առաջ նայելով, տեսավ, որ Աստված մեծապես վարձատրելու էր Մեսիային այն բանից հետո, երբ Նա մինչև մահ չարչարվեր Իր ժողովրդի մեղքերի համար (Եսայի 53.12): Ինքը՝ Քրիստոսը կանխասեց Իր մահը և հարությունը Իր խաչելությունից շատ առաջ: Երբ անհավատ հրեաները նշան կամ ապացույց խնդրեցին՝ հարցնելով, թե ինչ իշխանությամբ Նա մաքրեց տաճարը, Նա հայտարարեց. «Քանդե՛ք այս տաճարը, և երեք օրում կկանգնեցնեմ այն» (Հովհաննես 2.19): Երբ դպիրները և փարիսեցիները խնդրեցին Նրան ավելի շատ ապացույցներ տրամադրել Իր մեսիական պնդումների համար, Նրա հանդիմանությունն ուղեկցվեց Իր ապագա հարության խոստմամբ.

> *«Չար և շնացող ազգը նշան է ուզում, և նշան չի տրվի նրան, բայց միայն Հովնան մարգարեի նշանը: Որովհետև ինչպես Հովնանը երեք օր և երեք գիշեր կետի փորում էր, այնպես մարդու Որդին երեք օր և երեք գիշեր երկրի սրտում կլինի» (Մատթեոս 12.39,40):*

Այս մարգարեությունները ցույց են տալիս, որ Քրիստոսի աշակերտները չհորինեցին հարությունը՝ հուսահատորեն փորձելով կենդանի պահել մեսիական երազանքը: Քրիստոսն այնքան պարզորեն և այնքան հաճախ էր խոսում այս մասին (Մատթեոս 16.21), որ նույնիսկ Նրա թշնամիները գիտեին, որ Նա կանխասել էր, որ կրկին հարություն էր առնելու.

> «Եվ հետևյալ օրը, որ ուրբաթից հետո է, քահանայապետերը և փարիսեցիները հավաքվեցին Պիղատոսի մոտ և ասացին. «Տե՛ր, հիշում ենք, որ այն մոլորեցուցիչը, դեռ կենդանի, ասում էր՝ երեք օր հետո հարություն կառնեմ»» (Մատթեոս 27.62,63):

ԴԱՏԱՐԿ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Հիսուսի մահից հետո ոչ միայն Նրա աշակերտների, այլև Նրա թշնամիների ուշադրությունն ամբողջությամբ ուղղված էր Նրա մարմինը գտնելուն: Այնպես որ, դատարկ գերեզմանը և չգտնված դին հարության ազդեցիկ ապացույցներ են: Առաջին իսկ օրվանից այն ամենը, ինչ անհրաժեշտ էր՝ քրիստոնեությունը ոչնչացնելու համար, Հիսուս Մարդու մահացած մարմինը ցուցադրելն էր: Հրեա առաջնորդները, որոնք պահանջեցին Նրա մահը, և հռոմեական իշխանությունները, որոնք խաչեցին Նրան, ստուգորեն գիտեին գերեզմանի գտնվելու վայրը և Նրա մարմինը դուրս բերելու բազմաթիվ հնարավորություններ ունեին: Եթե գերեզմանը դատարկ չլիներ, մեկ խիզախ քայլը կարող էր ապացուցել ամբողջ աշխարհին, որ Զատկի ուղերձը խաբեություն էր, իսկ առաքյալները նենգ հանցավորներ էին, որոնք առասպել էին հորինել: Քրիստոնեությունը կմահանար ծագման իսկ պահից: Ինչո՞ւ Նրա մարմինն այդպես էլ չցուցադրվեց:

Քննադատները հորինել են երեք տեսություն՝ ի պատասխան այս հարցին, և երեքն էլ անհեթեթ են: Առաջինը, որը հաճախ կոչում են «Ուշագնացության տեսություն» այն է, որ Հիսուսը չմահացավ հռոմեական խաչի վրա. Նա պարզապես կորցրեց գիտակցությունը և սխալմամբ մահացած կարծվեց: Հետագայում նրան դրեցին զով քարանձավ-գերեզմանը, որում Նա գիտակցության եկավ և փախուստի դիմեց: Այս տեսության դեմ առկա փաստարկները հիմնված են խաչելության բնույթի վրա. Նրա կողը նիզակով խոցվեց հռոմեացի զինվորի կողմից, և Նա մահացած հայտարարվեց ուշադիր մասնագիտական զննումից հետո (Հովհաննես 19.31-34): Նույնիսկ եթե Նա ինչ-որ կերպով կենդանի մնար այդ կտտանքներից հետո, հազիվ թե այնպիսի վիճակում լիներ, որ կարողանար գլորել գերեզմանի մուտքը փակող ծանր քարը: Ավելին՝ լավագույն դեպքում անհավանական է թվում, որ նման անձնավորությունը կարող էր փախչել Պաղեստինի անհայտ շրջաններից մեկը և ապրել անհայտության մեջ մինչև իր կյանքի ավարտը:

Երկրորդ տեսությունն այն է, որ աշակերտները գողացան Նրա մարմինը և թաղեցին ինչ-որ անհայտ վայրում: Այս տեսության դեմ առկա փաստարկները երկու հիմք ունեն: Առաջինը՝ հռոմեացի զինվորներն անզուգական մարտիկների համբավ ունեին. նրանց պատրաստության և արդյունավետության մասին առասպելներ էին հյուսում: Երկրորդը՝ Նոր կտակարանում գրված է այն մասին, որ Քրիստոսի մահվան

ժամանակ և դրանից հետո աշակերտները վախեցած էին: Գրված է, որ Քրիստոսի մահից անմիջապես հետո քահանայապետերը և փարիսեցիները խնդրեցին Պիղատոսին հսկել գերեզմանը հռոմեական պահակային զորախմբով, որպեսզի թույլ չտային աշակերտներին գողանալ Նրա մարմինը և հավերժացնել առասպելն այն մասին, որ Քրիստոսը հարություն էր առել (Մատթեոս 27.64): Խիստ անհավանական է, որ մի խումբ վախեցած աշակերտներ կարող էին հաղթահարել մի ամբողջ հռոմեական պահակախմբի և գողանալ Հիսուսի մարմինը: Աշակերտներն արդեն ցույց տվեցին իրենց անհամարձակությունը՝ թողնելով Քրիստոսին խաչելության ժամանակ (Մարկոս 14.27, Մատթեոս 26.56), իսկ նրանց միջի առաջնորդը՝ Սիմոն Պետրոսը, նույնիսկ չկարողացավ կանգնել մի աղախնի առջև, երբ վերջինս ճանաչեց, որ նա Քրիստոսի հետևորդներից էր (Ղուկաս 22.55-62): Հավասարապես անհավանական է, որ ամբողջ հռոմեական պահակախումբը քներ պարեկության ժամին, ինչպես ասացին քահանայապետերը (Մատթեոս 28.11-15): Իրականում, պետք է ավելի շատ հավատք ունենալ այս տեսության համար, քան հարությունն ընդունելու:

Երրորդ տեսությունն այն է, որ աշակերտները պարզապես գնացին սխալ գերեզմանի մոտ: Սա նույնպես խիստ անհավանական է, քանի որ գերեզմանը պատկանում էր Արիմաթեացի Հովսեփին, ով Սինեդրիոնի խորհրդի անդամ էր (Մատթեոս 27.57-61, Մարկոս 15.42-47, Ղուկաս 23.50-56): Նա և Նիկոդեմոսը, ով փարիսեցի էր և հրեաների իշխան (Հովհաննես 3.1), այն մարդիկ էին, ովքեր պատրաստեցին Հիսուսի մարմինը թաղման համար և դրեցին այդ գերեզմանի մեջ (Հովհաննես 19.38-42): Ավելին՝ գրված է, որ կանայք, ովքեր Գալիլեայից հետևում էին Հիսուսին, ստուգորեն գիտեին այդ գերեզմանի գտնվելու վայրը (Մատթեոս 27.61, Մարկոս 15.47, Ղուկաս 23.55): Եթե աշակերտները սխալ գերեզմանի մոտ գնացած լինեին, բնական է, որ թե՛ ընկերները, թե՛ թշնամիները կմատնանշեին այդ սխալը, կբերեին նրանց ճիշտ գերեզմանի մոտ, կբացեին Հիսուսի մարմինը և ցույց կտային այն[15]: Կրկին, այս տեսությունը միանում է մյուսներին՝ իր անհեթեթությամբ:

ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ՎԿԱՆԵՐ

Որպեսզի որևէ իրադարձություն համարվի պատմական և իրական, պահանջվում է երեք բան. (1) պետք է լինեն ականատեսներ, (2) այդ ականատեսները պետք է լինեն բավարար թվով, և (3) նրանք պետք է արժանահավատություն ու անկեղծություն ցուցաբերեն[16]: Ուշագրավ է, որ Սուրբ գրքի վկայությունը Հիսուս Քրիստոսի հարության մասին համապատասխանում է այս երեք պահանջներին:

Առաջինը՝ Սուրբ գրքի վկայությունը հիմնված է ականատեսների պատմությունների վրա, ովքեր անձամբ ներկա էին Քրիստոսի ծառայության, հարության և համբարձման ժամանակ: Նոր կտակարանի հեղինակներից յուրաքանչյուրը կարող է համաձայնել Պետրոս առաքյալի հետ, երբ Բ Պետրոս 1.16-ում նա հռչակեց.

> «Որովհետև մենք ոչ թե վարպետությամբ հնարված առասպելների հետևելով ցույց տվինք ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսի զորությունը և գալուստը, այլ՝ ականատես լինելով Նրա մեծափառությանը»:

Նոր կտակարանի հեղինակներն ակնհայտորեն ընդունում էին ականատես լինելու կարևորությունը: Տասնմեկին միանալու համար Մատաթիան պետք է լիներ Քրիստոսի կյանքի և ծառայության ականատեսը՝ սկսած Հովհաննեսի կողմից մկրտվելուց մինչև հարությունը և այն օրը, երբ Նա Երկինք համբարձվեց (Գործք 1.21-26): Գրելով իր Ավետարանը՝ Ղուկասը շատ ջանասիրաբար շեշտադրել է, որ վերստին կարգել է «այն բաների պատմությունը», որոնք «ավանդեցին սկզբից ականատես... լինողները» (Ղուկաս 1.1-4): Հովհաննես առաքյալը սկսում է իր առաջին նամակը (խս. 1-4)՝ տպավորիչ և պերճախոս կերպով հաստատելով, որ բոլոր առաքյալներն արտոնված են եղել ունենալու անձնական հարաբերություններ Որդու՝ Քրիստոսի հետ, և որ այդ հարաբերությունը ձևավորել է նրանց վարդապետության և քարոզման հիմքը.

[15] Ռոբերտ Ռեյմոնդ, *«Քրիստոնեական հավատքի նոր համակարգված աստվածաբանություն»*, էջ 566
[16] Հենրի Թեյսեն, *«Դասախոսություններ՝ համակարգված աստվածաբանություն թեմայով»*, էջ 246

«Այն, որ սկզբից էր, որ լսեցինք, որ մեր աչքերով տեսանք, որին նայեցինք, և մեր ձեռքերը շոշափեցին՝ կյանքի Բանի (կամ՝ Խոսքի) համար (և կյանքը հայտնվեց, և մենք տեսանք և վկայում ենք և պատմում ենք ձեզ հավիտենական կյանքը, որ Հոր մոտ էր և երևաց մեզ): Այն, որ տեսանք և լսեցինք, պատմում ենք ձեզ, որ դուք էլ հաղորդություն ունենաք մեզ հետ, և մեր հաղորդությունը՝ Հոր հետ և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ: Եվ սա գրում ենք ձեզ, որ ձեր ուրախությունը կատարյալ լինի»:

Ցանկացած անկողմնակալ դիտորդի համար պետք է պարզ լինի, որ առաքյալներն անձնական ու անմիջական գիտելիք ունեին Քրիստոսի կյանքի, մահվան և հարության մասին, և հասկանում էին, թե որքան կարևոր էր հաստատել այդ փաստը: Նրանք ուզում էին, որ ամբողջ աշխարհն իմանար, որ իրենք չէին մոլորվել ասեկոսեներով, այլ հպվել էին հարություն առած Քրիստոսի ձեռքերին, ոտքերին և կողին (Ղուկաս 24.39, Հովհաննես 20.27), հաղորդակցվել էին Նրա հետ (Ղուկաս 24.13-32,36-43, Հովհաննես 21.12-14) և ցուցումներ էին ստացել Նրանից (Ղուկաս 24.44-49): Ի վերջո, նրանք երկրպագել էին Քրիստոսին, երբ Նա Երկինք էր համբարձվել՝ անհայտանալով նրանց տեսադաշտից (Ղուկաս 24.50-53):

Երկրորդը՝ պատմական կամ իրական համարվելու համար, տվյալ իրադարձությունը պետք է բավարար թվով ականատեսներ ունենա: Պարզ ասած՝ որքան շատ են ականատեսները, այնքան ավելի արժանահավատ է իրադարձությունը: Այս սկզբունքը գրված է թե՛ Հին կտակարանի Օրենքում, թե՛ Նոր կտակարանում՝ Եկեղեցուն ուղղված պատվերների տեսքով: Ցանկացած իրադարձություն պետք է հաստատվի առնվազն երկու կամ երեք վկաների կողմից (Երկրորդ Օրինաց 17.6, 19.15, Մատթեոս 18.16):

Քրիստոսի հարության դեպքում այս պահանջը նույնպես բավարարված է: Աստվածաշունչը հայտնում է, որ եղել են հարյուրավոր արժանահավատ վկաներ, ովքեր հանդիպել են հարություն առած Քրիստոսին տարբեր իրավիճակներում և հանգամանքներում: Հարության կիրակի օրը Նա հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն պարտեզում (Հովհաննես 20.11-18) և մի քանի կանանց, որոնք վերադառնում էին գերեզմանից (Մատթեոս 28.9,10): Նույն օրը Նա միացավ Կղեոպասին և մեկ այլ աշակերտի, որոնք գնում էին Էմմաուս տանող ճանապարհով (Մարկոս 16.12,13, Ղուկաս 24.13-32): Մինչև այդ օրվա ավարտը, Նա նույնպես հայտնվեց Պետրոսին (Ղուկաս 24.34), իսկ հետո՝ տասը աշակերտներին՝ վերնատանը (Ղուկաս 24.36-43, Հովհաննես 20.19-25): Հետևյալ կիրակի օրը Նա հայտնվեց բոլոր տասնմեկ առաքյալներին և ունեցավ Իր հայտնի զրույցը կասկածամիտ Թովմասի հետ (Մարկոս 16.4, Հովհաննես 20.26-29, Ա Կորնթացիների 15.5): Դրանից հետո Նա հայտնվեց միանգամից ավելի քան հինգ հարյուր վկաների (Ա Կորնթացիների 15.5) և Իր խորթ եղբայր Հակոբոսին (Ա Կորնթացիների 15.7): Ինչ-որ ժամանակ, որը նշված չէ, Նա կրկին եկավ Պետրոսի, Հովհաննեսի և հինգ այլ աշակերտների մոտ, երբ նրանք ձկնորսությամբ էին զբաղված Գալիլեայի ծովում (Հովհաննես 21.1-14): Ի վերջո, Նա Երկինք համբարձվեց Ձիթենյաց սարից՝ Իր աշակերտների ներկայությամբ (Ղուկաս 24.50-53, Գործք 1.9-11):

Սուրբ գրքի վկայության լույսի ներքո անհնար է վարկաբեկել Քրիստոսի հարության պատմությունը՝ հիմնվելով այն սուտ կարծիքի վրա, որ հարությունը չէր ունեցել բավականաչափ ականատեսներ: Մեծ անգլիացի քարոզիչ Չարլզ Սփերջենը պերճախոս կերպով վկայում է այս մասին.

> «Մի՞թե ձեզ չի ապշեցնում այն փաստը, թե քանի՜ կարևորագույն պատմական իրադարձություններ են արձանագրվել պատմության մեջ, որոնք արժանահավատ են համարվում, բայց որոնց ականատեսների թիվը հավասար չէ Քրիստոսի հարության ականատեսների թվի նույնիսկ մեկ տասներորդին: Հայտնի պայմանագրեր կնքելը, որոնք ազդեցություն են թողել ազգերի վրա, արքայազների ծնունդներ, վարչապետների արտահայտություններ, դավադիրների ծրագրեր և մարդասպանների հանցագործություններ... բոլոր նման շրջադարձային պատմական իրադարձությունները երբեք չեն վիճարկվել, սակայն քչերն են ականատես եղել դրանց... Եթե այս փաստը (այսինքն՝ հարությունը) մերժվի, դա վերջ կդնի ամեն տեսակի վկայությանը, և մենք միտումնավոր կասենք այն, ինչ Դավիթն ասաց շփոթության մեջ. «Ամեն մարդ սուտ է»: Եվ այսօրվանից յուրաքանչյուրը պետք է այն աստիճան կասկածամիտ դառնա իր կողքինի հանդեպ, որ չհավատա Նրան, ինչ ինքը չի տեսել իր աչքերով: Հաջորդ քայլը կլինի սեփական զգայարանների վկայությանը կասկածելը, իսկ թե ուրիշ ինչ հիմարությունների մարդիկ կարող են դիմել դրանից հետո, ես չեմ էլ խիզախի կանխասել»[17]:

[17] *««Մետրոպոլիտեն Թեբերնեքլ»-ի ամբիոնը»*, հտ. 8, էջեր 218,219

Վերջինը՝ պատմական կամ իրական համարվելու համար, տվյալ իրադարձության ականատեսները պետք է արժանահավատություն և անկեղծություն ցուցաբերեն: Այլ կերպ ասած՝ նրանք պետք է ապացուցեն, որ իրենց կարելի է վստահել: Գաղտնիք չէ, որ քրիստոնեության ամբողջ պատմության ընթացքում անթիվ քննադատներ լարել են իրենց բոլոր ուժերը՝ Նոր կտակարանի վկայությունը վարկաբեկելու համար: Այնուամենայնիվ, նրանք այդպես էլ չեն կարողացել հերքել այդ վկայության անկեղծությունը և անվավեր ճանաչել այն՝ բարոյական կամ բարոյագիտական տեսանկյունից: Այնպես որ, նրանք ստիպված են եղել կենտրոնացնել իրենց հարձակումները ինքնախաբեության կամ մասսայական հիստերիայի վարկածի վրա:

Նրանք պնդում են, որ Քրիստոսի աշակերտները և առաջին դարում ապրող հրեաներից շատերը նախատրամադրված էին հարությանը հավատալուն. այդ իսկ պատճառով, նրանք պարզապես տեսան այն, ինչ ուզում էին: Այս տեսանկյան կողմնակիցներն այսպես են մտածում. առաջինը՝ հրեա ազգը տառապում էր Հռոմեական կայսրության անտանելի լծի ներքո: Այնպես որ, Հիսուսի օրերում ապրող հրեաները փափագում էին Մեսիայի գալստյանը և հեշտորեն կարող էին խաբվել: Բազմաթիվ հրեաներ արդեն հետևել էին կեղծ մեսիաների, որոնք հայտնվել էին ժողովրդի մեջ (Գործք 5.36,37), ինչն ապացուցում է, որ նրանք պատրաստ էին հավատալ գրեթե ամեն ինչի: Երկրորդը՝ Հիսուսը շատ անգամ էր կանխասել Իր ապագա հարությունը: Քանի որ աշակերտներն անչափ սիրում էին իրենց Ուսուցչին, նման մարգարեությունները կատարյալ հող էին ինքնախաբեության և մասսայական հիստերիայի առաջացման համար:

Գոյություն ունեն մի քանի փաստեր, որոնք հակադրվում են այս տարածված տեսություններին: Առաջինը՝ հրեա ազգի ճնշող մեծամասնությունը մերժեց Նազովրեցի Հիսուսին՝ որպես Մեսիայի: Նրա երկրային ծառայությունը և մահը գայթակղության քար էին նրանց համար (Ա Կորնթացիների 1.23): Իսկ հարության մասին լուրն արդեն անարգական դարձած խաչի ուղերձին ավելացնելը ավելի հրապուրիչ չէր դարձնի Հիսուսի մեսիական պնդումները հրեաների համար: Ավելին՝ այս տեսությունը հաշվի չի առնում այն փաստը, որ արդեն մի քանի տասնամյակ անց հավատացյալների ճնշող մեծամասնությունը բաղկացած էր հեթանոսներից, որոնք չունեին ոչ մի նախատրամադրվածություն՝ հավատալու Ավետարանի հետ կապված ցանկացած բանի: Ինչպես գրում են Լյուիսը և Դեմարեստը.

> «Այս իրադարձությունը տեղի ունեցավ սուր հակադրությամբ այն ամենի հանդեպ, ինչ նրանք (այսինքն՝ հրեաները) ակնկալում էին աստվածաբանական տեսանկյունից, և իսկական բախում առաջացրեց այդ ժամանակվա հասարակական աշխարհայացքի հետ: Հրեայի համար դա գլորման քար էր, իսկ հույնի համար՝ անմտություն, քանի որ այս իրողությունն ընդունելու համար նրանց աստվածաբանության և տիեզերաբանության մեջ պետք է Կոպեռնիկյան հեղափոխություն տեղի ունենար»[18]:

Երկրորդը՝ հրեաները և հեթանոսները միակը չէին, ովքեր նախատրամադրված չէին հավատալու հարությանը. նույնը միանշանակ կարելի է ասել նաև աշակերտների մասին: Մարիամ Մագդաղենացին առաջինը տեսավ Քրիստոսին հարությունից հետո: Այնուամենայնիվ, սկզբում, տեսնելով դատարկ գերեզմանը, նա կարծեց, թե ինչ-որ մեկը գողացել էր Տիրոջ մարմինը և անհայտ տեղ էր տարել (Հովհաննես 20.2,13,15): Նույնիսկ այն բանից հետո, երբ ի հայտ եկան լուրերը Քրիստոսի հարության մասին, աշակերտները դեռ չէին հավատում: Ղուկասը գրում է, որ Քրիստոսի հարության լուրը «ցնորք երևաց նրանց առջև» (Ղուկաս 24.10,11), իսկ Մարկոսը գրում է, որ նրանք «չհավատացին» (Մարկոս 16.11): Հարություն առած Քրիստոսի հետ առաջին հանդիպումների ժամանակ նրանք կարծեցին, թե Նա պարտիզպան էր (Հովհաննես 20.15), ուրվական կամ ոգի էր (Ղուկաս 24.37), կամ հասարակ ճամփորդ էր Էմմաուսի ճա-

[18] *«Ինտեգրատիվ աստվածաբանություն»*, հտ. 2, էջ 466: Նիկոլայ Կոպեռնիկոսը (1473-1543) առաջինն էր, ով առաջարկեց արևակենտրոն տիեզերաբանությունը՝ արեգակնային համակարգի այնպիսի մոդել, որում ոչ թե երկիրը, այլ արեգակն է դիտվում որպես արեգակնային համակարգի կենտրոն: Նրա տեսությունն արմատական շեղում էր «ստատուս քվո» համարվող աշխարհայացքից: Այն դարձավ ուղենիշ ժամանակակից գիտության պատմության մեջ, որը ներկայումս հայտնի է որպես «Կոպեռնիկյան հեղափոխություն»: Այսպիսով, ցանկացած տեսություն, որը նույնքան ծայրահեղ է համարվում, անվանվում է «Կոպեռնիկյան» կամ «Կոպեռնիկյան հեղափոխություն»:

նապարհին (Ղուկաս 24.13-16)։ Այս կոպիտ կամ նույնիսկ ծիծաղելի թյուրըմբռնումները հարթվեցին միայն այն ժամանակ, երբ Հիսուսը շարունակեց հայտնվել նրանց և մանրամասնորեն մեկնել նրանց համար Օրենքը և Մարգարեները (Ղուկաս 24.25-27,44-46)։ Մինչև Թովմասի կասկածների փարատվելը, նա անհրաժեշտ էր համարում տեսնել մեխերի հետքերը Քրիստոսի ձեռքերին, դնել իր մատն այդ վերքերի մեջ, ինչպես նաև՝ մտցնել իր ձեռքը Նրա կողը (Հովհաննես 20.24-29)։ Քրիստոսը նույնիսկ «նրանց անհավատությունը և քարասրտությունը հանդիմանեց» (Մարկոս 16.14) և կշտամբեց նրանց՝ որպես «անմիտներ և թուլասիրտներ՝ հավատալու այն բոլոր բաներին, որ մարգարեները խոսեցին» (Ղուկաս 24.25)։ Հազիվ թե այս փաստերը հաստատեն պնդումն այն մասին, որ աշակերտները նախատրամադրված էին հարությանը հավատալուն։

Վերջինը՝ խաբեությունը կամ զգայախաբությունը սովորաբար տեղի է ունենում առանձին անհատի հետ։ Այն միտքը, որ հարյուրավոր մարդիկ, որոնք պնդում էին, որ տեսել էին հարություն առած Քրիստոսին, միասին նույն զգայախաբությունն էին ունեցել, չափազանց անհավանական է։ Ավելին՝ մասսայական հիստերիան սովորաբար տեղի է ունենում ազդեցիկ քաղաքական կամ կրոնական հաստատությունների օժանդակությամբ, որոնք մարդկային զանգվածներ են կառավարում։ Այնուամենայնիվ, Քրիստոսի հարության և Ավետարանի դեպքում այդ օրերի ազդեցիկ հաստատությունները միաբան հակառակվեցին այդ ուղերձին և արեցին այն ամենը, ինչ կարող էին, որ վարկաբեկեին այն։ Այդ ուղերձի ջատագովները հիմնականում անկիրթ և անուսում մարդիկ էին (Գործք 4.13) և չունեին ոչ մի քաղաքական, կրոնական կամ տնտեսական ազդեցություն՝ իրենց գործի առաջխաղացմանը նպաստելու համար։

ՍՈՒՏ՝ ԱՌԱՆՑ ԴՐԴԱՊԱՏՃԱՌԻ

Գոյություն ունի հաճախ անտեսված, բայց խիստ համոզիչ փաստարկ հարության պատմական իրողության վերաբերյալ։ Առաքյալները նվիրված մնացին ամբողջ կյանքում՝ չնայելով իրենց կրած հալածանքներին և կորուստներին։ Եթե Քրիստոսը հարություն չէր առել, և առաքյալները պարզապես հորինել էին այդ պատմությունը, մենք պետք է որ կարողանայինք գտնել այդ խաբեության դրդապատճառը։ Ի՞նչ հույսեր նրանք ունեին, երբ տարածում էին այդ սուտը։ Այն, որ առաքյալները և առաջին աշակերտների ճնշող մեծամասնությունը մահացան որպես աղքատ, անարգված, հալածված և ատելի մարդիկ, պատմական փաստ է։ Ինչպես Պողոս առաքյալն ասաց՝ «Ինչպես ավելուք եղանք աշխարհին՝ ամենի ջնջոց լինելով մինչև հիմա» (Ա Կորնթացիների 4.13), և «Եթե միայն այս կյանքում ունենք հույս Քրիստոսի վրա, ամեն մարդկանցից ավելի ողորմելի ենք» (Ա Կորնթացիների 15.19)։

Եթե այդ մարդիկ հորինած լինեին հարության պատմությունը այն հատուկ պատճառներով, որոնցով մարդիկ նման ստեր են հորինում և տարածում՝ հարստության, համբավի և իշխանության համար, նրանք կհրաժարվեին դրանից կամ կուրանային դա, հենց որ տեսնեին, որ չէին հասնում իրենց ցանկալի նպատակին։ Այնուամենայնիվ, պատմությունն ապացուցում է, որ նրանց մեծամասնությունն ընտրեց սարսափելի հալածանքներ և նույնիսկ նահատակություն, բայց չուրացավ հավատքն Ավետարանի հանդեպ և Հիսուսի հարության հանդեպ, որի վրա էլ հիմնված է Ավետարանը։ Միակ պատճառը, թե ինչու նրանք ցուցաբերեցին նման տոկունություն և հաստատակամություն՝ բախվելով սաստիկ հալածանքների և մահվան, այն է, որ հարությունն իրական է, այն պատմական փաստ է, և առաքյալներն ու մյուս քրիստոնյաները պարզապես փոխանցում էին այն, ինչի ականատեսներն իրենք իրականում եղել էին։ Ինչպես գրում էր Հովհաննես առաքյալը. «Այն, որ տեսանք և լսեցինք, պատմում ենք ձեզ» (Ա Հովհաննես 1.3)։

Եվս մեկ կարևոր գործոն, որը պետք է հաշվի առնենք, վկայող կանայք էին։ Նոր կտակարանի ժամանակվա և մշակույթի մեջ կանայք օրինավոր վկաներ չէին համարվում դատական վարույթների ժամանակ։ Այնուամենայնիվ, բոլոր չորս Ավետարաններում կանայք ականառու դեր են կատարում՝ որպես Հիսուս Քրիստոսի հարության «առաջին վկաներ» (Մատթեոս 28.1-10, Մարկոս 16.1-8, Ղուկաս 24.1-12, Հովհաննես 20.1-18)։ Մարիամ Մագդաղենացին առաջին անձնավորությունն էր, որ վկայեց այլ մարդ-

կանց Նրա հարության մասին: Իրականում, նա պատկերվում է որպես հերոսուհի, քանի որ նա հավատաց և հնազանդվեց՝ չնայած առաքյալների անհավատությանը (Մարկոս 16.9-11, Հովհաննես 20.11-18): Այն կանայք, ովքեր կիրակի առավոտյան ուղեկցում էին Մարիամ Մագդաղենացուն դեպի գերեզմանը, հաջորդն էին, ովքեր տեսան Տիրոջը, և առաջին անձիք էին, որոնց Նա հանձնարարեց փոխանցել այդ լուրն ուրիշներին (Մատթեոս 28.8-10): Եթե Նոր կտակարանի հեղինակները փորձեին մոլորեցնել հոծ զանգվածներ, նրանք չէին օգտագործի կանանց՝ որպես գլխավոր վկաների: Փոխարենը՝ կընտրեին տղամարդկանց, որոնք շատ ավելի արժանահավատ կհամարվեին:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵՋ

Ամենամեծ խոչընդոտներից մեկը, որը Հիսուս Քրիստոսի հարությունը մերժող քննադատները պետք է հաղթահարեն, աշակերտների ակնհայտ վերափոխումն է: Եթե հարությունը պատմական իրողություն չէ, կամ ավելին՝ եթե այն կեղծիք է, անկարելի է բացատրել այն զարմանալի վերափոխումը, որը տեղի ունեցավ առաքյալների և հարության մյուս ականատեսների բնավորության և գործերի մեջ:

Մինչև հարությունը աշակերտները երկչոտ էին, վախկոտ էին և առաջնորդվում էին ինքնապահպանման զգացմամբ: Հիսուսի ձերբակալության ժամանակ նրանք թողեցին Նրան (Մատթեոս 26.56): Հիսուսի դատավարության ընթացքում նրանք ուրացան Նրան (Մատթեոս 26.69-75): Երեք օր շարունակ Նրա մահից հետո աշակերտները թաք էին կացել՝ լցված անհավատությամբ (Մարկոս 16.14, Հովհաննես 20.19) և հուսահատությամբ (Ղուկաս 24.17): Նրանց հետ գտնվող կանայք ավելի շատ տոկունություն և հույս էին ցուցաբերում, քան այն տղամարդիկ, որոնց Քրիստոսն անձամբ էր առաքյալներ կարգել Իր համար: Հենց կանայք էին, որ գնացին գերեզմանը կիրակի առավոտյան, մինչ տղամարդիկ վախեցած վերնատանն էին: Հենց կանայք առաջինը հավատացին և հռչակեցին հարությունը, մինչ տղամարդիկ խլացված էին կասկածներով:

Այնուամենայնիվ, հարությունից հետո նույն տղամարդիկ վերափոխվեցին՝ իրենց հավատքի անվեհեր և անսասելի պաշտպաններ դառնալով: Գործք առաքելոց գրքից իմանում ենք, որ նրանք ընդդիմացան այս աշխարհին և «շփոթեցրին (կամ՝ շուռ տվեցին)» այն (Գործք 17.6): Երբ հրեաների և հեթանոսների միջև գտնվող ամենաազդեցիկ կրոնական և քաղաքական հաստատությունները «պատվեր տվեցին, որ ամենևին չխոսեն, և ո՛չ էլ սովորեցնեն Հիսուսի անունով» (Գործք 4.18), աշակերտները մերժեցին նրանց հեղինակությունը՝ անդրդվելիորեն նվիրված մնալով Քրիստոսի Անձին և ուղերձին: Սա ակնհայտ է Պետրոսի և Հովհաննեսի հայտարարությունից Սինեդրիոնում, Գործք 4.19,20-ում.

> «Եթե արժան է Աստծո առջև, որ ձեզ ավելի ականջ դնենք, քան թե Աստծուն, դուք դատեք: Որովհետև մենք չենք կարող այն, որ տեսանք և լսեցինք, չխոսել»:

Թեև Քրիստոսի աշակերտները սպառնալիքներ և ծեծեր էին կրում, բանտարկվում և նահատակվում էին, նրանք հրաժարվում էին ուրանալ կամ դադարել հռչակելուց այն, ինչ իրենք «տեսել և լսել» էին (Ա Հովհաննես 1.1,3): Այդ տղամարդիկ և կանայք, որոնք խիզախությամբ էին լցվել Հիսուսի հարության պատճառով, տարածեցին Ավետարանը հայտնի աշխարհով մեկ՝ ընդամենը մեկ սերնդի ընթացքում (Կողոսացիների 1.5,6): Նրանք չունեին ոչ մի քաղաքական, կրոնական կամ տնտեսական ազդեցություն. նրանք չունեին կրթական աստիճաններ, բայց փոխեցին աշխարհն այն չափով, որին չի հավասարվել ոչ մի քաղաքական կամ ռազմական ծրագիր: Եթե Քրիստոսը հարություն չի առել, ինչպե՞ս կարելի է բացատրել սա: Ինչպե՞ս հասկանալ նրանց առաքելության հաջողությունը: Ռ. Ա. Տորրեյը գրում է.

> «Պետք է որ խիստ անսովոր մի բան տեղի ունենար՝ նման արմատական և ապշեցուցիչ վերափոխումը բացատրելու համար: Սա կարելի է բացատրել միայն հարությամբ և այն բանով, որ նրանք տեսել էին հարություն առած Տիրոջը»[19]:

[19] *«Աստվածաշունչը և իր Քրիստոսը»* («Old Tappan», Նյու Ջերսի, «Fleming H. Revell», տարեթիվը բացակայում է), էջ 92:

ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԴԱՐՁԸ

Հիսուս Քրիստոսի հետևորդների արմատական վերափոխումը քննադատների միակ խնդիրը չէ: Նրանք դեռ պետք է բացատրեն այն մարդկանց հետագա դարձերը, որոնք հակառակվում էին Հիսուսին և հալածում էին Նրան հետևող շարժումը: Եթե չլիներ հարությունը, ինչպե՞ս քրիստոնեությունը կարող էր ազդեցություն թողնել իր առաջին և մեծագույն հետևորդներից մի քանիսի վրա, որոնց թվում էին Հիսուսի խորթ եղբայրները և վատահամբավ տարսոնացի Սողոսը:

Աստվածաշունչը պարզորեն պնդում է, որ Հիսուսի կյանքի և ծառայության ընթացքում ո՛չ Հակոբոսը, ո՛չ Հուդան (Հիսուսի խորթ եղբայրները) չէին հավատում Նրան, այլ բացահայտ թշնամանքով էին տրամադրված Նրա Անձի և ծառայության հանդեպ (Հովհաննես 7.3-5): Իրականում, մեկ անգամ Հիսուսի ընտանիքը Նազարեթից Կափառնայում գնաց, որ բռներ Նրան, քանի որ նրանք մտածում էին, որ Նա «գժվել» էր (Մարկոս 3.21): Այնուամենայնիվ, հարությունից հետո երկու եղբայրներն էլ արմատապես դարձի եկան ապրեցին և առաջնորդներ դարձան Առաջին եկեղեցում[20]: Նրանց նվիրումը Քրիստոսին և հնազանդությունը Նրա իշխանությանը՝ երևում է նրանց նամակների սկզբում, որոնցում նրանք անվանում են իրենց Տեր Հիսուս Քրիստոսի ծառաները (կամ՝ ստրուկները, Հակոբոս 1.1, Հուդա 1): Նրանք վերափոխվեցին անհավատ հակառակորդներից հավատարիմ ստրուկների՝ հոժարությամբ հպատակեցնելով իրենց կյանքը Նրա իշխանությանը: Ինչպե՞ս է նման վերափոխումը հնարավոր՝ առանց ընդունելու Սուրբ գրքի վկայությունը. նրանք տեսե՞լ էին հարություն առած Քրիստոսին (Ա Կորնթացիների 15.7):

Առաջին եկեղեցու ևս մեկ թշնամին, որի դարձի գալը կշիռ է ավելացնում առաքյալների պնդումներին հարության մասին, Տարսոնացի Սողոսն է (հետագայում՝ Պողոս առաքյալ): Գործք առաքելոց գրքում և իր իսկ վկայությամբ, Սողոսը սկզբնական քրիստոնեության մեծագույն և ամենակատաղի թշնամիներից մեկն էր: Իր անգիտությամբ և անհավատությամբ, նա համարում էր, որ Նազովրեցի Հիսուսն ընդամենը խաբեբա և հայհոյիչ էր, և կարծում էր, որ Նրա բոլոր հետևորդներն արժանի էին բանտարկության և մահվան (Ա Տիմոթեոս 1.13): Առաջին անգամ մենք հանդիպում ենք Նրան Գործք առաքելոց գրքում, երբ նա ի սրտե հավանություն էր տալիս Ստեփանոսի նահատակությանը (Գործք 7.58, 8.1): Դրանից հետո նա գնում է քահանայապետի մոտ՝ «սպառնալիք և մահ շնչելով Տիրոջ աշակերտների վրա» (9.1), և նամակներ է խնդրում, «որ եթե մեկին գտնի այն ճանապարհին հետևող՝ մարդիկ կամ կանայք, նրանց կապած բերի Երուսաղեմ» (9.2): Այնուամենայնիվ, Դամասկոսի ճանապարհին Սողոսն արմատապես վերափոխվում է: Նա համոզվում է, որ Հիսուսը՝ Իսրայելի Մեսիան է: Մկրտվում է Հիսուսի անունով և անմիջապես սկսում է քարոզել Նրա մասին ժողովարաններում՝ ասելով, թե «Սա է Աստծո Որդին» (9.18-20): Մյուս հրեաները զարմանքով են արձագանքում.

> *«Չէ՞ որ սա էր, որ Երուսաղեմում հալածում էր այս անունը կանչողներին, և հենց նրա համար է այստեղ եկել, որ սրանց կապած տանի քահանայապետերի մոտ» (Գործք 9.21):*

Այդ դեպքերից հետո Հուդայի բոլոր եկեղեցիներում լուր տարածվեց, որ նա, ով մի ժամանակ հալածում էր և փորձում էր կործանել հավատքը, այժմ քարոզում և ազդարարում է այն (Գաղատացիների 1.22,23): Այնուամենայնիվ, Սավուղն այնքան դաժանաբար էր հալածել եկեղեցին, որ ոչ մի հավատացյալ չէր համարձակվում շփվել նրա հետ: Բոլորը վախենում էին նրանից, մինչև որ Բառնաբասը բերեց նրան առաքյալների մոտ և հաստատեց նրա վկայությունը (Գործք 9.26,27): Այսպես տարսոնացի Սողոսը՝ քրիստոնեական հավատքի մեծագույն թշնամին, դարձավ դրա մեծագույն պաշտպանը և քարոզիչը: Վիլյամ Նիլը գրում է.

> «Պատմականորեն անվիճարկելի փաստ է, որ Նազովրեցիների մոլեռանդ կեղեքիչը, որը հեռացավ Երուսաղեմից՝ «սպառնալիք և մահ շնչելով», մուտք գործեց Դամասկոս՝ մտովի տկարացած և մարմ-

[20] Հակոբոսը (Հակոբոս 1.1, Գործք 1.14, 12.17, 15.13 և այլն, Ա Կորնթացիների 9.5, 15.7, Գաղատացիների 1.19, 2.9) և Հուդան (Հուդա 1, Գործք 1.14, Ա Կորնթացիների 9.5):

նապես կուրացած, և կազդուրվելով՝ դարձավ այն համոզմունքների առաջատար կողմնակիցը, որոնց ձեռնամուխ էր եղել ոչնչացնելու»[21]:

Քանի որ քննադատները չեն կարող ժխտել Սողոսի դարձը և արմատապես վերափոխված կյանքը, նրանք պարտավոր են ողջամիտ բացատրություն առաջարկել դրա համար: Արդեն երկու հազար տարի է անցել, իսկ եկեղեցին դեռ սպասում է այդ բացատրությանը:

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Քրիստոնեության առաջին տարվա ընթացքում պատվելի փարիսեցի Գամաղիելը մեծ իմաստությամբ խոսեց Սինեդրիոնի հետ՝ Հիսուսի հետևորդների վերաբերյալ: Արժե մեջբերել նրա խոսքը.

«Ո՛վ Իսրայելցի մարդիկ, զգուշացե՛ք այս մարդկանց համար, թե ինչ պիտի անեք: Որովհետև այս օրերից առաջ Թեվդասը վեր կացավ՝ ասելով, թե ինքը մի բան է, որ թվով չորս հարյուրի չափ մարդիկ նրան հարեցին, որ ինքը սպանվեց, և ամենքն էլ, որ նրան հնազանդվել էին, ցրվեցին և ոչինչ եղան: Նրանից հետո Գալիլեացի Հուդան վեր կացավ աշխարհագրի օրերում և շատ ժողովուրդ քաշեց իր կողմը. նա էլ կորավ, և ամենքն էլ, որ նրան հնազանդվել էին, ցիրուցան եղան: Եվ հիմա ասում եմ ձեզ՝ հեռո՛ւ կացեք այդ մարդկանցից և թողե՛ք դրանց, որովհետև եթե այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է, կքանդվի, բայց եթե Աստծուց է, չեք կարող քանդել դա. միգուցե Աստծո դեմ կռիվ անող էլ գտնվեք» (Գործք 5.35-39):

Մինչև Հիսուս Քրիստոսի գալը երկու կեղծ մեսիաներ էին հայտնվել Իսրայելում, և նրանցից ամեն մեկը հետևորդներ էր շահել: Այնուամենայնիվ, նրանց մահից հետո նրանց հետևորդներն արագորեն ցրվել էին, և այդ շարժումները մարել էին: Այդ իսկ պատճառով, Գամաղիելը եզրակացրեց, որ եթե Նազովրեցի Հիսուսն ընդամենը մարդ էր, իսկ Նրա հարությունը խաբեություն էր, նրա հետևորդներն արժանանալու էին նույն ճակատագրին: Բացի այդ՝ Գամաղիելն իմաստուն կերպով եզրակացրեց, որ եթե հարության պատմությունը ճշմարիտ էր, այսինքն՝ Հիսուսը Մեսիան էր, այդ շարժումը կշարունակվեր, և կպարզվեր, որ դրան հակառակվողները պայքարում էին Աստծո դեմ: Վերջին երկու հազար տարվա ընթացքում պատմությունը կարծես թե հաստատում է Գամաղիելի փաստարկը:

Հիսուս Քրիստոսի հարության մեծագույն ապացույցներից մեկը քրիստոնեական հավատքի շարունակությունն է պատմության ընթացքում և ամբողջ աշխարհի ազգերի, ցեղերի և ժողովուրդների մեջ: Հարությունից ի վեր հարյուր միլիոնավոր մարդիկ վկայել են, որ անձնական հարաբերություններ ունեն Հիսուս Քրիստոսի հետ, և պնդել են, որ Նա շրջադարձային փոխել է իրենց կյանքը: Կարևոր է նշել, որ այդ մարդկանց խումբը չի սահմանափակվում որևէ ազգային, քաղաքական, տնտեսական կամ ակադեմիական ենթախմբով. ընդհակառակը, այն ընդգրկում է ամեն ազգության, հասարակական խավի և կրթական մակարդակի պատկանող մարդկանց: Առաջին եկեղեցին բաղկացած էր այնպիսի մարդկանցից, ովքեր այլ հանգամանքներում ոչ մի դեպքում չէին միաբանվի: Նրանց թվում էին հույներ և հրեաներ, թլփատվածներ և անթլփատներ, բարբարոսներ, սկյութացիներ, ստրուկներ և ազատներ, բայց Քրիստոսն ամենն էր և ամենի մեջ էր (Կողոսացիների 3.11): Նույնը կարելի է ասել քրիստոնեության մասին այսօր:

Նույնպես կարևոր է նշել, որ անթիվ տղամարդիկ, կանայք և երեխաներ, ովքեր հետևել են Քրիստոսին, մեծ զոհերի են գնացել դրա համար: Համաձայն որոշ հաշվարկների՝ մինչև օրս նահատակվել է ավելի քան հիսուն միլիոն հավատացյալ: Մյուսները պնդում են, որ այդ թիվը շատ ավելի մեծ է:

Բոլոր այս ապացույցներն առաջադրում են մի շարք մտածելու նյութ տվող հարցեր: Ինչպե՞ս կարելի է հիմնավորել նման նվիրումը և ինքնազոհաբերումը: Ինչպե՞ս կարելի է բացատրել եկեղեցու հարատևելը՝ չնայած անթիվ թշնամիների, որոնք ուխտել էին ոչնչացնել այն: Այս ամենը դրդում է մտածել, որ այն կիրակի առավոտյան, երբ պարզվեց, որ գերեզմանի քարը գլորված էր, իրականում ինչ-որ բան էր տեղի ունեցել:

[21] *«Նոր դար» Աստվածաշնչի մեկնություն.* Գործք առաքելոց, էջ 128:

Գլուխ 24. Քրիստոսի հարության բնույթը

Դիտարկելով Քրիստոսի հարության պատմական լինելը՝ այժմ կարևոր է ուսումնասիրել դրա նշանակությունը Սուրբ գրքի լույսի ներքո: Ի՞նչ բնույթ ունի հարությունը: «Հարություն» բառը լատիներենում ***«ռեսուրգերե»*** բայն է ***(«ռե»*** = «կրկին» + ***«սուրգերե»*** = «բարձրանալ»): Նոր կտակարանում օգտագործվում է հունարեն ***«անա՛ստասիս»*** բառը ***(«անա՛»*** = «վեր, կրկին» + ***«ստա՛սիս»*** = «կանգնել»):

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶԱՊԵՍ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ ՉԷՐ

Հին կտակարանում գերբնականորեն հարություն առան սարեփթացի այրու որդին (Գ Թագավորաց 17.17-24) և սունամացի կնոջ որդին (Դ Թագավորաց 4.18-37): Նոր կտակարանում հարություն առան Ղազարոսը (Հովհաննես 11.23-25,43,44), Հայրոսի աղջիկը (Մարկոս 5.41,42, Ղուկաս 8.54,55), երիտասարդը Նայինից (Ղուկաս 7.14,15), Տաբիթան (Գործք 9.36-43) և Եվտիքոսը (Գործք 20.7-12): Կարևոր է նշել, որ բոլոր այս մարդիկ, ովքեր հարություն առան մեռելներից, դեռ մահվան ենթակա էին, այսինքն՝ նրանք կրկին մահանալու էին: Քրիստոսի հարությունը տարբերվում էր այն առումով, որ Նա մահացավ մեղքի համար մեկ անգամ, բայց հավիտյան ապրում է և այլևս չի մահանալու: Ինչպես Նա հռչակեց Հայտնություն 1.18-ում. «...և կենդանին, և Ես մեռած էի և ահա կենդանի եմ հավիտյանս հավիտենից...»:

ՔՐԻՍՏՈՍԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՎ ՄԱՐՄՆՈՎ

Սուրբ գիրքը և ամբողջ ուղղադավան քրիստոնեությունը պարզորեն սովորեցնում են, որ Քրիստոսը հարություն առավ մարմնով: Նույն մարմինը, որը խաչվեց, պատանվեց և դրվեց գերեզմանում, հարություն առավ երրորդ օրը՝ համաձայն Գրքերի: Թեև այս հարություն առած մարմինը նույն մահացած մարմինն էր, այն նաև շատ տարբերություններ ուներ: Այն ցանվեց տկարության մեջ, բայց հարություն առավ զորությամբ:

1. Կարևոր է ճշտել, թե ինչ նկատի ունենք «հարություն» ասելով: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Հիսուսի հարությունը միայն հոգևոր չէր, այլև նյութական, ֆիզիկական և մարմնական: Հարություն էր առել Հիսուսի իրական մարմինը՝ Նրա միսը և ոսկրը: Ի՞նչ է սովորեցնում Ղուկաս 24.36-43-ը այս ճշմարտության մասին: Կարդացե՛ք այս հատվածը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. Ինչպե՞ս կարելի է մեկնել խոսքեր 36,37-ը: Արդյո՞ք Քրիստոսը տուն մտավ գերբնական ձևով: Ի՞նչ է սա սովորեցնում մեզ Նրա հարություն առած մարմնի մասին:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Համաձայն Հովհաննես 20.19-ի՝ աշակերտները հավաքված էին «փակված» դռներով տանը՝ «հրեաների վախից»: Այս փաստը, աշակերտների վախեցած արձագանքի հետ մեկտեղ, ցույց է տալիս, որ Հիսուսը ներս մտավ գերբնական ձևով, և որ Նրա հարություն առած մարմինը ենթարկվում էր այլ օրենքների: Այս ճշմարտությունը նույնպես երևում է, երբ Հիսուսը հանդիպեց երկու աշակերտների Էմմաուսի ճանապարհին, որտեղ Նա «աներևույթ եղավ նրանցից» (Ղուկաս 24.31): «Զարհուրած» և «վախեցած» բառերը թարգմանված են հունարեն ***«պտոե՛ո»*** և ***«Էմֆոբոս»*** բառերից: Երկու բառերն էլ խիստ ուժգին վախի իմաստ ունեն: Նրանք մտածեցին, որ անմարմին հոգի էին տեսնում:

բ. Համաձայն խոսքեր 39,40-ի՝ ի՞նչ ապացույց ներկայացրեց Հիսուսը, որ համոզեր Իր աշակերտներին, որ Ինքը հոգի չէր: Ի՞նչ է սա սովորեցնում մեզ Նրա հարություն առած մարմնի մասին:

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը երկու կարևոր պնդում արեց Իր հարություն առած մարմնի մասին. (1) որ նա միս և ոսկորներ ուներ, և (2) որ Նա անմարմին հոգի չէր, ինչպես որ նրանք սկզբում կարծեցին: Որպես ապացույց՝ Հիսուսն առաջարկեց Իր աշակերտներին տեսնել Իր ձեռքերն ու ոտքերը և նույնիսկ դիպչել: Այն, որ Քրիստոսի հարություն առած մարմինը դեռ կրում էր խաչելության սպիները, ապացուցում էր, որ այն իսկապես նույն խաչված մարմինն էր: Այն փաստը, որ Քրիստոսը մանրամասնորեն ապացուցեց, որ Ինքն ընդամենը հոգի չէր, ցույց է տալիս, որ Նրա՝ մարմնով հարության մասին վարդապետությունը անչափ կարևոր է:

գ. Ուրիշ ի՞նչ ապացույցներ ներկայացրեց Հիսուսը խոսքեր 41-43-ում, որպեսզի ցույց տար Իր աշակերտներին, որ Ինքը հոգի չէր: Ի՞նչ է սա սովորեցնում մեզ Նրա հարություն առած մարմնի մասին:

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսի հանկարծակի հայտնվելը աշակերտների միջև մեծ զարմանք առաջացրեց: Նրանք վստահ չէին իրենց տեսածի և այդ պահին տեղի ունեցածի վերաբերյալ: Սուրբ գիրքն ասում է, որ երբ նահապետ Հակոբն իմացավ, որ իր որդի Հովսեփը ողջ է, նա արձագանքեց գրեթե աշակերտների պես. «Նրա սիրտը նվաղեց, որովհետև չհավատաց նրանց» (Ծննդոց 45.26): Նրանց անհավատության պատճառով, Քրիստոսը նույնիսկ ավելի առաջ գնաց՝ ապացուցելու համար, որ թեև Իր մարմինը զարմանալի կերպով վերափոխվել էր, բայց այն նույն մարմինն էր, որը գամված էր խաչի վրա. Նա մի կտոր ձուկ խնդրեց և կերավ նրանց աչքի առջև:

2. Հովհաննես 20.19-23-ում կարդում ենք Հովհաննեսի պատմությունն այն մասին, որ Հիսուսը հայտնվեց աշակերտներին, երբ Թովմասը նրանց հետ չէր: Հաջորդ խոսքերում (խս. 24-29) գրված է այն մասին, որ Հիսուսը հայտնվեց բոլոր աշակերտներին, ներառյալ՝ Թովմասին: Կարդացե՛ք այս հատվածը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. Համաձայն խոսքեր 24,25-ի՝ ինչպե՞ս Թովմասն արձագանքեց, երբ մյուս աշակերտներն ասացին նրան, որ տեսել են Տիրոջը: Ինչո՞ւ է Թովմասի արձագանքը կարևոր:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թովմասն արձագանքեց կասկածանքով և անհավատությամբ, ինչն ապացուցում է, որ աշակերտները չէին ակնկալում, որ Քրիստոսը հարություն կառներ: Նրանք չէին կարող հորինել հարության պատմությունը՝ իրենց հույսերից դրդված, քանի որ, ակնհայտորեն, սկզբում իրենք էլ չէին հավատում դրան: Սա նույնպես ցույց է տալիս, որ նրանք դյուրահավատ մարդիկ չէին, որոնց կարելի էր համոզել ինչ-որ բանում՝ առանց բավարար ապացույցների: Աշակերտները չհավատացին նույնիսկ այն բանից հետո, երբ ոմանք սկսեցին խոսել Քրիստոսի հարության մասին: Ղուկասը գրում է, որ Քրիստոսի հարության լուրը «ցնորք երևաց» նրանց (Ղուկաս 24.9-11), իսկ Մարկոսը գրում է, որ նրանք «չհավատացին» (Մարկոս 16.11):

բ. Խոսք 26-ում Հիսուսը երկրորդ անգամ հայտնվեց աշակերտներին, երբ Թովմասը նրանց հետ էր: Համաձայն խոսքեր 27,28-ի՝ ինչ Հիսուսը պատվիրեց Թովմասին, և ինչպե՞ս Թովմասն արձագանքեց դրան: Ինչ է սա սովորեցնում մեզ Քրիստոսի հարության իրական լինելու և դրա բնույթի մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն փաստը, որ Հիսուսը պատվիրեց Թովմասին ստուգել Իր մարմինը, ցույց է տալիս երկու բան. (1) Թովմասը չէր տեսնում ինչ-որ պատրանք, այլ՝ իրական մարդու, որը կանգնած էր իր առջև, և (2) Հիսուսը հարություն էր առել նույն մարմնով, որով խաչվել էր. այն կրում էր խաչելության և նիզակի սպիները: Այն, որ Քրիստոսը հայտնվել էր նույն մարմնով, որով խաչվել էր, փոխեց Թովմասի հավատքը: Նա դադարեց պարզապես հավատալ, որ Հիսուսը նահատակված մարգարե էր, և հռչակեց Նրան արարչագործության Տեր և Աստված:

3. Ա Կորնթացիների 15.42-44-ում Պողոս առաքյալը ներկայացնում է տարբերությունները մահկանացու մարմնի և հարություն առած մարմնի միջև: Այս հատվածում մենք կսովորենք մի քանի ճշմարտություն Քրիստոսի երկրային մարմնի մասին՝ Իր մահից առաջ և Իր հարությունից հետո: Լրացրե՛ք բաց թողնված բառերը՝ համաձայն աստվածաշնչյան խոսքերի:

   ա. Մարմինը սերմվում է Ա_____ և հարություն է առնում Ա_____ (խս. 42): «Ապականությամբ» բառը թարգմանված է հունարեն ***«էն ֆտորա՛»*** արտահայտությունից, որը բառացիորեն նշանակում է «ապականության մեջ»: Քրիստոսի երկրային մարմինը ենթակա էր ծերանալու, քայքայման և մահվան: «Անապականությամբ» բառը թարգմանված է հունարեն ***«աֆտարսի՛ա»*** բառից, որը նշանակում է այնպիսի բան, ինչը ենթակա չէ ապականության: Քրիստոսի հարություն առած մարմինը ենթակա չէր քայքայման և մահվան. այն նախատեսված էր հավիտենության համար:

   բ. Մարմինը սերմվում է Ա_____ և հարություն է առնում Զ_____ (կամ՝ փառքով), (խս. 43): «Անարգանք» բառը թարգմանված է հունարեն ***«ատմի՛ա»*** բառից, որը նշանակում է «խայտառակություն» կամ «ամոթ»: Իր երկրային ծառայության ընթացքում Քրիստոսը չուներ «կերպարանք» և «վայելչություն» (Եսայի 53.2), իսկ խաչի վրա Նա կրեց մեծագույն ստորացումը (Փիլիպեցիների 2.8): Այնուամենայնիվ, Նրա մարմինը հարություն առավ զորությամբ (կամ՝ փառքով): Այս բառը թարգմանված է հունարեն ***«դո՛քսա»*** բառից, որը նշանակում է «փառք, պատիվ և մեծություն»:

   գ. Մարմինը սերմվում է Տ_____ և հարություն է առնում Զ_____ (խս. 43, NASB. «...այն սերմվում է տկարությամբ. այն հարություն է առնում զորությամբ». այս հատվածը բացակայում է հայերեն թարգմանության մեջ): «Տկարություն» բառը թարգմանված է հունարեն ***«ասթենեյա»*** բառից, որը կարող է թարգմանվել նաև «թուլություն» բառով: Մարմնավորման ժամանակ Քրիստոսը հագավ այնպիսի մարմին, որը ենթակա էր անկում ապրած մարդկանց բոլոր տկարություններին՝ քաղցին, ծարավին, ցավին, հիվանդությանը, տառապանքին և մահվանը (Հռոմեացիների 8.3): Այնուամենայնիվ, Նրա մարմինը հարություն առավ զորությամբ: «Զորություն» բառը թարգմանված է հունարեն ***«դունամի՛ս»*** բառից, որը նշանակում է «իշխանություն, կարողություն և ուժ»: Եբրայեցիների թղթի հեղինակը հայտնում է, որ այժմ Քրիստոսին պատկանում է «անվախճան կյանքի զորությունը» (Եբրայեցիների 7.16):

դ. Սերմվում է Շ_____ մարմին և հարություն է առնում Հ_____ մարմին (խս. 44): «Շնչավոր» բառը թարգմանված է հունարեն ***«պսյուքիկո՛ն»*** բառից, որը նշանակում է «վերաբերող բնական աշխարհին և բնութագրվող թուլությամբ, քայքայմամբ և մահվամբ»: «Հոգևոր» բառը թարգմանված է հունարեն ***«պնեվմատիկո՛ն»*** բառից, որը նշանակում է «վերաբերող երկնային աշխարհին և առանձնահատուկ ուժով և հավերժականությամբ»: Քրիստոսի հարություն առած մարմինը հակադրվում է շնչավոր (կամ՝ «բնական») մարմնին: Կարևոր է նշել, որ «հոգևոր մարմինը» չի նշանակում «աննյութական մարմին». խոսքը՝ վերափոխված և զորություն հագած բնական մարմնի մասին է, որը հարմար է հավիտենության և երկնային աշխարհի համար:

4. Փիլիպեցիների 3.21-ում կա շատ կարևոր հղում՝ Քրիստոսի հարություն առած մարմնին: Ի՞նչ է այն ցույց տալիս:

ա. Փ_____ Մ_____:

ՆՇՈՒՄՆԵՐ. Նույնպես կարելի է թարգմանել «փառքի մարմին» արտահայտությամբ: Խոսքը նույն մարմնի մասին է, որը խաչվեց տկարությամբ, բայց այժմ գոյություն ունի մեծարված և փառավորված վիճակում: Քրիստոսի երկրային պանդխտության ընթացքում Նրա աստվածության փառքը քողարկված էր Նրա մարդկային մարմնով, ու թեև Նա անմեղ էր, Նրա մարմինը ենթակա էր մահկանացու մարդու տկարություններին և մահվանը (Հռոմեացիների 8.3): Այնուամենայնիվ, հարությունից հետո Քրիստոսի մարմինն այլևս չէր քողարկում Նրա փառքը, այլ դրսևորում և ցուցադրում էր այն: Քրիստոսի հարություն առած մարմինը հակադրվում է մեր ներկա «խոնարհ մարմնին»:

Գլուխ 25. Քրիստոսի հարության նշանակալիությունը

Ինչո՞վ է նշանակալի այն, որ Հիսուսը հարություն առավ մեռելներից: Ի՞նչ է այն նշանակում այս աշխարհի, եկեղեցու, հավատացյալների և անհավատների համար: Այս գլխում կիմանանք, որ խաչի հետ միասին, Հիսուս Քրիստոսի հարությունը անվիճելիորեն մեծագույն իրադարձությունն է մարդկության պատմության մեջ և ամենանշանակալին՝ բոլոր մարդկանց համար:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ ՀԻՍՈՒՍԻՆ

Առաջին ճշմարտություններից մեկը, որ մենք պետք է հասկանանք Հիսուսի հարության մասին, հետևյալն է. այն ցույց տվեց, որ Հիսուսի պնդումը Մեսիա և Աստծո Որդի լինելու մասին՝ ճշմարիտ է: Հիսուսը ***չդարձավ*** Աստծո Որդի հարության ժամանակ. հարությունը ազդեցիկ կերպով ցույց տվեց, որ Նա ***հավիտյան*** Աստծո Որդին և Քրիստոսն էր:

1. Համաձայն Հռոմեացիների 1.3,4-ի՝ ինչպե՞ս է Հիսուսի հարությունը արդարացնում Նրա պնդումը Աստծո Որդին և Քրիստոսը լինելու մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սահմանվեց» բառը թարգմանված է հունարեն ***«հորի՛զո»*** բառից, որը նշանակում է «սահմանել, նշել սահմանագծերը կամ որոշել»: Հիսուսի մեռելներից հարություն առնելու միջոցով Աստված անձամբ և հրապարակավ ցույց տվեց, թե ով է Հիսուսն իրականում՝ Աստծո Որդին: Հարությունը՝ Աստծո ազդեցիկ և հրապարակավ վավերացումն էր, որ Քրիստոսը Աստծո Որդի է և Աստված: Մենք կարող ենք սա տեսնել նաև առաջին առաքյալների քարոզներում, որոնցում շեշտադրվում էր, որ հրեաները մերժեցին Հիսուսին, իսկ Աստված արդարացրեց Նրան հարության միջոցով. «...առաք անօրենների ձեռքով, փայտի վրա բևեռած, սպանեցիք, Ում Աստված հարություն տվեց» (Գործք 2.23,24): «Եվ դուք այն Սուրբին և Արդարին ուրացաք և խնդրեցիք, որ մի մահապարտ մարդ շնորհի ձեզ: Իսկ կյանքի Առաջնորդին սպանեցիք, Ում Աստված մեռելներից հարություն տվեց, որի վկաներն ենք մենք» (3.14,15): «Սրբության Հոգու կողմից» արտահայտությունը ցույց է տալիս, որ Աստված հարություն տվեց Հիսուսին Սուրբ Հոգու ազդեցիկ միջնորդությամբ:

2. Ա Տիմոթեոս 3.16-ում գրված է անչափ կարևոր պնդում Հիսուս Քրիստոսի հարության մասին: Համաձայն այս խոսքի՝ ինչպե՞ս է հարությունը հաստատում Քրիստոսի պնդումները:

ա. Իր կյանքի և Իր հարության միջոցով Հիսուսն Ա_____ Հոգով:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արդարացավ» բառը թարգմանված է հունարեն ***«դիկայո՛ո»*** բառից, որը նշանակում է. «ազդարարել, ցուցաբերել կամ ցուցադրել ինչ-որ մեկին՝ որպես ճիշտ կամ արդար»: «Հոգով» բառը նույնպես կարելի է թարգմանել «Հոգու միջոցով»: Սուրբ Հոգին արդարացրեց Հիսուս Քրիստոսի Անձը և հաստատեց Նրա խոսքերը՝ Նրա երկրային ծառայության ընթացքում Նրա միջոցով հրաշքներ և նշաններ գործելով (Ղուկաս 5.17) և, ի վերջո, Նրան մեռելներից հարություն տալով:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՄԵՐ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

Հարությունը ցույց տվեց, որ Հայրն ընդունեց Հիսուսի զոհը՝ որպես լիարժեք հատուցում Իր ժողովրդի մեղքերի համար: Մենք գիտենք, որ մեր մեղքերի համար քավություն արվեց, քանի որ Քրիստոսը հարություն առավ: Հարությունը՝ մեր արդարացման ապացույցն է:

1. Ի՞նչ է սովորեցնում Հռոմեացիների 4.25-ը այն մասին, որ Քրիստոսի հարությունը հավատացյալների արդարացման ապացույցն է:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Երկու դեպքում էլ «համար» բառը Հռոմեացիների 4.25-ում թարգմանվել է հունարեն ***«դիա՛»*** բառից, որը նշանակում է հիմք կամ պատճառ ինչ-որ բան անելու կամ չանելու համար: Այս բառը կարելի է թարգմանել նաև «պատճառով» կամ «հետևանքով» բառերով: Իմաստը հետևյալն է. Քրիստոսը մահվան մատնվեց մեր անօրինությունների պատճառով, և Աստված հարություն տվեց Նրան մեռելներից այն պատճառով, որ ընդունեց Նրա զոհը՝ որպես լիարժեք հատուցում մեր անօրինությունների: Հիսուս Քրիստոսի հարությունը մեռելներից՝ մեծ նշան է, որը ցույց է տալիս, որ մեր մեղքերը լիովին վճարված են: Եթե Աստված չընդուներ Քրիստոսի զոհը որպես հատուցում, Նա հարություն չէր տա Նրան մեռելներից:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է ՄԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեղքի հատուցումը մահ է: Քրիստոսի հարությունը հաստատեց, որ Աստված ընդունեց Նրա զոհը՝ որպես մեր մեղքի պարտքի մարում, և մենք ազատվեցինք մեր պատժից, այսինքն՝ մահից: ***Նրա*** հարությունը՝ ***մեր*** հարության հաստատումը կամ երաշխիքն է: Դատարկ գերեզմանը ստուգորեն հավաստիացնում է հավատացյալներին, որ արդարադատությունը բավարարված է, և մեղքը՝ պարտված: Սա ամեն մի հավատացյալի մեծագույն հույսն է:

1. Ավետարաններում և Նոր կտակարանի թղթերում կան մի շարք վեհ խոստումներ Հիսուսի հարության և Իր ժողովրդի վերաբերյալ: Ուշադրությամբ մտորե՛ք հետևյալ խոսքերի շուրջ և գրե՛ք ձեր մտքերը:

ա. Հովհաննես 14.19

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հարությունից հետո Հիսուսը չհայտնեց Իրեն «ամբողջ ժողովրդին, այլ մեզ՝ Աստծուց առաջագույն ընտրված վկաներիս» (Գործք 10.40,41): Այն հավատացյալների համար, ովքեր սկզբում տեսան Նրան, և նրանց, ովքեր հավատում են այդ ականատեսների վկայությանը, Քրիստոսի հարությունը՝ իրենց իսկ ապագա հարության մեծ հաստատությունն է:

բ. Ա Կորնթացիների 6.14

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հայտարարության կարևորությունը հասկանալու համար, մենք միայն պետք է մտածենք այն մասին, թե որքան անզոր կլիներ խոստումը մեր հարության մասին, եթե Աստված հարություն չտար Քրիստոսին: Հիսուս Քրիստոսի հարությունը Աստծո երաշխիքն է մեզ, որ մեր հարությունը հաստատ է:

գ. Բ Կորնթացիների 4.14

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հավատացյալի վստահությունն իր հարության մեջ բխում է այն անժխտելի փաստից, որ Աստված մեռելներից հարություն է տվել Հիսուս Քրիստոսին:

2. Առաջին Կորնթացիների 15.20-23-ը մեկ այլ կարևոր հատված է Քրիստոսի հարության և Իր ժողովրդին խոստացված հարության մասին: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը և գրե՛ք ձեր մտքերը ստորև գտնվող ամեն մի բաժնում: Ի՞նչ առումով է Քրիստոսի հարությունը համարվում յուրաքանչյուր հավատացյալի հարության և՛ օրինակը, և՛ երաշխիքը:

ա. «Բայց հիմա Քրիստոսը հարություն է առել մեռելներից, Ինքը ննջածների առաջնեկ (կամ՝ առաջին պտուղը) եղավ» (խս. 20):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի հարությունը քրիստոնեական հավատքի մեծագույն սյուներից մեկն է: Այս ճշմարտության վրա է հենվում հավատացյալի հույսը: Ղևտացիների 23.10-ում Սուրբ գիրքն ազդարարում է, որ իսրայելցիները պետք է զոհաբերություն տային իրենց հունձքի առաջին մասից: Այդ «երախայրիները» (կամ՝ առաջին պտուղը) զոհելով՝ մարդիկ դավանում էին, որ դրան հետևող հունձքը նույնպես պատկանում էր Տիրոջը: Նմանապես, Քրիստոսի հարությունը հունձքի երախայրին է և խորհրդանշում է ամբողջ հունձքը, որը հավաքվելու է Իրենից հետո: Նրա հարությունը՝ Նրա ժողովրդի հարության նախանշանը և երաշխիքն է:

բ. «Ուրեմն, որովհետև մարդով եղավ մահը, և մարդով էլ՝ մեռելների հարությունը: Քանի որ, ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են» (խս. 21,22):

ՆՇՈՒՄՆԵՐ. Անհրաժեշտ էր, որ մեղքը և մահը, որոնք մուտք էին գործել մարդկության մեջ մեկ մարդու միջոցով, ետ դարձվեին մեկ այլ Մարդու միջոցով: Ադամի մեջ բոլորը մեղանչեցին՝ հայտնվելով դատապարտության և մահվան ներքո: Քրիստոսում բոլոր հավատացողներն արդարանում են և հարություն են առնում: Քրիստոսի հարությունը Իր ժողովրդի թե՛ ներկա արդարացման, և թե՛ ապագա հարության երաշխիքն է:

գ. «Եվ ամեն մեկն իր կարգում. առաջին պտուղը՝ Քրիստոսը, և հետո՝ Քրիստոսինները, Նրա գալու ժամանակում» (խս. 23):

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կարգ» բառը թարգմանված է հունարեն ***«տա՛գմա»*** բառից, որը նշանակում է «զորքերի կարգը կամ դասավորությունը»: Հնարավոր է, որ ոմանք Կորնթոսում ժխտում էին հարության վարդապետությունը հետևյալ սխալական տրամաբանությամբ. «Եթե հավատացյալները միացած են Քրիստոսին Նրա հարության մեջ, ինչպե՞ս է, որ Քրիստոսն արդեն հարություն է առել, մինչդեռ մահացած հավատացյալների մարմինները շարունակում են փտել հողի մեջ»: Պողոսի պատասխանն այն է, որ ամեն ինչ ունի իր կարգը: Քրիստոսը երախայրին է բոլոր հավատացյալների, որոնք հարություն կառնեն վերջին օրը: Անհրաժեշտ է, որ Քրիստոսը գերակայություն ունենա ամեն ինչում: Պողոսը գրեց Կողոսիայի եկեղեցուն. «Եվ Նա է մարմնի, այսինքն՝ եկեղեցու գլուխը, որ Նա է սկիզբը, մեռելների անդրանիկը, որպեսզի ամեն բանի մեջ Նա լինի առաջինը» (Կողոսացիների 1.18):

Գլուխ 26. Քրիստոսի հարության կարևորությունը

Անհնար է չափից ավելի շեշտադրել Քրիստոսի հարության կարևորությունը: Սուրբ գիրքը ցույց է տալիս, որ այս պնդումը չափազանցություն չէ: Հարությունը՝ քրիստոնեության հիմնարար վարդապետությունն է և այն ճշմարտությունը, որի վրա հենվում է քրիստոնեական հավատքը: Այն էապես կարևոր վարդապետություն է և անվիճարկելի ճշմարտություն: Քրիստոսի հարությունը ժխտելը նշանակում է՝ մերժել Ավետարանը:

1. Հիսուս Քրիստոսի հարությունն այն աստիճան կարևոր է քրիստոնեական հավատքի համար, որ հարություն առած Տիրոջը տեսնելը առաքյալ լինելու պահանջներից մեկն էր: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. Գործք 1.21,22

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պետք է» բառը թարգմանված է հունարեն «*դեի՛*» բառից, որը նշանակում է «անհրաժեշտություն», և կարող է թարգմանվել նաև «պարտադիր» բառով: Այս հատվածում կա առաքյալ լինելու երկու պահանջ: Առաջինը՝ Հիսուսի երկրային ծառայության վկան լինելն է, և երկրորդը՝ հարություն առած Քրիստոսին տեսնելը: Նույնիսկ քրիստոնեության մեծագույն թշնամիները հարկադրված են ընդունել Քրիստոսի արտասովոր կյանքը և մահը՝ համաձայն պատմական փաստերի. այնպես որ, մեծագույն պատերազմը ծավալվում է հարության շուրջ: Ահա թե ինչու առաքյալը պետք է հեղինակություն ունենար՝ որպես մի մարդ, որը տեսել էր հարություն առած Տիրոջը: Առաքյալները կանչված էին քարոզելու Քրիստոսի ուսմունքները և գործերը, որոնք վավերացվում են միայն հարությամբ: Նշանակում է՝ նրանք պետք է լինեին այս մեծ և վճռորոշ իրադարձության ականատեսները:

բ. Ա Կորնթացիների 9.1

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Պողոսը վավերացրեց իր առաքելական կոչումը և իշխանությունը՝ հիշեցնելով կորնթացիներին, որ ինքը տեսել էր հարություն առած Տիրոջը (Գործք 9.1-9, 22.6-16, 26.12-18)։ Հարությունը այն վարդապետությունն է, որի վրա հենվում են քրիստոնեության բոլոր պնդումները։ Ահա թե ինչու է հարությունը խիստ հարձակումների ենթարկվում քրիստոնեության թշնամիների կողմից։

2. Բ Տիմոթեոս 2.8-ը կարևոր խոսք է. այն ամփոփում է Ավետարանը և ցույց է տալիս Հիսուս Քրիստոսի հարության կարևորությունը Ավետարանի քարոզման մեջ։ Գրե՛ք ձեր մտքերն այն մասին, թե ինչ ճշմարտություն է սովորեցնում այս խոսքը մեզ։

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հիշել» բառը թարգմանված է հունարեն ***«մնեմոնե՛ուտ»*** բառից, որը նշանակում է «հիշել, պահել հիշողության մեջ, մտածել ինչ-որ բանի մասին»։ «Հարություն առած» բայը թարգմանված է հունարեն ***«էգեի՛ռո»*** բառից։ Այս բայը՝ կատարյալ ժամանակով, ցույց է տալիս Տիրոջ հարության շարունակական վիճակը։ Քրիստոսը հարություն առավ մեռելներից և հավիտյան կենդանի է։ «Իմ Ավետարանի համեմատ» արտահայտությունը ցույց է տալիս, որ Հիսուս Քրիստոսի հարությունը հիմնարար փաստ էր առաքյալների Ավետարանի համար։ Միակ Հիսուսը, որին ճանաչում էին առաքյալները, Աստծո հավիտենական Որդին էր, Ով մարմնացավ՝ Դավթի Որդին դառնալով, մահացավ խաչի վրա Իր ժողովրդի մեղքերի համար և մեռելներից հարություն առավ։

3. Հարության կարևորությունը նույնպես ի հայտ է գալիս այն բանով, որ դրան հավատալը անհրաժեշտ է փրկության համար։ Համաձայն Հռոմեացիների 10.9-ի՝ մարդը կարո՞ղ է փրկվել՝ առանց հավատալու հարությանը։ Ինչպե՞ս է այս հարցի պատասխանը ցույց տալիս հարության կարևորությունը։

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Դավանել» բառը թարգմանված է հունարեն ***«հոմոլոգեո՛»*** բառից, որը նշանակում է «ասել կամ խոսել նույն բանը»: «Բերանովդ» բառը վերաբերում է հրապարակային դավանությանը կամ նույնացմանը Հիսուսի հետ՝ որպես Տիրոջ: Պողոսը նկատի չուներ մակերեսային դավանություն կամ ընդամենը հավատքի դավանանքի մտովի ընդունում, այլ բացահայտ և հրապարակային դավանություն, որը բխում է սրտի անկեղծ համոզվածությունից: «Սրտում» հավատալը վերաբերում է հարություն առած Քրիստոսին խորապես և ճշմարտապես հավատալուն: Լիովին անմտություն է, երբ ինչ-որ մեկն ասում է, որ հավատում է Քրիստոսին, բայց չի հավատում Նրա հարությանը:

4. Զգտելով հասկանալ հարության մեծ կարևորությունը՝ անհրաժեշտ է հաշվի առնել այն սարսափելի հետևանքները, որոնք սպասելու էին մեզ, եթե այս իրադարձությունը երբեք տեղի չունենար: Համաձայն Ա Կորնթացիների 15.14-19,32 խոսքերի՝ եթե Քրիստոսը հարություն առած չլիներ, ի՞նչ փաստեր տրամաբանորեն կհետևեին դրան: Գրե՛ք ձեր մտքերն այդ փաստերից ամեն մեկի մասին:

ա. Ավետարանի քարոզումն Ու_____ է (խս. 14):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ունայն» բառը թարգմանված է հունարեն ***«կենո՛ս»*** բառից, որը բառացիորեն նշանակում է «դատարկ»: Այս բառն օգտագործվում է՝ նկարագրելու համար դատարկ անոթներ կամ դատարկ վայրեր: Փոխաբերական իմաստով, այս բառը նշանակում է «այն, ինչն անշահավետ, անօգուտ, խաբուսիկ, կեղծ, անիմաստ և անկարևոր է»: Այս արտահայտությունը զարմանալի է. քրիստոնեության քարոզման վավերականությունը կախված է Քրիստոսի հարության վավերականությունից: Եթե Քրիստոսը հարություն չի առել, ոչինչ քրիստոնեական քարոզման մեջ նույնիսկ մեկ թել չարժե:

բ. Քրիստոնեական հավատքն Ու_____ է (խս. 14):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ունայն» բառը թարգմանված է հունարեն ***«կենո՛ն»*** բառից (սահմանումը՝ վերևում): Քրիստոսը՝ մեր հավատքի Նպատակը, Զորագլուխը և Կատարողն է (Եբրայեցիների 12.2): Եթե Նա հարություն չի առել, հավատքը Նրա հանդեպ՝ ունայն և աննպատակ է:

գ. Ձեր հավատքն Ու_____ (կամ՝ անարժեք) է (խս. 17):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ունայն» բառն այս խոսքում թարգմանված է հունարեն ***«մա՛տայոս»*** բառից, որը նշանակում է «անօգուտ, անվավեր և ոչ ճշմարիտ»:

դ. Նրանք, ովքեր քարոզում են Ավետարանը, Աստծո Ս_____ Վ_____ են (խս. 15):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո օրենքը պատվիրում է. «Քո դրացու դեմ սուտ վկայություն մի՛ արա» (Ելից 20.16): Որքա՞ն ավելի խիստ կլինի նրանց պատիժը, ովքեր սուտ վկայություն են անում Աստծո դեմ: Ա Թագավորաց 2.25-ում գրված է. «Եթե մարդը մարդու դեմ մեղք գործի, նրա դատաստանն Աստված կկտրի: Բայց եթե մարդ Տիրոջ դեմ մեղք գործի, նրա համար ո՞վ աղաչանք կանի»:

ե. Քրիստոսին հավատացողները դեռ իրենց Մ_____ մեջ են (խս. 17):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հարությունը՝ մեծ ապացույց է, որ Աստված ընդունել է Քրիստոսի զոհը, և որ Նրա արդարադատության պահանջները բավարարվել են (Հռոմեացիների 4.25)։ Եթե Քրիստոսը հարություն չի առել, չկա ոչ մի ապացույց, որ մենք ներում ենք ստացել, որ մեզ վերագրվել է Աստծո արդարությունը, և որ մենք հավիտենական կյանք ունենք։

զ. Նրանք, ովքեր մահացան՝ հավատալով Քրիստոսին, Կ_____ (խս. 18)։

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կորել» բառը թարգմանված է հունարեն ***«ապո՛լումի»*** բառից, որը նշանակում է «կորսվել, կործանվել կամ ոչնչացվել»։ Եթե մեր Փրկության Հրամանատարը չկարողացավ հաղթել գերեզմանը, ի՞նչ հույս ունենք մենք՝ Նրա հետևորդները։

է. Քրիստոսին հավատացողները մնացած բոլոր մարդկանցից ավելի Ո_____ են (խս. 19)։

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս բառը թարգմանված է հունարեն ***«էլեեինո՛ս»*** բառից, որը նույնպես կարող է թարգմանվել «խղճալի» բառով։ Եթե Քրիստոսը հարություն չի առել, նշանակում է՝ քրիստոնյաները ողորմելի անմիտներ են և զուր տեղը վատնում են իրենց կարճ երկրային կյանքը։

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ը. Եկեք Ու_____ և Խ_____, որովհետև վաղը մենք Կ_____ (խս. 32):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքերը Եսայի 22.13-ից են: Եթե չկա հարություն, նշանակում է՝ չկա հույս: Մարդու համար այլևս ոչինչ չի մնում՝ բացի մարմնի կրքերը եսասիրաբար գոհացնելուց, մինչև որ մահը կլանի ամեն ինչ:

Գլուխ 27. Որդին՝ համբարձված

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Հիսուս Քրիստոսը Աստծո հավիտենական Որդին է, Ով թողեց երկնային փառքը, մարմին հագավ, ծնվեց կույսից և ապրեց կատարյալ կյանքով: Նա գամվեց խաչին՝ համաձայն Աստծո հավիտենական կամքի: Նա վերցրեց Իր ժողովրդի մեղքերը, կրեց Աստծո զայրույթը և մահացավ: Երրորդ օրը հարություն առավ մեռելներից՝ ցույց տալով, որ Ինքն Աստծո Որդին է, և որ Իր մահը փրկություն է բերել Աստծո ժողովրդին: Հարությունից քառասուն օր անց Քրիստոսը համբարձվեց Երկինք, որտեղ Նա նստեց Հայր Աստծո աջ կողմը և ստացավ փառք, պատիվ և իշխանություն ամեն ինչի վրա: Այնտեղ՝ Աստծո ներկայության մեջ, Նա ներկայացնում է Իր ժողովրդին և խնդրանքներ ու աղաչանքներ է բերում Աստծո առջև նրանց համար: Քրիստոսի մահը և հարությունը Նրա կատարած աշխատանքի երկու փառավոր սյուներն են: Նրա համբարձումը և մեծարումը՝ այդ աշխատանքի փառավոր բարձրակետն է:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Քրիստոսը համբարձվեց Երկինք Իր հարությունից քառասուն օր անց, բազմաթիվ ականատեսների ներկայությամբ: Համբարձումն առասպել չէ. այն պատմական իրողություն է, որը գրի է առնվել այդ իրադարձության անմիջական ականատեսների կողմից: Համբարձումը պատմական փաստ չհամարելը նշանակում է մերժել Սուրբ գրքի վկայությունը:

1. Գոյություն ունի մեկ փաստ, որը մեծապես նպաստում է Քրիստոսի համբարձման արժանահավատ լինելուն՝ այն, որ համբարձումը կանխասված իրադարձություն էր: Ի՞նչ է սովորեցնում Հովհաննես 16.28-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս մեկ խոսքում Հիսուսը խոսեց հավիտենական անցյալում Իր փառքի, Իր ներկա մարմնավորման և ապագայում Իր համբարձվելու մասին:

2. Ղուկաս 1.1-4 և Գործք 1.1-3 հատվածներն ազդեցիկ կերպով վկայում են, որ Ավետարանի հեղինակները համոզված էին, որ խոսում էին պատմական փաստի մասին: Ինչպե՞ս է Գործք 1.9-11-ը ցույց տալիս, որ նրանք նույնպես դիտարկում էին Քրիստոսի համբարձումը որպես պատմական փաստ:

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսքեր 9-10-ում Ղուկասը գրում է, որ աշակերտները «նայում էին» և «մտիկ էին տալիս դեպի Երկինք»: Երկու դեպքում էլ Ղուկասը մեջբերում է ականատեսների պատմությունները իր Ավետարանում: «Մտիկ տալ» բառը թարգմանված է հունարեն ***«ատենի՛զո»*** բառից, որը նշանակում է «հառել հայացքն ինչ-որ բանի, ուղիղ նայել ինչ-որ բանի վրա, ակնապիշ նայել»: Նույն խոսքն օգտագործվել է Ղուկաս 4.20-ում, երբ Աստծո Խոսքն ասում է, որ «...ժողովարանի մեջ ամենքի աչքերը Նրան (Հիսուսին) էին մտիկ տալիս (կամ՝ «Նրան էին սևեռված»)»: Աշակերտները պարզապես մի ակնթարթ չտեսան ինչ-որ բան՝ սխալմամբ կարծելով, որ Հիսուսն էր: Նրանք բավականաչափ ժամանակ ունեին՝ այդ իրադարձությունը գնահատելու համար, երբ անմիջապես տեսնում էին այն: Խոսք 11-ում հրեշտակները մեղմորեն հանդիմանեցին աշակերտներին, քանի որ նրանք շարունակում էին երկինք նայել նույնիսկ Հիսուսի հեռանալուց հետո: Կրկին, սա ցույց է տալիս, որ նրանք լիարժեք կերպով ականտես էին եղել ամբողջ այդ իրադարձությանը: Քննադատները փորձել են վարկաբեկել Ղուկասի պատմությունը՝ նշելով, որ նրա կողմից «վերացավ» (կամ՝ վեր բարձրացավ) բառն օգտագործելն անհամատեղելի է տիեզերքի մասին մեր գիտելիքների հետ: Նման քննադատությունն ավելորդ է: Ղուկասն օգտագործում է նույն տերմինաբանությունը, որն օգտագործում են ժամանակակից գիտնականները՝ նկարագրելով հրթիռի վեր բարձրանալը:

3. Ակնհայտ է, որ Նոր կտակարանի գրողները դիտարկում էին Հիսուսի համբարձումը որպես պատմական իրադարձություն: Հարությունից քառասուն օր անց Հիսուսը համբարձվեց երկրից, բայց ո՞ւր գնաց: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները:

   ա. Նա Վ_____ էր (կամ՝ վեր էր տարվում) Երկինք (Ղուկաս 24.51): «Վերանալ» բառը թարգմանված է հունարեն ***«անաֆե՛րո»*** բառից, որը նշանակում է «վեր տանել, վեր հանել, վեր բարձրացնել»: Այս համատեքստում «երկինք» բառը (հունարեն՝ ***«օուրանո՛ս»***) վերաբերում է Աստծո բնակավայրին: Մեթյու Հենրին գրում է. «Նա չտարվեց Երկինք ինչ-որ ուժով. Նա Ինքը բարձրացավ այնտեղ: Նա հրեղեն կառքի և ձիերի կարիք չուներ. Նա գիտեր ճանապարհը»[22]:

   բ. Նա անցել է Ե_____ (Եբրայեցիների 4.14): «Անցել է» բառը թարգմանված է հունարեն ***«դիե՛րխոմայ»*** բառից, որը նշանակում է «գնալ կամ անցնել ինչ-որ բանի միջով, քայլել կամ ճանապարհվել ինչ-որ վայրով»: Քրիստոսն անցավ բոլոր երկինքները, մինչև որ հասավ բարձրագույն վայրը, որտեղ Աստծո ներկայությունն է:

   գ. Նա բոլոր երկինքներից Ա_____ Բ_____ Վ_____ Ե_____ (Եփեսացիների 4.10): «Վեր ելավ» բառակապակցությունը թարգմանված է հունարեն ***«անաբաի՛նո»*** բառից, որը նշանակում է «վեր բարձրանալ, վեր մագլցել կամ վեր ելնել»: Քրիստոսը վեր ելավ բարձրագույն վայրը ամբողջ Երկնքում:

   դ. Նա Վ_____ Փ_____ (Ա Տիմոթեոս 3.16): «Վերացավ» (կամ՝ վեր առնվեց) բառը թարգմանված է հունարեն ***«անալամբանո»*** բառից, որը նշանակում է «վերևից վերցնել կամ ընդունել»: Քրիստոսը համբարձվեց դեպի Աստծո փառավոր բնակատեղին: Նա գնաց այդ վայրը և փառքով ընդունվեց:

   ե. Նա համբարձվեց Երկինք և նստեց Աստծո Ա_____ կողմը (Մարկոս 16.19): «Համբարձվեց» բառը թարգմանված է հունարեն ***«անալամբանո»*** բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում): Մեթյու

[22] *«Մեթյու Հենրիի մեկնություն»*, հտ. 5, էջ 846

Հենրին գրում է. «Նա պարզապես մուտք չգործեց Իր թագավորությունը. Նրան տրված էր, որ առատությամբ մուտք գործեր այնտեղ»[23]: Համբարձվելով՝ Քրիստոսն «Աստծո աջ կողմը նստեց»: Չկա մեծարանքի ավելի բարձր վայր, քան Աստծո աջ կողմը՝ Նրա բարեհաճության և իշխանության վայրը:

զ. Նա գնաց Հ_____ մոտ (Հովհաննես 14.28): Քրիստոսը վերադարձավ Իր մեծագույն սիրո մոտ՝ Նրա, Ում համար Նա կատարեց այս փրկության մեծ աշխատանքը՝ Հոր մոտ: Նա հաճեցրեց Հորն ամեն ինչում և վերադարձավ տուն՝ Իր Հոր անսահման հավանությամբ:

է. Նա Վ_____ Գ_____ ուր որ Ա_____ էր (Հովհաննես 6.62): «Վեր գնալ» բառակապակցությունը հունարեն ***«անաբաինո»*** բառից է, որը նշանակում է «վեր բարձրանալ, վեր մագլցել կամ վեր ելնել»: Այս խոսքը երկու բան է ցույց տալիս. (1) Որդու հավիտենական փառքը՝ մարմնավորումից առաջ, և (2) Որդու վերադարձն Իր առաջվա փառավորված վիճակին, այս անգամ՝ որպես Աստված-Մարդ:

ՄԵԾԱՐՈՒՄԸ

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Հիսուս Քրիստոսը ոչ միայն համբարձվեց Երկինք, այլև մեծարվեց՝ ստանալով բարձրագույն պատվի և իշխանության դիրքը Աստծո աջ կողմում: Անչափ կարևոր է նշել, որ այս մեծարանքը «նոր» կամ «օտար» փորձառություն չէր Աստծո Որդու համար: Սուրբ գիրքը պարզորեն սովորեցնում է, որ Նա փառավորված էր Հոր հետ և ուներ միևնույն փառքը, որ ուներ Հայրը, մինչև աշխարհի արարումը (Հովհաննես 17.5): Որդու վերադարձը դեպի Իր մեծարված դիրքը եզակի է այն բանով, որ այժմ Նա, Ով նստած է Հոր աջ կողմում, և՛ Աստված է, և՛ Մարդ: Մարմնավորման ժամանակ Որդին թողեց Իր աստվածության փառքը և արտոնությունները (բայց ոչ՝ էությունը), հագավ Իր վրա մեր մարդկային էությունը և հնազանդ եղավ Հոր կամքին նույնիսկ մինչև մահը խաչի վրա: Ահա թե ինչու Նա «ստացավ» Աստծո աջ կողմը նստելու իրավունքը: Նա, Ով պսակված էր փառքով և պատվով Աստծո գահի վրա, և՛ Աստված է, և՛ Մարդ: Մեծարված Փրկիչը և Թագավորը մեկ է Աստծո հետ և մեկ՝ Իր ժողովրդի հետ:

1. Եսայի 52.13,14-ում գտնվում է մի ազդեցիկ մարգարեություն Մեսիայի մեծարվելու մասին այն բանից հետո, երբ Նա կրելու էր Իր ժողովրդի մեղքերը: Ամփոփե՛ք այս հատվածի գլխավոր ճշմարտությունները:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Իմ ծառան» վերաբերում է Մեսիային: Աստված ունեցել է միայն մեկ ճշմարիտ Ծառա՝ Իր Որդի Հիսուս Քրիստոսին: «Իմաստությամբ վարվել» արտահայտությունը եբրայերեն ***«սակալ»*** բառից է, որը նշանակում է բարգավաճում կամ հաջողություն: Այն Աստծո բարեհաճության կամ օրհնության իմաստ ունի, և հաճախ նշանակում է վարձատրություն՝ հնազանդության համար (Հեսու 1.8): Երբևէ չի եղել նույնքան հնազանդ և աստվածահաճո անձ, քան Նրա Որդին, Ով հնազանդ էր մինչև խաչի մահը (խս. 14, նույնպես կարդացե՛ք Փիլիպեցիների 2.8): Այդ իսկ պատճառով, չի լինի որևէ մեկը, ով կմեծարվի և կբարձրացվի ավելի, քան Նա:

[23] *«Մեթյու Հենրիի մեկնություն»*, հտ. 5, էջ 572

2. Եսայի 53.10-12 խոսքերում գրված է մեկ այլ մանրամասն մարգարեություն՝ եկող Մեսիայի, Նրա չարչարանքների, ինչպես նաև՝ Նրա փառավորման և մեծարման մասին: Ամփոփե՛ք ձեր բառերով ամեն մի խոսքը և ցույց տվեք, թե ինչպես է, համաձայն այս խոսքերի, Որդին բարձրացվելու Աստծո աջ կողմը:

ա. «Նա պիտի սերունդ տեսնի և օրերը երկարացնի, և Տիրոջ հաճությունը պիտի հաջողվի Նրա ձեռքով» (խս. 10):

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Որդու հնազանդության արդյունքում Նա հարություն կառնի և հավիտյան կապրի (Նա պիտի... օրեր երկարացնի), Նա հոգևոր սերունդ կստանա (Նա պիտի սերունդ տեսնի), և Աստծո կամքը կամ «Տիրոջ հաճությունը» կատարելապես «պիտի հաջողվի» Նրա միջոցով:

բ. «Իր անձի աշխատության (կամ՝ տառապանքի) պտուղը պիտի տեսնի և կշտանա» (խս. 11):

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Աշխատություն» բառը թարգմանված է եբրայերեն ***«ամալ»*** բառից, որը նշանակում է ծանր աշխատանք, նեղություն, ծննդաբերության ցավեր, տաժանակիր աշխատանք, անախորժություն, թշվառություն կամ ցավ»: Մեսիան կրելու էր այս բաները մինչև Իր էության խորքը (մարմնով, զգացմունքներով, մտքով և հոգով): Այնուամենայնիվ, Նրա տառապանքի արդյունքում շատերն արդարացված էին լինելու, և Նա կշտանալու էր Իր վարձատրությամբ: «Կշտանալ» բառը թարգմանված է եբրայերեն ***«սաբա»*** բառից, որը նշանակում է «լինել բավարարված, հագեցած և լցված՝ ավելցուկով»:

գ. «Նրա համար Նրան բաժին պիտի տամ շատերի հետ, և Նա հզորների հետ ավար պիտի բաժանի» (խս. 12):

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կողմից շնորհված մեծարումը և վարձատրությունը Մեսիայի՝ մինչև մահը հնազանդվելու պտուղն էր: Շատերի հետ բաժին ստանալը և հզորների հետ ավար բաժանելը խորհրդանշում են Գողգոթան՝ որպես խոշոր ռազմական նվաճում կամ զինվորական հաղթանակ: Հաղթող Քրիստոսը ստանում է Իր հաղթանակի ավարը:

3. Փիլիպեցիների 2.6-11-ն Աստվածաշնչի ամենակարևոր հատվածներից մեկն է Աստծո Որդու խոնարհվելու և մեծարվելու մասին: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո գրե՛ք ձեր մեկնաբանությունները հետևյալ խոսքերից ամեն մեկի վերաբերյալ: Ո՞րն էր Քրիստոսի վարձատրությունը Իր ինքնակամ խոնարհության կամ ցածրացման համար:

   ա. «Նրա համար էլ Աստված շատ բարձրացրեց Նրան և Նրան մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է» (խս. 9):

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Նրա (կամ՝ դրա) համար էլ» արտահայտությունը կարևոր է: Աստված բարձրացրեց Հիսուսին ամեն անունից վեր՝ Իրեն հոժարաբար հպատակվելու «պատճառով» կամ «հետևանքով» (հունարեն *«դի՛ո»*): Հիսուսը ցույց տվեց Իր հպատակությունը Իր մարմնավորման, հնազանդության և քավչարար մահվան միջոցով: Երկինք համբարձվելով՝ Աստծո Որդին և Մարդու Որդին գրավեց այն տեղը, որը պատկանում էր Իրեն աշխարհը ստեղծվելուց առաջ: Հիսուսը մեծարվեց ոչ միայն Աստված լինելու պատճառով. Նա նաև վաստակեց այդ դիրքն Իր կատարյալ հնազանդությամբ՝ որպես Մարդ: «Շատ բարձրացնել» արտահայտությունը թարգմանված է հունարեն *«հուպերուպսո՛ո»* բառից, որը նշանակում է «բարձրացնել ինչ-որ մեկին գերագույն դիրքի և իշխանության»: «Շնորհել» բառը թարգմանված է հունարեն *«խարի՛զոմայ»* բառից, որը նշանակում է «ինչ-որ հաճելի կամ դուրեկան բան տալ մեկ այլ մարդու՝ ողորմածաբար և անհատույց»: «Ամեն անունից ավելի բարձր» արտահայտությունը նշանակում է, որ Որդին բարձր է ամեն արարածից երկնքում և երկրի վրա:

բ. «Որ Հիսուսի անունով կրնկվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների, և ամեն լեզու դավանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է Հայր Աստծո փառքի համար» (խս. 9):

ՆՇՈՒՄՆԵՐ. Եսայի 45.23-ում Աստված Իր մասին հռչակում է հետևյալը. «Ինձանով երդում արի, Իմ բերանից արդարության խոսք դուրս եկավ և ետ չի դառնա, որ Ինձ պիտի կրնկվի ամեն ծունկ, և ամեն լեզու երդում անի»: Այն, որ այս խոսքը մեջբերվում է Քրիստոսի վերաբերյալ, Նրա աստվածության մեծ ապացույց է: Ծունկ կրնկելը նշանակում է ճանաչել ինչ-որ մեկի արժանապատվությունը, պատիվ տալ նրան և հնազանդվել նրա իշխանությանը: Այս հատվածը հաղորդում է երկու մեծ ճշմարտություն: Առաջինը՝ Քրիստոսն արժանի է ամբողջ պատվին և հնազանդությանը: Երկրորդը՝ մեկ օր ամբողջ արարչագործությունը կճանաչի և կընդունի Քրիստոսին՝ որպես Տեր:

4. Ստորև բերված խոսքերը Նոր կտակարանից՝ կարևոր տեղեկություն են հաղորդում Քրիստոսի մեծարման և դրա նպատակի մասին: Գրե՛ք ձեր մտքերն ամեն խոսքի վերաբերյալ:

ա. Եբրայեցիների 1.3

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սրբություն» բառը թարգմանված է հունարեն ***«կաթարիսմո՛ն»*** բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «մաքրագործում» բառով: Խոսքը Քրիստոսի քավող աշխատանքի մասին է Գողգոթայում, որի շնորհիվ Նրա ժողովուրդը մաքրվեց մեղքից: «Մեծության... բարձունքներում» խոսքերը վերաբերում են Աստծուն և Նրա վեհությանը: Այն, որ Քրիստոսը նստեց Աստծո աջ կողմը, ցույց է տալիս, որ Նա ստացավ բարձրագույն պատվի և բարեհաճության դիրքը՝ հավասար Աստծո դիրքին և կարգավիճակին:

բ. Եբրայեցիների 2.9

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կրկին, Քրիստոսի ցածրացումը և քավող մահը դիտարկվում են որպես Նրա մեծարման պատճառը կամ հիմքը: Հազիվ թե Եբրայեցիների թղթի հեղինակը կարողանար ընտրել ավելի վեհ արտահայտություն, քան «փառքով և պատվով պսակված»-ը: Այնուամենայնիվ, նույնիսկ այս խոսքերն ի զորու չեն թեկուզ աննշան նկարագրել այն փառքը, որը շնորհվեց Քրիստոսին:

գ. Հայտնություն 3.21

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաղթել» բառը հունարեն ***«նիկա՛ո»*** բառից է, որը նշանակում է «նվաճել» կամ «հաղթանակ տանել»: Քրիստոսի հպատակությունը Հոր կամքին և Նրա կատարյալ հնազանդությունը անհրաժեշտ նախադրյալներ էին Նրա մեծարման համար: Իր հնազանդությամբ Քրիստոսը հաղթեց մեղքը, սատանային և մահը: Նրա մեծարումը պատկերվում է որպես վարձատրություն Նրա հնազանդության համար:

Գլուխ 28. Մեր Բարձրյալ Փրկիչը

Աստծո հավիտենական Որդին զրկեց Իրեն աստվածության փառքից և մեզ պես մարդ դարձավ: Նա եկավ այս երկիր և ապրեց կատարյալ կյանքով՝ անսասան հնազանդվելով Աստծո կամքին: Համաձայն Աստծո նախապես որոշված ծրագրի՝ Նա բարձրացվեց և գամվեց հռոմեական խաչին՝ անօրեն մարդկանց ձեռքերով: Խաչի վրա կրեց Իր ժողովրդի մեղքը և նրանց փոխարեն Իր վրա վերցրեց Աստծո զայրույթը: Իր մահով Նա բավարարեց Աստծո արդարադատությունը և հնարավոր դարձրեց, որ արդար Աստված ներեր Իր ժողովրդի մեղքերը և շնորհեր նրանց արդար դիրք Իր առջև: Իր հնազանդության շնորհիվ մարմնավորված Որդին հարություն առավ մեռելներից և բարձրացավ Աստծո Որդու աջ կողմը՝ որպես Փրկիչ: Միայն Նա է կրում Փրկիչ տիտղոսը, և միայն Նրա անունով է կարելի փրկություն ստանալ:

Աստվածաշունչը միանշանակ ազդարարում է, որ փրկությունը միայն Հիսուս Քրիստոսի անվան մեջ է: Չկա այլևս ոչ մի փրկիչ, միջնորդ կամ միջոց, որով մարդը կարող է ստանալ իր մեղքերի ներումը և հաշտվել Աստծո հետ. փրկությունը հնարավոր է ստանալ միայն Հիսուս Քրիստոսի Անձի և Գողգոթայում կատարած աշխատանքի միջոցով: Սա քրիստոնեության ամենավրդովեցուցիչ ճշմարտությունն է. այնուամենայնիվ, այս ճշմարտությունը նույնիսկ աննշան չափով չընդունելը նշանակում է մերժել Աստվածաշունչը, նսեմացնել Քրիստոսի փառքը, անվավեր դարձնել խաչը և դաշույն խրել Ավետարանի սրտի մեջ: Ավետարանի միակ ճշմարիտ քարոզումն այն է, երբ մարդիկ համարձակ և պարզ հռչակում են, որ Հիսուս Քրիստոսը՝ Մեկ և Միակ Փրկիչն է:

1. Հովհաննես 14.6-ում Հիսուսը համարձակ հայտարարություն արեց Իր մասին՝ անդրադառնալով ճշմարտությանը, կյանքին և Աստծո հետ հաշտվելուն: Ըստ Քրիստոսի խոսքերի՝ հնարավո՞ր է գտնել ճշմարտությունը, կյանքը և փրկությունը որևէ անձի, առարկայի կամ երևույթի մեջ՝ Իրենից դուրս: Գրե՛ք ձեր մտքերը հետևյալ պնդումներից ամեն մեկի մասին:

ա. Ես եմ ճանապարհը...

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը «Սուրբ ճանապարհն» է, որի մասին գրված է Եսայու մարգարեության 35.8-ում, և «նոր և կենդանի ճանապարհը», որի մասին գրված է Եբրայեցիների 10.20-ում: Նա այն Ճանապարհն է, որի վրա մարդը հանդիպում է Աստծուն: Միգուցե կան շատ ճանապարհներ, որոնք Հռոմ են տանում, բայց կա միայն մեկ ճանապարհ, որը տանում է դեպի մեղքերի ներումը և ճիշտ հարաբերությունները Աստծո հետ՝ Հիսուս Քրիստոսը:

բ. Եվ ճշմարտությունը...

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը պարզապես ճշմարտության ուսուցիչ չէ. Նա հենց ***ճշմարտությունն*** է: Նա ճշմարտության մեծագույն հայտնությունն է մարդկանց: Նրանում են հայտնվում այն չափանիշները, որոնցով դատվելու են բոլոր մտքերը, խոսքերը և գործերը: Նրա անձը և ուսմունքը ներկայացնում է ճշմարտության մեծագույն մարմնավորումը, որը երբևէ տրվել է մարդկությանը: Ցանկացած ուսմունք, որը հակասում է Քրիստոսին կամ Քրիստոսից վեր է դասում իրեն, սուտ է:

գ. Եվ կյանքը...

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հովհաննեսը սկսում է իր Ավետարանը՝ հռչակելով, որ «Նրանով (այսինքն՝ Որդու միջոցով) էր կյանքը, և կյանքը մարդկանց լույսն էր» (1.4): Հովհաննես 5.26-ում Հիսուսը սովորեցնում է, որ կյանքը ոչ միայն Իր միջոցով է, այլ որ Ինքը կյանք ունի «Իր Անձում»: Ամենասկզբից Որդին մարդկանց տրված կյանքի Միջնորդն էր՝ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր առումով: Նա է Ճշմարիտ Որթը, և միայն Նա է հոգևոր կյանք տալիս այն մարդկանց, ովքեր բնակվում են Իրենում (Հովհաննես 15.1-6): Առանց Նրա չկա ճշմարիտ հոգևոր կյանք:

դ. Ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա քրիստոնեական հավատքի ամենավրդովեցուցիչ փաստն է: Ճշմարիտ քրիստոնեությունը խիստ բացառիկ է այն առումով, որ սովորեցնում է, որ ոչ ոք չի կարող Երկինք գնալ՝ առանց Քրիստոսի և Գողգոթայում կատարած Նրա քավչարար աշխատանքի: Հին կտակարանի սրբերն արդարացված էին, քանի որ հավատում էին Աստծո մասին իրենց ունեցած հայտնությանը և ապագա հույսի խոստումներին, որոնք իրականանալու էին Մեսիայի միջոցով: Այժմ, երբ Մեսիան եկել և կատարել է Հին կտակարանի բոլոր մարգարեությունները և խոստումները, փրկությունը միայն Նրա անվան և Նրա փրկարար աշխատանքի մեջ է:

2. Որպեսզի համոզված լինենք, որ ճշտորեն ենք մեկնաբանում Հիսուսի խոսքերը, մենք միայն պետք է նայենք մի քանի համարձակ պնդումների՝ առաքյալների քարոզներից կամ գրվածքներից: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան խոսքերի՝ ինչպե՞ս էին նրանք մեկնաբանում Հիսուս Քրիստոսի Անձը և փրկարար աշխատանքը: Նա բազմաթիվ փրկիչներից ***մե՞կն*** է, թե՞ ***միակ*** Փրկիչն է:

ա. Գործք 4.12

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հազիվ թե Պետրոսը կարողանար ավելի պարզ նկարագրել Քրիստոսի և Նրա փրկության եզակի բնույթը: Նրա խոսքերը հիշեցնում են Աստծո կողմից արված հայտարարությունները, որոնք տրվել են Եսայի մարգարեի միջոցով. «Ես՝ Ես եմ Եհովան, և Ինձնից ջոկ Փրկիչ չկա» (Եսայի 43.11) և «Ուրիշ Աստված չկա Ինձնից ջոկ, ճշմարիտ և փրկող Աստված չկա՝ բացի Ինձնից» (Եսայի 45.21բ): Սա քրիստոնեության մեծ դրոշն է: Որքան էլ որոնենք արարչագործության ցանկացած տիրույթում, անկարելի է գտնել այնպիսի անձնավորության, որն արժանի է Փրկչի տիտղոսին՝ բացի Աստծո Գառից:

բ. Ա Կորնթացիների 3.11

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ամբողջ Աստվածաշնչում Քրիստոսը կոչվում է այն հիմքը և անկյունաքարը, որի վրա հենվում է փրկությունը և Եկեղեցին (Եսայի 28.16, Մատթեոս 21.42, Գործք 4.11, Եփեսացիների 2.20, Բ Տիմոթեոս 2.19, Ա Պետրոս 2.6): Աստված դրել է միայն մեկ հիմնաքար, որը Քրիստոսն է: Միայն Նա է Աստծո կնիքը:

գ. Ա Տիմոթեոս 2.5

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Վարդապետությունը միայն Քրիստոսով փրկվելու մասին՝ հիմքային է համարվում աստվածաշնչյան քրիստոնեության համար, ինչպես և վարդապետությունը միաստվածության մասին (հավատք առ այն, որ կա միայն մեկ Աստված)։ «Միջնորդ» բառը թարգմանված է հունարեն ***«մեսի՛տես»*** բառից, որը նշանակում է «միջնորդ դատավոր կամ կապակցող անձ»։ Մեր ներկա համատեքստում այն վերաբերում է միջնորդ դատավորի՝ Աստծո և մարդկանց միջև։ Հիսուսին «մարդ» անվանելով՝ այս խոսքը չի մերժում Նրա աստվածությունը, այլ շեշտադրում է Նրա մարդկային էությունը, որպեսզի մխիթարություն բերի հավատացյալներին։ Մեր Միջնորդը մեզ նման է, և Նա չի ամաչում մեզ եղբայրներ անվանելուց (Եբրայեցիների 2.11)։

դ. Ա Հովհաննես 5.12

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կրկին, այս տեքստի պարզությունն անվիճարկելի է։ Ճշմարիտ հոգևոր կյանքը և հավիտենական կյանքի հույսը՝ այն ամենը, ինչ մարդը ստանում է՝ հաշտվելով Աստծո հետ, կախված է Քրիստոսի հետ ունեցած հարաբերություններից։ «Միայն Քրիստոսում» արտահայտությունը Նոր կտակարանի հեղինակների կայուն սկզբունքն ու կարգախոսն է։ Մարդիկ կարող են չհամաձայնել նրանց վկայության հետ, որ Քրիստոսը՝ միակ Ճանապարհն է, բայց ոչ ոք չի կարող ժխտել, որ նրանք վկայում են հենց այդ մասին։

3. Գործք 5.31 և 11.17,18 խոսքերում կա երկու պնդում այն մասին, որ փրկությունը միայն Քրիստոսում է։ Համաձայն այս խոսքերի՝ Քրիստոսին չի կարելի անվանել միայն հրեաների Փրկիչը (այսինքն՝ ոչ հեթանոսների), և ո՛չ էլ՝ միայն հեթանոսների Փրկիչը (այսինքն՝ ոչ հրեաների), այլ՝ Նա Աստծուց որոշված Փրկիչն է բոլոր ժողովուրդների համար։

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ա. Ի՞նչ է առաքյալը հայտնում Գործք 5.31-ում Քրիստոսի և հրեաների վերաբերյալ:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կողմից Հիսուսին բարձրացնելը ապացույց է, որ Նա Աստծո կողմից սահմանված Փրկիչն է, Ով փրկություն է տալիս Իր հին ժողովրդին՝ հրեաներին:

բ. Համաձայն Գործք 11.17,18-ի՝ ի՞նչ խոստովանեցին հրեա քրիստոնյաները այն բանից հետո, երբ լսեցին Պետրոսից, որ Աստված փրկեց հեթանոսներին: Արդյո՞ք Քրիստոսը Աստծուց որոշված Փրկիչն է միայն հրեաների համար, թե՞ նաև հեթանոսների:

_____

_____

_____

_____

4. Հռոմեացիների 1.16-ում Պողոս առաքյալը շատ կարևոր պնդում է անում այն մասին, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանը մարդկության փրկության միակ միջոցն է: Կարդացե՛ք այս հատվածը և գրե՛ք ձեր մտքերը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Անհրաժեշտ է մեծ զորություն (հունարեն՝ ***«դո՛ւնամիս»***)՝ հոգևորապես մահացած մարդկանց վերածնելու, մեղավորներին արդարացնելու և անմաքուրներին սրբելու համար: Նման զորություն ունի ***միայն Ավետարանը***, որը մատնացույց է անում ***միայն Քրիստոսին***՝ միակ Փրկչին, որով մարդիկ կարող են փրկվել:

Գլուխ 29. Մեր Բարձրյալ Միջնորդը

Քրիստոսի փրկարար աշխատանքը չի ավարտվում Նրա խաչի մահով. այն շարունակվում է Նրա մեծարված և բարձրյալ դիրքում: Քրիստոսը այն Քահանայապետն է, Ով մատուցեց կատարյալ զոհը՝ Իր Անձը, որպեսզի բավարարեր Աստծո արդարադատությունը և փրկեր Իր ժողովրդին բարկությունից, բայց Նա նույնպես այն Մեծ Քահանայապետն է, Ով Երկնքում է Իր ժողովրդի փոխարեն և հավիտյան ապրում է, որ բարեխոսի նրանց համար Աստծո առջև: Մարմնավորման ժամանակ Որդին հագավ Իր ժողովրդի մարդկային էությունը, որպեսզի մահանար նրանց փոխարեն: Այժմ Որդին կանգնած է Երկնքում՝ հագած նույն մարդկային էությունը, որն արդեն փառավորված է, և ներկայացնում է Իր ժողովրդին Աստծո առջև՝ որպես նրանց Միջնորդ և Բարեխոս (կամ՝ Դատապաշտպան): Այս և հաջորդ գլուխներում ավելի մանրամասնորեն կդիտարկենք այս երկու դերերը՝ Միջնորդ (այս գլխում) և Բարեխոս (կամ՝ Դատապաշտպան, հաջորդ գլխում):

«Միջնորդ» բառը լատիներենում ***«մեդիարե»*** բառն է, որը նշանակում է «լինել մեջտեղում»: Հունարենում «միջնորդ» բառը ***«մեսի՛տես»*** բառն է (կազմված ***«մեսիտեո՛ո»*** բայից, որը նշանակում է «համաձայնության գալ»): «Միջնորդ» բառի հետևյալ սահմանումները կօգնեն մեզ հասկանալ այն:

> «Նա, ով դրդում է կամ օգնում է կողմերին համաձայնության գալ՝ երաշխավորելով նրանց պայմանավորվածությունը» (*«Լոուի և Նայդայի հունարեն բառարան»*):

> «Նա, ով կապակցում է երկու կողմերը. նա, ով միջամտում է՝ երկու հակառակ կողմերը հաշտեցնելու համար. միջնորդ դատավոր. հաղորդակցության միջնորդ երկու կողմերի միջև. միջնորդ կողմ» *(«Մաունսի հունարեն բառարան»):*

Վեբսթերը սահմանում է «միջնորդ» բառը որպես «նա, ով լիազորված է և կարող է միջամտել երկու կողմերի միջև, որպեսզի հաշտեցնի նրանց»: Աստծո և մարդկանց միջև պատշաճ միջնորդ լինելու համար անհրաժեշտ էր, որ Նազովրեցի Հիսուսը լիներ և՛ Աստված, և՛ Մարդ՝ մեկ Անձում: Նա պետք է լիարժեք Մարդ լիներ, որ դներ Իր ձեռքը մարդու վրա, հայտներ Աստծուն և մխիթարություն բերեր: Նա պետք է լիարժեք Աստված լիներ, որ դներ Իր ձեռքն Աստծո վրա, լիներ աստվածային մեծության լիարժեք հայտնությունը և միջնորդեր մարդկանց համար: Նման իշխանությունը նույնիսկ ամենաբարձր արարածին վերագրելը ամենասարսափելի հայհոյությունը կլիներ: Այն փառահեղ սերովբեները, որոնք բնակվում էին անմիջապես Աստծո գահի սրահում, նույնիսկ չէին համարձակվում անվանել իրենց Նրա արտացոլքը, առավել ևս՝ պարզել իրենց ձեռքերը և անվանել իրենց Նրա միջնորդը: Որքան էլ վեհաշուք լինեին, նրանք ընդամենը համարձակվում էին խոնարհեցնել գլուխները, ծածկել իրենց և աղաղակել, որ միայն Նա է սուրբ, սուրբ, սուրբ (Եսայի 6.2,3):

Միջնորդությունը վեր է ցանկացած արարածի կարողությունից: Այն պաշտոն է, որը պատկանում է միայն Քրիստոսին: Միայն Նա է լիազորված կանգնելու Աստծո առջև մեր փոխարեն, որովհետև միայն Նա է Աստվածության լիությունը՝ մարմնով: Նա լիարժեք Աստված է, և Նա նույնպես Մարդ է՝ մեզ նման, բայց՝ առանց մեղքի:

1. Ադամի անկումից ի վեր մարդկության մեծագույն կարիքն այն էր, որ ինչ-որ մեկը ներկայացներ իրենց Աստծո առջև և գործեր որպես միջնորդ: Նման ներկայացուցիչը մարդու միակ հույսն էր՝ Աստծո հետ հաշտվելու համար: Այս հինավուրց խնդիրը պարզորեն պատկերվում է Հոբի գրքում: Ո՞րն էր Հոբի ամենամեծ բողոքը Հոբ 9.29-33-ում: Գրե՛ք ձեր մտքերը այս հատվածից արված մեջբերումների մասին:

ա. «Ես պիտի ամբարիշտ լինեմ, ուրեմն ինչո՞ւ համար զուր տեղը տանջվեմ: Եթե ձյան ջրի մեջ լվացվեմ և մոխրաջրով մաքրեմ ձեռքերս, այն ժամանակ էլ ինձ փոսի մեջ կկոխեիր, և իմ հանդերձը կզզվեր ինձնից» (խս. 29-31):

ՆՇՈՒՄՆԵՐ. Յոբը հասկացավ երկու կարևոր ճշմարտություն: Առաջինը՝ ինչպես բոլոր մարդիկ, նա մեղավոր էր Աստծո առջև: Երկրորդը՝ իր բոլոր ջանքերը, Աստծո առջև իրեն արդարացնելու համար, զուր էին: Երեմիա 2.22-ում Աստված հռչակում է. «Որովհետև եթե բորակով լվացվես և շատ օճառ գործածես, քո անօրինությունը պիտի մնա Իմ առջև իբրև արատ»: Սա սարսափելի իրողություն է այն մարդկանց համար, ովքեր ինչ-որ պատկերացում ունեն թե՛ Աստծո սրբության, թե՛ իրենց ծայր աստիճան բարոյական անկման մասին: Քրիստոսից և Նրա քավող զոհից, Նրա կողմից հաշվեգրված արդարությունից և Նրա մշտական միջնորդությունից անջատ՝ մարդն անհույս է:

բ. «Որովհետև Նա ինձ նման մարդ չէ, որ պատասխանեի Նրան, միասին դատաստան գնայինք» (խս. 32):

ՆՇՈՒՄՆԵՐ. Յոբը հասկացավ, որ Աստված սուրբ է՝ առանձնացված մեղավորներից և անհասանելի մարդկանց համար: Սա Աստծո ճշմարիտ ճանաչողության հետ եկող առաջին կամ հիմնարար ճշմարտություններից մեկն է: Աստված ասաց Մովսեսին. «Դու Իմ երեսը չես կարող տեսնել, որովհետև մարդ չի կարող Ինձ տեսնել և ապրել» (Ելից 33.20): Յոբը հասկացավ այս ճշմարտությունը: Նա նույնիսկ չէր համարձակվի պատկերացնել, որ կարող էր մուտք գործել Աստծո ներկայության մեջ: Այս հարցը վերաբերում է թե՛ Յոբին, թե՛ մեզ. «Ինչպե՞ս մենք կարող ենք մոտենալ Աստծուն»: Անհրաժեշտ է միջնորդ՝ այնպիսին, որն անարգել մուտք է գործում Աստծո ներկայության մեջ, և որի հետ մենք մխիթարություն կստանանք:

գ. «Մեր մեջտեղը միջնորդ դատավոր չի լինի, որ ձեռքը մեր երկուսի վրա դներ» (խս. 33):

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Միջնորդ դատավոր» բառակապակցությունը թարգմանված է եբրայերեն ***«յակախ»*** բառից, որը նշանակում է «միջնորդ դատավոր կամ հաշտարար դատավոր»: Հոբը հասկացավ, որ միջնորդի կարիք ունի, ով լիազորված է կանգնելու իր և Աստծո միջև: Ա Թագավորաց 2.25-ում գրված է. «Եթե մարդ մարդու դեմ մեղք գործի, նրա դատաստանը Աստված կկտրի, բայց եթե մարդ Տիրոջ դեմ մեղք գործի, նրա համար ո՞վ աղաչանք կանի»: Այս ճշմարտությունը՝ Հոբի բողոքի հիմքն է: Հարմար Միջնորդը պետք է Մարդ լիներ, որպեսզի կարողանար դնել Իր ձեռքը Հոբի վրա, բայց Նա նույնպես պետք է Աստված լիներ, որպեսզի կարողանար դնել Իր ձեռքն Աստծո վրա: Հիսուսն ունի այս երկու որակավորումները: Նա Մարդ է, Ով կարող է կարեկցել մեր տկարություններին, և Նա նույնպես Աստծո Որդի է, Ով անցել է երկինքներով, նստած է Աստծո աջ կողմը և ամեն օր բարեխոսում է Իր ժողովրդի համար:

2. Աստվածաշունչն ազդարարում է, որ մարդկանց մեծագույն կարիքն է՝ ունենալ այնպիսի միջնորդ, որը կարող է կանգնել իրենց և Աստծո միջև: Աստվածաշունչը նաև սովորեցնում է, որ Աստված հոգացել է այս կարիքը Հիսուս Քրիստոսի Անձում: Ի՞նչ է հայտնում Ա Տիմոթեոս 2.5-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեկ Աստված» արտահայտությունը Իսրայելի և Եկեղեցու մեծ դավանանքն է (Երկրորդ Օրինաց 6.4): Քրիստոսին որպես ***միակ*** Միջնորդ մերժելը հավասար է Սուրբ գրքի Աստծուն որպես ***միակ*** Աստված մերժելուն: Ինչպես նշված է վերևում, «միջնորդ» բառը թարգմանված է հունարեն ***«մեսի՛տես»*** բառից, որն ունի միջնորդի կամ միջնորդողի իմաստ: Այն նույնպես նշանակում է. «մարդ, ով

միջնորդում է երկու կողմերի միջև՝ խաղաղություն հաստատելու կամ վերականգնելու, դաշինք կնքելու կամ համաձայնություն հաստատելու համար»: Նշելով երկու կողմերի (Աստված և մարդիկ) շաղկապվող հարաբերությունները՝ Պողոսը մատնանշում է Միջնորդին ներկայացվելիք եզակի պահանջները: Նա պետք է ունենա աստվածության լիությունը, որպեսզի մոտենա Աստծուն և լինի մեր Բարեխոսը (կամ՝ Դատապաշտպանը, Ա Հովհաննես 2.1): Սակայն Նա նույնպես պետք է լիարժեք մարդ լինի, որպեսզի իրավաբանորեն կանգնի մեր տեղում և քավություն անի մեր մեղքերի համար, չգերազանցի մեզ Իր մեծությամբ, հայտնի դարձնի Աստծուն մեզ համար և կարողանա կարեկցել մեզ մեր տկարությունների մեջ (Եբրայեցիների 4.15): «Մարդ» բառը «Հիսուս Քրիստոս» անունից առաջ դնելով՝ Պողոս առաքյալը չի փորձում ժխտել կամ նույնիսկ նսեմացնել Քրիստոսի աստվածությունը. նա պարզապես շեշտադրում է Քրիստոսի մարդկային էությունը Միջնորդի դերում, որի միջոցով տկար մարդիկ կարող են մոտենալ Աստծուն: Չմերժելով Քրիստոսի աստվածությունը՝ Պողոսը ցույց է տալիս, որ Քրիստոսը մեզ նման է:

3. Աստծո Խոսքը սովորեցնում է, որ Հիսուս Քրիստոսը միակն է, Ով լիազորված է՝ լինելու Միջնորդ Աստծո և մարդու միջև: Որպես Աստված-Մարդ՝ Նա կարող է լինել երկու կողմերի ներկայացուցիչ և հաշտություն բերել նրանց միջև: Ի՞նչ է սովորեցնում Եբրայեցիների 4.15,16-ը այս ճշմարտության մասին:

   ա. «Որովհետև ոչ թե այնպիսի Քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարությունների հետ կարեկից լինել, այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձված՝ մեր նմանությամբ, բայց՝ առանց մեղքի» (խս. 15):

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսը՝ Մեծ Քահանայապետն է, որը ղևտական քահանայապետության խորհրդի վերջնական և մեծագույն իրականացումն է (Եբրայեցիների 4.14): «Կարեկից լինել» բառը թարգմանված է հունարեն ***«սումպաթե՛ո»*** բառից (***«սո՛ն»*** = «հետ + ***«պա՛սխո»*** = տառապել»), որը նշանակում է «կարեկից լինել մեկ այլ մարդու զգացմունքներին կամ տկարություններին»: Աստվածաշնչի «Ջեյմս թագավորի թարգմանության» (KJV) մեջ գրված է. «կարեկցել մեր տկարություններին»: «Տկարություններ» բառը թարգմանված է հունարեն ***«ասթենեյա»*** բառից («ա» = ***«ոչ»***, «ան» + ***«սթենոս»*** = «ուժ»), որը նշանակում է «տկարություն, թուլություն, նվազություն, անաշխատունակություն կամ անկարողություն»: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Քրիստոսը եկավ մեղավոր մարմնի նմանությամբ (Հռոմեացիների 8.3): Այս փաստը չի նշանակում, որ Նրա մարմինը մեղավոր էր, այլ ընդամենը՝ որ այն ենթակա էր անկում ապրած մարդկության բոլոր տկարություններին: Քրիստոսի մարմինը

մեղանչումից առաջ փառավորված ադամական մարմնի պես չէր, ինչպես մարդիկ հաճախ սխալմամբ ենթադրում են: «Փորձված» բառը թարգմանված է հունարեն ***«պեիրա՛զո»*** բառից: Դրական իմաստով, այս բառը նշանակում է «փորձել կամ ստուգել՝ ինչ-որ բանի որակը որոշելու համար»: Բացասական իմաստով, այն վերաբերում է մարդուն մեղքի դրդելուն կամ գայթակղեցնելուն: Այս խոսքում պարզորեն երևում է վերջին իմաստը: Քրիստոսը գայթակղության էր ենթարկվում սատանայի կողմից ամեն ինչով և սատանայի տրամադրության տակ եղած ամեն մի անկում ապրած գործիքով (մարդկանցով և դևերով): Կարևոր է նշել, որ ***«պեիրա՛զո»*** բայը գրված է կատարյալ ժամանակով: Քրիստոսն արդեն լիովին փորձվել է ամեն ինչում, ինչպես և մենք: Սա չի նշանակում, որ մենք բախվել ենք կամ կբախվենք բոլոր հնարավոր գայթակղություններին, բայց ***Նա անցել է այդ ամենով:*** Ահա թե ինչու Նա կարող է օգնել մեզ մեր ***բոլոր*** հանգամանքներում: Չկա այնպիսի գայթակղություն, որին Նա դեռ չի բախվել, և որը չի հաղթել: Այդ պատճառով, Նրա մասին գրված է. «առանց մեղքի»: Հավանաբար, սա Նազովրեցի Հիսուս Մարդու ամենից ապշեցնող առանձնահատկությունն էր. Նա լիովին անմեղ էր: Քրիստոսը միակ Անձնավորությունն է ամբողջ մարդկության մեջ, որի մասին կարելի է նման բան ասել:

բ. «Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհքի աթոռին, որ ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք՝ պատշաճ ժամանակին օգնելու» (խս. 16):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Համարձակություն» բառը թարգմանված է հունարեն ***«պարրհեսի՛աս»*** բառից, որը նշանակում է «անկեղծություն, ազատություն, լիարժեք համոզվածություն և նույնիսկ՝ խիզախություն»: Քանի որ Քրիստոսը ճշմարտապես մուտք է գործել մեր անկում ապրած մարդկային իրականության մեջ, քանի որ Նա հաղթել է մեղքը Գողգոթայի միջոցով, և քանի որ Նա ճշմարտապես կարեկցում է մեր ցավալի դրությանը, մենք կարող ենք համարձակ մոտենալ Նրան: Դատաստանի գահը վերածվել է Շնորհքի գահի: Քանի որ Քրիստոսը եկավ մեղավոր մարմնի նմանությամբ (Հռոմեացիների 8.3) և փորձվեց ամեն բանում, բայց չմեղանչեց, Նա միակն է, Ով կարող է կարեկցել մեր տկարություններին և օգնություն տրամադրել մեզ՝ ճիշտ այն տեսակի և այն չափով, որի կարիքը մենք ունենք, որպեսզի հաղթահարենք մեր հավատքի ամեն մի փորձությունը և սատանայի ամեն մի գայթակղությունը:

Գլուխ 30. Մեր Բարձրյալ Բարեխոսը

Որպես Միջնորդ՝ Քրիստոսը նաև Իր ժողովրդի Բարեխոսն է (կամ՝ Դատապաշտպանը)։ «Բարեխոս» բառը լատիներենում *«ադվոկատուս»* բառն է (*«ադ»* = «դեպի» + *«վոկարե»* = «կանչել») և նշանակում է «նա, ով կանչված է մեկ ուրիշի մոտ՝ նրա շահերը պաշտպանելու համար»։ «Բարեխոս» բառը թարգմանված է հունարեն *«պարաՆլեետոս»* բառից։ Այն վերաբերում է ինչ-որ մեկին, ով կանչված է մեկ այլ մարդու կողքին, որպեսզի օգնի նրան կամ բարեխոսի նրա համար դատավորի կամ թագավորի առջև։ Այս բառը նույնպես կարելի է թարգմանել «հայցվոր», «պաշտպան», «խորհրդատվություն՝ պաշտպանության համար» կամ «իրավաբան»։ Հիսուս Քրիստոսն Իր ժողովրդի Բարեխոսն է, և Նա հավիտյան ապրում է, որ բարեխոսի Իր ժողովրդի համար Աստծո գահի առջև։ Քրիստոսի բարեխոսական դերի լավագույն բացատրություններից մեկը կարելի է գտնել «Վեստմինստերի Մեծ Վարդապետարանի» Հարց 55-ում.

> ***Հարց***. Ինչպե՞ս է Քրիստոսը բարեխոսում։
>
> ***Պատասխան***. Քրիստոսը բարեխոսում է՝ շարունակ հանդես գալով երկնային Հոր առջև մեր մարդկային բնությամբ և երկրի վրա Իր հնազանդության ու զոհի արժանիքով։ Նա ազդարարում է Իր կամքը, որ իրականացնի այն բոլոր հավատացյալների կյանքում, պատասխանում է նրանց դեմ արված բոլոր մեղադրանքներին և նրանց համար ձեռք է բերում հանգիստ խիղճ (չնայած նրանց ամենօրյա ձախողումներին), համարձակ մուտք դեպի շնորհքի գահը և նրանց անձերի ու ծառայության հավանությունը՝ Աստծո կողմից։

Մինչև կշարունակենք ուսումնասիրել Աստվածաշունչը, կարևոր է նշել հետևյալը. Քրիստոսի շարունակական բարեխոսությունն Իր ժողովրդի համար չի նշանակում, որ Նա ծնկել է Աստծո գահի առջև և ողորմություն է աղերսում մեզ համար։ Քրիստոսը բարեխոսում է՝ որպես Նա, Ով նստում է Աստծո աջ կողմը, Ով ամենագետ է և տեղյակ է Իր ժողովրդի ամեն կարիքից, Ով նրանց փոխարեն խոսելու իշխանություն ունի, և Ով չեղյալ է դարձնում նրանց դեմ ուղղված ամեն մի մեղադրանք։ Հետևյալ մեջբերումները Ջ. Ի. Փաքերից (1926-), Վիլյամ Էյմսից (1576-1633) և Լուիս Բերկհոֆից (1873-1957)՝ օգտակար կլինեն մեզ համար.

> «Քրիստոսի բարեխոսության էությունն է՝ միջամտել մեր շահերի համար (Իր գահից), ոչ թե աղաչանքներ բարձրացնել մեր փոխարեն (ասես թե Նա խղճահարություն է զգում մեր հանդեպ, սակայն չունի փաստացի իշխանական դիրք կամ կարգավիճակ)»[24]։
>
> «Նրա թագավորական քահանայությունը մեզ համար խնդրելն է, ոչ թե՝ չարչարվելով, խոնարհ աղաչանքներով և ծունր դնելով, այլ՝ փառավոր կերպով հիշեցնելով այն ամենը, ինչ Ինքը կատարել և կրել է»[25]։
>
> «Քրիստոսը կանգնում է Աստծո առջև՝ որպես մեր Ներկայացուցիչ։ Նրա կատարյալ մարդկային բնությունը, Նրա պաշտոնական դիրքը և Նրա կատարած աշխատանքը բարեխոսում են մեզ համար Աստծո գահի առջև։ Որդու ինքնությունը՝ որպես մարմնավորված Աստված, և Նրա կատարած գործն այս երկրում մեզ համար էին, որպեսզի Աստված վերաբերվի մեզ նույն բարեհաճությամբ, որին արժանի է Որդին։ Այդ իսկ պատճառով, Նրա ներկայությունը հավերժական և գերազանց բարեխոսություն է Աստծո առջև Իր ժողովրդի համար, որը նրանց համար ապահովում է Իր փրկության բոլոր առավելությունները»[26]։

---

[24] Ջ. Ի. Փաքեր, *«Համառոտ աստվածաբանություն»*, էջ 128
[25] Վիլյամ Էյմս, *«Աստվածաբանության ոսկրածուծը»*, էջ 148
[26] Լուիս Բերկհոֆ, *«Համակարգված աստվածաբանություն»*, հտ. 2, էջ 593

1. Եբրայեցիների 9.24-ը ցույց է տալիս Քրիստոսի բարեխոսական ծառայության զորությունը և արդյունավետությունը Իր ժողովրդի համար: Համաձայն այս խոսքի՝ ինչո՞վ է Քրիստոսի ծառայությունը տարբերվում Հին կտակարանի քահանաների ծառայությունից: Որքանո՞վ է Քրիստոսը մոտ Աստծուն: Ինչպե՞ս է այս փաստն ապացուցում Նրա բարեխոսության ազդեցիկ լինելը Իր ժողովրդի համար:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հին կտակարանի քահանաներն ամեն տարի մուտք էին գործում երկրային տաճարը, որպեսզի մատուցեին կենդանական զոհաբերություններ և բարեխոսեին ժողովրդի համար: Մեկընդմիշտ մատուցելով Իր Անձը որպես անսահման արժեք ունեցող զոհ՝ Քրիստոսը հավիտյան մուտք գործեց անմիջապես Աստծո գահի սրահը և այժմ ապրում է, որ բարեխոսի Աստծո առջև մեզ համար:

2. Ա Հովհաննես 2.1,2-ում գրված է ամբողջ Աստվածաշնչի ամենակարևոր հատվածներից մեկը Որդու դերի մասին՝ որպես մեր Բարեխոսի (կամ՝ Դատապաշտպանի): Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո գրե՛ք ձեր կարծիքը հետևյալ պնդումների մասին:

ա. «Իմ որդինե՛ր, սա գրում եմ ձեզ, որ չմեղանչեք» (խս. 1):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն փաստը, որ մենք Բարեխոս ունենք Հոր առջև, չպետք է անտարբեր և անփույթ դարձնի մեզ սրբության և մեղքի վերաբերյալ: Ընդհակառակը՝ այն, որ Աստծո Որդին մեծ աշխատանք է կատարել մեզ համար, պետք է հնազանդության դրդի մեզ:

բ. «Եվ եթե մեկը մեղանչի, բարեխոս ունենք Հոր մոտ՝ Հիսուս Քրիստոս արդարին» (խս. 1):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Նույնիսկ ամենահասուն քրիստոնյան դեռևս ենթակա է բարոյական թուլության և մեղքի, և այն փաստը, որ մենք Բարեխոս ունենք Հոր մոտ, մեծ սփոփանք է մեզ համար: «Բարեխոս» բառը թարգմանված է հունարեն ***«պարակլետոս»*** բառից, որը նշանակում է «օգնական» կամ «նա, ով կանչված է՝ խոսելու մեկ ուրիշի փոխարեն»: Հիսուսը միակն է, որ լիազորված է այս դերի համար, քանի որ Նա արդար է և արժանի է կանգնելու Աստծո առջև:

գ. «Եվ Նա քավություն է մեր մեղքերի համար, և ոչ միայն մերինների, բայց ամբողջ աշխարհի էլ» (խս. 2):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քավություն» բառը թարգմանված է հունարեն ***«հիլասմոս»*** բառից, որը նշանակում է «խաղաղեցում» կամ «բավարարում»: Այս բառը նկատի ունի այնպիսի զոհ, որը տրվել է՝ տուժած կողմին խաղաղեցնելու համար: Քրիստոսը մեր քավությունն է՝ այն իմաստով, որ Նա զոհեց Իր կյանքը մեր մեղքերի համար: Նրա զոհը բավարարեց Աստծո արդարադատության պահանջները մեր հանդեպ և խաղաղեցրեց Նրա բարկությունը: Քրիստոսի զոհը չի սահմանափակվում հրեաներով կամ ցանկացած այլ ազգային խմբով, այլ ընդգրկում է ամեն ցեղի, լեզվի, ժողովրդի և ազգի (Հայտնություն 5.9):

3. Հռոմեացիների 8.33,34-ը մեկ այլ կարևոր հատված է Որդու բարեխոսական ծառայության մասին: Համաձայն այս հատվածի՝ ո՞րն է Նրա փրկարար աշխատանքի և բարեխոսական ծառայության արդյունքը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ո՞վ է, որ Աստծո ընտրվածների դեմ մեղադիր լինի» և «Ո՞վ է, որ դատապարտի» հարցերը նույնն են: Աստված ասես մարտահրավեր է նետում ամեն արարածի տիեզերքում՝ ներառյալ անձամբ սատանային: Պատճառը, թե ինչու Աստծո ընտրյալների դեմ անկարելի է որևէ մեղադրանք կամ դատապարտություն ներկայացնել, երկակի է: Առաջինը՝ Աստված արդարացրել է Իր ժողովրդին, այսինքն՝ անթերի իրավաբանական դիրք է շնորհել Իր առջև: Սա տեղի է ունեցել շնորհիվ այն կատարյալ կյանքի, որով Որդին ապրեց, և այն մահվան, որով Նա մահացավ Իր ժողովրդի համար: Երկրորդը՝ այժմ Որդին նստած է Աստծո աջ կողմը՝ որպես Իր ժողովրդի Բարեխոս և Պաշտպան:

4. Եբրայեցիների 7.23-25-ում Աստվածաշունչը նկարագրում է ոչ միայն Որդու բարեխոսության զորությունը և արդյունավետությունը, այլև դրա մշտատև բնույթը: Ամփոփե՛ք այս հատվածը ձեր բառերով:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածն ինքն է բացատրում իրեն: Իր անվերջ կյանքի զորությամբ Քրիստոսը կարող է հավիտյան փրկել նրանց, ովքեր մոտենում են Աստծուն Իր միջոցով: Բարեփոխող Ֆրենսիս Տուրրետինը գրել է, որ Քրիստոսը հայտնվում է Երկնքում որպես Գառ՝ «մորթվածի նման» (Հայտնություն 5.6), քանի որ «Նրա արյունը հավերժ թարմ և կենդանի է և ունի հավիտենական զորություն և ազդեցություն»[27]:

[27] *«Էլենկտիկ աստվածաբանության հիմունքներ»*, հտ. 2, էջ 485

5. Թեև Աստվածաշունչը ճշգրտորեն չի հայտնում Որդու երկնային բարեխոսության բնույթն Աստծո գահի առջև, կարելի է գտնել որոշ «բանալիներ» Նրա «Քահանայապետական աղոթքի» մեջ, որը Նա աղոթեց Իր աշակերտների համար Իր երկրային ծառայության ընթացքում (Հովհաննես 17.1-26)։ Ստորև այն խնդրանքների ցուցակն է, որոնք Քրիստոսը ներկայացրեց Իր ժողովրդի համար այդ աղոթքում։ Գտե՛ք ամեն մի խնդրանքին համապատասխան աստվածաշնչյան հատվածը։

_____ Հովհաննես 17.11,12	ա. Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի ապագա փառավորման համար
_____ Հովհաննես 17.13	բ. Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի միաբանության համար
_____ Հովհաննես 17.15	գ. Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի սրբացման համար
_____ Հովհաննես 17.17-19	դ. Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի պաշտպանության համար բոլոր սատանայական ուժերից (կարդացե՛ք նաև Ղուկաս 22.32)
_____ Հովհաննես 17.21-23	ե. Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի հարատևության համար
_____ Հովհաննես 17.24	զ. Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի ուրախության համար

Գլուխ 31. Քրիստոսը՝ Թագավոր

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստծո Որդին զրկեց Իրեն Իր աստվածային փառքից և արտոնություններից, հագավ մեր համեստ մարդկային էությունը և անարգ կերպով գամվեց հռոմեական խաչին՝ որպես մեղքի զոհ: Աստվածաշունչը նույնպես սովորեցնում է, որ նույն Հիսուսը հարություն առավ մեռելներից, համբարձվեց Երկինք և բարձրացվեց մինչև Աստծո գահը՝ որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր:

Երկինք համբարձվելով՝ Քրիստոսը փառավորվեց այն փառքով, որը Նա ուներ Հոր մոտ մինչև աշխարհի սկիզբը (Հովհաննես 17.5): Այնուամենայնիվ, Նրա փառավոր վիճակը՝ նախքան մարմնավորումը, և Նրա ներկա մեծարված վիճակը Երկնքում՝ տարբերվում են իրարից: Առաջինը՝ այժմ Քրիստոսն իշխում է որպես Աստված-Մարդ: Նա, Ով նստում է տիեզերքի գահի վրա, մարմին է՝ Իր ժողովրդի մարմնից, և ոսկր՝ Իր ժողովրդի ոսկրից: Երկրորդը՝ այժմ Քրիստոսը Փրկիչ Թագավոր է: Իր մահվան միջոցով Նա ժողովուրդ է փրկել Իր համար՝ ամեն ցեղից, լեզվից, ժողովրդից և ազգից, որը հավիտյան կթագավորի Իր հետ (Հայտնություն 5.9,10):

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԹԱԳԱՎՈՐ Է

Ամենասկզբից կարևոր է հասկանալ, որ Քրիստոսը պարզապես թագավոր չէ կամ ***նման*** չէ թագավորի: Նա ***միակ*** Թագավորն է: Իրականում, Նա երբևէ գոյություն ունեցող միակ ճշմարիտ Թագավորն է: Մնացած բոլորը, ովքեր թագավորել են կամ դեռ կթագավորեն, պարզապես Նրա Անձի և պաշտոնի աննշան շուքն են:

1. Կան բազմաթիվ հինկտակարանյան մարգարեություններ, որոնք կանխասում էին, որ Մեսիան մեծ թագավոր էր լինելու և իշխելու էր ազգերին: Գրե՛ք ձեր մտքերը հետևյալ մարգարեությունների վերաբերյալ:

   ա. Ծննդոց 49.10

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Դավիթ թագավորը և նրան հաջորդող թագավորները Հուդայի ցեղից էին: Մեսիան պետք է գար Դավթի տոհմից (Բ Թագավորաց 7.12-17): Նազովրեցի Հիսուսը Դավթի ժառանգն էր (Մատթեոս 1.1,6, Հռոմեացիների 1.3): Եբրայերեն «սելով» բառը պարզապես տառադարձություն է բնագրից: Գրեթե բոլոր աստվածաբանները թարգմանում են «Մինչև որ Սելովը գա» հատվածը որպես՝ «մինչև որ գա նա, ում դա պատկանում է», և մեկնաբանում են այն որպես հղում Մեսիային՝ մեծ Թագավորին: Դավիթն ընդամենը Նրա աղոտ շուքը կամ խորհրդապատկերն էր:

բ. Թվոց 24.17,18

ՆՇՈՒՄՆԵՐ. Բաղաամի վերջնական խոսքում Աստված հայտնություն տվեց նրան հեռավոր ապագայում Մեսիայի ծագման մասին: Նա ոչ միայն գրավելու էր Մովաբը և Եդոմը և իշխելու էր նրանց, այլև տիրելու և իշխելու էր բոլոր ազգերին:

գ. Միքիա 5.2

ՆՇՈՒՄՆԵՐ. Միքիա մարգարեն կանխասեց, որ մեսիական «Իշխանը» ծնվելու էր նույն քաղաքում, ինչ Դավիթ թագավորը (Ա Թագավորաց 16.1-13): Այնուամենայնիվ, Մեսիան Դավթից ավելի մեծ էր լինելու: Թեև Նա լինելու էր Դավթի սերնդից, Նա նույնպես Աստված էր, որի ելքը վաղուց՝ հավիտենական օրերից է:

2. Բ Թագավորաց 7.16-ում Դավթին և Նրա տանը (այսինքն՝ նրա սերունդներին) շատ հատուկ խոստում է տրված նրա թագավորության հաստատման և հարատևման վերաբերյալ: Ղուկաս 1.31-33-ում ակնհայտ է, որ այս խոստումը կատարվեց Հիսուս Քրիստոսի միջոցով: Կարդացե՛ք երկու հատվածներն էլ. բացատրե՛ք այն, որ Հիսուս Քրիստոսը՝ Դավթին տրված խոստման իրականացումն է:

3. Ե՛վ Հին, և՛ Նոր կտակարանի հեղինակները Թագավոր են անվանում Նազովրեցի Հիսուսին: Այնուամենայնիվ, կարևոր է հարցնել, թե ի՞նչ էր սովորեցնում Ինքը՝ Հիսուս Քրիստոսն այս մասին: Հովհաննես 18.37-ում ի՞նչ հռչակեց Նա Պիղատոսին: Որքանո՞վ են կարևոր Նրա խոսքերը:

_____

_____

_____

_____

_____

_____

4. Աստվածաշնչում անունը կամ տիտղոսը հաճախ կարևոր ճշմարտություններ է հայտնում այն կրողի մասին: Ի՞նչ անուններ կամ տիտղոսներ են տրված Հիսուս Քրիստոսին հետևյալ աստվածաշնչյան հատվածներում, և ի՞նչ են դրանք ցույց տալիս Նրա թագավոր լինելու մասին:

ա. Հ_____ Թ_____ (Մատթեոս 2.2): Հիսուսը Հուդայի ցեղին պատկանող Դավիթ թագավորի ժառանգն էր: Թեև հրեաների մեծ մասը մերժեց Նրան, Նա, միևնույն է, Աստծո կողմից նշանակված Իսրայելի Թագավորն է (Սաղմոս 2.6, Հովհաննես 1.49):

բ. Ե_____ Թ_____ վրա Բ_____ (Սաղմոս 89.27): Մեսիայի թագավորական իրավասությունը չի սահմանափակվում Իսրայելով, այլ ընդգրկում է աշխարհի բոլոր ազգերը և նույնիսկ այս աշխարհից դուրս գտնվող բոլոր ուժերը:

գ. Ե_____ Թ_____ Ի_____ (Հայտնություն 1.5): Այս երկրի մեծագույն թագավորները լավագույն դեպքում Նրա տեղակալներն են: Նրանք պարզապես գործադրում են այն իշխանությունը, որը ստացել են Քրիստոսից:

դ. Թ_____ Թ_____ (Հայտնություն 17.4, 19.16): Չկա ավելի մեծ տիտղոս՝ տրված Քրիստոսին, որը պատկերում է Նրա գերազանցությունը ամբողջ արարչագործության հանդեպ, և Նրա իշխանությունը, այսպես կոչված, «իշխանությունների» վրա:

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱԴՐՈՒՄԸ

«Թագադրում» բառը լատիներենում ***«կորոնարե»*** բառն է, որը նշանակում է «թագադրել կամ զարդարել ծաղկեպսակով»: Համաձայն Սուրբ գրքի՝ Քրիստոսը, Ով մահացավ Իր ժողովրդի մեղքերի համար, հարություն առավ մեռելներից և բարձրացվեց Հոր աջ կողմը: Նա թագադրվեց որպես երկնքի և երկրի մեծ Թագավոր, և Նրա գավազանը իշխում է բոլորին:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

1. Լինելով Հիսուս Քրիստոսի Համբարձման ականատեսները՝ առաքյալները համարձակ քարոզում էին ճշմարտությունը նրանց, ովքեր ուզում էին լսել: Գործք 2.36-ում գրված է շատ կարևոր հռչակում Պետրոսի կողմից: Ինչ է այն սովորեցնում մեզ Քրիստոսի իշխանության մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Տիեզերքի ամենակարող Աստված կարգել էր Նազովրեցի Հիսուսին և՛ Տեր, և՛ Քրիստոս: Նրա որոշումը չեղյալ չի դարձվի (Սաղմոս 2.1-6): Հիսուսն է Իսրայելի Մեսիան և բոլորի Տերը:

2. Սաղմոս 110.1-ը կարևոր մարգարեություն է այն մասին, որ Մեսիան բարձրացվելու է Հոր աջ կողմը՝ որպես Տեր և Թագավոր[28]: Մտորե՛ք այս խոսքի շուրջ, իսկ հետո գրե՛ք ձեր մտքերը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Տերը (Յահվեհը) խոսեց Դավթի Տիրոջ (Մեսիայի) հետ՝ շնորհելով Նրան Իր աջ կողմը նստելու և Իր հետ իշխելու իրավունքը: Այս փաստը ոչ միայն ցույց է տալիս, որ Մեսիան գերազանցում է Դավիթ թագավորին, այլև ապացուցում է, որ Նա մեծարված է՝ որպես երկնքի և երկրի Տեր: Դրա հետ մեկտեղ, այն հավաստիացնում է մեզ, որ, ի վերջո, Քրիստոսը պարտության կմատնի բոլոր ուժերը, որոնք ընդդիմանում են Իրեն և Իր ժողովրդին:

3. Դանիել 7.13,14-ը Աստվածաշնչի ամենափառավոր հատվածներից մեկն է այն մասին, որ Քրիստոսը մեծարվելու է՝ որպես Թագավոր: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո գրե՛ք ձեր մտքերը դրա առանձին մասերի վերաբերյալ:

[28] Հիսուսը բացատրում է այս խոսքը Մատթեոս 22.41-45-ում:

ա. «Եվ տեսնում էի գիշերվա տեսիլքներում, և ահա երկնքի ամպերով գալիս էր Մարդու Որդու նման, և մինչև Հինավուրցը եկավ, և Նրա առջև մոտեցրին Նրան» (խս. 13):

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը՝ Մարդու Որդին է (Մատթեոս 26.64, Մարկոս 14.62): Եթե «հինավուրց» բառը վերաբերեր մարդուն, այն կնշանակեր մաշվածություն, տկարություն և թուլություն: Այնուամենայնիվ, երբ այս բառը վերաբերում է Աստծուն, այն մատնանշում է Նրա հավիտենական էությունը, իմաստությունը և զորությունը:

բ. «Եվ Նրան տրվեց իշխանություն և պատիվ և թագավորություն, որ բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները Նրան ծառայեն» (խս. 14):

ՆՇՈՒՄՆԵՐ. Այստեղ մենք տեսնում ենք Քրիստոսի գերիշխանության ընդլայնումը: Բոլոր այս բառերը միասին ցույց են տալիս, որ Քրիստոսը ստացավ ***ամբողջ*** իշխանությունը ***բոլոր*** ժողովուրդների վրա:

գ. «Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնի, և Նրա թագավորությունը չի քանդվի» (խս. 14):

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՓԱՌԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ՆՇՈՒՄՆԵՐ. Այստեղ մենք տեսնում ենք Քրիստոսի գերիշխանության հավիտենական բնույթը: Նույն անսահման գերիշխանությունը, որը Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորը վերագրեց Բարձրյալ Աստծուն (Դանիել 4.34,35), այժմ վերագրվում է Մարդու Որդուն՝ Նազովրեցի Հիսուսին: Այս իրողության հետաքրքրական զուգահեռներից մեկը Հովսեփի մեծարումն է փարավոնի կողմից Ծննդոց 41.44-ում: Հովսեփը դուրս բերվեց բանտից և բարձրացվեց Փարավոնի աջ կողմը, որ ոչ ոք չկարողանար բարձրացնել իր ձեռքը կամ ոտքը ամբողջ Եգիպտոսի երկրում՝ առանց նրա թույլտվության: Նմանապես, բայց անսահմանորեն ավելի լայն իմաստով՝ Հիսուսը հարություն առավ մեռելներից և նստեց Աստծո աջ կողմը Երկնքում, որպեսզի ոչ ոք չկարողանա բարձրացնել իր ձեռքը կամ ոտքը ամբողջ տիեզերքում՝ առանց Նրա թույլտվության:

Գլուխ 32. Քրիստոսը՝ Տեր

Քրիստոսի թագավորական դիրքն անմիջականորեն առնչվում է Նրա իշխանության հետ: Նա պարզապես դրածո չէ. Նա տիրում է բացարձակ իշխանությամբ և անվերջ զորությամբ, և Նրա տիրապետությունն անսահման է: Չկա այնպիսի վայր կամ արարած, որին Նրա գավազանը չհասնի: Ինչպես որ Պետրոսը համարձակ հռչակեց Պենտեկոստեի օրը՝ «Հիմա թող ստույգ գիտենա Իսրայելի ամբողջ տունը, որ Աստված Նրան Տեր և Օծյալ արեց, սույն այս Հիսուսին, որին դուք խաչեցիք» (Գործք 2.36): Մեկ օր ամեն ծունկ կծալվի և ամեն լեզու կդավանի, որ Հիսուս Քրիստոսն է Տերը:

1. Աստվածաշնչում անունը կամ տիտղոսը հաճախ կարևոր ճշմարտություններ է հայտնում այն կրողի մասին: Ի՞նչ անուններ կամ տիտղոսներ են տրված Հիսուս Քրիստոսին հետևյալ աստվածաշնչյան հատվածներում, և ի՞նչ են դրանք ցույց տալիս Նրա գերագույն իշխանության մասին:

   ա. Տ_____ (Հովհաննես 13.13, Գործք 2.36, Հռոմեացիների 10.9, Բ Կորնթացիների 4.5): Այս բառը թարգմանված է հունարեն ***«կյո՛ւրիոս»*** բառից, որը նշանակում է «իշխանություն ունեցող անձ, օրինակ՝ ղեկավար, տեր կամ սեփականատեր»: Այն հաճախ օգտագործվում է որպես հարգալից դիմելաձև, ինչպես «պարոն» բառը: Նոր կտակարանում այս բառը փոխանցում է հրեական գաղափարն այն մասին, որ Աստված Տեր է: Այն նույնպես օգտագործվում է Աստծո անձնական անունը (***Յահվեհ*** կամ ***Եհովա***) թարգմանելու համար (Մատթեոս 1.22, 5.33, Մարկոս 5.19, Ղուկաս 1.6,9,28,46, Գործք 7.33):

   բ. Ա_____ Տ_____ (Գործք 10.36, Հռոմեացիների 10.12): Այս տիտղոսը ցույց է տալիս Քրիստոսի գերիշխանության համընդգրկուն բնույթը. ոչինչ դուրս չի մնում Նրա տիրապետության սահմաններից:

   գ. Տ_____ Տ_____ (Հայտնություն 17.14, 19.16): Մեծագույնները մարդկանցից, հրեշտակներից և դևերից՝ ենթակա են Քրիստոսին: Նա նստած է շատ ավելի բարձր ամեն իշխանությունից, պետությունից, զորությունից և տերությունից (Եփեսացիների 1.20,21):

   դ. Փ_____ Տ_____ (Ա Կորնթացիների 2.8): Այլ խոսքերում Աստված է անվանվում Փառքի Թագավոր (Սաղմոս 24.7-10) և Փառքի Աստված (Սաղմոս 29.3, Գործք 7.2): Այդ իսկ պատճառով, այս տիտղոսը վերաբերում է ոչ միայն Քրիստոսի գերիշխանությանը, այլև Նրա աստվածությանը:

   ե. Մ_____ և Կ_____ Տ_____ (Հռոմեացիների 14.9): Այս խոսքում գրված է ճշմարտությունն այն մասին, որ չկա այնպիսի վայր կամ տիրույթ, որը հասանելի չէ Քրիստոսի տիրապետության համար: Նույնիսկ մահը չի ազատում Նրա տիրապետությունից:

   զ. Ամեն Ի_____ և Պ_____ Գ_____ (Կողոսացիների 2.10): «Գլուխ» բառը թարգմանված է հունարեն ***«կեֆալե»*** բառից: Փոխաբերական իմաստով, խոսքն այնպիսի անձնավորության մասին է, որն իշխան, ղեկավար կամ առաջնորդ է, կամ ունի ենթականեր: Օգտագործելով «իշխանություն» և «պետություն» բառերը՝ Պողոսը կրկնակի շեշտադրում է, որ ցանկացած տեսակի և ձևի իշխանություն ենթակա է Քրիստոսին:

է. Ի_____ և Տ_____ (Հուդա 4): «Իշխան» տիտղոսը թարգմանված է հունարեն ***«դեսպո՛տես»*** բառից, որը վերաբերում է ինչ-որ մեկի, ով ունի ամբողջական կամ բացարձակ իշխանություն մեկ այլ անձնավորության հանդեպ: Այն օգտագործվում է Աստծո վերաբերյալ Ղուկաս 2.29, Գործք 4.24 և Հայտնություն 6.10 խոսքերում:

2. Մատթեոս 28.18-ում հարություն առած Քրիստոսը կարևոր հայտարարություն արեց Իր աշակերտներին մինչև Երկինք համբարձվելը: Ի՞նչ է այն սովորեցնում մեզ Նրա իշխանության մասին: Ի՞նչ հետևություններ կարող ենք անել դրանից:

_____

_____

_____

_____

3. Փորձելով ըմբռնել Քրիստոսի գերիշխանության չափը, որի մասին Նա հայտարարեց Մատթեոս 28.18-ում՝ օգտակար է դիտարկել մի քանի աստվածաշնչյան խոսքեր, որոնք խոսում են Աստծո բացարձակ գերիշխանության մասին: Հետևյալ հատվածների լույսի ներքո համառոտ նկարագրե՛ք, թե ինչ է նշանակում այն պնդումը, որ Հայրը լիազորել է ամբողջ իշխանությունն Իր Որդուն: Ո՞րն է Որդու գերիշխանության և զորության չափը:

ա. Բ Մնացորդաց 20.6

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հարցերը հռետորական են: Հովսափատ թագավորը բոլորովին չէր կասկածում Աստծո բացարձակ գերիշխանության մեջ. ընդհակառակը, նա ազդարարում էր դա:

բ. Հոբ 23.13

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Նա մեկ մտքի վրա է» արտահայտությունը բառացիորեն նշանակում է՝ «Նա մեկ է»: Դա կարող է վերաբերել Աստծո եզակի լինելուն կամ այն ճշմարտությանը, որ Նա անփոփոխ է: Ամեն դեպքում, ակնհայտ է, որ ոչ ոք չի կարող արգելել Աստծուն անել այն, ինչ Նա որոշել է:

գ. Սաղմոս 103.19

_____

_____

_____

դ. Սաղմոս 115.3, 135.6

_____

_____

_____

_____

ե. Եսայի 46.9,10, Եփեսացիների 1.11

_____

_____

_____

_____

4. Նոր կտակարանի հեղինակները պարզորեն գրում էին մեծարված Քրիստոսի գերիշխան թագավորական դիրքի մասին: Ինչպե՞ս են ստորև բերված հատվածները նկարագրում Նրա իշխանությունը:

ա. Եփեսացիների 1.20-22, Ա Պետրոս 3.22

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կրկին, Պողոս և Պետրոս առաքյալներն ամեն կերպ փորձում են ցույց տալ, որ ամեն տիրույթում գտնվող ամեն արարած ենթակա է Քրիստոսի իշխանությանը:

բ. Փիլիպեցիների 2.9-11

_____

_____

_____

_____

5. Սաղմոս 2-րդ գլխում գրված է Աստվածաշնչի ամենավեհ մարգարեություններից մեկը Մեսիայի թագավորական պաշտոնի մասին: Գրե՛ք ձեր մտքերն այս Սաղմոսի առանձին հատվածների վերաբերյալ: Ի՞նչ է այս մարգարեությունը սովորեցնում մեզ Քրիստոսի գերիշխանության մասին, և այն մասին, որ խիստ անհրաժեշտ է պատշաճ կերպով արձագանքել դրան:

ա. Խոսքեր 1-3

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում սաղմոսերգուն պատկերում է ազգերի ապստամբությունը և դրանց անզիջում թշնամանքը Աստծո գերիշխանության և Նրա ընտրած Թագավորի դեմ:

բ. Խոսքեր 4-6

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ազգերի ապստամբությունը զուր է՝ հաշվի առնելով Աստծո անսահմանափակ իշխանությունը և անսահման զորությունը:

գ. Խոսքեր 7-9

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսք 7-ը չի ժխտում Որդու հավիտենական գոյությունը. այն խոսում է Որդու թագադրման մասին՝ որպես մեսիական թագավորի։

դ. Խոսքեր 10-12

_____

_____

_____

_____

6. Հռոմեացիների 14.7-9-ը անչափ կարևոր հատված է Հիսուս Քրիստոսի իշխանության մասին։ Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին։

ա. Համաձայն խոսք 9-ի՝ ո՞րն էր Քրիստոսի մահվան և հարության մեծագույն նպատակներից մեկը։

_____

_____

_____

բ. Համաձայն խոսքեր 7,8-ի՝ ի՞նչ է Քրիստոսի իշխանությունը հավատացյալի համար։

_____

_____

_____

_____

Գլուխ 33. Քրիստոսը՝ Դատավոր

Մենք սովորեցինք, որ Սուրբ գիրքը համարձակ հռչակում է, որ Հիսուս Քրիստոսը թագավորների Թագավորն է, և որ Նրա անունը միակն է, որով մարդիկ կարող են փրկվել: Այս գլխում կտեսնենք, որ համաձայն Սուրբ գրքի՝ Քրիստոսը բարձրացվեց Աստծո աջ կողմը նաև՝ որպես բոլոր մարդկանց Դատավոր: Թեև այս պաշտոնը կարող է համարվել Նրա թագավորական դերի կողմերից մեկը, Սուրբ գիրքն այնքան ակնառու կերպով է խոսում Քրիստոսի դատավոր լինելու մասին, որ արժե առանձին դիտարկել սա: Գալու է մեկ օր, երբ ամբողջ մարդկությունը՝ առանց բացառության, դատվելու է, և բոլոր մարդկանց հավիտենական ճակատագրերը որոշելու է միայն Հիսուս Քրիստոս Մարդը: Առանց այս ճշմարտության, անկարելի է հասկանալ Ավետարանը:

ՔՐԻՍՏՈՍԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Անչափ կարևոր է հասկանալ, որ վարդապետությունը դատաստանի մասին՝ ճշմարիտ Ավետարանի անբաժանելի մասն է: Աստծո Խոսքը հավատարմորեն հռչակելու համար մենք պետք է քարոզենք Քրիստոսին, Ով եկավ՝ մահանալու Իր ժողովրդի մեղքերի համար, և գալու է երկրորդ անգամ, որ դատի և դատապարտի նրանց, ովքեր մերժեցին Իր փրկարար աշխատանքը:

1. Ճշմարտությունն այն մասին, որ Քրիստոսը վերադառնալու է մարդկանց դատելու համար, ոչ մի դեպքում երկրորդական չէ. այն ճշմարիտ Ավետարանի անբաժանելի մասն է: Ինչպե՞ս են Պողոսի խոսքերը Հռոմեացիների 2.16-ում հաստատում այս ճշմարտությունը:

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

2. Սուրբ գիրքը պարզորեն ցույց է տալիս, որ Քրիստոսին որպես Դատավոր հռչակելը և ապագա դատաստանի մասին խոսելը երկրորդական չեն. դրանք վճռական դեր են կատարում: Գործք 10.42-ի Պետրոսի հռչակումը ի՞նչ է սովորեցնում այս ճշմարտության մասին:

   _____

   _____

_____

_____

_____

_____

ԱՍՏԾՈՒՅ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԴԱՏԱՎՈՐԸ

Կարևոր է հասկանալ, որ Քրիստոսը ստանձնեց դատավորի պաշտոնը Աստծո նշանակմամբ: Ըստ Աստծո հաճության և գերիշխան որոշման՝ աշխարհը պետք է դատվի կատարյալ արդարությամբ՝ Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով: Սա ևս մեկ օրինակ է այն մասին, որ Հայր Աստված մշտապես հաղորդակցվում է տիեզերքի հետ Իր Որդու միջնորդությամբ. Հայրը ստեղծեց տիեզերքը Որդու միջոցով, Նա կառավարում է տիեզերքը Որդու միջոցով, և մեկ օր Նա դատելու է ամբողջ մարդկությանը Որդու միջոցով:

1. Ինչպե՞ս է Պողոս առաքյալը նկարագրում Տեր Հիսուս Քրիստոսին Բ Տիմոթեոս 4.1-ում: Գրե՛ք ձեր մտքերն այս հռչակման կարևորության մասին:

   ա. Նա, Ով Դ_____ է Կ_____ և Մ_____:

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կենդանիներին և մեռելներին» արտահայտությունն ընդգրկում է ամբողջ մարդկությունը: Քանի որ Քրիստոսը «մեռելների և կենդանիների» Տերն է (Հռոմեացիների 14.9), Նա նույնպես նրանց Դատավորն է: Նույնիսկ մահը՝ փախուստ չէ Նրա գերիշխան դատավճռից:

2. Ինչպես արդեն ասվեց, Հայր Աստված վճռել է, որ արդարությամբ դատելու է աշխարհը Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով: Ի՞նչ է սովորեցնում Հովհաննես 5.22-27-ը այս մասին: Կարդացե՛ք այս հատվածը և գրե՛ք ձեր մտքերը:

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը չի ժխտում այն փաստը, որ Հայրը դատում է. Նա բացատրում է, որ Հայրն իրականացնում է դատաստանը Որդու միջոցով (Հռոմեացիների 2.16)։ Հայրը տվել է Որդուն զորություն և իշխանություն՝ ամբողջ մարդկությանը դատելու համար։ Որդուն շնորհված այս մեծ պատիվը ցույց է տալիս Նրա աստվածությունը, ինչպես նաև պարզաբանում է, թե ինչու մենք պետք է զգուշանանք, որ տանք Որդուն այն պատիվը, որին Նա արժանի է։ Համաձայն խոսք 23-ի՝ բացի այն, որ Հայրը դատում է Որդու միջոցով, մարդկությունը պատվում է Հորը, երբ պատվում է Որդուն, Ում Նա Դատավոր է նշանակել։ Համաձայն Դանիել 7.13,14-ի մարգարեության՝ Մարդու Որդին (Մեսիան) ստանալու է իշխանություն, պատիվ և թագավորություն. բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները ծառայելու են Նրան։ Նրա իշխանությունը հավիտենական է լինելու. այն չի անցնելու և չի քանդվելու։ Այդ Մարդու Որդին Հիսուսն է։

3. Գործք 17.31-ը ևս մեկ ազդեցիկ խոսք է այն մասին, որ Քրիստոսը բոլոր մարդկանց Դատավոր է նշանակվել Աստծո կողմից։ Ծանոթացե՛ք այս խոսքի բովանդակությանը և գրե՛ք ձեր մտքերը։

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված Իր գերիշխանությամբ որոշել է մեկ օր, որում ամբողջ մարդկությունը դատվելու է, և մարդկության պատմությունը շտապում է դեպի այդ օրը։ Այդ դատաստանը չի լինելու կամայական կամ անարդար. այն առանձնանալու է կատարյալ արդարադատությամբ։ Աստված որոշել է ոչ միայն Դատաստանի օրը, այլև այն Մարդուն, Ում միջոցով Նա իրականացնելու է այդ դատաստանը։ Այդ Մարդը՝ Իր Որդին է (կարդացե՛ք նաև Գործք 10.42)։ Նազովրեցի Հիսուսի հարությունը և համբարձումը ապացուցում և վավերացնում է, որ Նա է Քրիստոսը՝ Աստծո Որդին, տիեզերքի Գերագույն Տերը և Դատավորը։

ԱՐԴԱՐ ԵՎ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ԴԱՏԱՎՈՐ

Իր դատաստանների մեջ անսխալական լինելու համար, Աստված պետք է լինի կատարելապես արդար (առանց նույնիսկ աննշան բարոյական սխալի) և ամենագետ (լիովին տեղյակ ամեն մի փաստի մասին):

«Արդար» բառը թարգմանված է եբրայերեն ***«ցադիկ»*** բառից և համապատասխանաբար՝ հունարեն ***«դիկայոս»*** բառից: Երկու բառերն էլ նշանակում են «Աստծո արդարությունը, ճշգրտությունը կամ բարոյական գերազանցությունը»: Համաձայն Աստծո Խոսքի՝ Աստված բացարձակապես արդար Էակ է, և Նրա գործերը կատարելապես համապատասխան են Իր էությանը: Նա երբեք չի ունենա այնպիսի դիրքորոշում և չի անի այնպիսի բան, ինչը կարդարացնի ցանկացած անօրինություն: Այն օրը, երբ Աստված դատի բոլոր մարդկանց Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով, նույնիսկ դատապարտվածները կխոնարհեցնեն գլուխները և կխոստովանեն, որ Նրա դատաստանն արդար է:

«Ամենագետ» բառը լատիներենում «օմնիսիենս» բառն է (***«օմնիս»*** = «բոլորը» + ***«սիենս»***՝ ***«սիրե»*** բառից = «իմանալ») և նշանակում է ամբողջ գիտելիքն ունենալու հատկանիշ: Աստծո ամենագետ լինելը նշանակում է, որ Նա գիտի ամեն ինչ անցյալում, ներկայում և ապագայում՝ անմիջապես, առանց ջանք թափելու, միաժամանակ և սպառիչ կերպով: Չկա ոչինչ՝ թաքնված Աստծուց: Երբևէ չի եղել նույնիսկ աննշան տարբերություն Աստծո գիտելիքի և իրականության միջև: Նա գիտի այն ամենը, ինչ տեղի է ունեցել, և Նա մեկնաբանում է ամեն ինչ կատարյալ իմաստությամբ: Դատաստանի Մեծ օրը Քրիստոսը դատելու է ամեն մարդու՝ ըստ Իր կատարյալ գիտելիքի՝ բոլոր փաստերի մասին, այսինքն՝ ոչ մի մեղք թաքնված չի մնա և չի մոռացվի: Ամեն ստեղծված, ամեն գործ և ամեն միտք Նրա առջև են՝ բաց գրքի պես:

1. Աստվածաշնչում անունը կարևոր ճշմարտություններ է հայտնում այն կրողի մասին: Ինչ անուններ են տրված Հիսուս Քրիստոսին հետևյալ աստվածաշնչյան հատվածներում, և ինչ են դրանք ցույց տալիս Քրիստոսի դատաստանի արդար լինելու մասին:

ա. Ս_____ և Ա_____ (Գործք 3.14):

_____

_____

_____

_____

_____

բ. Ա_____ Դ_____ (Բ Տիմոթեոս 4.8):

_____

_____

_____

2. Գործք 17.31-ում գրված է կարևոր խոստում այն մասին, թե ինչպիսին է լինելու Աստծո դատաստանը Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով: Կարդացե՛ք այս խոստումը և բացատրե՛ք, թե ինչու է այն կարևոր:

3. Որպեսզի Քրիստոսի դատաստանը կատարելապես արդար լինի, Նա պետք է լինի և՛ արդար, և՛ ամենագետ: Նա պետք է կատարելապես տեղյակ լինի ամեն մարդու կյանքից: Արդյո՞ք Քրիստոսն ունի բավականաչափ գիտելիք՝ բոլոր մարդկանց արդարությամբ դատելու համար: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Քրիստոսի ամենագետ լինելու մասին:

ա. Ինչպե՞ս է Քրիստոսը նկարագրում Իրեն Հայտնություն 2.23-ում: Ի՞նչ է այս նկարագրությունը հայտնում մեզ Նրա դատաստանի հիմնավոր և ճշգրիտ լինելու մասին:

բ. Ինչպե՞ս է Պողոս առաքյալը նկարագրում Քրիստոսի դատաստանը Ա Կորնթացիների 4.4,5-ում: Ի՞նչ է այս նկարագրությունը հայտնում մեզ Նրա դատաստանի հիմնավոր և ճշգրիտ լինելու մասին:

_____

_____

_____

գ. Ի՞նչ է Պողոս առաքյալը հռչակում Հռոմեացիների 2.16-ում Քրիստոսի դատաստանի հիմնավոր և ճշգրիտ լինելու մասին: Արդյո՞ք որևէ բան ծածկված կմնա Քրիստոսից այն օրը, երբ Նա դատի աշխարհը:

_____

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 34. Վերահաս դատաստանը

Մենք կավարտենք Ավետարանի ուսումնասիրությունը՝ խոսելով դատաստանի ստուգության մասին և այն ամփոփ նկարագրելով: Ընդհանուր առմամբ, մարդկությունը ձգտում է շրջանցել և նույնիսկ մերժել աստվածաշնչյան ճշմարտությունն ապագա դատաստանի մասին: Նույնիսկ որոշ քրիստոնյաներ հակված են մերժելու այն՝ վախենալով մարդկանց վիրավորելուց: Ահա թե ինչու մենք պետք է մշտապես և հիմնավոր կերպով պնդենք, որ համաձայն Աստվածաշնչի և Հիսուս Քրիստոսի ուսմունքների՝ լինելու է դատաստան, որը որոշելու է ամեն մարդու հավիտենական ճակատագիրը: Ինչպես արդեն նշվեց, որպեսզի հավատարմորեն հռչակենք Աստծո խոսքը, մենք պետք է քարոզենք այն Քրիստոսին, Ով եկավ՝ մահանալու Իր ժողովրդի մեղքերի համար, և գալու է երկրորդ անգամ, որ դատի և դատապարտի նրանց, ովքեր մերժեցին Իր փրկարար աշխատանքը:

ՀԱՍՏԱՏ ԵՎ ՄՈՏԱԼՈՒՏ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Աստվածաշունչը հայտնում է, որ աշխարհի գալիք դատաստանը՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, և՛ հաստատ է, և՛ մոտալուտ: Դատաստանը ***հաստատ*** է, քանի որ Սուրբ գրքում նույնիսկ կասկածի նշույլ չկա՝ արդյոք այն տեղի՞ է ունենալու, թե՞ ոչ: Դատաստանը տեղի է ունենալու, և ամեն մարդ՝ առաջինից մինչև վերջինը, կանչվելու է այդ դատաստանին: Նույնպես, դատաստանը ***մոտալուտ*** է, քանի որ այն կարող է տեղի ունենալ ցանկացած պահի: Մի ակնթարթում, և երբ մարդիկ ամենաքիչը կսպասեն դրան, Քրիստոսը կհայտնվի երկրորդ անգամ: Այնուամենայնիվ, այս անգամ նպատակը չի լինի, որ Նա տա Իր կյանքը որպես զոհ մեղքի համար, այլ՝ որ դատի այս աշխարհն արդարությամբ և բաժանի Իր ժողովրդին նրանցից, ովքեր հրաժարվեցին հավատալ: Ահա թե ինչու է Աստվածաշունչը լի զգուշացումներով այս Մեծ օրվա մասին, և այն մասին, որ բոլոր մարդիկ պետք է պատրաստվեն հանդիպել իրենց Աստծուն:

1. Այն, որ այս աշխարհի դատաստանն իրականանալու է Աստծո կողմից նշանակված մեկ Մարդու միջոցով (Գործք 17.31), անփոփոխ ճշմարտություն է: Ինչ է սովորեցնում Հռոմեացիների 14.10-12-ը այս մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսք 11-ում Աստված երդվում է Իր Անձով և անվամբ, որ բոլոր մարդիկ ոչ միայն կդատվեն, այլև կխոնարհեցնեն իրենց ծնկները և կխոստովանեն, որ Ինքը դատելու իշխանություն ունի, և որ Իր դատաստանն արդար է:

2. Կարևոր է հասկանալ, որ բոլոր մարդկանց դատաստանը Հիսուս Քրիստոսի միջոցով նույնքան մոտալուտ է, որքան և հաստատ է: Աստծո դատաստանը մոտալուտ է այն իմաստով, որ այն կարող է տեղի ունենալ ցանկացած պահի: Այս ճշմարտությունն ազդեցիկ կերպով պատկերվում է Հակոբոս 5.9-ում: Ի՞նչ է հայտնում այս խոսքը Քրիստոսի մոտալուտ վերադարձի և դրան հետևող դատաստանի մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում Քրիստոս Դատավորը պատկերվում է դռան ետևում կանգնած և պատրաստ՝ հրելով բացելու այն և ներս մտնելու՝ առանց որևէ զգուշացման: Այս ճշմարտությունը ցույց է տալիս այն հրատապությունը, որով քրիստոնյաները պետք է քարոզեն կորսվածներին, և որով մարդիկ պետք է ձգտեն հաշտվել Աստծո հետ:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գոյություն ունեն մի քանի աստվածաշնչյան հատվածներ, որոնք նկարագրում են Քրիստոսի երկրորդ գալուստը և դրան հետևող դատաստանը: Շնորհիվ այս հատվածների՝ մենք պատկերացում ենք կազմում այն Մեծ օրվա մասին, որը գալիս է այս աշխարհի վրա: Կարևոր է նշել, որ Սուրբ գիրքը չի խոսում Դատաստանի օրվա մասին փոխաբերական իմաստով. այն նկարագրում է փաստացի իրադարձություն, որը կհանգեցնի պատմությունն իր ավարտին և կորոշի ամեն մարդու հավիտենական ճակատագիրը:

1. Մատթեոս 16.17-ը կարճ, բայց ազդեցիկ նկարագրում է Քրիստոսի երկրորդ գալուստը և յուրաքանչյուրի դատաստանը: Կարդացե՛ք այս հատվածը, մտորե՛ք դրա բովանդակության շուրջ և գրե՛ք ձեր մտքերը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մարդու Որդի» տիտղոսը վերաբերում է Մեսիային կամ Քրիստոսին (Դանիել 7.13,14, Հովհաննես 5.26,27)։ Այս աշխարհի պատմությունը կտրուկ կավարտվի Տեր Հիսուս Քրիստոսի գալուստով, Ով կդատի կենդանիներին և մեռելներին։ Հուդա 14,15-ում Աստվածաշունչը հայտնում է, որ Տերը կվերադառնա Իր հազարավոր սրբերի հետ։ Այդ ժամանակ Քրիստոսը կդատի ամեն մարդու՝ համաձայն նրա ամեն մի մտքի, բառի և գործի։ Այն մարդիկ, ովքեր հավատքով արդարացված չեն լինի, կդատապարտվեն։

2. Մատթեոս 25.31-33-ում գտնվում է Քրիստոսի երկրորդ գալուստի և դրան հետևող դատաստանի ամենավեհ նկարագրություններից մեկը։ Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը և գրե՛ք ձեր մտքերը։

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ինչպես արդեն նշել ենք, «Մարդու Որդի» տիտղոսը վերաբերում է Մեսիային կամ Քրիստոսին (Դանիել 7.13,14, Հովհաննես 5.26,27)։ Պնդումներն այն մասին, որ Որդին գալիս է Հոր փառքով (Մատթեոս 16.27) և Իր փառքով (25.31), չեն հակասում իրար, քանի որ Որդին Իր Հոր փառքի լույսն է (Եբրայեցիների 1.3)։ Այս հատվածում, ինչպես և Մատթեոս 16.27-ում, մենք տեսնում ենք, որ Հիսուսը կվերադառնա հրեշտակների շքախմբով և զորության ու փառքի տպավորիչ ցուցադրմամբ։ Վերադառնալով, Նա կհաստատի Իր բացարձակ իշխանությունը, և ամեն անձնավորություն՝ Ադամից մինչև երկրի վրա ծնված վերջին մարդը, կժողովվի՝ կանգնելու Նրա ատյանի առջև։ Չի լինի ոչ մի ազգ, ցեղ, ժողովուրդ կամ անհատ, ով բացակա կլինի։ Այդ ժամանակ մարդկության այդ ահռելի զանգվածը կբաժանվի երկու հստակ խմբի՝ (1) Աստծո ժողովուրդը, որը կժառանգի «աշխարհի սկզբից» իր համար պատրաստված հավիտենական թագավորությունը (խս. 34), և (2) անօրենները, որոնք կվտարվեն «հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար» (խս. 41)։

3. Հայտնություն 20.11-15-ում գրված է Դատաստանի օրվա ամենազարմանալի և ամբողջական նկարագրությունը Սուրբ գրքում։ Մենք չենք կարող լիովին հասկանալ Քրիստոսին որպես Դատավորի՝ առանց դիտարկելու այս հատվածը։ Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը և գրե՛ք ձեր մտքերը հետևյալ պնդումներից ամեն մեկի վերաբերյալ։

ա. «Եվ տեսա մի սպիտակ մեծ աթոռ և նրա վրա Նստողին» (խս. 11)։

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ո՞վ է նստած գահի վրա: Աստծո խոսքից մենք գիտենք, որ և՛ Հայրը (Հայտնություն 4.2,9, 5.1,7, 6.16, 7.10,15, 19.4, 21.5), և՛ Որդին (Եբրայեցիների 1.3, Հայտնություն 3.21) նստում են գահի վրա: Մենք գիտենք, որ այդ գահն անվանվում է Քրիստոսի ատյանը (Բ Կորնթացիների 5.10, Հռոմեացիների 14.10): Մենք գիտենք, որ Հայր Աստված որոշել է մեկ օր, երբ Նա դատելու է աշխարհին արդարությամբ՝ Քրիստոս Հիսուս Մարդու միջոցով (Գործք 17.31): Այս մեծ հայտնությունը չունի Հորը Որդուց տարբերակելու նպատակ. Հայրը որոշել է դատել բոլոր մարդկանց Իր Որդու միջոցով: Այս հայտնության նպատակն է՝ ապացուցել, որ, ի վերջո, մարդը հանդիպելու է անձամբ Աստծո հետ:

բ. «Որի երեսից երկինքը և երկիրը փախան, և տեղ չգտնվեց նրանց համար» (խս. 11):

ՆՇՈՒՄՆԵՐ. Հին աշխարհի կարգը, որը պղծված էր մեղքով և դրա ապականությամբ, կանցնի, և նոր երկինքն ու երկիրը կգբաղեցնեն դրա տեղը:

գ. «Եվ տեսա մեռելները՝ մեծ և փոքր, կանգնած աթոռի առջև» (խս. 12):

ՆՇՈՒՄՆԵՐ. Ոչ ոք այնքան մեծ չէ, որ հրաժարվի կանգնել Աստծո գահի առջև, և ոչ ոք այնքան փոքր և աննշան չէ, որ թաքնվի դրանից: Այդ Մեծ օրը բոլորը՝ առանց բացառության, այդտեղ են լինելու:

դ. «Եվ գրքեր բացվեցին, և մի ուրիշ գիրք էլ բացվեց, որ է Կյանքի գիրքը, և մեռելները դատվեցին այն գրքերում գրվածներից՝ իրենց գործերի համեմատ» (խս. 12):

ՆՇՈՒՄՆԵՐ. Նրանք, ովքեր հրաժարվել են Հիսուս Քրիստոսի Ավետարանի միջոցով առաջարկվող ներումից, կդատվեն իրենց գործերի համեմատ: Ուշագրավ է, որ «իրենց գործերի համեմատ» արտահայտությունը կրկնվում է նաև խոսք 13-ում: Այնպիսի տպավորություն է, որ Հովհաննես առաքյալն ամեն ջանք անում էր, որ արթնացներ մարդկանց խիղճը, որպեսզի նրանք հասկանային իրենց գործերի բացարձակ մեղսալիությունը և այն ճշմարտությունը, որ իրենք, անկասկած, դատվելու էին դրանց համեմատ:

ե. «Եվ ծովն իր միջի մեռելները տվեց, և մահը և դժոխքը իրենց միջի մեռելները տվեցին, և ամեն մեկն իր գործերի համեմատ դատվեց» (խս. 13):

ՆՇՈՒՄՆԵՐ. Դատաստանի Մեծ օրը չի լինի մի տեղ, որտեղ հնարավոր կլինի թաքնվել: Աստվածաշունչը հայտնում է, որ մարդիկ կկանչեն, որ սարերը և ժայռերն ընկնեն իրենց վրա, որպեսզի թաքնվեն գահի վրա Նստողի ներկայությունից (Հայտնություն 6.16): Այնուամենայնիվ, նրանց աղաչանքներն անպատասխան կմնան: Ոչ մի թաքնվելու վայր չի լինի:

զ. «Մահը և դժոխքը գցվեցին կրակի լճի մեջ. սա երկրորդ մահն է: Եվ եթե մեկը գրված չգտնվեց Կյանքի գրքի մեջ, կրակի լճի մեջ գցվեց» (խս. 14,15):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս ողբերգական ավարտը սպասում է նրանց, ովքեր կմերժեն Աստծո կամքը և Նրա փրկության առաջարկն Իր Որդու միջոցով. հավիտենական բաժանում Աստծո բարեհաճությունից դժոխքում:

HeartCry

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայացք «HeartCry» Միսիոներական ընկերությանը.

«HeartCry» Միսիոներական ընկերությունը հիմնադրվել է 1988 թվականին Պերուի Հանրապետությունում: Մենք ցանկանում էինք աջակցել տեղացի միսիոներներին՝ իրենց ժողովրդին հասնելու և աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելու համար: Այդ ժամանակվանից ի վեր Տերն ընդլայնել է մեր սահմանները. ներկայումս մենք աշխատանք ենք իրականացնում ոչ միայն Լատինական Ամերիկայում, այլև Աֆրիկայում, Ասիայում, Եվրասիայում, Եվրոպայում և Մերձավոր Արևելքում:

Մեր ծառայության նպատակն է՝ օժանդակել տեղացի միսիոներների աշխատանքն ամբողջ աշխարհում: Մեր ռազմավարությունն ունի չորս հիմնական ուղղություն. ֆինանսական աջակցություն, աստվածաբանական ուսուցում, Աստվածաշնչերի և հոգևոր գրականության տարածում և ցանկացած միջոցների տրամադրում, որոնք անհրաժեշտ են Մեծ Հանձնարարականն իրականացնելու համար:

Ներկայումս աջակցում ենք մոտավորապես 234 միսիոներական ընտանիքի աշխարհի 39 երկրներում:

Ծանոթացում «HeartCry»-ի հետ

«HeartCry» Միսիոներական ընկերությունը հիմնադրվել է և մինչև օրս գոյություն ունի չորս հիմնական նպատակ իրագործելու համար.

- Փառք բերել Աստծուն
- Ծառայել մարդկանց
- Հիմնել աստվածաշնչյան եկեղեցիներ
- Հայտնել Աստծո հավատարմությունը

1. Փառք բերել Աստծուն

Մեր առաջին գլխավոր նպատակը՝ Աստծուն փառք բերելն է: Ամենից առավել ցանկանում ենք, որ Նրա անունը մեծարվի ազգերի մեջ «արեգակի ելքից մինչև մուտքը» (Մաղաքիա 1.11), և որ մորթված Գառը ստանա Իր չարչարանքների լիարժեք վարձատրությունը (Հայտնություն 7.9,10): Մեր գլխավոր նպատակը և դրդապատճառը ո՛չ մարդն է, և ո՛չ նրա կարիքները, այլ՝ Աստված, Նրա նվիրվածությունն Իր փառքին և մեր աստվածատուր ցանկությունը, որ Նա երկրպագություն ստանա բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից և լեզուներից: Մենք վստահում ենք ոչ թե այն փաստին, որ Եկեղեցին ի զորու է կատարել Մեծ Հանձնարարականը, այլ՝ որ Աստված ունի անսահմանափակ և անարգել զորություն, որպեսզի իրականացնի այն ամենը, ինչ որոշել է:

2. Ծառայել մարդկանց

Մեր երկրորդ գլխավոր նպատակը՝ կորսված և մահվան մատնված մարդկանց փրկությունն է: Այն քրիստոնյան, ով ճշմարտապես ձգտում է փառավորել Աստծուն և վստահ է, որ գերագույն իշխանությունը պատկանում է Նրան, անտարբեր չի լինի ամբողջ աշխարհում ապրող միլիարդավոր մարդկանց հանդեպ, ովքեր դեռ պետք է լսեն Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Եթե մենք ճշմարտապես նման ենք Քրիստոսին, մարդկության կորսված բազմությունները կառաջացնեն մեր մեջ գթասրտություն (Մատթեոս 9.36), նույնիսկ՝ մեծ տրտմություն և չփարատվող վիշտ (Հռոմեացիների 9.2): Մեր քրիստոնեական դավանությունը պետք է վիճարկելի համարել, եթե մենք չենք ցանկանում անել այն, ինչ կարող ենք, որպեսզի հայտնի դարձնենք Քրիստոսի անունն ազգերի մեջ և կրենք ամեն բան Աստծո ընտրյալների համար (Բ Տիմոթեոս 2.10):

3. Հիմնել աստվածաշնչյան եկեղեցիներ

Մեր երրորդ գլխավոր նպատակը՝ աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելն է: Թեև գիտակցում ենք, որ մարդկությունն ունի բազմաթիվ կարիքներ և ապրում է տառապանքի մեջ, մենք համոզված ենք, որ այդ ամենն ունի մեկ պատճառ. մարդու սիրտը խիստ ապականված է, թշնամաբար է տրամադրված Աստծո հանդեպ և մերժում է ճշմարտությունը: Այդ իսկ պատճառով, մենք հավատում ենք, որ մարդկանց ծառայելու լավագույն միջոցն է՝ քարոզել Ավետարանը և հիմնել տեղական եկեղեցիներ, որոնք կհռչակեն Աստվածաշնչի ամբողջ խորհուրդը և կծառայեն համաձայն Աստծո Խոսքի պատվիրանների, դրույթների և իմաստության: Այսպիսի աշխատանքը չի կարող կատարվել մարդկային ուժերով, այլ միայն Աստծո գերբնական կանխատեսմամբ և այն միջոցներով, որոնք Նա սահմանել է՝ Աստծո Խոսքի քարոզումը, բարեխոսական աղոթքը, զոհաբերող ծառայությունը, անպայմանական սերը և ճշմարիտ քրիստոսանմանությունը:

4. Հայտնել Աստծո հավատարմությունը

«HeartCry» Միսիոներական ընկերության չորրորդ և վերջին գլխավոր նպատակն է՝ ցույց տալ Աստծո ժողովրդին, որ Նա ճշմարտապես կարող է և ցանկանում է հոգալ մեր բոլոր կարիքներն Իր հարստության չափով, փառքով: Ծառայության կարիքները լրացված կլինեն աղոթքի միջոցով: Մենք չենք պատրաստվում միջոցներ ձեռք բերել ինքնագովազդման միջոցով, և ո՛չ էլ Քրիստոսի մեջ մեր եղբայրներին և քույրերին պարտադրելով կամ շահարկելով: Եթե այս ծառայությունը Տիրոջից է, ուրեմն Նա էլ կլինի մեր Հովանավորը: Եթե Նա մեզ հետ է, Նա կառաջնորդի մարդկանց՝ մեզ միջոցներ տրամադրելու համար, և մենք կբարգավաճենք: Եթե Նա մեզ հետ չէ, մենք հաջողություն չենք ունենա և չպետք է ունենանք: Պետք է խոստովանենք, որ այս ծառայության գոյության տարիների ընթացքում մեր հավատքը ոչ բավարար և թույլ է եղել, բայց Աստված միշտ հավատարիմ է եղել: Ինչպես մի հրաշալի եղբայր ասում է. «Մեր Աստծուն հաճելի է պաշտպանել նույնիսկ նվազագույն վստահությունը, որն ունեն Իր զավակները»:

Կոչ

Որպես քրիստոնյաներ՝ մենք ունենք կոչում, հանձնարարություն և պատվիրան՝ նվիրաբերելու մեր կյանքը, որպեսզի Ավետարանը քարոզվի երկնքի տակ ապրող ամեն ստեղծվածի: Աստծուն սիրելուց հետո սա պետք է լինի մեր երկրորդ «մոլուցքը»: Չկա առավել ազնվագույն առաջադրանք, որի համար արժե տալ մեր կյանքը, քան Աստծո փառքը տարածելը, այսինքն՝ մարդկանց փրկության բերելը

Հիսուս Քրիստոսի Ավետարանի քարոզման միջոցով: Եթե քրիստոնյան ճշմարտապես հնազանդ է Մեծ Հանձնարարականին, նա կա՛մ կտա իր կյանքը՝ հանքը իջնելու համար, կա՛մ կպահի իջնողի պարանը (Վիլյամ Քերի): Երկու դեպքում էլ անհրաժեշտ է նույն վճռական նվիրվածությունը:

Իմացե՛ք ավելին.

Այցելե՛ք մեր «heartcrymissionary.com» կայքը, որպեսզի իմանաք ավելին մեր ծառայության մասին՝ այն, թե որն է մեր նպատակը, ինչին ենք հավատում և ինչպես ենք գործում: Բացի այդ՝ դուք կարող եք ծավալուն տեղեկություններ ստանալ այն միսիոներների մասին, որոնց մենք ծառայելու արտոնություն ունենք:

«ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ», ՀԱՍՏԱՏԵԼ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

«Եթե ուզում եք իմանալ, թե ինչու է Ավետարանը բոլոր ժամանակների մեծագույն ճշմարտությունը, գնե՛ք այս գիրքը և ուսումնասիրե՛ք այն՝ բաց Աստվածաշնչով»:

— Կոնրադ Մբեվե, «Կաբուատա» Մկրտական եկեղեցու հովիվ,
«Հիմքեր՝ Աստծո հոտի համար» գրքի հեղինակ

Հիսուս Քրիստոսի մահը և հարությունը մարդկության պատմության կենտրոնական իրադարձությունն է, երբևէ պատմված մեծագույն պատմությունը և հրեշտակների մտորումների առարկան (Ա Պետրոս 1.12): Երբ այն հռչակվում է համաձայն Աստվածաշնչի, այն Աստծո զորությունն է՝ փրկելու համար ամեն հավատացողի (Հռոմեացիների 1.16), և ճշմարիտ աստվածապաշտության մեծ աղբյուրը և շարժառիթը (Ա Տիմոթեոս 3.16): Երբ այս ուղերձն աղավաղվում է, այն բերում է մահ լսողներին և նծանր հագույն անեծքներ՝ այնազդարարող իվրա (Գաղատացիների 1.6-9): Այս և բազմաթիվ այլ պատճառներով, քրիստոնյա Ավետարանի ուսումնասիրությունը պետք է համարի իրառաջնային և մշտական առաջադրանքը:

«Ճանաչել կենդանի Աստծուն» գիրքը ուսումնական ձեռնարկ է, որը կազմվել և գրվել է՝ հաշվի առնելով այս ճշմարտությունները: Հեղինակը ցանկացել է ստեղծել այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնացույց է անում Աստվածաշունչը և թույլ է տալիս, որ Աստծո Խոսքը խոսի իր փոխարեն: Այս դասընթացի մեծագույն նպատակն է, որ ուսանողը հանդիպումունենա Աստծո հետ Նրա Խոսքի միջոցով: Այս ուսումնական ձեռնարկը հիմնված է այն համոզմունքի վրա, որ Աստվածաշունչը Աստծո ոգեշնչված և անսխալական Խոսքն է, և այնպես է կազմված, որ ուսանողը բառացիորեն անկարող է ընթերցել այն՝ առանց բաց Աստվածաշնչի:

Հիսուս Քրիստոսի Ավետարանը՝ բարի լուրն այն մասին, որ Նա փրկության ճանապարհ բացեց մեղավորների համար, ամենակարևոր ուղերձն է ամենահավատացյալի կյանքում: Այս աշխատության մեջ, որը **«MediaGratiae»** հրատարակչության կողմից թողարկվող **«Աստվածաշնչյան հիմունքներ քրիստոնեական հավատքի համար»** շարքի երկրորդ գիրքն է, Փոլ Վոշերն օգնում է ուսանողներին՝ ճանաչել Աստծո Խոսքը և բացահայտել փրկության Ավետարանի փառավոր և թանկ ճշմարտությունները:

Փոլ Դեյվիդ Վոշերը տասը տարի շարունակ միսիոներ է եղել Պերուի հանրապետությունում: Այդ ընթացքում նա հիմնադրել է «HeartCry» Միսիոներական ընկերությունը, որի նպատակն է՝ աջակցել նոր եկեղեցիներ հիմնադրող ծառայողներին Պերուի հանրապետությունում: Ներկայումս Փոլը «HeartCry»-ի Միսիոներական բաժնի տնօրենն է (heartcrymissionary.com), որը Աստծո օրհնությամբ կարողանում է աջակցել միսիոներների՝ աշխարհի տարբեր հատվածներում գտնվող ավելի քան երեսունհինգ երկրում: Նա և կինը՝ Զարոն, ունեն չորս զավակ՝ Յանը, Էվանը, Ռոուենը և Բրոնվինը: